

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 8, No 1, 2020



**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԳՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
8 (1)**

Երևան 2020

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գզոյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Բյուրեղի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Ասուրյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաբեայան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռորերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիոսահաու, Պոտոլամ, Գերմանիա

Վահրամ Շենասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyun, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Peroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmajian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида»)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян»,
Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов,
Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс,
Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА,
Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам,
Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян»,
Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в
Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян»,
Армения

Ваге Ташчян, доктор истории, проект «Ушамадян», Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна,
Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского
государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский
государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tsitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide. Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors. *Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI). Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида») (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом «Музей-институт Геноцида армян» (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8 (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян. Статьи, обзоры и другие материалы, опубликованные в «Журнале исследований геноцида», отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда «Музей-институт Геноцида армян». Фонд «Музей-институт Геноцида армян» не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами. «Журнал исследований геноцида» индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վերժինե Գ. Սվազլյան

Վան-Վասպուրականի հերոսամարտը

ըստ ականատես վերապրողների վկայությունների9

Արփինե Ռ. Բարյումյան

Արևմտյան Հայաստանի Դիարքեթիր նահանգի հայ բնակչությունը

համիդյան կոտորածների տարիներին45

Ռոբերտ Ա. Թաթոյան

Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Սդերդի գավառի հայ

բնակչության թվաքանակը Հայոց ցեղասպանության նախօրյակին65

Էդիտա Գ. Գզոյան

Երեխաների բռնի տեղափոխումը որպես ցեղասպանական

գործողություն. ձևավորումից դեպի քրեականացում99

Նարեկ Մ. Պողոսյան

Ցեղասպանության և զանգվածային սպանությունների իրագործման հնարավոր

վրանգը արհեստական բանականության զարգացման համադրությամբ119

Միհրան Ա. Մինասեան

Միհրան Հերարդեանի անտիպ տեղեկագիրը Հայէպի միսիոնարուհիներուն մասին135

Վալերի Գ. Թունյան

Ռ. Էրդոհանի «ընդհանուր պատմության» առասպելը և

Հայոց ցեղասպանությունը151

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....164

CONTENT

ARTICLES

Verjiné G. Svazlian

The Heroic Battle of Van-Vaspourakan

according to the Testimonies of the Eyewitness Survivors9

Arpine R. Bablumyan

The Armenian Population of the Diarbekir Province of Western Armenia during

Hamidian Massacres45

Robert A. Tatoyan

Armenian Population Numbers in the Sandjak of Sghert in the Bitlis Vilayet of

Western Armenia on the Eve of the Armenian Genocide65

Edita G. Gzoyan

Forcible Child Transfer as a Genocidal Act: from Conceptualization to Criminalization99

Narek M. Poghosyan

The Development of Artificial Intelligence and Risks for the Implementation of

Genocide and Mass Killings119

Mihran A. Minassian

Mihran Herartian's Unpublished Report on the Aleppo Missionaries135

Valery G. Tunyan

R. Erdogan's Myth of "Common History" and

the Armenian Genocide151

ABOUT THE AUTHORS164

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Вержине Г. Свазлян

Героическое сражение Ван-Васпуракана

по свидетельствам очевидцев9

Арпине Р. Баблумян

Армянское население провинции Диарбекир Западной Армении в годы

гамидовских погромов45

Роберт А. Татоян

Численность армянского населения санджака Схерт Битлисского

вилаяета Западной Армении в преддверии Геноцида армян65

Эдита Г. Гзоян

Насильственная передача детей как акт геноцида: от формирования

до криминализации99

Нарек М. Погосян

Развитие искусственного интеллекта и риски для осуществления

геноцида и массовых убийств119

Мигран А. Минасян

Неопубликованный доклад Миграна Герардяна о женщинах-миссионерах Алеппо135

Валерий Г. Тунян

Миф “общей истории” Р. Эрдогана и Геноцид армян151

ОБ АВТОРАХ164

Վերծինն Գ. Սվազյան
բանասիրական գիտությունների դոկտոր

**ՎԱՆ-ՎԱՍԱԿՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ
ԸՍՏ ԱԿԱՆՏԵՍ ՎԵՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝**

*Նվիրվում է Վան-Վասպուրականի
դյուցազնական հերոսամարտի
105-ամյակին*

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Հայոց ցեղասպանություն, Վան-Վասպուրական, հերոսամարտ, ինքնապաշտպանություն, ականատես վերապրողներ, վկայություն, դիմադրություն, բանվորներ, ինքնաշեն զենք, ֆանֆառ

Մույն գիտական աշխատանքի համար սկզբնաղբյուրային հենք են հանդիսացել 1915 թ. Հայոց ցեղասպանության վաղորդային Վանի նահանգապետ Ջևդեթ փաշայի կազմակերպած զինված հարձակման դեմ ըմբոստացած վանեցիների մեկամյա ինքնապաշտպանական հերոսամարտին ականատես-վկա 35 վանեցիներից մեր գրի առած, ձայնագրած, տեսագրած հուշ-վկայությունները և պատմական երգերը, որոնք ստույգ ու ամբողջական գաղափար են տալիս այդ և հետագա պատմական իրադարձությունների մասին:

Վանի հերոսամարտն իր կազմակերպվածությամբ ու ժողովրդի միասնական կամքի ուժով բացառիկ և ինքնատիպ օրինակ դարձավ հայ ժողովրդի հետագա հերոսական մաքառումների համար:

Օսմանյան կայսրության երիտթուրք պարագլուխներն Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցում էին զավթողական նպատակներով և արևմտահայերի սպանդն իրագործելու իրենց երբեմնի պանթուրքական և պանիսլամական ծրագրով: Ուստի պատերազմի հետ սկսվեց արևմտահայերի զորահավաքն ու զինահավաքը: Հայ երիտասարդներին թուրքական բանակ զորակոչելու պատրվակով երկրի ողջ տարածքով տեղի էին ունենում հայերի ձերբակալություններ, բանտարկություններ, կոտորածներ և կողոպուտ:

Թուրքական բանակ զորակոչված հայ երիտասարդներին զենք չէր տրվում, այլ՝ ուղարկում էին «Ամիլե թաբուր» (Աշխատանքային գումարտակ) ծանր աշխատաքներ կատարելու, ապա՝ բոլորին ոչնչացնում²:

Հետագայում՝ Երևանի Հայպետհրատում հայտնի պոլիգրաֆիստ դարձած, հերոսամարտի ականատես վերապրող *Պապրիկ Սարոյանը* (ծնվ. 1906 թ., Վան, գ. Բժնկերտ) վկայել է. «...Արդեն նախօրոք հավաքել էին բոլոր երիտասարդներին՝ իբր թուրքական բանակ են տանելու, բայց ճամփին կոտորել էին: Դևոնդ հորեղբայրս կառողանում է փախչել այդ սպանվածների միջից»³:

1 Հոդվածը ստացվել է 09.02.2020 և ընդունվել տպագրության՝ 19.03.2020:

2 Ավելի մանրամասն տե՛ս Վերծինն Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ* (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011), 25-56, 116-168:

3 Նույն տեղում, 144 (վկ. 38):

Իսկ հայտնի դերասան դարձած ականատես վերապրող *Մանվել Մարությանը* (ծնվ. 1901 թ., Վան, գ. Բերդաշեն) նույնպես հաստատել է. «...1915 թ. դեպքերը ամբողջ հիշում եմ, ինչպես աչքիս դիմացը՝ տեսնում եմ: Բավական հայ երիտասարդներ տարված էին թուրքական բանակ: Իմացվեց, որ դրանք բանակից դուրս են բերված և գնդակահարված են»⁴:

Տարիներ անց Երևանում մեծ գործարանների հիմքը դրած վաստակաշատ ինժեներ, ականատես վերապրող *Երվանդ Շիրակյանը* (ծնվ. 1907 թ., Վան) ևս վկայել է. «...Թուրքերը իրենց բանակում ունեին վաթսուն հազար հայեր: ...Իրենց բանակի հայերին բանակից հանեցին, կազմեցին ռաբոչի բաթալիոն և սկսեցին նրանց կոտորել»⁵:

Հայ գորակոչվածները, չդիմանալով օսմանյան բանակում գործադրված դաժանություններին, փախչում, ապաստանում էին իրենց գյուղերի սարերում և կամ անցնում ռուսական բանակի կողմը:

Այդ ժամանակ է, որ դաժան ու հայատյաց Ջևդեթ փաշան նշանակվում է Վանի նահանգապետ: Նա գավառներում և գյուղերում թուրքական պահակակետեր է տեղադրում, որ հսկեն հայերին և հավաքեն նրանց զենքերը:

Տարիներ անց վաստակավոր գյուղատնտես դարձած Վանի նահանգի Շատախ գավառից ականատես վերապրող *Անդրեաս Գյուլանյանը* (ծնվ. 1907 թ., գ. Սևտկին) իր հուշ-վկայության մեջ մանրամասն պատմել է, որ, երբ Օսմանյան կայսրությունը մտավ պատերազմի մեջ, «...դեռ 1914 թ. ուշ աշնանից պահակախմբեր (որոնք գորտոններ էին կոչվում) էին դրված Շատախի բոլոր մեծ գյուղերում, որոնց թվում երկու պահակախումբ դրված է լինում Սևտկին գյուղում, մի պահակախումբ գյուղի տներին մոտ, իսկ մյուս պահակախումբը գյուղից հինգ կիլոմետր հյուսիս՝ Արտոս լեռան ստորոտին, որտեղից սկսվում է պատմաբան Ա-Դոյի խոսքերով, «Շատախի հոչակավոր ձորը»⁶: Շատախցիները, կանխազգալով վերահաս վտանգն սկսում են զենքեր գնել, որ պաշտպանվեն: Շատախի կառավարիչ Մելթի Բեյը, կասկածելով կալանավորում է Շատախի հայկական դպրոցների տեսուչ Հովսեփ Զոլոյանին: Խուզարկության ժամանակ նրա գրպանում հայտնաբերվում է զենք ունեցող շատախցիների ցուցակը, որը և առիթ է դառնում նրա բանտարկության:

Հայերը լսելով այդ մասին՝ Շատախի Թ-աղ կենտրոնում ընդհանուր ժողով են հրավիրում և որոշում ստեղծել ինքնապաշտպանական Զինվորական Մարմին, նպատակ ունենալով ոչնչացնել Սևտկին գյուղի թուրքական երկու պահակակետերը, քանի որ այդտեղից ճանապարհը Ոստանով և Հայոց Ձորով տանում էր դեպի Վան: Շատախցիները թուրքական պահակախմբերի ղեկավար Բայրի Օսբաշիից պահանջում են հեռանալ, բայց թուրքերը կրակ են բացում: Սկսվում է երկկողմ հրաձգությունը. «...Մենք՝ մորս հետ սարում քարի տակից տեսնում էինք, – շարունակել է *Անդրեաս Գյուլանյանը*, – Քառասուն կրակոց եղավ: Ամեն ինչ դադարեց: Երկինքը ամպոտ էր,

4 Նույն տեղում, 133 (վկ. 32):

5 Նույն տեղում, 147 (վկ. 41):

6 Նույն տեղում, 119 (վկ. 26):

բայց ցուրտ չէր: Սպանվել էր Բայրի Օսբաշին, իր օգնականն ու իրենց ասկյարները: Իջևանատան պատուհանից թուրքերը գցում են ներքև իրենց հրացանները և ձեռքերը վեր բարձրացրած անձնատուր են լինում»⁷:

Սակայն Շատախի ինքնապաշտպանական կռիվը դրանով չի ավարտվում: Շատախում տեղադրված թուրքական պահակախմբի հեռահար նպատակների մասին է պատմել հետագայում Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) հայ գրականության դասախոս դարձած, դոկտոր, պրոֆեսոր *Սահակ Բազյանը* (ծնվ. 1913 թ., Շատախ, գ. Ջևուկ). «...1915 թ. ապրիլ: Ութսուն հոգուց բաղկացած առաջապահ մի պահակախումբ մտնում է Շատախի Ջևուկ գյուղը, Շատախի և Մոկսի սահմանային վերջին գյուղը: Նրանց կարգադրված էր տուրք հավաքելու, ապա ասկյար հավաքելու պատրվակով դուրս բերել տղամարդկանց, մինչև իրենց բուն ուժերի հասնելը, որպեսզի անարգել սկսեն կոտորածը: Ահա այդ ոճրագործ ծրագրով, պահակախմբի ութսուն անդամները լցվում են Ջևուկ, բռնությամբ հավաքում են տուրքը: Մի քանի ժամում երբ վերջացնում են, սկսում են պարտադրել ամեն տան, մի գիշերվա ընթացքում գործել թաթման և թաթ (ձեռնոցներ և գուլպա), առավոտյան ութսուն գույգ իրենց հանձնելու: Խեղճ գյուղացիները անքուն են անցկացնում գիշերը, գործում են և առավոտյան հանձնում: Առավոտյան սկսում են հավաքել տղամարդկանց՝ ասկյար տանելու անվան տակ: Սոխիում են մի քանի մարդկանց իրենց մեկիկ-մեկիկ ուղեկցել տները: Ուղեկցողներից մեկը Բազկե Շահինն էր, որը ամեն տուն մտնելիս, տեսնելով առավոտյան թոնիրը վառվելիս, հսկայական ցան (վառելիք) լցնում է թոնիր, բարձրացնում վիթխարի մուխ. այդ թանձրության մեջ ոչինչ չկարողանալով որոնել ու տեսնել, թուրք պահակայինները հեռանում էին տնից: Շուտով նրա օրինակին հետևում են մյուս ուղեկցողները, հաց թխելու համար թոնիրները վառած կանայք: Եվ այսպես, ամբողջ գյուղից թուրք պահակայինները, իրենց ամբարտավանությամբ հանդերձ, կարողանում են հավաքել միայն երեք տղամարդ՝ Ավդո, Չակո Մանուկ և մեկ ուրիշը»⁸:

Ի դեպ, վերոհիշյալ Չակո Մանուկը եղել է հայ ժողովրդական, ազգագրական և հայրենասիրական երգերի անգուգական կատարող Հայրիկ Մուրադյանի հայրը:

Հայրիկ Մուրադյանը (ծնվ. 1905 թ., Շատախ, գ. Ջևուկ) ևս որպես ականատես վերապրող վերհիշել է. «...Երեսամարտի ժամանակ շատախցիները ունեին երեք հարյուր վաթսուն-չորս զինված ռազմիկներ, իսկ թշնամին վեց հազար հոգիանոց զորք հանեց մեր դեմ: Կռիվը տևեց մեկուկես ամիս: Միայն մի անգամ հաջողվեց թուրքերին հաղթել: Մենք ամբողջ գավառն էինք պահում: Հայերը տվեցին քառասունութ զոհ, իսկ թուրքերը՝ երկու հազար զոհ»⁹:

Շատախցիների հերոսական գոյամարտի լուրը հասնում է Վան: Վանի նահանգապետ Ջևդեթ փաշան կանչում է հայ նշանավոր գործիչ, Վանի ղեկավար, ծնունդով դարաբաղցի պարոն Իշխանին (Նիկողայոս Միքայելյան) և հրամայում,

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, 125-126 (վկ. 29):

9 Նույն տեղում, 123 (վկ. 27):

որ նա գնա և հանդարտեցնի ըմբոստ շատախցիներին: Սակայն դեռ տեղ չհասած, Հայոց Ձորի Հիրճ գյուղում Իշխանին ուղեկցող թուրք ոստիկանները գիշերով նրան ու նրա երեք ընկերներին սպանում են և հողի մեջ թաղում:

Այդ նույն օրը Ջևդեթ փաշան կանչում է նաև թուրքական մեջլիսի՝ խորհրդարանի անդամ Արշակ Վռամյանին (Օսիկ Դերձակյան), որը գործում էր Վանում: Նրան տանում են Վանա լճի ափ՝ Ավանց գյուղի մոտ, տոպրակի մեջ քարեր են լցնում, կապում Վռամյանի վզից և լճի մեջ ջրամույն անում: Բայց, ինչպես վերապրող *Մադրենաս Գյուլանյանն* է ավելացրել. «...Բարեբախտաբար Վռամյանին հաջողվում է մինչ այդ նամակ գրել և իր կնոջ միջոցով հասցնել Վան Արամ Մանուկյանին, որ եթե Ջևդեթը նրան ևս կանչի՝ չներկայանա, քանի որ նրան էլ կսպանի»¹⁰: Այդ տխուր լուրերը շատ ծանր են ազդում Արամ Մանուկյանի հոգեգիտակցական աշխարհի վրա:

Հետագայում վաստակավոր ուսուցիչ դարձած ականատես վերապրող *Թովիկ Բաղդասարյանը* (ծնվ. 1901 թ., Վան, Հայոց Ձոր, գ. Հնդստան) վերհիշել է. «...Ես սովորում էի Վարագա վանքում: 1912 թ. Վարագա վանքում հայ գրերի գյուտի հազար հինգ հարյուր ամյակի առթիվ մեծ հանդիսություն եղավ: Ես հիշում եմ Իշխանի ելույթը: Իշխանից ազատվելու համար Ջևդեթ փաշան ուզեց նրան վերացնել և ուղարկեց նրան, որ հայ-քյուրդ հարաբերությունները բարելավի»¹¹:

Պատմական այդ իրադարձությունների մասին է վկայել 1905 թվականին Վանի Վայոց Ձորի Կեմ գյուղում ծնված, հետագայում Երևանի Ռադիոկոմիտեում պատասխանատու պաշտոն վարած ականատես-վկա *Միրակ Մանասյանը*. «...1915 թ. լուր հասավ, որ պարոն Իշխանին մեր հարևան Հիրճ գյուղում սպանել են: Այդ այն ժամանակն էր, երբ թուրքերը Ջևդեթ փաշայի միջոցով մեր մեծերին կանչում և գլուխները ուտում էին: Այդ ահռելի օրերին այր. Իշխանին հանկարծակի սպանում են և գցում են հորը: Չբավարարվելով դրանով, նրա երկու երեխաներին ևս ողջ-ողջ գցում են հորը: Մենք որ այդ լսեցինք, հայրենակիցներով իրար անցանք: Մենք սկսեցինք պատրաստվել թուրքերի հարձակմանը»¹²:

Այրիլի սկզբին Ջևդեթ փաշան թուրքական բանակի զորքերի և բազմաթիվ հրոսակախմբերի հետ պաշարում է Վանի Այգեստանը, որտեղ կենտրոնացած էր 20.000 հայ բնակչություն: Ընդհատվում է կապը քաղաքի կենտրոնի և Բաղաքամեջի հետ, որտեղ կար շուրջ 3.000 հայ: Ջարդերից խուսափելու միակ միջոցը դիմադրողական ինքնապաշտպանությունն էր:

Վանի հերոսամարտի կազմակերպվածության և ժողովրդի գիտակցված ու նվիրված միասնականության մասին են պատմել արժանահիշատակ վանեցի մեր 35 ականատես վերապրողները, որոնց հաղորդած վկայությունները հիմք են դարձել սույն ուսումնասիրության համար¹³:

Վանի ինքնապաշտպանական կոիվների մասնակից, ինչպես նաև կազմակերպիչ-

10 Նույն տեղում, 125-126 (վկ. 29):

11 Նույն տեղում, 129 (վկ. 31):

12 Նույն տեղում, 138 (վկ. 35):

13 Նույն տեղում, 116-168 (վկ. 25-56):

ներից *Շավարշ Հովհիվյանն* իր հուշագրության մեջ ներկայացրել է, թե ինչ տրամադրություն էր տիրում Վանում հերոսամարտի նախօրեին. «...Թէն տակաւին թշնամիին կողմէ՛ն, ունէ՛ նշան տրուած չէ և բանակցութիւնները օտարներու միջոցաւ կը շարունակուին Ջէվտէթի հետ, բայց Այգեստանը ամէն կողմէ՛ պաշարուած է, թնդասօթներ գետնեղուած են հարաւային կողմէն Հաճի Պէքիրի զօրանոցին, իսկ Հիւսիսէն՝ Բարձանց վրա՛ Թօփրաք Գալէի զօրանոցին մօտ՝ երկու կրակի մէջ թողլով [sic! - թողնելով] Այգեստանը, և արևելեան ու արևմտեան կողմերը զինուորական շրթայի տակ առնուած էին՝ հրացանի հասողութենէն քիչ հեռու, որոնց օրն ի բուն կը հսկէին կանոնատուր զօրաց ջոկատներ: Աւելորդ է ըսել թէ կոիւր բոլորովին անհաւասար գետնի վրայ տեղի պիտի ունենար, մանաւանդ գէնքի և ռազմամթերքի չգոյութեան պատճառաւ: Ասոր վրայ պէտք է աւելցնել նաև սնունդի անբաւականութիւնը, որ շատ աւելի մտահոգութիւն կը պատճառէր ամենուն: Ներկաները այս երկու պատճառներով այլևս մահուան հետ հաշտուած էին, միակ միսիթարութիւնն ու սփոփանքը որ կը մնար, այն ալ դիւցազնօրէն կոտուելով, պատուատուր և Վանեցիներու վայել մահով մը իյնալն էր: Յանկարծ սրահի լռութիւնը կը խզուի Եկարեանի գոռ ձայնով, ան ոտքի կանգնած՝ կարճ, բայց ազդու խրախուսական մը կ'ուղղէ ներկաներուն, թուելով. «Մեր դիրքերու անսնման առաւելութիւնները, որոնց շնորհիւ, կ'ըսէ, մենք պիտի կրնանք ցորենի պէս հնձել բաց դաշտերէն դէպի Այգեստան խուժող խուժանն ու զինուորները, բաւական է որ ամբողջ հայերս մէկ սիրտ, մէկ հոգի նուիրուինք ինքնապաշտպանութեան սուրբ և նուիրական գործին» և կը յարէ թէ՛ «Տեսնալու ժամանակ չկայ, թշնամին արդէն մեր դռները հասած՝ պաշարած է գմեզ, ուրեմն հարսնիքը բռնուած է, ըստ այնմ ալ պէտք է շարժիլ, վստահ լինելով որ, այս անհաւասար կռուին վերջնական յաղթանակը մեր կողմը պիտի մնայ»: Եկարեանի այս քաջալերական խօսքերէն յետոյ, իսկոյն ձեռնարկուեցաւ երեք անձերէ բաղկացեալ Չինուորական Մարմնոյ մը ընտրութեան՝ լիազօրի հանգամանքով, որուն նշանակուեցան Արմենակ Եկարեան (Ռ-ամկ ավար) իբր դէկավար, Պուկկարացի Գրիգոր և Կայծակ Առաքել (Դաշնակցականներ) իբր խորհրդականներ, Փոխանեան Արմենակ (Դաշն.) ու Աճէմսաչօեան Կարապետ (Ռ-ամկ .) իբր քարտուղարներ»¹⁴:

Այնուհետև վանեցիները հաջորդաբար ընտրում են *Պարենավորման Մարմին*՝ կռվողների և ժողովրդի սնունդն ապահովելու համար: Այգեստանի ունևորներից հավաքվում է դրամ, արմտիք, ուտելիք, նաև՝ ոչխար: Որոշվում է այդ բոլորը կենտրոնացնել, իսկ ժողովուրդը պիտի դրանք խնայողաբար սպառեր: Նույնիսկ Գևորգ Մուճյանը սիրահոժար տրամադրում է իր ընդարձակ տունը Պարենավորման Մարմին¹⁵:

Կազմակերպվում է նաև *Ամրաշեն վաչգրը*: Այն համալրելու համար մի խումբ աշակերտներ՝ կրճեքերին ամրացված սպիտակ ժապավենի վրա գրված «Բանվորահավաք», թաղից թաղ շրջելով հավաքում էին աշխատելու ընդունակ տղամարդկանց՝

14 Մանուկ Ճիգմեճեան, *Պարմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890-1925* (Ֆրէզսօ, Տպագր. «Նոր օր», 1930), 315-316:

15 Նույն տեղում, 317:

որմնադիրներ, հյուաններ, ատաղձագործներ, ջրմուղագործներ, որոնք տներից բերած գործիքներով՝ բահերով, բրիչներով և կացիններով դիրքեր էին փորելու, իսկ երկաթագործները շտապ պատրաստելու էին նիզակներ՝ բնակչությանը զինելու համար:

Այգեստանը չորս շրջանների էր բաժանված: Որոշում են յուրաքանչյուրում ստեղծել *Կարմիր խաչի մեկ հիվանդանոց*: Վիրավորներին խնամելու էին աղջիկները, իսկ կանայք կազմակերպելու էին կովոդների սնունդը և կարելու էին համազգեստներ նրանց համար:

Նախատեսվում էր նաև ստեղծել *Թռուցիկ խումբ*, որն իսկույն օգնության պիտի հասներ դժվարության մեջ գտնվող կովոդներին¹⁶:

Վանեցիներն ստեղծում են նաև *վառողի արտադրություն*՝ «Վան-Տոսպ» պարբերականի խմբագիր Վարդան Պապիկյանի և Հարություն ու Հրանտ Կաքավյան եղբայրների ղեկավարությամբ: Նրանք հետագայում կատարելագործում են ծխացող վառողի որակը, քանի որ «Մօդել» մակնիշի հրացաններն արդեն անգործածելի էին դարձել: Ուստի ստեղծվում է նաև *փամփուշտարանի արհեստանոց*, որն օրական 800 փամփուշտ էր արտադրում¹⁷:

Հիմք է դրվում նաև *վնասված զենքերը նորոգող արհեստանոցի*՝ Նազարեթ Մադոյանի և Սահակ Քելեկյանի ղեկավարությամբ: Վանեցիների թիվը 23 հազար էր, իսկ հրացանները՝ ընդամենը 250, որոնց թիվը հետագայում հասնում է 400-500-ի¹⁸:

Վանի ինքնապաշտպանության ընթացքում ստեղծվում է նաև *Խնամատար Մարմին*, որը հոգալու էր շրջակա գյուղերից եկողների կարիքները: Այնպես որ ամեն ինչ կազմակերպված էր շատ բարձր մակարդակով, մասնավոր յուրաքանչյուրը գիտակցում էր իր գործի կարևորությունը:

Ժողովուրդը՝ տղամարդ, թե՛ կին, բոլորը լծված էին աշխատանքի: Վանեցիները միակամ էին ու վճռական. նրանք ուխտել էին՝ «...զեն ի ձեռին կռուելով մեռնիլ, քան ոչխարներու պէս մորթոտուիլ»¹⁹:

Վանի ինքնապաշտպանության մեջ իր նշանակալի դերն ուներ նաև *Ֆանֆատը՝ Վարժապետանոցի սաների փողային նվագախումբը*, Խաչատուր Պուճիկյանյանի ղեկավարությամբ: Ֆանֆատը ենթարկվում էր Ջինվորական ղեկավար Մարմնի հրահանգներին: Թուրքերը զինվորական նվագ չունեին: Կովի ամբողջ ընթացքում Ֆանֆատի մարտահրավեր ձայնը ոգևորում էր կտրիճներին: Նվագախումբը, դիրքից-դիրք գնալով, իր խրոխտ հնչյուններով բարձրացնում էր վանեցի կովոդների մարտական ոգին և, ընդհակառակը, բացասաբար էր անդրադառնում թուրքերի վրա, որոնք զայրույթից ավելորդ ու անհաշիվ գնդակներ էին արձակում, իսկ Ջևդեթը կատաղած բացականչում էր. «Ամէն բանի կարելի է հանդուրժել, բայց ո՛չ այս միզիսքի ձայնին»²⁰:

16 Նույն տեղում, 323:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, 332:

19 Նույն տեղում, 313:

20 Նույն տեղում, 327:

Զինվորական վերահսկիչ մարմնի կարգադրությամբ գիշերներն անգամ պահակներ էին նշանակված, որոնք շրջում էին թաղից-թաղ: Որոշված էր *հայրուկ կարգախոս* թուրքերի համար դժվար արտասանելի հնչյուններով՝ «Ծիծեռնակ», «Ծիածան», «Ձմերուկ», որոնք ամեն օր փոխվում էին, և եթե որևէ մեկը չիմանար այդ գաղտնաբառը, ուրեմն՝ օտար էր կամ՝ թշնամի²¹:

Վանի ինքնապաշտպանական մարտերի մասնակից նաև կազմակերպիչ ականատես *Շավարշ Հովիվյանը*, բարձր գնահատելով Վանի հերոսամարտի միասնականությունն ու կազմակերպվածությունը, եզրակացրել է. «Առաջին օրէն իսկ Այգեատանը ստացաւ ինքնօրէն կառավարութեան մը երևոյթը, ան իր Զին., Քաղ. և Տնտեսական Վարչութիւններովը ամենացայտուն ապացոյցը կ'ուտար տոհմային ձիրքի ու ձեռնհասութեան, կատարելապէս ռամկ ավարական ուղղութեամբ, այսինքն իրաքանչիւր անհատ յօժարական իր բաժինը կը բերէր ինքնապաշտպանութեան փրկարար գործին»²²:

Այնպես որ, Զինվորական Մարմնի կողմից ամեն ինչ նախապատրաստված և կազմակերպված էր բարձր մակարդակով:

Ականատես վերապրող *Պայրիկ Սարոյանը* վերհիշել ու մեզ է պատմել, թե ինչպես սկսվեց Վանի հերոսամարտը. «...1915 թ. ապրիլի սկզբին թուրք ժանդարմները հրեշ Զնդեթի դեկավարությամբ հարձակվեցին Վանի վրա: ...Սկսվեց կռիվը: Հայերը լսել էին, որ թուրքերն ասում են. «Վանը թուրքերին պետք է մնա»: Մի քանի օր առաջ թուրքերն ու քրդերը հարձակվել էին քաղաքի հայերի խանութների վրա, թալանել էին: Վանում գործում էին դաշնակցական, ռամկ ավար և հնչակյան կուսակցությունները, որոնք վտանգը տեսնելով՝ միացան և հանդես եկան միասնաբար: Քաղաքում բերդի վրայից անընդհատ հրացաններով կրակում էին: Երկու հորեղբայրներս՝ Ղևոնդն ու Մարտիրոսը, սկսեցին մասնակցել կռիվներին: Մարտիրոսը ընտանիք ուներ, իսկ Ղևոնդը ամուրի էր: Երանց հաց ու ջուր ես ու Վրոյրը՝ Մարտիրոսի տղան, տանում էինք, որ ուտեն: Մեր տան երրորդ հարկից հայրս հսկում էր, որ թուրքերը բերդից վար չիջնեն դեպի Քաղաքամեջ: Հայրս մեկ էլ տեսնում է, որ թուրքերը սկսեցին պարաններով իջնել: Հայրս սկսում է կրակել նրանց վրա, և թուրքերը ահից այլևս չեն իջնում: Ամեն ինչ ճակատամարտի համար էր: Խարազոնիսից գաղթականներ էին գալիս և մտնում քաղաք՝ Այգեատան»²³:

Ականատես վերապրող *Վարսենիկ Աբրահամյանը* (ծնվ. 1905 թ., Վան) նույնպես վկայել է. «...Կռիվն սկսվեց: Հարձակվան հայերի վրա: Հայերն էլ ինքնապաշտպանությամբ կռվեցին մինչև վերջ: Թուրքերը մարդ ուղարկեցին թե՛ հայերը թող հանձնվեն: Հայերը թե՛ մենք չենք հանձնվի, մինչև արյան վերջին կաթիլը պիտի կռվինք»²⁴:

Նույն ականատես վերապրող *Մանվել Մարությունը* ևս վկայել է. «...1915 թ. դեպքե-

21 Նույն տեղում, 340:

22 Նույն տեղում, 334:

23 Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ*, 144 (վկ. 38):

24 Նույն տեղում, 140 (վկ. 36):

րը ամբողջ հիշում եմ, ինչպես աչքիս դիմացը՝ տեսնում եմ: ...Մոտ երկու հարյուր հոգի գենքի տակ էին, չորս հարյուր հոգի դիրքերն էին պատրաստում գիշերները: Ով մթերք ուներ՝ բերավ Առաջնորդարան: Ամեն մարդ պաշտոն ուներ»²⁵:

Վանի հերոսամարտի սկիզբը և ընթացքն ամենայն մանրամասնությամբ, օրը օրին ներկայացրել է Վեր. Արսեն Ա. Կորկիզյանն ականատեսի իր ծավալուն հուշագրության մեջ²⁶: Նա հանգամանորեն նկարագրել է հերոսամարտի սկիզբը և ընթացքը. «Ճէտէթ, իր պատրաստութիւնները լրացուցած, թուրք զինուորները յառաջ կը քշէ և կը տեղափոխէ Այգեստանի եզերքին բացուած Ուրբաթ Առուի խրամներու մէջ»²⁷:

Ապրիլ 7-ին (հին տոմարով) արշալույսին, երեքշաբթի օրը, ժամը 7-ին, Այգեստանից մեկ ժամվա հեռավորության վրա գտնվող Շուշանց գյուղից եկող հայ կանանց թուրք զինվորները բռնում են և ուզում են անպատվել: Նույն շրջանի դիրքապաշտպան երկու կտրիճներ հասնում և փրկում են նրանց, բայց տեղացող գնդակների տարափի տակ նահատակվում են: Այս դառնում է ազդանշան, որ կռիվն սկսվի: Հրացաններին հացորդում են հրետանիները, որոնք կանգ չեն առնում: Ջևդեթ փաշան դիմում է գերմանական միսիոներներին և պահանջում, որ վկայություն տան, թե՛ հայերն են նախահարձակ եղել, բայց նրանք հրաժարվում են:

Կռիվն սկսվում է Արարքի ուղղությամբ: Թուրքերը կրակի տարափ են թափում հայկական դիրքերի վրա: Այդ ժամանակ հրապարակ է գալիս վարժապետանոցի նվազախումբը՝ Խաչատուր Պուճիկանյանի ղեկավարությամբ՝ հնչեցնելով «Մեր Հայրենիքը»: Խոտներամ ժողովուրդը հետևում է ֆանֆառին, հասնում են մինչև Զինվորական Մարմնի պաշտոնատունը՝ շտաբը: Այնտեղ է Զինվորական Մարմնի ղեկավար Արմենակ Եկարյանը, նաև Արամ Մանուկյանը:

Հովհաննես Գուլոյանը ելույթ է ունենում. նա «...խօսքը կ'ուղղէ նախ՝ Եկարեանին, կարճ բայց հրաշունչ ներբողը ընելով անոր անուան, քաջութեան, մարտական համբախին: Յետոյ կը դառնայ Արամին, կը պանծացնէ այն համերաշխ միութիւնը, որ այսօր Վանի ամբողջ ժողովուրդը, կուսակցական և անկուսակցական, երիտասարդ թէ՛ ծերունի, հարուստ թէ՛ աղքատ, կին թէ՛ տղամարդ, մէկ սրտով, մէկ մտածումով, զօրատր թշնամիին դէմ հանած է մինչև վերջին շունչ կոուելու համար»²⁸:

Վանեցիները կռվի առաջին իսկ օրը խաղաղասիրական նպատակներով դիմում են Վանի «թուրք հայրենակիցներուն», որտեղ մանրամասն բացատրվում է Ջևդեթ փաշայի հայատյաց ծրագիրը՝ Վանի հայ անմեղ ժողովրդին ոչնչացնելու մասին.

«...Եթէ երկրի փրկութեան և երջանկութեան փափաքող էք, անմիջապէս գործի սկսեցէք: Ըսէք Ճևտէթ պէյին, թէ տեղէ մը կատարարութիւնը կրնայ վերցուիլ, բայց ազգերը մնայուն կը մնան: Ըսէք, թէ երկու ազգերը պէտք չէ իրար զարնել տալ:

25 Նույն տեղում, 133 (վկ. 32):

26 Վեր. Արսեն Ա. Կօրկիզեան, «Վան-Այգեստանի հերոսամարտը (1915 Ապրիլ 7 - Մայիս 7)», *Գերասան Սհարունեան, Յուշամարտեան Մեծ Եղեռնի. 1915-1965* (Պէյրոթ, «Ատլաս» տպարան, 1965), 729-770:

27 Նույն տեղում, 731:

28 Նույն տեղում, 732:

Ըստք, դուք հիւր էք, իսկ մենք ընդմիշտ այս երկրին մէջ պիտի ապրինք, հետևաբար պահանջեցէք, որ նա այս երկրէն ելլէ երթայ, պաշարումը վերցնէ և գաւառներու մէջ տեղի ունեցող դէպքերուն անմիջապէս վերջ տայ: Հակառակ պարագային գործը իր ելքին պիտի յանգի և վախճանը աղէտալի պիտի ըլլայ: ՎԱՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ»²⁹:

Մինևոյն ժամանակ Զինվորական Մարմինը ռազմավարական և դաստիարակչական հետևյալ կոչն է ուղղում հայ կովողներին.

«Ռ-ագմիկ ընկերներ,

Պզտիկ յաջողութիւն մը թող չի հեռացնէ գձեզ խոհեմութենէ, ամէն բանի վերջն է գովելի. մեր թշնամին ուժով է և խորամանկ. ձեր անվեհերութեան միացուցէք զգուշութիւն և խոհեմութիւն: Մի հայեոյք թշնամիի կրօնքին, ատիկա անվայել է մեզի համար: Եղէք ճշդասպահ և մեզի դրկած ձեր տեղեկութիւնները գերծ ըլլան չափազանցութիւններէ: Եղէք կարգապահ: ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ»³⁰:

Այնուհետև հուշագրող Ա. Կյորկիզյանը շարունակում է. «Խօսքը տանք Արմենակ Եկարեանին, որ ղեկավարն ու ոգին եղաւ Այգեստանի հերոսամարտին. – «Կրակ կը տեղար շուրջերնիս: Կրակի առաջին Մկրտութիւնն էր...: Շուրջերնիս շփոթ, աղմուկ ու աղաղակ, ողբ ու կոծ... Շտապը նստած, սրտատրոփ կը սպասենք դժբախտ լուրերու. մի դիրքը ինկաւ արդեօք...: ...Բայց ահա, ո՞վ հրաշք, ամէն կողմէ լրաբերներ կը հասնին. – «Մենք մեր դիրքերուն վրայ ենք. յառաջացումի ո՛չ մէկ փորձ թուրքերու կողմէ. եղածը *պրլլոֆ* մըն էր...»: Շունչ մը կ'առնենք: Լրատուներու միջոցաւ լուրեր կը դրկենք թաղերը, որպէսզի ժողովուրդը հանգստանայ: ...Շատերը գինիի կամ օղիի շիշերը առած, ուտելիքներու հետ կը դիմեն դիրքերը՝ կոռուղները ոգևորելու և իրենց գոհունակութիւնը յայտնելու: Այսպէս անցաւ առաջին գիշերը...»³¹:

«Ապրիլի Ցին, կռիւն անելի կը սաստկանայ բոլոր ճակատներուն վրայ: Հաճի Պեքիրի զօրանոցին մէջ գետեղումած ծանր թնդանօթները մեծ աներներ կը գործեն բաց դաշտին մէջ մինակ ինկած հայկական դիրքի մը վրայ, փլատակի վերածելով զայն: Կռիւր նոյնքան կատաղի կը դառնայ Իսաչ Փողոցի ուղղությամբ, ուր թուրքերը, գերագանց ուժերով, պահ մը կ'ընկճեն հայերը: Զբաւականանալով թնդանօթներով ու անվերջ համազարկերով, թուրքերը կը յաջողին հրդեհել մերձակայ հայ մեծ դիրքը, որով մեր կոռուղները կ'անցնին մօտակայ երկրորդական դիրքը: Նոյն պահուն թուրքերը կը հրդեհեն նաև Իսաչ փողոցի երկայնքին վրայ գտնուող անպաշտպան, լքուած հայ տունները: Հրդեհը կը տարածուի նոյնպէս քիչ մը հեռու ինկած Ս. Յակոբի թաղի մէջ, ուր գրեթէ բոլոր հայ տուններու հերթին՝ կը թալլուի ու կը հրդեհուի Ս. Յակոբի եկեղեցին: ...Կռիւին չմասնակցող բնակչութեան վախը փարատելու և մտքերը հանդարտեցնելու համար, Զինուորական Մարմինը հետևեալը կը յայտարարէ ժողովուրդին. –

«Հայրենակիցներ,

Երէկ գիշերուան ամբողջ թնդանօթագութիւնն ու թշնամիի կողմէ վատնուած հարիւր հազարաւոր գնդակներն ու հայկական տուններու հրդեհումները նպատակ

29 Նույն տեղում, 733:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, 733-734:

ունեցան միայն վախճանել ժողովուրդը: Մեր կողմէ՛ ո՛չ մէկ կորուստ կամ դիրքի լքում չի կայ: Մենք չենք յօժարած նոյնիսկ պատասխանել: Խումապի պէտք չի կայ»³²:

Հաջորդ օրը թուրքերն ահավոր կրակ են բացում՝ միաժամանակ հարձակվելով դաշտի հեռավոր Դարդարնել կոչվող դիրքի վրա, բայց՝ ապարդյուն: Կեսգիշերին թուրքերը փորձում են ճեղքել Սահակ բեյի և Թովմաղյան հայկական դիրքերը, բայց հանդիպում են մեծ դիմադրության և, շատ զոհեր տալով, փախուստի դիմում:

Նման մի հարձակում է սկսվում Խաչ փողոցի երկու դիրքերի վրա, բայց՝ ապարդյուն: Ուժեղ, դեմ առ դեմ կռիվ է սկսվում Հանկույսների շրջանում, Շահբենդերյանի դիրքի վրա: Թուրքերին հաջողվում է այն գրավել, բայց հայերը վերագրավում են: Հաջորդ օրը թուրքերը նորից են կրակում, բայց, տասը զոհ տալով, հեռանում:

Բարձր գնահատելով Ա. Եկարյանին որպես Զինվորական Մարմնի ղեկավարի, հուշագրող Վեր. Ա. Կյորկիզյանը գրում է. «Կը հրահանգուի նաև լաւագոյն ոյժերով ամրացնել ամէնէն կարևոր ճակատներէն մէկը եղող Սահակ պէյի դիրքը: Անքուն է նաև Եկարեանը, որ իր զինուորական մարմնի անդամներով և անձամբ կը հսկէ և կը վարէ բոլոր գործերը»³³:

Գիշերը վերսկսում է գեհենային ռմբակոծությունը: Թուրքերը փորձում են ամրանալ հայկական հարմարավետ շենքերի մեջ. «Այդ շենքերէն մէկն էր հայու մը սեփականութիւնը եղող անգլիական հիւպատոսարանի շէնքը, ուր տեղաւորուած էին թուրք ոստիկան զինուորները, որոնք կրակէ կարկուտ կը թափէին հայկական թաղերու, փողոցներու և դիրքերու վրայ, մեր կոռուղներու դիրքէ-դիրք երթնելութիւնն ու յարաբերութիւնը անհնարին դարձնելով: Պէտք էր հրկիզել այդ վտանգաւոր դիրքը և փախուստի մատնել այնտեղ գտնուող թուրք կոռուղները»³⁴:

Բուլղարացի Գրիգորի հնարամտության շնորհիվ վանեցի կոմուղները, հարևան հայկական մի տան պատը ծակելով, նավթ են ցանում շենքի հատակին և հրացանի գնդակներով բռնկեցնում: Հյուպատոսարանի շենքն սկսում է վառվել: Թուրքերը փախչում են՝ հայերի արձակած գնդակներից սպանվելով:

Այդ խիզախ մարտիկներին քաջալերելու համար Զինվորական Մարմինը եռագույնի երիզներով Պատվո Մաչեր է հանձնում՝ գնահատելով նրանց «...անսման արիությանը ... յանուն ազատութեան մղուող ... պայքարին մէջ»³⁵:

Սակայն Այգեստանի պաշտպանողական դիրքերը ապահովելու համար բավական չէր միայն անգլիական հյուպատոսարանի շենքի հրկիզումը: Այգեստանի հայկական թաղամասում կային նաև թուրքական երկու կայաններ. նրանցից մեկը 70 թուրք զինվորներով լցված ֆրանսիական հյուպատոսարանն էր և մյուսը՝ Համուղ աղայի գորանոցը 650 թուրք զինվորներով, որոնք անընդհատ գնդակոծում էին հայկական դիրքերը՝ դառնալով չարիք հայ կոմուղների համար:

Այս երկու կենտրոնները ևս գրավել էին Զինվորական Մարմնի ուշադրությունը:

32 Նույն տեղում, 734:

33 Նույն տեղում, 735:

34 Նույն տեղում, 736:

35 Նույն տեղում:

Գրանք չեզոքացնելու համար ութ խմբեր տրամադրվել էին: Սակայն Համուդ աղայի գորանոցը կառուցված էր հայկական թաղերում և մեծապես վնասում էր հայ կովորներին: Այնտեղ դիրքավորված էին Ջևդեթ փաշայի լավ մարզված չեթեները, որոնք երեք օր շարունակ կրակի տարափի էին տեղացնում հայկական դիրքերի վրա: Այնպես որ, Այգեստանի այդ կարևոր մասը՝ Համուդ աղայի գորանոցը, անհրաժեշտ էր վերացնել:

Վեր. Ա. Կորկիզյանը մանրամասնում է՝ նկարագրելով բուլղարացի Գրիգորին. «Այդ տագնապալի ժամերուն կը գտնուի մէկը, լռակեաց, համեստ, միշտ գործնական ծրագիրներ յղացող և գանոնք անձամբ գործադրող մէկը, Պուլկարացի Գրիգորը, – զին. մարմնի երբեակ անդամներէն մէկը, որ կռիւի առաջին օրէն իսկ կ'որոճայ այս վտանգաւոր գորանոցը ոչնչացնելու ծրագիրը և գայն կը յայտնէ Եկարեանին, առնելու անոր հաւանութիւնը»³⁶:

Վանեցիներն անմիջապէս գործի են անցնում: Ամրաշեն վաշտի քանքանագործները ստորգետնյա խրամատ փորելով աննկատ հասնում են մինչև Համուդ աղայի գորանոցի հիմքը և այն տակից պայթեցնում: Թուրքական գորանոցն իր գորքերով ոչնչացվում է՝ վանեցիներին ազատելով այդ մղձավանջից: «Գիշերը, ի տես ճարճատուող ու կործանուող գորանոցին, հայկական դիրքերու, թաղերու, տուներու, զինուորական մարմնոյ, նոյնիսկ ամերիկեան ու գերմանական շրջանակներու մէջ խանդավառ ցոյցեր տեղի կ'ունենան: Առտուն ժողովուրդը կը խոնուի Զին. Մարմնոյ գրասենեակին առջև և հոն ևս խանդավառ ցոյցեր կը սարքէ: *Տանֆարը* ցնծութեան և յուզումի երգերով կը դիմաորէ կործանուող գորանոցը և անոր փլատակներուն վրայ հայրենասիրական երգեր նվագելէ ետք, յաղթանակի անխառն ոգևորութեամբ կը շրջի հայկական բոլոր դիրքերը...»³⁷:

Զինվորական Մարմինը օրվա մեծ հաղթանակի առթիվ հետևյալ կոչն է ուղղել ժողովրդին՝ ռազմավարության դասեր ուսուցանելով և քաջալերելով նրան.

«Հայրենակիցներ,

Չորս օրէ ի վեր մղած հերոսական պայքարի մէջ, *Նասմէրու* [վատ, փոքրոգի - թուրք.] թշնամիի հազարաւոր թնդանօթային ռումբերու, հարիւր հազարաւոր գնդակներու և բարբարոս խուժանի յուսահատ ու անատամ *սալալաթի* [Աստծո ռոջույն - թուրք.] դիմաց, մենք կեցած ենք հպարտ ու անսասան:

Այիճ-օղլուէն մինչև Արարք, անկէ մինչև Իսաչ փողոց ու մինչև Համուդ աղայի բռնութեան դղեակը, մեր զինուորները կեցած են յանդուգն ու յաղթական: Անոնք համարձակ կը նային մահուան աչքերուն, որ կը սաւառնի իրենց ու բոլորիս գլխավերեր:

...Մեզ չեն սարսափեցներ ո՛չ թշնամիի թուական առավելութիւնը, ո՛չ ալ այն գիտակցութիւնը, թէ պիտի մեռնինք մենք՝ այսօր կամ վաղը: Ո՛չ, մենք կ'ուզենք վայելել մահը իր աստուածային էութեանը մէջ, ո՛չ, մենք կ'ուզենք ցուցնել, ազգերու համաշխարհային այս գոյամարտին մէջ, որ Արևելքի խորքը ապրող դարաւոր կաղնին, - Հայ ժողովուրդը զիտէ մեռնիլ՝ զէնքը ձեռքին, բայց թշնամիի անհամար կորուստներուն և գորանոցներու ճարճատուող աներակներուն վրայ...

36 Նույն տեղում, 737:

37 Նույն տեղում, 738:

Հայ ժողովուրդ,

Կոհուր, որ սկսուած է, պիտի տանինք մինչև վերջ, մինչև վերջին սպառումը մեր արիւնին, և սակայն նաև մինչև վերջնական պարտութիւնն ու անկումը մեր վայրագ թշնամիին:

Հայ ժողովուրդ,

Քաջ եղիր, յաղթանակը մերը պիտի ըլլայ: Մեր զինուորներու դիմադրական կորովը, թող թափանցէ նաև քու մէջդ: Պայքարի հսկայական ծանրութիւնը մի թողուր միայն մեր զինուորներուն վրայ:

Ամէնքը իրենց բաժինն ունին հոս, - ծեր թէ՛ մանուկ, կին թէ՛ աղջիկ, մեր զինուորներու հետ կողք-կողքի թող կռուին և բաժնեն աշխատանքը իրենց մէջ:

Այս կոհուր մեր գոյութեան կոհուր չէ միայն, այլ կռիւ մը ճշմարտութեան և արդարութեան: Թող ամէնքը կռուին, ուրեմն, արդարութեան համար: Թող ամէնքը կարօտն ունենան յաղթանակել տալու ճշմարտութիւնը:

Ոգևորուեցէ՛ք և արի եղէ՛ք, բայց տակաւին փարեցէ՛ք լուռ և ստեղծագործ աշխատանքի, նոր-նոր յաղթանակներ պատրաստելու համար:

Հիացումով դիտեցէ՛ք շարունակ մոխրացող *ղշախներն* [գորանոց - թուրք.] ու թշնամիի անհաշիւ կորուստները:

Մքանչացումով մեր զինուորներու դիցագնական դիմադրութիւնը տեսէ՛ք, և յոյսով ու աշխատանքով պատրաստուեցէ՛ք *Գայիք Օրերուն*, տեսնելու համար հայ ազգային ազատութեան ու վերածնութեան Մեծ Տօնը...

Կեցցէ՛ն հայ զինուորները,

Կեցցէ՛ հայ ժողովուրդը,

10 ապրիլ: ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ: Վան-Այգեստան»³⁸:

Զինվորական Մարմինը որոշում է թուրքական մի քանի կարևոր դիրքեր ևս հրկիզել, որպեսզի հայ կովոդները հնարավորություն ունենան դիքից-դիրք անարգել տեղաշարժվել: Այդ նպատակով Զինվորական Մարմինը որոշում է հրկիզել Արարուց հրապարակի վրա գտնվող թուրքական ոստիկանատունը, որն իր դիմացը գտնվող հայկական դպրոցի և եկեղեցու մեջ տեղավորված թուրք զինվորներով առանձնացրել էր հայկական այդ մեծ շրջանը: Այդ կարևոր գործը գլուխ է բերում վարժապետ Տիգրան Այիճյանը: Նա գնդակների տարափի տակ նավթով հրկիզում է ոչ միայն ոստիկանատունը՝ *մերքեզը*, այլև նրա շուրջ գտնվող թուրքական խանութները և արժանանում «անվեհեր Հրձիգի» տիտղոսի³⁹:

Հայ մարտիկները հրկիզվում են նաև Պոճկե Ահմեդի թուրքական կարևոր դիրքը Շան թաղի մեջ: Նրանք հրկիզում են նաև Իսաչ փողոցի հրապարակի վրա գտնվող Խուլի տունը: Թուրքերն ստիպված լքում են Սարաջյանի իրենց կարևոր դիրքը, որը հայերն իսկույն գրավում են: Առանձնապես բուռն կռիվներ են տեղի ունենում Փոս թաղի, Իսաչ փողոցի, Շմավոնյանի և Նալբանդյանի դիրքերի ուղղությամբ, որոնց ընթացքում թուրքերը շատ զոհեր են տալիս:

38 Նույն տեղում, 738-739:

39 Նույն տեղում:

Ապրիլի 13-ի գիշերը հրկիզվում է նաև Թյուրյունջյանի հայկական դիրքի դիմաց գտնվող թուրքական ամենամոծեղ դիրքերից՝ Թոփալ Մուլլայի տունը: Հրկիզվում է նաև հայկական շրջանի մեջ գտնվող ֆրանսիական հյուպատոսարանը, որը նույնպես թուրքական զինվորներով լցված վտանգավոր դիրք էր հայերի համար: Այդ շենքի հրկիզողը 14-ամյա մի վանեցի պատանի էր: Նա նավթով թաթախված վերմակի մեջ փաթաթված, գնդակների տարափի տակ սրընթաց վազում է, վերմակի նավթով ողողում ֆրանսիական հյուպատոսարանի դուռը և հրկիզում շենքը: Արամ Մանուկյանը փոքրիկ հերոսին խրախուսելու համար մի ոսկի է նվիրում, իսկ Զինվորական Մարմինը՝ արծաթյա մեդալ⁴⁰:

Վանի հերոսամարտի հետագա իրադարձությունները հուշագրող Վեր. Ա. Կորկիզյանը շարունակում է՝ իր «Ճշգրիտ տեղեկություններին» ավելացնելով նաև Այգեստանի Զինվորական Մարմնի քարտուղար և այդ դեպքերին ակնաստես Օսնիկ Մխիթարյանի «Վանի ինքնապաշտպանությունը» հուշագրությունը (Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Գ տարի, թիվ 4):

«Ապրիլ 16ին Այգեստանի ինքնապաշտպանության կռիւները յարաճուն թափով կը կրկնուին՝ գրեթէ ամէն ժամ, գիշեր ու ցերեկ: Այլևս այս անգամ թուրքերը կը փորձեն իրենց յարձակողականը ամէն ուղղութեամբ: Վասպուրականի գաւառներուն մէջ իրենց սև գործը աւարտած թուրք և քիւրդ հրոսակախումբեր Այգեստան կը թափուին և հայ ինքնապաշտպանութեան մարտիկներուն կը պարտադրեն իրօք օրհասական կռիւ մը:

Թշնամի ուժերը ո՛չ միայն կ'աւելնան թապէս, այլև թնդանօթներու և ռազմամթերքի նոր աջակցութիւն կը ստանան Պիթիսէն: Միաժամանակ, թուրքերը արդէն բաւական փորձառութիւն ձեռք կը բերեն Վանի իւրայատուկ կռիւներու մէջ և, մանաւանդ, իրագեկ կը դառնան հայկական անհաւասար ու փոքրաթիւ ուժերուն: Թուրքերը յստակօրէն կ'ըմբռնեն, թէ Այգեստանը բացարձակապէս զրկուած է հացի պաշարէն, մեծապէս կը նեղուի զինամթերքի պակասէն և դուրսէն ո՛չ մէկ օգնութիւն կ'ակնկալէ այլևս... Թուրքերը կը հասկնան թէ այգեստանցին միայն իր գոյամարտն է որ կը մղէ...»⁴¹:

Ինքնապաշտպանության երկրորդ տասնօրյակի թուրքական առաջին հարձակման թիրախը դարձյալ Սահակ Բեյի դիրքն է: Չորս թնդանոթներ շարունակում են ոմբակոծել Սահակ Բեյի դիրքը, որի վերևի հարկը չի դիմանում և խորտակվում է: Պաշտպանությունը դառնում է անհնար, բայց հայ մարտիկներն ուխտել էին՝ «Ո՛չ մէկ թիզ հող չզիջիլ թշնամիին»⁴²:

Երբ թուրքերը կրկին դիմում են հարձակման, հարյուրի չափ զինվորներ փողոց դուրս գալով «սալավաթ» [Աստօծ ողջուն - թուրք.] կանչելով փորձում են խուժել Սահակ Բեյի դիրքը: Վանեցիներն իրենց ինքնաշեն ձեռնառումբերով դիմադրում են: Սկսվում է դեմ առ դեմ ձեռնակռիվը: Հայերը հերոսաբար կռվում են գետին տապալելով շատերին:

40 Նույն տեղում, 741:

41 Նույն տեղում, 742:

42 Նույն տեղում:

Ռմբակոծությունը շարունակվում է ամբողջ օրը: Մութն ընկնելուն պես Ամրաշեն վաշտի բանվորները սկսում են իրենց աշխատանքը, փորում են խրամներ և նոր դիրքեր են կազմեցնում Սահակ Բեյի ավերակների վրա: Թուրքերն ամբողջ գիշեր ոմբակոծում են վերանորոգվող դիրքը: Ամրաշեն վաշտի բանվորները վիրավորվում են և նույնիսկ զոհվում, բայց վերանորոգման աշխատանքը չի ընդհատվում, ընկնողին փոխարինում է մեկ ուրիշը: Հաջորդ օրը թուրքերը տեսնում են ավելի ամուր իրենց առաջ կանգնած է Սահակ Բեյի դիրքը: Սա վանեցի դյուցազունների ռազմավարական հնարամիտ գործելակերպն էր, որը ոչ միայն զայրացնում, այլև՝ զարմացնում էր Ջնդերին:

Ապրիլի 16-ին և 17-ին կռիվները շարունակվում են Փոս թաղի, Լավանդ Օղլուի, Սահակ բեյի և Թովմաղյան դիրքերի ուղղությամբ, բայց հայ մարտիները թշնամուն հանկարծակիի են բերում և «սալավաթ» կանչող թուրք առաջնորդն սպանվում, ընկնում է գետնատարած:

Կատաղած թուրքերը ոմբակոծում են Այգեստանի գրեթե բոլոր դիրքերը, բայց հատկապես Սահակ բեյի և Թովմաղյան դիրքերը, իսկ հայ մարտիկները ձեռնառումբերով ոչնչացնում են թուրքերին:

Թուրքերը 200 հեծյալներով սկսում են արշավել Շուշանցի և Վարազի հայկական դիրքերի վրա, ուր հսկում էր Շիրինը, բայց՝ ապարդյուն: Հետագա օրերին թուրքերը կրկին ոմբակոծում են ոչ միայն Այգեստանի դիրքերը, այլև փողոցները, եկեղեցիները, դպրոցները: Մեկ օրվա ընթացքում թուրքերն արձակում են 400 ռումբ: Նույն գիշերը թուրքերը ոմբակոծում են ամբողջ Այգեստանը: Հայերը թեպետ նրանց պատասխանում են նվազախմբի խրոխտ հնչյուններով, սակայն ծանր էր Խաչ փողոցի Նալբանդյանի և Օթելի հայկական դիրքերի վիճակը, որոնց վերնահարկերը լրիվ ավերված էին: Ամրաշեն վաշտի բանվորները կրակահերթի տարափի տակ սկսում են վերանորոգել դիրքերը: Եթե նրանցից մեկն սպանվում էր կամ վիրավորվում, իսկույն ուրիշն էր նրան փոխարինում:

Այգեստանի ամբողջ արևմտյան մասը՝ Խաչ փողոցը, Սահակ-բեյը, Արարքը, թուրքական թնդանոթը ավերակի էր վերածել: Հայերը որպես փոխվրեժ ավերում են Արարքի թուրքական ոստիկանատան մնացած մասը: Կատաղած թշնամին կրակ է տեղացնում իր թնդանոթներով, որոնք տեղադրված էին հարավից՝ Հաջի Բեքիրի, իսկ հյուսիսից՝ Թոփրակ Գալեի զորանոցների մեջ: Թշնամին գրավում է նաև Չըմզըմ Մաղարայի բարձունքները, իսկ երկու օր առաջ արդեն գրավել էր Սըղգա գյուղը, որտեղից խփում էր Շուշանցի և Թագաքյահրեզի հայկական դիրքերին: Դրությունը բավական հուսահատական էր. «Բայց ահա Չինտորական Մարմին երկու կտրիճ անդամները՝ Արմենակ Եկարեան և Կայծակ Առաքելը, իրենց թները սոթած՝ կռուի վայրը կը հասնին այս ճակատագրական վայրկեանին ... և կէս ժամուան յուսահատ կռիւը այս անգամ ալ կը վերջանայ թշնամիի խայտառակ փախուստով...»⁴³:

Վանի հերոսամարտի յուրահատկություններից մեկն էլ այն էր, որ Տեղեկատու Դիվանն անընդհատ լրատվություն էր հաղորդում Չինվորական Մարմին, որն

43 Նույն տեղում, 747:

անմիջապես արձագանքում էր՝ օգտակար խորհուրդներ տալով կռվողներին և կամ՝ օգնության հասնելով թե՛մ կռվի վայրը:

Թշնամու թնդանոթային արկերն անխնա հարվածում են Հանկույսների, Ամիրխան-յանի դիրքի, Շուշանցի, Քաղաքամեջի, Թագաքյահրեզի, Հյուսյանի այգիների և այլ դիրքերի վրա:

Վերջապես, որպեսզի կանխեն թուրքական դավադիր հարձակումները, հայ մարտիկները նախապատրաստում են հրկիզել Սահակ բեյի դիրքի դիմաց գտնվող Ատալուխի և Համզի դիրքերը: Քանքանագործները գիշերով սկսում են փորել ստորգետնյա խրամը, և, քայլ առ քայլ մոտենալով, հրկիզում են այդ դիրքերը: Սակայն Այգեստանի ընդհանուր վիճակը մնում էր հուսահատական, մանավանդ սննդի պակասն սկսել էր նեղել բոլորին:

Շուշանցից և այլ դիրքերից հասնող տեղեկությունների համաձայն նկատվում է, որ թուրք զինվորներն ու քրդերը անհասկանալի եռուզեռի և տեղափոխության մեջ են Հաջի Բեքիր, Կոռուբաշ, Հայոց Ձոր գծի վրա: Պարզվում է, որ թուրքերը ծանր պարտություն են կրել Դիլիմանի մոտ: Այդ մասին հուշագրողը մեջբերում է.

«Արդարև», կը գրէ Արմենակ Եկարեան իր հուշերուն մէջ (էջ 320), «Էտալի պէլը կարևոր յաղթանակ մը տանելով՝ ետ մղած էր ռուսական ուժը: Սակայն հայ ազգի զօրավար Նագարբեկով, որ վեց ժամուան հեռաորութեան վրայ կը գտնուէր, օգնութեան հասնելով՝ ռուսական պարտութիւնը մեծ յաղթանակի մը կը փոխէ և, Անդրանիկի հետ միասին, կը փճացնէ Տիլիմանի թրքական ուժերն ալ: Այս վերջինին մնացորդները, լեղապատառ, հազիւ Թուրքիա կ'ապաստանին: Թշնամին ձգած էր անելի քան 20,000 սպաննուած և ռազմանիւթի հսկայ պաշար: Ճևտեթ այս անցուդարձերուն տեղեակ էր»⁴⁴:

Հետևաբար, վերջին օրերի՝ ապրիլի 25-28-ի, թուրքերի տարօրինակ եռուզեռը դրանով էր պայմանավորված:

Բացի այդ, Կովկասյան ճակատում Սարիղամիշի մոտ, Էնվեր փաշայի պարտություն կրած թուրքական բանակի զորքերը Ջևդեթ փաշայի հրամանով, քուրդ հրոսակների և մոլեռանդ ամբոխի հետ, հարձակվում են Վանի շրջակա հայկական գավառների ու գյուղերի վրա և սկսում են կոտորել հայերին, թալանել նրանց ունեցվածքը, ավերել հայկական շեները:

Թեպետ Վանի նահանգի մի շարք գավառներում (Շատախ, Հայոց Ձոր, Այջավազ, Արճեշ, Գավաշ, Կարճկան), ինչպես նաև առանձին գյուղերում (Բելու, Աթանան, Ուլմ, Առեն, Ալյուր, Կեմ և այլն) գրեթե անգն գյուղացիները հարկադրված դիմում են ինքնապաշտպանության, սակայն՝ ապարդյուն, քանի որ բաց տարածության մեջ նրանք միմյանցից կտրված էին և բավական անկազմակերպ:

Այնինչ ռազմավարական առումով ամենաապահով դիրքերն ունեին Վանի Այգեստանն ու Քաղաքամեջը: Այնպես որ, նպատակահարմար էր հավաքվել և, ինչպես վանեցիներն էին ասում, «մի բռունցք դառնալ»:

Վանի ինքնապաշտպանության երրորդ և վերջին տասնօրյակը ևս հազեցած էր ծանր ու դաժան իրադարձություններով:

44 Նույն տեղում, 753:

Խոշապի, Հայոց Ձորի և Վանի շրջակայքի գյուղացիության մի ստվար մասը՝ ավելի քան 5000 հոգի, ապրիլի 6-ից սկսյալ նախընտրել էր մնալ Շուշանցի և Վարազի լեռնալանջերի ամուր դիրքերի մեջ: Այդ բազմահազար բազմությունը բաղկացած էր մեծ մասամբ անզեն գյուղացիներից, որոնց մեջ կային բազմաթիվ կանայք, երեխաներ և ծերեր: Շատ քչերն էին հնարավորություն ունեցել մի քանի օրվա պարեն վերցնել: Անհրաժեշտ էր պաշտպանել այդ գյուղացիներին թուրքական հարձակումներից: Այդպիսով կպաշտպանվեր նաև Այգեստանը, քանի որ Շուշանցի և Վարազի գիծը միակ բաց ճամփան էր Այգեստանի համար և ամենահուսահատական պահին, Շուշանցն ու Վարազն են որ վերջին ապավենը կարող էին դառնալ մարտնչող Այգեստանի համար:

Այդ օրերի Վասպուրականի շրջակա գյուղերի բնակչության ծանր և անելանելի վիճակի մասին են մեզ պատմել 1905 թ. Վանի Նարեկ գյուղում ծնված, հետագայում որբանոցներում մեծացած ակնաստես վերապրող *Մկրտչի Դավթյանը* հուզումով է հիշել այդ ողբերգական իրադարձությունները. «...1915 թ. թուրքերը սկսեցին հարձակվել: Գյուղերը մտան, եկան հասան մեր գյուղը, բարձրացան սարը: Մերոնք բարձրացան սարերը, կանայք, երեխաներս մնացինք գյուղում: Գնացինք մտանք եկեղեցին: Լաց, կոծ: Մեկ էլ շրջապատվեցինք թուրք զինվորներով: Եկան ժամի դարվազը խփեցին, մտան ներս: Հրաման կար՝ անզամ կրծքի տղա երեխաներին մորթել: Մերս իմ ականջները ծակեց, օղեր կախեց, աղջկա շորեր հագցրեց: Իմ երկու քույրերը արդեն մահացել էին: Մերս էր և մեր հարևանը՝ իր տղա երեխայով: Եկան ստուգեցին, հենց ստուգեցին, տեսան մորս կողքին հարևանի գրկին մի տղա երեխա, խանչալը խփին վզին, սպանեցին: Հարևանի կինը ընկավ վրեն, սկսեց լալ: Մերս էլ վրան ընկավ, ես ծվացի, բղավեցի, քսան-քսանհինգ տղաներ սպանեցին: Ինձ աղջկա տեղ դրեցին: Աղջիկներին հավաքեցին տարան: Մայրերը սկսեցին ծվալ: Դարպասի դուռը բաց էր մնացել: Տեսանք՝ մոտ քսան-երեսուն տղամարդ, քեռիս էլ՝ ոտքը կտրված, դրանց մեջն էր, լցրին վանքի գունդ բոլորին, նավթ լցրին ու վառեցին: Մերս դարդից մեռավ: Մենք մնացինք անտեր»⁴⁵:

Ակնաստես վերապրող *Մաքրուհի Սահակյանը* (ծնվ. 1907 թ., Վան, գ. Բժնկերտ) հուզումով է վերհիշել. «...1915 թվին մի պայծառ առավոտ շուտ Կոտո մամաս վերցնում է կուժը, որ իջնի Շամիրամի առվից ջուր բերի: Հորեղբորս կինը էդ օրը հաց էր թխում: Մերս հեռվից տեսնում է մոտեցող ձիավորներին՝ ձեռներին սվինները արևի տակ փայլփլում էին: Մանր ու պետ վանեցիները կտուրների վրա նայում են: Թուրքերը եկել կոլոնվել են մեր գյուղը, շրջապատել են, հանդիպած մարդկանց խփել, սպանել: Մերս, որ հեռվից տեսնում է էդ իրարանցումը, կուժը կտարում է, վազում է տուն: Տեսնում է՝ թուրքերը լցված են մեր տունը: Շուտ են տվել հացի խմորը գետնին, ամեն ինչ իրար խառնված: Երկու հորեղբորս կնիկներին և յոթ երեխեքին լցնում են մարագը: Իմ հորեղբոր կինը դուրս է փախչում երեխան ձեռքին, նրան բռնում սպանում են: Ես ինքը տարեկան մի ախպեր եմ ունեցել՝ Մովսես անունով: Բեկի կնիկը տանում պահում է նրան. մենք էլ չտեսանք, տարան նրան թուրքացրին:

45 Սվազյան, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, 137 (վկ. 34):

Գեղեցիկ աղջիկներին զցում էին ձիու թարկը, տանում էին: Երեխեքին սվինների վրա հանում, զցում էին գետին՝ սպանված: Մորը զցում էին ձիու թարկը տանում: Մերս իր երեխան գրկում է, գնում է քեռու տունը: Ջահել հարսներին, որ ընկնում էին թուրքերի ձեռքը և չէին ենթարկվում նրանց, կուրծքը կտրում էին, զցում էին շներին: Իմ մի հորեղբորս խփել, զցել են Շամիրամի գետը: Մանուկ հորեղբորս էլ նմանապես սպանել են սարսափելի ձևով: Էդ բոլորը ես տեսել եմ իմ աչքերով, ու ամբողջ օրը մինչև հիմա աչքերիս առաջն է: Ես եմ եղել, Վարդանուշ քույրս, Ենոքը՝ հորեղբորս տղեն, հորեղբորս կնկան՝ Հասմիկին, սվինով սպանեցին մեր տան շեմին, հրացանի կոնդախներով խփում, զցում էին գետնին: Քանի որ ընտանիքի հարստությունը մեծ հարսի ձեռքին էր լինում, էն էլ կապված էր նրա մեջքին, նրան սպանեցին, հաց թխելու թևտոցները ճղճեցին, շորերը ճղճեցին, մեջքին կապած ոսկիները գտան, հանին, առին ու գնացին»⁴⁶:

Ականատես վերապրող *Միրակ Մանասյանը* նույնպես վերհիշել է ոչ միայն թուրքերի կողմից իրենց Կեմ գյուղի գյուղացիների ջարդն ու թալանը, այլև՝ իրենց փախուստը գյուղից, թե ինչպես գիշերները քայլելով իրենք մոտեցել են Վանին. «...Ես ծնվել եմ 1905 թվին, Հայոց ձորի Կեմ գյուղում, որը Վանից հեռու է տասնվեց կիլոմետր: ...1915 թ. մարտի 5-ին հուժկու հրետանու ձայն լսեցինք: Ժողովուրդը հավաքվեց հրապարակ և գնաց, լցվեց եկեղեցի: Թուրքերն արդեն նախօրոք զորահավաք էին կազմակերպել և բոլոր երիտասարդների հավաքել: Քանի որ երիտասարդ չէր մնացել, մերոնք ստիպված էին դիրքերը թողնել-գնալ հարևան գյուղերը: Մենք գնացինք Կյուկյանց հայկական գյուղը: Այնտեղ մի քանի հազար մարդիկ էին, մեզ տեղավորեցին մարագների մեջ: Ամեն օր թուրքերը բռնում էին հայերին և մեր աչքի առաջ կախում կամ մորթում էին: Դրանցից մեկն էլ իմ հորեղբայր Պետրոսն էր: Նա ունչպար էր: Երբ տեսանք Պետրոսին այդ վիճակում, մենք չճանաչեցինք: Մեզ առանձնացրին հատուկ մարագի մեջ: Դուռը փակեցին ու մեզ վրա պահակ նշանակեցին: Մենք այդ ահավոր դեպքերից սարսափած՝ ուզում էինք փախչել այդ գյուղից: Մարագում նույնիսկ անասնակեր չկար: Մեզ հաջողվեց դուրս պրծնել, գնալ գյուղ, մերոնց գտնել: Հաջորդ օրը բարձրացանք լեռները, որոնք շատ անտառախիտ էին: Մենք Քրոքըռ լեռան լանջին էինք: Մեր գյուղի դիրքն այնպիսին էր, որ մենք սարի լանջին էինք ապրում: Շաղբաթի ահռելի գետը և Շամիրամի ջրանցքն էին անցնում մոտից: Մենք բարձրացանք լեռան գագաթը, անտառի մեջ, տեսանք, թե ինչպես թուրքերը և քրդերը մեր անասունները, անկողիները, մեր սպիտակեղենները թալանում էին: Մենք տեսանք, որ ամեն առավոտ թուրքի լամուկները գալիս են, սկսում են կրակել ինչ-որ թիրախի վրա: Երբ թուրքերը հեռացան, մեր տղաները իջան ու մոտեցան, տեսան, որ այդ թիրախը իմ պապի գլուխն էր: Անխիղճ թուրքերը պապի թաղել էին հողի մեջ կենդանի-կենդանի, գլուխը թողել էին դուրսը և կրակում էին անընդհատ: Երբ վերադարձանք գյուղ, պապիս մարմինը, որ արդեն քայքայված էր, մի կերպ թաղեցինք: ...Չեմ կարող մոռանալ 1915 թիվը, երբ մենք լեռներով, գյուղերով անցանք. մարտ ամիսն էր՝ անձրևային, բուք, սուկալի ցուրտ: Վերջին գյուղը, որ

46 Նույն տեղում, 145-146 (վկ. 39):

Վարագ էր տանում, դա Բերդակն էր: Մենք այնտեղ տեսանք փողոցներում մերկ, սպանված մարդիկ, որոնք ուռել էին և նեխել: Հոտում էին: Մենք այդ բոլորի միջով անցանք դեպի Վարագ: Լուսաբացին Վարագի լեռներում թուրքերը, որ դիրքեր էին բռնել, մեզ տեսան և սկսեցին կրակել մեզ վրա: Ժողովուրդը սարսափահար լաց էր լինում: Վարագը մեր սրբավայրերից մեկն է, որտեղ մի շարք եկեղեցիներ կան, Խրիմյան Հայրիկը այնտեղ դպրոցի տնօրեն է եղել: Մեզ տեղավորեցին գոմերում: Վարդապետները մեզ երկու հարյուր գրամ հաց էին տալիս՝ զրկելով իրենց բերնից: ...Մեկ-երկու ամիս այնտեղ մնալով՝ մենք փախչում էինք ու մոտենում Վանին: Միշտ գիշերով էինք գնում, քանի որ ցերեկը մեզ հետապնդում էին: Երբ Վանին մոտեցանք ու Քաղաքամեջ պիտի մտնեինք, թուրքերը կանգնեցրին, սկսեցին տղամարդ փնտրել: Վանի հերոսները հեռադիտակով նայում էին, սկսեցին կրակել: Թուրքերից ոմանք ընկան, ոմանք փախան, և մենք ազատվեցինք, մտանք Վան:

...Վանում մեզ տեղավորեցին դպրոցի շենքում: Ամեն առավոտ Վանի փողային նվագախումբը նվագելով ման էր գալիս՝ երեխաները նրա ետևից: Արդեն Վանի ապստամբությունն սկսված էր: Մի հայ ասաց մեզ՝ երեխաներիս. «Գնացե՛ք փամփուշտներ հավաքե՛ք, բերե՛ք, որ նորը պատրաստեն»: Մենք գնացինք փամփուշտներ հավաքեցինք, տվեցինք արհեստանոցին: Հասավ օրը, երբ կոհիմս ուժեղացավ Վանում, Այգեստանում: Վասպուրականցիները, որ հավաքվել էին այնտեղ, մեծ կամքի ուժով պաշտպանեցին և Այգեստանը, և Վանի կենտրոնը՝ Քաղաքամեջը»⁴⁷:

Հետևաբար Խոշապի, Հայոց Ձորի և Վանի շրջակայքի գյուղացիության մեծ մասը կանայք էին, երեխաներ և ծերունիներ, որոնք հարձակվող թուրքերի ջարդերից և կողոպուտից ունեզրկվել էին՝ կորցնելով և օթևան, և ամեն ինչ: Մի քանի օրերի ընթացքում հին գաղթականներից բացի Այգեստանի փողոցները, պարտեզներն ու բակերը լցվում են հազարավոր նոր գաղթականներով: Այնպես որ, եթե մինչ այդ Վանն ուներ ընդամենը 23.000 հայ բնակիչ, ապա 1915 թ. ապրիլին քաղաքում արդեն կուտակվել էր ավելի քան 60.000 հայ:

Վանի դիմադրողական ինքնապաշտպանության Զինվորական Մարմինը, կանխագգալով այդ բոլորը, նախօրոք արդեն ստեղծել էր *Խնամարար Մարմին*, որն արդեն իսկ հոգում էր Վանի շրջակա գավառներից ու գյուղերից թուրքական կոտորածներից մազապուրծ փախստականների կարիքները: Այդ օրերին Այգեստանը գրեթե հաց չունեւր, բայց իր բերնից կտրելով՝ նրանց էր բաժին հանում նաև շաքար, Օճառ և հազուստեղեն, իսկ Կարմիր Խաչի մի խումբ դեղագործներ և հիվանդապահներ զբաղված էին նրանց վարակիչ հիվանդությունները բուժելով: Հետևաբար, այդ փախստական հայերի ուտեստի, տեղավորման և առողջական կարիքները մասամբ մեղմացված էին: Նույնիսկ նրանցից ոմանք զենք ստանալով մասնակցում են ինքնապաշտպանությանը:

Մայիսի 2-ին կոիվը թափով վերսկսվում է, մանավանդ կատաղի է դառնում ոմբակոծությունը: Հաճի Բեքիրի և Թոփրակ Գալեի զօրանոցների մոտ տեղադրված երկու թնդանոթներով թուրքերը ոմբակոծում են Այգեստանը, այդ թվում նաև՝

47 Նույն տեղում, 138-139 (վկ. 35):

ամերիկյան և գերմանական շենքերը և դրանց վրա ծածանվող դրոշակները⁴⁸:

Զինվորական Մարմինը որոշում է դիմել ճակատային հարձակման: Մայիսի 3-5-ին՝ երեք օր շարունակ, Վանի մեջ հրդեհ էր և կողոպուտ: Ըստ այդ հրահանգի, վանեցի խիզախ մարտիկներն երկու խմբի են բաժանվում և, զգուշորեն հետախուզելով թուրքական դիրքերը, քայլ առ քայլ մոտենում են այդ երկու զորանոցներին և, «Կեցցե՛» բացականչելով, ներխուժում՝ սպանելով սարսափահար փախուստի դիմող թուրքերին և հրկիզելով այդ զույգ կառույցները: Ջնդեթն արդեն փախուստի էր դիմել՝ մայիսի 3-ին թողնելով Վանի իտալական փոխ-հյուպատոսս պր. Սպորտոնին ուղղված իր երկտողը, որտեղ շարունակում էր ստել՝ իր խայտառակ փախուստը պատճառաբանելով հետևյալ կերպ. «...Պատերազմական հարկադրությունաց պատճառով քաղաքը կը թողում»⁴⁹:

Այնուհետև, վանեցի քաջորդիներն արշավում են դեպի Վանի բերդի պարիսպների տակ տարածվող թուրքական բարբարոսության բանտը, որպեսզի ազատեն կալանավորված անհաշիվ հայ մտավորականներին ու գործիչներին, սակայն այնտեղ բացի վախից ծվարած թուրք ծեր պահակներից ոչ մի կենդանի շունչ չէր մնացել: Վերջին պահին, իրենց փախուստից առաջ, թուրքերը հասցրել էին հայ բանտարկյալներին շղթայված դուրս բերել և բոլորին դաժանորեն ոչնչացնել:

Հերոսամարտի ընթացքում վանեցի մարտիկները ևս գերեվարել էին բազմաթիվ անգն թուրք բնակիչների՝ կանանց, ծերերի, լքված երեխաների, բայց նրանց վրա գենք չեն բարձրացրել, այլ ընդհակառակը՝ բոլորին հանձնել են ամերիկյան և այլ մարդասիրական խնամատարություններին՝ բարոյապես տարբերվելով թուրքերից. «Մայիս 3ի գիշերը, Մայիս 4ը և Մայիս 5ը, ամբողջ երեք օր, ամբողջ Վանի մեջ հրդեհ էր և կողոպուտ... Կը կողոպտուէր ու կը հրդեհուէր այն ամէնը, ինչ-որ երեկի բարբարոս թշնամին խլած էր հայերէն: Այդ հրդեհումներն ու կողոպուտները որքան ալ տարերային ըլլային, սակայն ունէին և քաղաքական իմաստ: Ամէնէն առաջ անհրաժեշտ էր կերակրել շուրջ 40,000 սոված գաղթականություն, որուն հայրենի գիւղը կողոպտուած էր մինչև վերջին թելը:

Անհրաժեշտ էր նաև ոչնչացնել թրքական ամրությունները – զօրանոցները, ոստիկանատունները, դիրքերը, կառավարչատունը, որպեսզի թուրքը որևէ անակնկալի պահուն յենարան չունենար այլևս: Անհրաժեշտ էր կողոպտել և հրդեհել թրքական թաղերը, որպեսզի թուրք ազգաբնակչությունը այլևս վերադարձի յոյսեր չկապել Վանի հետ: Թուրք ժողովուրդի բնակավայրը ավելի անդին, Անատոլուի խորերը պիտի ըլլար, բայց ոչ Հայկական Այգեստանը»⁵⁰:

Բնորոշելու համար հաղթական վանեցիների այդ օրերի սրբազան խանդավառությունը մեջբերենք Վանի ինքնապաշտպանության մարմնի վերջին կոչն ու դիմումն ուղղված հայ ժողովրդին.

«Հայ ժողովուրդ,

Ահա կը բոլորենք մեր ամսօրեակը – ամսօրեակը պայքարի ու փառքի, մահուան ու

48 Ահարոնեան, *Յուշամարտն Մեծ Եղեռնի*, 761:

49 Նույն տեղում, 766:

50 Նույն տեղում, 767:

յարութեան մեր ցեղին: Ամսօրեակը նաև հայութեան առաջին և պայծառ գարունին:

Ամիս մը առաջ, այսօր, երբ թշնամին վատաբար կռիւ յայտարարեց քաղաքակրթութեան և արդարութեան դէմ, մե՛ր դէմ, մենք հաւատքով փարեցանք մեր գէնքին և մեր հոգիին խորեքէն զգացինք, որ յաղթանակը մերը պիտի ըլլայ այս կռուին մէջ, վասնզի մեր կռիւը խաւարին դէմ էր. տգիտութեան ու բռնութեան դէմ՝ ճշմարտութեան ու արդարութեան համար:

Եւ վերցուցինք գէնքը, կուրծք տալու համար թշնամիի գնդակներուն և ռումբերուն, որոնք կու գային վերջնական հարուածը հասցնելու մեր կորացած մէջքին...

...Եւ մեր հերոսական ու պատմական մարտնչումներու ընթացքին՝ *նչ մէկ քրեղ և ո՛չ մէկ վայրկեան* թշնամին չտեսավ մեր զինուորը պարտուած և մեր դիրքը լքուած:

Ամսօրեայ պայքարը, զոր տարանք փառքով ու պատուով, այսօր իր կատարելութեան մէջ կը վայելենք ահա մեր յաղթանակներով արբած հայ ժողովուրդին հետ:

Մեր զինուորի արի ու անսասան դիմադրութիւնը ամէն տեղ թշնամիին զգացնել տուաւ, որ մեր երակներուն մէջ չէ դադրած, կը հոսի տակաւին արիւնը ազատութեան ու կռուի, և այդ աստուածային արիւնն է, որ աղմկ այոյզ ու սրբանուէր բռնկումով, գիտէ գլխապտոյտ ու անձնատուր փախուստի մատնել երէկի ամբարտաւան ու ամէնազօր, բայց այսօրուայ վախկոտ ու ստրուկ թշնամին...

Երեք օր է ահա, որ յաղթանակի խենթութիւնը բռներ է մեզ... Զօրանցներու գեղատեսիլ հրդեհներու և բոլոր դահճապետներու որջերու ճարճատումներու առջև մենք կեցած ենք հիացումով ու արբած...:

...Եւ այսօր, երբ փառաւոր պայքարն է մեր ետին, լիակատար յաղթանակն է որ կ'ապրինք և վերջնական ազատութիւնն է մեր առջև, մենք գիտակցութիւնը ունինք աւելի երջանկաբեր ու պայծառ հանգրուաններու մեր հուսառատ ու երագող ցեղին համար...

Մեր հերոսական կռիւներով մենք արդէն հիմը դրինք այն հոյակապ ազատութեան, որուն երագեցին մեր հանճարները մեր ժողովուրդին հետ, որուն համար երեսօրեայ կռիւներով միլիոնաւոր կեանքեր զոհաբերեցինք և որու առաջին արշալոյսը կը ծագի ահա բախտաւոր Վասպուրականի հպարտ լեռներուն վրա...

Այսօր, ուրեմն, տօնն է, ո՛չ միայն մեր ամսօրեայ պայքարին և յաղթանակներուն, այլեւ նախատօնը Հայկական Ազատութեան բոլոր բռնաւոր լուծերէն, բոլոր յօշոտող ճիրաններէն...

Կեցցէ՛ Հայկական Ազատութիւնը,

Փանք ինկածներուն,

Կեցցէ՛ Վասպուրականի մարտնչող երիտասարդութիւնը,

Կեցցէ՛ Հայկական բանակը...

Վասպուրականի Հայ ինքնապաշտպանութեան ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ,
6 Մայիս, Վան-Այգեստան»⁵¹:

«Մայիսի 6ի առաւօտեան, հայ կամաւորական հեծելագունդի շղթան կը ձգուէր Շահպաղի գիւղի սպիտակ բլրակներուն վրայ և տակաւ կը մօտենար Այգեստանի

51 Նոյն տեղում, 768-769:

դուռներուն: ...Վանի ամբողջ հայ ժողովուրդը սրտատրուփ կը սպասէր իր հարազատներու առաջին հանդիպումին, գրկախառնումին և համբոյրին: Հսկայական տարածութեան մը վրայ, շար ի շար, կանգնած էին Այգեստանի հերոսամարտը կերտող մարտիկները, մազեր ստորճանակներով և հրացաններով զինուած: Հոն էին նոյնպէս բանուորներ, արհեստաւորներ, առևտրականներ, գիւղացիներ, ուսանողներ, մտաւորականներ, աշակերտներ, անէնը, ամէնը: Այգեստանի ամբողջ ժողովուրդը, կին ու աղջիկ, ծեր ու մանուկ, բնիկ թէ գաղթական:

Մարտիկներու և ամբոյսի առջև կանգնած էր Զինուորական Մարմինը, Վան-Վարժապետանոցի աշակերտութիւնը, Այգեստանի բոլոր յաղթանակներն աւետող իր «Փանֆառ»ով, որ յուզումնասարսուռ շեշտերով կը նուագէր է «Մեր հայրենիք»ը...

...Կամաւորական հեծելազունուորը մօտեցած էր արդէն՝ երբ վաթսուն հազարի հասնող ժողովուրդը լիաթոք կեցցէ կը գոռար...: Կամաւորական զունդը իր հերթին, հիացիկ ու բերկրանքէ զինով, կը փոխադարձէր իր ողջոյնները հերոսական Վանին ու Վանեցիին:

...Եւ ալ անկէ ետք համբոյրներ ու աղօթքներն էին, որ կը պոռթկային բոլոր շրթներէն, բոլոր սիրտերէն... Ծաղիկները, Վանի մայիսեան սքանչելի կարմիր ու սպիտակ ծաղիկները, որոնք ոչ մէկ երկնքի տակ այնքան առատ են, որքան Այգեստանի մէջ, կը պճնէին ամբողջ ճանապարհը, կը պսակէին հայ կամաւորներու ճակատները...

Ու յաղթական թափօրը կը շարժուէր դէպի Այգեստանի հայկական թաղերը»⁵²:

Այսպիսով, վանեցիները հաղթեցին, քանի որ.

- Ընդհանուր վտանգի դեմ միասնաբար և համերաշխ գործի անցան Հայկական երեք կուսակցությունների պատկանող գիտակից անձինք, որոնք ընտրեցին, ղեկավարեցին միասնական Զինվորական Մարմինը:
- Իր հերթին Զինվորական Մարմինը պատասխանատվության բարձր գիտակցությամբ կազմակերպեց բնակչության զինված դիմադրությունը՝ ծրագրեց, որոշեց, ուղենշեց ռազմավարական գործընթացը, իսկ քաջարի վանեցիները միասնական կամքի ուժով իրականացրին այդ բոլոր որոշումները:
- Տեղեկատու Դիվանն անընդհատ լրատվություն էր ուղարկում Զինվորական Մարմին, որն անմիջապես արձագանքում էր գործնական կոչերով, օգտակար խորհուրդներով և կամ՝ անձամբ օգնության հասնելով թե՛ կովի վայրը:
- Բարձր գնահատելով ժողովրդի հզոր ուժը՝ Զինվորական Մարմինը մշտապես կապ էր պահպանում ինչպէս քաղաքի, նույնպէս և գավառների վանեցիների հետ՝ հորդորելով չհուսահատվել և բարձր պահել ազգի ոգու արիությունը, որը և դարձավ հերոսամարտի հաղթանակի գրավականը:

Տպավորված պատմական այդ բացառիկ իրադարձություններով, հետագայում՝ նույնիսկ տարիներ անց, ականատես վերապրողները ևս հուզումով և հպարտության զգացումով վերհիշել ու մեզ են պատմել իրենց տեսածն ու զգացածը, ինչպէս *Պատրիկ Մարոյանը*. «...Մայիսի 5-ին, երբ հաղթանակը եղավ, թուրքերն սկսեցին փախչել նավակներով՝ ծովի վրայից: Նրանք փախցնում էին իրենց ընտանիքներին:

52 Նույն տեղում, 769:

Հաղթական վանեցիները մեծ նվազախմբով Այգեստանից եկան Քաղաքամեջ և միմյանց սկսեցին համբուրել: Այգեստանը Քաղաքամեջից հեռու էր չորս-հինգ կիլոմետր տարածությամբ: Հետո ռուսական զորքը մոտեցավ Վանին: Հայրս ինձ բարձրացրել էր իր ուսին, որ ես լավ տեսնեմ: Վերջապես լսվեց ձիերի դռփյուն: Առաջին հերթին Վանին մոտեցավ Անդրանիկը, հետո՝ Դրոն, Համազասպը, Գայր»⁵³:

Իսկ ականատես-վկա *Միրակ Մանասյանը* շարունակել է վերհիշել. «...Թուրքերը լսելով, որ ռուսական զորքը Սալմաստից գալիս է Վան, խուճապահար սկսեցին հեռանալ: Մերոնք հարձակվեցին, ոչ միայն թուրքերին ոչնչացրին, այլև մեծ ավար ձեռք բերեցին՝ հրետանի, փամփուշտներ: Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվեց Հայաստանի դրոշակը: Վասպուրականցիները մեծ սիրով ընդունեցին ռուսական զորքերին և հայ կամավորներին՝ Անդրանիկ փաշայի ղեկավարությամբ: Երբ ուրախություն էր համատարած, մեզ մոտեցավ մի ռուս օֆիսեր և նկարեց՝ ես էի, մայրս էր և եղբայրս»⁵⁴:

Ականատես վերապրող *Մանվել Մարությանը* ևս վկայել է. «...Քսանհինգ-երեսուն օր կյանքի և մահվան կռիվ տեղի ունեցավ: Վանեցիները կռվեցին տասնհինգ հազարանոց թուրքական կանոնավոր զորքի և քյուրդ ամբոխի դեմ, բայց դիմադրեցին: Պատանիներ կային, որ թնդանոթ էին նետում, պատրույզով էին նետում, տասը կիլոգրամ վառոդ կար մեջը: Պատրույզը հանում էին, տանում էին, որ նորից լցնեն: ...Ռուսական բանակը մոտեցավ: Առաջ կամավորական բանակը մտավ, և մենք փրկվեցինք: Եթե նրանք չգային, մենք էլ Ուրֆայի, Շապին-Գարահիսարի նման կոչնչանայինք: Մենք՝ երիտասարդներս, գնացինք կամավորներին դիմավորելու»⁵⁵:

Վանի հերոսամարտին ականատես մեր բոլոր վերապրողները հետագայում հպարտության զգացումով են պատմել անջնջելի դրվագներ պատմական այդ փառահեղ իրադարձության մասին:

Իսկ Վանի շրջակա գյուղերում թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի: Երբ ռուսական զորքերը մոտենում են Վանին, նրանց ետևից նաև հայ գրողներ՝ Հովհաննես Թումանյանն ու Ալեքսանդր Շիրվանզադեն, ականատես են դառնում սահմոկեցուցիչ տեսարանների. «...Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերին, - գրել է Հովհաննես Թումանյանն իր հուշերում, - գլխավորապես՝ տղամարդկանց ու հետները տարել գեղեցիկ կանանց: Եվ եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի և հայ կամավորների սարսափը շատ մոտ չի եղել, բարբարոսական զվարճություններ են հորինել. խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչև կեսը դրել են պղնձի մեջ ու կեսից ներքև եփել, որ մյուս կեսը՝ կենդանի տեսնի ու զգա...: Շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Ծողոկների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծողոկներին...»⁵⁶:

«...Բնականաբար, եթե Վանում ինքնապաշտպանության չդիմեն, վանեցիները

53 Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ*, 144 (վկ. 38):

54 Նույն տեղում, 139 (վկ. 35):

55 Նույն տեղում, 133 (վկ. 32):

56 Հովհաննես Թումանյան, *Երկերի ժողովածու վեց հատորով*, հ. 6 (Երևան, «Հայպետհրատ», 1959), 212-213:

նույնպես պիտի նահատակվեին»⁵⁷, - ասել է հետագայում Հայաստանի ճարտարապետների միության նախագահ դարձած, Վանա երգերի սքանչելի կատարող, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս *Վարսազդար Հարությունյանը* (ծնվ. 1909 թ., Վան, Այգեստան): Իսկ նրա եղբայրը, հետագայում Գյումրու թատրոնի վաստակավոր դերասան դարձած *Արծրուն Հարությունյանը* (ծնվ. 1907 թ., Վան) ավելացրել է.

«...Ինքնապաշտպանությունը ծնվում է, երբ ժողովրդի նկատմամբ բռնություն է լինում...»⁵⁸:

Ուստի, Վանում, Շատախում և այլ վայրերում մղված ինքնապաշտպանական հերոսամարտերը իթթիհատական կառավարության կիրառած բռնությունների դեմ ըմբոստացող արևմտահայության ազնիվ պոռթկումն էր, նրա բողոքի ձայնը՝ ուղղված աշխարհի մեծ տերություններին: Այդ է վկայում նաև ժողովրդական երգը, որը հաղորդել է վանեցի ականատես վերապրող, ԵՊՀ-ում քիմիայի վաստակաշատ դասախոս, ԲՈՒՀ-ական մի շարք դասագրքերի հեղինակ, դոկտոր, պրոֆեսոր *Աղասի Քանթանյանը* (ծնվ. 1904 թ., Վան).

«Ա՛խ, Վասպուրական, տխուր Հայաստան,
Անթիվ հերոսներ քեզմե զոհվեցան,
Ահեղ կռվի մեջ այնքան դիմացան,
Ի սեր ազգության նահատակվեցան:

Վան փոքրիկ քաղաք գավառակներով,
Լցվան դիակներ հարյուր հազարով,
Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով,
Ձայն տվին ամպեր, երկինք ու աստղեր,
Այնպես կգոռան ու կհրամայեն,
Որ Եվրոպան և Ամերիկան լսեն...»⁵⁹:

Սակայն ո՛չ Եվրոպան և ո՛չ Ամերիկան չմիջամտեցին, այլ՝ դիտորդի դերում էին:

Ականատես վերապրող *Երվանդ Շիրակյանը* մանրամասն անդրադարձել է նաև հետագա պատմական իրադարձություններին. «...1915 թ. ապրիլի 6-ից մինչև մայիսի 4-ը մենք պաշտպանվում էինք շատ հաջող: Մայիսի 4-ին ռուսական զորքը մտավ Վան, որի մեջ էր վեց հազար հոգուց բաղկացած հայկական բանակը՝ Ջորավար Անդրանիկի ղեկավարությամբ: Ռուսական ղեկավարությունը ընտրեց Վանի ղեկավար Արամ Մանուկյանին: Այսպես ապրեցինք մինչև հուլիսի սկիզբը»⁶⁰:

Իսկ *Սիրակ Մանասյանը* ավելացրել է. «...Այդ ժամանակ սկսում է Ռուսաստանի հեղափոխությունը, որը հարկադրեց ռուսական զորքին ետ վերադառնալ Ռուսաստան, որոնց հետ նաև շատ գաղթականներ՝ դեպի Հայաստան»⁶¹:

Ապա ականատես վերապրող *Երվանդ Շիրակյանը* շարունակել է. «...1915 թ.

57 Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. Ականապես վերապրողների վկայություններ*, 162 (վկ. 48):

58 Նույն տեղում, 147 (վկ. 40):

59 Նույն տեղում, 619 (վկ. 628):

60 Նույն տեղում, 147 (վկ. 41):

61 Նույն տեղում, 139 (վկ. 35):

հուլիսի սկզբին ռուսական ղեկավարությունը կարգադրեց հայերին գաղթել: Վանեցիները ընդհանուր ժողով կազմակերպեցին, որտեղ բոտո ելույթներ ունեցան երիտասարդները, որոնք չէին համաձայնվում գաղթել, բայց և այնպես մեծերը համաձայնվեցին»⁶²:

Ականատես վերապրող *Պատրիկ Սարոյանը* նշել է. «...Հուլիսի 15-ին գեներալ Նիկոլանը պահանջում է, որ հայերը գաղթեն, որ թուրքական զորքը հսկայական ուժ է ստացել և հարձակման է պատրաստվում: Հայ ղեկավարները՝ Արամ Մանուկյանը, Արմենակ Եկարյանը և այլոք, հրաժարվում են գաղթել և ասում են գեներալ Նիկոլանին. «Մենք առանց օգնության հաղթեցինք, մենք ունենք կամքի ուժ, որ պաշտպանենք մեր երկիրը», բայց Նիկոլանը և Անդրանիկը, որպես ղեկավար, ռուսների հետ համաձայնվում են նահանջել: Տիրեց իրարանցում»⁶³:

Եվ երբ ռուսական զորքերը նահանջում են, ստիպված նրանց հետ Արևելահայաստան են գաղթում նաև Վանի, Շատախի, Սասունի, Մուշի, Բիթլիսի, Շապին-Գարահիսարի, Ալաշկերտի, Բայազետի, Բաբերդի, Էրզրումի և այլ բնակավայրերի հայերը: Նրանք արցունքներով, բայց ճարահատված թողնում են իրենց երկիրը՝ իրենց հազարամյա պատմական բնօրրանը, ու, մղկտալով, ընկնում են գաղթի ճամփան: Այդ աննկարագրելի ազգային մեծ վիշտն իր հորինած եղերերգի մեջ է խտացրել մշեցի վերապրող օժտված *Շողեր Տոնյանը* (ծնվ. 1901 թ.).

«Անտեր թողինք Մշո անուշ դաշտ-դուրան,
Մուրբ օթևան, տուն ու տանիք ու վաթան,
Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետրան,
Մնաց անտեր, մնաց՝ ընկավ շան բերան...»⁶⁴:

Գաղթի ճամփան իսկական ողբերգություն էր:

Վանեցի *Վարդուհի Փոթիկյանը* (ծնվ. 1912 թ.) ցավագնորեն է վերհիշել այդ սարսափելի թոհ ու բոհը. «...Ա՛խ, իմ դուռնանը չտեսնա էդ օրը: Վու՛յ, սև ըլեր էդ օրը: Մենք եկել հասել ենք Բերկրիի կարմունջի մուտը: Մեկ էլ ժողովուրդը գոռաց՝ փախնք: Մթանը տեսանք, Բերկրիի ձորը նեղ ձոր էր, գետը չհասած՝ քրդերը վրա տվեցին: Հայերը, որ փախնում էին, ոտները սոթ էր տալիս, ընկնում էին գետը, խեղդվում: Ո՛րը անասունով էր ուզում անցնել, ո՛րը մտնում էր ջուրը՝ ջուրը տանում էր: Գոռում էին, ճչում, լաց լինում: Քրդերը կրակում էին մեզ վրա: Մերը մանուկը ուրացավ...»⁶⁵:

Գաղթի ահավոր տպավորությունների անմիջական ազդեցության տակ է հորինվել ժողովրդական հետևյալ պատկերավոր երգը.

«...Բերկրու Սև Սարից թուրքը իջավ ցած,
Հազար-հազարով դիակներ փովան.
Վերան ըլնես դու, Բերկրու անկուշտ գետ,

62 Նույն տեղում, 147-148 (վկ. 41):

63 Նույն տեղում, 144 (վկ. 38):

64 Նույն տեղում, 630 (վկ. 653):

65 Նույն տեղում, 166 (վկ. 54):

Հազար-հազարով արյուն խմող գետ»⁶⁶:

Մարդկային անհաշիվ զոհեր տալով՝ փոշու ամպերի միջով տխուր ու տրտում առաջ էր շարժվում ուժասպառ ու տառապած մարդկանց հեղեղը: Վանեցի վերապրող *Վարսենիկ Աբրահամյանը* (ծնվ. 1905 թ.) հետևյալ ողբն է հյուսել.

«...Սայլեր էկան երերալեն,
Մայրեր էկան մրմռալեն,
...Ավերեցին ու քանդեցին,
Ցավ ու դարդը մեզ թողեցին,
Գարուն բացվեց, գարուն էկավ,
Անձրևի տեղ արյուն էկավ...»⁶⁷:

Վերոհիշյալ ականատես *Աղասի Բանբանյանին*, երբ խնդրեցի պատմել իրենց գաղթի մասին, նա, հուզումով և արցունքներով վերապրելով իր անցյալը, ասաց. «...Մենք մինչև Իգդիր հասնելը տասը օր ճանապարհի անցանք, անձրևի տակ, արևի տակ, ցեխերի մեջ՝ կիսաքաղց ու ծարավ: Ճանապարհին քրդերը հաճախ վրա էին տալիս, մարդկանց կոտորում, թալանում: Դա հատկապես տեղի ունեցավ Բանդի-մահու կամուրջի մոտ (Բերկրի), որտեղ կուտակում էր տեղի ունենում: Այդ կամուրջից ինչքան մայրեր երեխաներին գրկած՝ ջուրն են նետվել, որ թուրքերի ձեռքը չընկնեն: Ճանապարհին ուլքեր սպանվում էին, ուլքեր մահանում էին, թողնում էին ճանապարհի եզրին, շատ դեպքերում ծածկում էին հողով, շատ դեպքերում՝ ոչ: Անթաղ դիակներ տեսնելով՝ ես այնպես եմ ազդվել, որ ստացել եմ տխրացավ, և մինչև հիմա այդ շարունակվում է»⁶⁸:

Ականատես-վերապրող *Ղազար Գևորգյանը* (ծնվ. 1907 թ., Վան) ևս մանրամասնորեն վերհիշել է գաղթի ճամփի դժվարությունները և ռուս կազակների ցուցաբերած աջակցությունը. «...Այսպես հայ գաղթականությունը գավառ առ գավառ, գյուղ առ գյուղ, իրենց հարազատներով ու բարեկամներով դանդաղ շարժվում էր՝ առանց իմանալու վերահաս վտանգը: Գաղթականների որոշ մասը կամուրջն անցնելով՝ հասել էր Բերկրի բաց դաշտը, իսկ մյուս մասը դեռ դանդաղ առաջանում էր. կամուրջը նեղ լինելու պատճառով հերթով էին անցնում:

Արևնամուտ էր: Հանկարծ կիրճի հարավային կողմից լավեց հրացանների կրակոց, և զիլանցի քրդերի լուռն հնչեց՝ խփեք, հայ խփեք: Նրանք կամուրջի ելքը կտրեցին: Ոմանք էլ քարավանի ետևից եկողների ճամփան կտրեցին, իսկ զիլանցիների որոշ մասը թաքնված ժայռերի հետևում՝ կրակում էր անցնող գաղթականների վրա՝ հույս ունենալով, որ նրանք անցնելով ինքնապաշտպանության՝ կթողնեն իրենց ունեցվածքը և իրենք էլ կհափշտակեն: Սակայն Վանի նահանգի հերոս ժողովուրդը, որը կարողացել էր մինչև այդ պաշտպանել իր պատիվը համիրյան ավազակախմբերից, մեծ զոհեր տալով չհուսահատվեց: Բայց եղան նաև մարդիկ, որոնք իրենց նետեցին

66 Նույն տեղում, 583 (վկ. 438):

67 Նույն տեղում:

68 Նույն տեղում, 135 (վկ. 33):

Բանդիմահու սրընթաց ալիքների մեջ՝ հույս ունենալով անցնել մյուս ափը, սակայն ալիքները տարան նրանց:

Զինված կամավորները անմիջապես դիրքավորվեցին: Սակայն քրդերը նախօրոք մտածված ամրացել էին քարաժայռերին, ունենալով բարձր դիրք և միևնույն ժամանակ անտեսանելի կրակում էին անգոր գաղթականների վրա: Շատերը զոհվեցին: Զոհվեցին նաև անասունները: Այսպես տևեց երկու ժամ, մինչև որ օգնության հասավ Բերկրի գյուղում հանգստացող կազակական մի կայազոր: Կամուրջն ազատվեց: Այդ գիշեր առանց հանգիստ առնելու գաղթականությունը շարունակեց իր ճանապարհը: Կարծես բախտը մեզ ժպտաց: ...Անցնելով կամուրջով, կիրճում մենք ականատես եղանք մեր գաղթական հարազատների դիակներին: Թե ինչպիսի տեսարան էր, սուսկալի է անգամ վերհիշել, չնայած որ հայը այդպիսի տեսարանների շատ է արժանացել թուրք բարբարոսների կողմից: ...Անցնելով Բանդիմահու կամուրջը, մենք մեզ զգացինք կարծես ազատ վտանգներից: Մի քիչ հանգիստ առանք, որպեսզի ուժ հավաքենք գալիք ճանապարհի համար»⁶⁹:

Միրակ Մանասյանը ևս վերհիշել է գաղթի ճամփի դժվարությունները և ռուս սահմանապահների աջակցությունը. «...Գաղթեցինք դեպի Հայաստան: Ճանապարհն անցնում էր խոր ձորերով և ահռելի գետերով: Այդ ժամանակ նորից թուրքերը ուզում էին կտրել մեր ճանապարհը: Մեծ կորուստներ տվեցին հայերը՝ այդ գետերի կամուրջների մոտ: Ժողովուրդը խռնված, անասունները ևս, մայրը գցում էր երեխային, ինքը գետն էր նետվում: Վերջը մեր կամավորական ջոկատների օգնությամբ, փշրված, սոված, ծարավ անցանք Արևելյան Հայաստան: Առաջին հանգրվանը եղավ Օրգովի ռուսական սահմանապահների մոտ: Այդտեղ մեզ շատ լավ դիմավորեցին ռուս սահմանապահները: Մեզ լավ ընդունեցին, հաց տվեցին, կերակրեցին»⁷⁰:

Արծվիկ Թերզյանը (ծնվ. 1909 թ., Վան) և հետագայում գիտությունների թեկնածու դարձած իր փոքր քրոջ՝ *Արմիկի* (ծնվ. 1912 թ., Վան) հետ երախտագիտությամբ են հիշել ռուս զինվորների մարդկային վերաբերմունքը. «...Մենք ութը հոգի էինք գաղթի ժամանակ: Ճանապարհը շատ դժվար էր, բոլորը հոգնած էին, սոված: Ճամփին մեռածներին թողնում էինք ու առաջ անցնում, քանի որ թուրքերը մեզ հետապնդում էին: Ռուսական զորքը մեզ տիրություն էր անում: Սուխարի բաժանեցին: Մենք մնացինք անտեր, անտիրական: Որք մանուկներին հավաքում էին, ինձ ու քրոջս՝ Արմիկին ևս դրեցին փակ սայլի մեջ ու տարան նախ՝ Իգդիր, ապա՝ Անիպեմզա, հետո՝ Երևան. Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ էր մեր մանկատունը, որի ղեկավարն էր օրիորդ Ազնիվը: Այդ մանկատունը Ամերկոմի մանկատունն էր»⁷¹:

Մանկատանն է մեծացել նաև Հայաստանի ժողովրդական արտիստուհի, հայկական երգերի դասական կատարող *Շողիկ Մկրտչյանը* (ծնվ. 1911 թ., Վան, գ. Ընծակ): Ես նրան հանդիպել եմ իր կյանքի վերջին օրը: Նա անկողնային հիվանդ էր: Երբ իմացավ իմ այցելության նպատակը, նրա հյուծված դեմքի վրա ժպիտ երևաց,

69 Նույն տեղում, 149-150 (վկ. 42):

70 Նույն տեղում, 139 (վկ. 35):

71 Նույն տեղում, 163 (վկ. 49):

ուրախացավ, կարծես նոր ուժ ստացավ, ուղղվեց, նստեց անկողնում և սկսեց վերհիշել, թե ինչպես թուրքերը գյուղում կախել են իր պապին, ապա կտրել հոր լեզուն, և նա տեղն ու տեղը մահացել է: Ապա նա վերհիշեց գաղթը. «...Ինձ նստեցրել էին գոմեշի մեջքին: Հիշում եմ, երբ ես գոմեշի մեջքի վրայից ընկա գետի ալիքների մեջ, հորեղբայրս ճարպիկ էր, իսկույն նետվեց ջրի մեջ և ինձ ազատեց: Հետո ինձ դրեցին ֆուրգոնի մեջ, ուր ինձ նման փոքր երեխաներ կային, մի քանիսը հիվանդ էին, մի քանիսը մահամերձ: Էսպես հասանք Իգդիր...: Նրանք էլ ինձ հասցրին Ալեքսպոլի, այսինքն՝ Լենինականի մանկատունը: Էնտեղ մեզ պահում էին ամերիկյան որբանոցում: Ժամանակները վատ էին՝ սով էր, համաճարակ էր: Կիսաքաղց մեծացա ուրիշ որբերի հետ: Ինձ հետ էին Շիրազը, Նայիրի Զարյանը, Խաչիկ Դաշտենցը, Սամսոն Գասպարյանը և ուրիշներ: Ես որբանոցում աչքի ընկնող երեխա էի. երգում, պարում էի ու բոլորին զբաղեցնում: Բոլորն ինձ ասում էին «Շողշողուն Շողիկ»:

...Մանկատան վարիչի սենյակում ինձ ուզեցին լսել կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանն ու հայտնի երգիչ Տիգրան Նալբանդյանը: Ես երգեցի, հուզումով ու արցունքոտ աչքերով՝ մտաբերելով իմ կորցրած ծնողներին ու հայրենի վայրերը:

...Նրանք ինձ վերցրին, բերեցին Երևան: ...Իմ երգերով հմայվել են շատ-շատերը, այդ թվում՝ Եղիշե Զարենցը, Աղասի Խանջյանը, Ավետիք Իսահակյանը, Հրաչյա Աճառյանը, որոնք ինձ օգնել են՝ ամեն մեկը յուրովի: Նաև ելույթներ եմ ունեցել տարբեր հանրապետություններում, նույնիսկ Կրեմլում եմ երգել Ստալինի, Ասատուս Միկոյանի և մյուս մեծերի համար՝ հայ երգը մատուցելով նաև օտարներին: Եվ բոլորը հմայված լսում էին, նույնիսկ աչքերից արցունքներ թափում, քանի որ իմ երգի մեջ հնչում էր իմ հայ ժողովրդի վիշտն ու տառապանքը: ...Թուրքերը ուզեցին ջարդել, փշրել հայ ժողովրդին, հոգեբանորեն կտրել նրա կամքը, բայց նորից հայ երգը հնչեց, հայ ձեռքերը կատուցեցին...»⁷²:

Հաջորդ օրը նրա դուստրը՝ Ժաննան, հայտնեց, որ իր մայրը շատ գոհ ասել է. «Ես իմ պարտքը կատարեցի...» և փակել է աչքերն ընդմիշտ:

Արժանահիշատակ իմ բոլոր ականատես վերապրողները զգացել են պատասխանատվության գիտակցություն և տարիներով, տասնամյակներով իրենց հիշողության մեջ անթեղած հուշերն են ինձ հաղորդել որպես սրբազան խոստովանանք:

Այնուհետև ականատես վերապրող *Մանվել Մարությանը* շարունակել է հետագա պատմական դեպքերի ընթացքը. «...Վերջապես հասանք Երևան: Նորքում մի տուն վարձեցինք: Բոլորս տիֆով հիվանդացանք: Եղբայրներիցս մեկը մեռավ: Ամեն մարդ անոթի էր: ՀՕԿ-ը Հովի. Թումանյանի գլխավորությամբ ղեկավարում էր օգնության գործը: Կերակուր, հագուստ էին բաժանում: Ողջ մնացողներս հազիվ սկսել էինք շունչ քաշել, երբ նորից սկսվեց թուրքական արշավանքը: ...Թուրքերը արշավում էին Արևելահայաստանի վրա: Արդեն տասնչորս կիլոմետր էր մնում, որ հասնեին Երևանին: Նրանք գրավել էին Արաքսի կամուրջը, քիչ էր մնում մտնեին Երևան: Այդ մահու կենաց կոիվ էր: Եթե Վանի հերոսամարտը ինքնապաշտպանություն էր, ապա այստեղ՝ զինվորական քարտեզով բաց դաշտի կոիվ էր: Արամ Մանուկյանին

72 Նույն տեղում, 163 (վկ. 48):

ընտրեցին դիկտատոր: Նա կազմեց բանակ: Մեկ շաբաթ վարժեցնում էին, դրկում էին ճակատ: Իսկ մենք արդեն վարժ էինք: Սկսվեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի ճակատամարտը: Հայ ժողովուրդը նորեն դիմադրեց: Բոլոր խմբապետները՝ Նժդեհը, Սեպուհը, Դրոն, իրենց բանակները բերին: Դիրքեր փորեցին: Կիները թխում էին, կերակուր էին պատրաստում: Աղջիկները սափորներով ջուր էին հասցնում կովողներին: Հարուստի կանայք գլուխնին շոր կապած՝ վիրավորների վերքերն էին կապում: Արդեն գաղթականներն էին հիմնական կովողները՝ տարոնցիները, մշեցիները, վանեցիները, որոնք սպայական կազմն էին: Հրճվանք էր անկախության գաղափարը, որը իրողություն էր: Ճիշտ է, մենք գրեթե սոված էինք, բայց մեր հոգին կուշտ էր և քաղց չէինք զգում: Թուրքական զինված բանակը անխնա հարձակվում էր, իսկ մենք գենքի պակաս ունեինք: Մենք՝ աշակերտներս, ուզեցինք ընդունվել բանակի մեջ: Մեզ տարան Սարդարապատի ճակատ, բայց մենք ստիպված էինք սպասել, մինչև մեկը սպանվի, որ հրացանը վերցնենք: Արամ Մանուկյանն պատգամ հղեց. «Կմաք դաշտում, կամ՝ կվերադառնաք հաղթական վահանի տակ, կամ՝ վահանի վրա»: Հայ ժողովուրդը կովեց կատաղի կերպով: Ինձ պես շատ տղաներ կային: Ես քսանհինգ հոգիանոց խումբ ունեի: Քսանհինգից յոթը վերադարձան, չորսը վիրավորվեցին, տասնչորսը՝ սպանվեցին: Թշնամին պարտվեց, և մայիսի 28-ը որպես հաղթանակի օր նշվեց»⁷³:

Սակայն վանեցի ականատես վերապրողները ոչ միայն մանրամասն նկարագրել են պատմական այդ և հետագա իրադարձությունները, այլև հանգել են որոշակի եզրակացությունների: Ինչպես կուսակցական բարձրագույն կրթություն ստացած *Վարդգես Ալեքսանյանը* (ծնվ. 1911 թ., Վան) նշել է. «...Մտածում եմ ես հաճախ, հարյուր հազար հայ որբեր որտեղից առաջացան: Ինչու՞ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան թույլ տվեցին, որ այդքան հայ սպանվի, որ այդքան որբեր անտեր, անտիրական մնան: Էդ որբերից էին գեներալ Սաֆարյանը, գնդապետներ և շատ ուրիշ մեծ մարդիկ: ... Ես եկել եմ Արևմտյան Հայաստանից: Թուրքը ուզեցել է Հայաստանին տեր դառնա, և Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի թույլտվությամբ Արևմտյան Հայաստանը անցավ թուրքին»⁷⁴:

Վերոհիշյալ *Թովիկ Բաղդասարյանը* (ծնվ. 1901 թ., Վան, Հայոց Ձոր, գ. Հնդստան) ևս իր հուշ-վկայությունն ամփոփել է եզրակացնելով. «...Թուրքիայի ամենից բանիմաց ժողովուրդը հայերն էին, որ բարձր մշակույթ ունեին՝ ճարտարապետները, երաժիշտները, առևտրականները հայերն էին: Հայերի ինքնավարությունից խուսափելու, նոր Բուլղարիա չստեղծելու համար նրանք ամեն կերպ ուզեցին հայերին վերացնել: Թուրքերի նկատմամբ մեր վերաբերմունքն այն է, որ մենք երբեք չենք մոռանա կատարվածը: ...Մենք մեր սերունդներին պետք է ավանդենք, որ մեր իրավունքները պահանջենք, մեր հողերը ետ տան: Նրանք մեր չորս հազար եկեղեցիներն են քանդել: Հազարավոր մարդիկ են կոտորել: Ապրիլի 24-ը մեզ համար սրբազան օր է: Մենք ընտանիքով՝ որդիներով, թոռներով, ծոռներով, այդ օրը գնում ենք Եղեռնի

73 Նույն տեղում, 133-134 (վկ. 32):

74 Նույն տեղում, 164 (վկ. 51):

հուշարձանի մոտ, որպեսզի նրանք իրենց հոգում պահեն այդ հիշողությունը:

Ապագա սերունդներին կուզեմ ասել, որ ամեն մի հայ զգա, թե իր պապը ինչպես է ոտք դրել Արևելյան Հայաստան: Հայը ունեցել է իր ջքնաղ հայրենիքը: Նոր սերունդները չպետք է մոռանան և ամեն ինչ պետք է անեն, որ արդարությունը հաղթանակի, և արևմտահայության հարցը լուծվի: Գերմանացի խոշոր գործիչներ Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը քննադատեցին Վիլհելմյան կառավարությունը: Թուրքերը հենց իրենք դատապարտեցին Թալեաթ փաշային և շատերին: Ես հույս ունեմ, որ ՄԱԿ-ը իր արդար դատը կկատարի»⁷⁵:

Այնինչ Հայոց ցեղասպանության ողբերգական օրերին խիզախ վանեցիներն իրենց ինքնապաշտպանական հերոսամարտի ընթացքում հույսը դրել էին միայն իրենց վրա: Նրանք ինքնաշեն գեներով, բայց միասնական կամքի ուժով դիմագրավեցին իրենց վրա հարձակվող թուրքական զինված զորքերին և արժանապատվության բարձր գիտակցությամբ 30 օր ու գիշեր մարտնչեցին ու հաղթեցին:

Նույն այդ 1915 թ. ոչ միայն Վան-Վասպուրականում, այլև Յոզղատի Ագդաղում, Շատախում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Մուսա Լեռում, Ուրֆայում և այլուր հայերը կենաց մանու անհավասար պայքար են մղել՝ պաշտպանելու համար իրենց մարդկային տարրական ապրելու իրավունքը և պապենական հողը...

Թեպետ արևմտահայերի ունեցան մարդկային, նյութական, մշակութային և տարածքային հսկայական կորուստներ և հարկադրված գաղթեցին դեպի «որբի և ողբի» Արևելյան Հայաստան, սակայն կարճ ժամանակ անց, ինչպես արդեն տեսանք, թուրքական նոր արշավանքներին դիմագրավելու համար վանեցիների և այլոց հերոսական ոգին ներշնչեց տառապած և հյուծված հայությանը՝ միավորվել, ծառս լինել և Սարդարապատի ճակատամարտի անօրինակ հաղթանակով վերականգնել իր կորցրած 600-ամյա պետականությունը, որը և դարձավ մերօրյա Հայաստանի ու Արցախի նորանկախ հանրապետությունների պետականության գրավականը:

* * *

Սույն ուսումնասիրության շարադրանքն արդեն ավարտին էր մոտենում, երբ հայ մեծ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի տնօրինուհի տկն Ռաֆլետա Հաջյանից տեղեկացա, որ թանգարանի արխիվում պահվում է բանաստեղծուհու մոր՝ *Լիա Կապուտիկյանի* (ծնվ. 1895 թ., Վան, Այգեստան) ձեռքով գրված հակիրճ ինքնակենսագրականն ու «Վանի մեր նահանջ» վիպերգը: Այդ անակնկալն ինձ ոգևորեց, քանի որ մեր մեծերի խորհմաստ խոսքերն ինձ համար մշտապես եղել են ոչ միայն սրբություն, այլև՝ պատգամ, որոնք փոխանցել եմ սերունդներին: Բացի այդ, վանեցի արժանահիշատակ իմ ականատես վերապրողներին ավելանում էր նաև օժտված մեկը:

Մեջբերենք վիպերգն ամբողջությամբ.

«Վաթսունհինգ տարին շուտով լրանում,
Էն դառն օրերը հեչ չեմ մոռանում.

75 Նույն տեղում, 130-131 (վկ. 31):

Ինչ լաց ու կոծով թողինք ամեն բան,
Ծուռ կովի հույսով ընկանք մենք ճամփան:
Պետք է շուտ փախչել, նահանջ է սաին,
Հետ է գալիս, տեն, վայրագ թշնամին,
Անխնա ջարդում մեծին ու փոքրին,
Վրեժ է լուծում հերոսամարտին:
Սև գաղթի ճամփան փշոտ ու քարոտ,
Գնում ենք, գնում, չգիտենք թե ուր,
Կհասնենք արդյոք փրկության շեմին,
Թե կյանքը կտանք մահվան չար բախտին:
Ես չեմ մոռանում. նահանջի ճամփին
Որդեկորույս մայրը տալիս է գլխին,
Մայրը փնտրել էր, գտել զավակին,
Արդեն մեռած էր ոտքերի տակին:
Սև գաղթի ճամփին ընկած ջահել կին,
Իր վեց երեխեք շարվել են կողքին,
Խնդրում, աղաչում, լալիս դառնագին
Մեռած մորն խնդրում գնան միասին:
Ամուսինը տեսնում է, որ հիվանդ կինը
Չի կարող քայլել, մեռնում է ճամփին,
Քաշում ատրճանակը ու սպանում կնկան.
Ինքն երեխոց հետ գնում է ճամփան:
Հայրը տեսնում է՝ ոչ մի պայմանով
Չի կարող փրկել կյանքը աղջկա,
Որպեսզի նրան չգերի թշնամին,
Հայրը իր ձեռքով հանձնում է գետին:
Խեղճ մայրը ինչ անի երեք որբուկին,
Որ սոված, ծարավ քայլում են կողքին,
Բանդիմահու գետն անցած միջոցին,
Երեքն էլ մեռան ոտքերի տակին:
Բանդիմահու գետ, հենց նրա ափին,
Մինուճար աղջկան փախցրեց թշնամին,
Մի ոռու զինվոր սպանեց այդ քրդին,
Ջահել աղջկան հանձնեց ծնողքին:
Բանդիմահու գետն անցած միջոցին,
Թշնամին գերեց շատ ու շատերին,
Տարավ, բաժանեց իրենց քրդերին:
Մոռցան ազգություն և հայոց լեզուն,
Բանդիմահու մոտ, կամուրջի կողքին
Լսվեց ահեղ ձայն՝ դառն ու ողբագին,

Ջահել հարս-աղջիկ իրեն նետեց գետ,
Արդեն փակված է ճամփու արահետ:
Ավելի լավ է գետում խեղդվել,
Քան թե թշնամուն գերի ընկնել:
Կարկուտի նման իրենց գցին գետ,
Որ գնան, լողան մեծ ձկների հետ:
Բանդիմահու գետ, հրեշ կատաղած,
Երեսուն հազար կուլ տվիր մարդկանց,
Ինչպես մարսեցիր, ինքդ էլ չիմացար,
Անմեղ զոհերին արդյոք ո՞ր տարար:
Խեղճ հայրս մեզի բերեց Երևան,
Վարձեց շատ փոքրիկ մի բնակարան,
Ավաղ, մեկ շաբաթ նա հանգիստ չարեց,
Անգութ մահն իսկույն մեզնից բաժանեց:
Հորս իրերից որպես հիշատակ
Մնացել է ինձ լոկ մի թաշկինակ,
Ու ամեն անգամ վրան նայելիս,
Հիշում եմ քաղցրիկ օրերն անցյալիս:
Վաթսունհինգ տարին շուտով լրանում,
Գաղթի դառն օրերն հեշ չեմ մոռանում,
Այդ չար սարսափը մնաց իմ սրտում.
Միշտ նույնն եմ տեսնում գիշերն երազում:
Կուգեմ հավաքել հագուստներս բոլոր,
Ոչինչ չեմ գտնում, մնում եմ մոլոր,
Հանկարծ զարթնում եմ, տեսնում երազ է
Երազի սարսափ՝ սիրտս կմաշե:
Տասն և հինգ թիվը մահվան ուրվական,
Ամբողջ հայությանն արեց ցիր ու ցան,
Մեծ ու փոքր մեռան, կորան անխտիր:
Այսպես է հայի սև ճակատագիր:
Իսկ թուրք ասկյարը նստած իր գահին,
Խիստ տեր է դարձել մեր հող ու ջրին,
Բայց գիտեմ. մի օր մեր խիզախ որդիք
Կվերցնեն ետ, չեն թողնի մոտիկ:
Ապրիլի 24, վաթսունհինգ տարեկան,
Հայոց ողջերի դու հայոց մատյան
Ինչպե՞ս մոռանանք օրը եղեռնի,
Կենդանի վկան սգո հուշերի:
Գրի եմ առել շատ չնչին չափով,
Ինչ-որ տեսել եմ սեփական աչքով.

Կենդանի վկա ահեղ օրերի,
Սգո հուշարձան շատ գոհվածների»⁷⁶:

Ականատես վերապրող *Լիա Կապուտիկյանի* «Վանի մեր նահանջ» անտիպ ստեղծագործության խորագրի մեջ հեղինակն արդեն իսկ պթափ գիտակցում է, որ հերոսամարտում հաղթանակած քաջարի վանեցիների համար, գաղթը՝ իրոք նահանջ էր:

Վիպերգի նախերգանքում և վերջերգում հեղինակը ցավով է նշում.

«Վաթսունհինգ տարին շուտով լրանում,
Էն դառն օրերը հեջ չեմ մոռանում...»⁷⁷:

Հետևաբար, այն գրվել է Վանի ինքնապաշտպանական հերոսամարտից 65 տարի անց՝ 1980 թ.: Հեղինակը տասնամյակներ շարունակ «սև գաղթի դառը» տպավորությունները լուռ ու մունջ կրել է իր հիշողության մեջ՝ չկարողանալով թղթին հանձնել իր տեսածն ու զգացածը: Նա ևս, ինչպես այլ ականատես վերապրողներ, գիշերները մղձավանջային երագներ է տեսել, որոնք հաճախ տունդարձի խաբկանք են եղել:

Սույն ստեղծագործությունը վերհուշ է դաժան գաղթի իրողության, որը հուշ-վկայության նման, բայց բանաստեղծական չափածո սեղմ տողերով, իրական պատկերներով ու կերպարներով, դրվագ առ դրվագ գեղարվեստորեն նկարագրել է արևմտահայոց մեծ գաղթի մեծ դժվարությունները...

«Վանի մեր նահանջ» վիպերգում հեղինակը նշում է, որ երբեմնի «վայրագ թշնամին» գաղթի ճամփին և՛

«...Անխնա ջարդում մեծին ու փոքրին,
Վրեժ է լուծում հերոսամարտին»⁷⁸:

Այնինչ քաջարի վանեցիներն իրենց սակավաթիվ ինքնաշեն գեներով, բայց միասնական կամքի ուժով դիմադրել են թուրքական բազմահազար զորքերին՝ պաշտպանելու համար իրենց ապրելու տարրական իրավունքը և Հող Հայրենին...

Հեղինակի համար մեծ ցավ է, որ՝

«...Թուրք ասկյարը նստած իր գահին,
Խիստ տեր է դարձել մեր հող ու ջրին»⁷⁹:

Սակայն Վանի «հող ու ջրին հավատարիմ» գավակ *Լիա Կապուտիկյանը* հույս է փայփայում, որ «մեր խիզախ որդիք» երբևէ ետ կվերցնեն այն և չեն թողնի օտարին:

Հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ հեղինակի համար առկա է նաև մի այլ՝ հետևանքային մեծ ողբերգություն.

«...Թշնամին գերեց շատ ու շատերին,
Տարավ, բաժանեց իրենց քրդերին.

76 Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի արխիվ:

77 Նույն տեղում:

78 Նույն տեղում:

79 Նույն տեղում:

Մոռցան ազգություն և հայոց լեզուն»⁸⁰:

Խոհեմ ու հեռատես հայուհին տակավին այդ տարիներին կանխատեսել էր. այսօր օրակարգի հարց դարձած, բռնի իսլամացած դժբախտ հայերի երկփեղկված կացությունն ու նրանց անդառնալի կորուստը հայության համար...

Սակայն հայ ազգի համար ոչ պակաս կորուստ է նաև աշխարհասփյուռ հայության սերունդների անորոշ ապագան: Այդ մասին հեղինակի խոսքը հակիրճ է, բայց պատկերավոր.

«...Տասն և հինգ թիվը մահվան ուրվական,
Ամբողջ հայությանն արեց ցիր ու ցան»⁸¹:

Սա կապուտիկյանական-հայերգության բարախող զարկերակն է, որը վանեցու մայրական կաթի հետ անցել է նաև տաղանդաշատ դստերը՝ Սիլվա Կապուտիկյանին, և նա, որպես Ամենայն հայոց բանաստեղծուհի, իր «Մտորումներ ճանապարհի կեսին» բանաստեղծությամբ համայն հայությանը պատգամել է.

«...Դու պիտի վրեժ առնես ապրելով,
Ապրելով համան, հազարապատիկ,
Ավերումի տեղ, քո ստեղծելով.
Ավեր Վանի դեմ, քո Երևանով.
Աքսորների դեմ՝ խուլ անապատի
Նորից տուն դարձող քո քարավանով
Դու պիտի ապրես այսպես, սրանով»⁸²:

Verjiné G. Svazlian
Doctor of Sciences (Philology)

THE HEROIC BATTLE OF VAN-VASPOURAKAN ACCORDING TO THE TESTIMONIES OF THE EYEWITNESS SURVIVORS

SUMMARY

Key words: Ottoman Empire, Armenian Genocide, Van-Vaspourakan, heroic battle, self-defense, eyewitness survivors, testimony, resistance, workers, handmade weapons, fanfare.

The Young Turk leaders of the Ottoman Empire participated in World War I having expansionist objectives and with their former pan-Turkic and pan-Islamic plan to carry

80 Նույն տեղում:

81 Նույն տեղում:

82 Սիլվա Կապուտիկյան, «Մտորումներ ճանապարհի կեսին», Սիլվա Կապուտիկյան, *Երկեր երեք հայտորով*, հ. 1 (Երևան, «Սովետական գրող», 1984), 99:

out the genocide of the Armenians. The mobilization and the collection of arms of the Armenians started with the war.

The governor of Van Djevdet pasha besieged the town with the Turkish armed forces. The people of Van struggled heroically, till the last drop of their blood, to defend their elementary human right for survival and their Motherland.

The testimonies and historical songs, communicated by 35 eyewitness survivors of the heroic battle of Van, which I have enscribed, audio- and video-recorded, have served as a basis for the preparation of the present article.

Вержине Г. Свазян
доктор филологических наук

ГЕРОИЧЕСКОЕ СРАЖЕНИЕ ВАН-ВАСПУРАКАНА ПО СВИДЕТЕЛЬСТВАМ ОЧЕВИДЦЕВ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Османская империя, Геноцид армян, Ван-Васпуракан, героическое сражение, самооборона, свидетели-очевидцы, свидетельство, сопротивление, рабочие, самодельное оружие, фанфара.

Младотурецкие лидеры Османской империи участвовали в Первой мировой войне с захватническими целями и со своей былой пантюркистско-панисламской программой геноцида армян. С войной началась мобилизация армян и насильственный сбор оружия у армянского населения.

Губернатор Вана Джевдет-паша со своим войском осадил Ван. Жители Вана в течение месяца героически сражались до последней капли крови, чтобы защитить свое право на жизнь и свою Родину.

Основным источником этой научной работы стали записанные нами (также аудио- и видео-записи) свидетельства и исторические песни 35 очевидцев героического сражения Вана.

REFERENCES

Chizmechian, Manuk. *Պարտիզանական պայքարի պատմություն 1890-1925*. 1890-1925 [History of the American Armenian Political Parties. 1890-1925]. Fresno: "Nor Or" Press, 1930;

Kaputikyan, Silva. «Ստորումներ ճանապարհի կեսին» [Thoughts on the Halfway] in Silva Kaputikyan. *Essays in three volumes*. Vol. I, Yerevan: "Sovetakan Grogh" Publishing House, 1984;

Keorkizian, Rev. Arsen. «Վան-Այգեւսանի հերոսամարտը (1915 թ., ապրիլ 7 - մայիս

7)» [The Heroic Battle of Van-Aygestan (1915, April 7 – May 7)] in Aharonian, Gersam. *Յուշամատենն Մեծ Եղեռնի*. 1915-1965 [Memorial-Book of the Armenian Genocide. 1915-1965]. Beirut: “Atlas” Typography, 1965, 729-770;

Swazlian, Verjiné. *Հայոց ջեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ* [The Armenian Genocide. Testimonies of the Eyewitness Survivors]. Yerevan: “Gityt’yun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2011;

T’umanyan, Hovhannes. *Երկերի ժողովածու վեց հատորով* [Collection of Essays in six volumes]. Vol. 6, Yerevan: “Haypethrat” Publishing House, 1959;

Kaputikyan, Silva. Archive of the Home-Museum.



Լիա (ծնվ. 1895 թ., Վան) և Սիլվա (ծնվ. 1919 թ., Երևան) Կապուտիկյաններ



Թովիկ Բադալյան (ծնվ. 1901 թ., Վան)



Մանվել Մարտիրոսյան (ծնվ. 1901 թ., Վան)




Շողեր Տոտկյան (ծնվ. 1901 թ., Մոլշ)




Նվարդ Մուրադյան (ծնվ. 1903 թ., Շատախ)



Աղասի Քանթարյան (ծնվ. 1904 թ., Վան)



Վարսենիկ Արբախանյան (ծնվ. 1905 թ., Վան)




Աղրեա Գյուլանյան (ծնվ. 1905 թ., Շատախ)



Սմբատ Դավթյան (ծնվ. 1905 թ., Վան)



Սիրակ Մանասյան (ծնվ. 1905 թ., Վան)



Հայրիկ Մուրադյան (ծնվ. 1905 թ., Շատախ)



Սիրատուշ Թութունջյան (ծնվ. 1906 թ., Վան)



Պատրիկ Սարգյան (ծնվ. 1906 թ., Վան)



Ղազար Գևորգյան (ծնվ. 1907 թ., Վան)

Վերջինս Գ. Սվազյան



Լիուարդ Դաշտոյան
(ծնվ. 1907 թ., Շատախ)




Արծրուն Հարությունյան
(ծնվ. 1907 թ., Վան)



Երվանդ Շիրակյան
(ծնվ. 1907 թ., Վան)



Մաքրուհի Սահակյան
(ծնվ. 1907 թ., Վան)



Նշան Աբրահամյան
(ծնվ. 1908 թ., Վան)



Սիլվա Բյուզանդյան
(ծնվ. 1908 թ., Վան)



Քաջբերուհի Շահինյան
(ծնվ. 1908 թ., Վան)



Վարազդատ Հարությունյան
(ծնվ. 1909 թ., Վան)



Արծվիկ Թերզյան
(ծնվ. 1910 թ., Վան)



Վարդգես Ալեքսանյան
(ծնվ. 1911 թ., Վան)



Շողիկ Մկրտչյան
(ծնվ. 1911 թ., Վան)



Արմիկ Թերզյան
(ծնվ. 1912 թ., Վան)



Դերենիկ Սարգյան
(ծնվ. 1912 թ., Վան)



Վարդուհի Փոթիկյան
(ծնվ. 1912 թ., Վան)



Սահակ Բազյան
(ծնվ. 1913 թ., Շատախ)



Արուսյակ Հովակիմյան
(ծնվ. 1914 թ., Վան)

Արփինե Ռ. Բաբլումյան
պատմական գիտությունների թեկնածու

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻԱՐԲԵՔԻՐ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Դիարբեքիր, Տիգրանակերտ, Բալու, Սևերեկ, Արղանա Մադեն, բռնի իսլամացում, հայերի կոտորածներ:

1895-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածները, որոնք ընդգրկեցին Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառները, ունեին իրագործման թե՛ օրինաչափություններ, թե՛ որոշակի տարբերություններ: Այս առումով կարևոր է կոտորածների ընթացքն ու հետևանքներն ուսումնասիրել առանձին նահանգների կտրվածքով, ինչը թույլ կտա վերհանել նշված իրադարձությունների կապը, ուղղորդվածությունը և ընդհանուր գծերը:

Համիդյան կոտորածների ուսումնասիրությունը կարևոր է նաև այն առումով, որ որոշակի աղերսներ անցկացվեց 1915 թ. Հայոց ցեղասպանության ընթացքի հետ՝ վեր հանելու այն ընդհանուր կամ տարբեր մեխանիզմները, որոնք ուղեկցեցին տվյալ հանցագործությունները: Հողվածում անդրադարձ է կատարվում Դիարբեքիրի (հայկական աղբյուրներում՝ Տիգրանակերտ) նահանգի տարբեր բնակավայրերում տեղի ունեցած կոտորածների պատմությանը: Այս նահանգում ևս կոտորածներին զոհ գնացին, նաև բռնի իսլամացվեցին տասնյակ հազարավոր հայեր, ավերվեցին բազմաթիվ բնակավայրեր, հազարավոր տներ ու խանութներ: Իրադարձությունները վերլուծելիս օգտվել ենք թե՛ հայկական, թե՛ օտար սկզբնաղբյուրներից, որպեսզի հնարավոր լինի վերականգնել կոտորածների ամբողջական պատկերը²:

Օսմանյան վարչակարգի կողմից Արևմտյան Հայաստանը վիլայեթների բաժանելու պահից սկսած Դիարբեքիրը եղել է կազմավորված 5 նահանգներից մեկը. այն իր մեջ ներառում էր բավական մեծ տարածքներ պատմական Աղձնիքից, Չորրորդ Հայքից, Հյուսիսային Միջագետքից: XIX դարի երկրորդ կեսի ընթացքում, հատկապես՝ 1870-

1 Հողվածը ստացվել է 29.02.2020 և ընդունվել տպագրության՝ 23.04.2020:

2 Հողվածում օգտագործվել են առանձին բնակավայրերի հայ բնակչության կենսակերպին, պատմությանը նվիրված հուշամատյաններ, որոնցից շատերն առանձին անդրադարձ են կատարում համիդյան կոտորածների անցքերին: Նման հրատարակություններից առավել կարևորվել են Տիգրան Մկրտչի, *Ամիրայի արձագանգներ* (Նիլ Ճերգի, Dikran Spear, 1950), Գառնիկ Գեորգեան, *Չարուշապարում: Քննական պարմություն հայոց Չարուշի* (Երուսաղեմ, Ա. հ., 1970), Սարգիս Պարսամեան, *Յուշարձան Ջերմուկի* (Պոսթըն, Համագգային, 1969), Մետրոպ Կոպեանի, *Բալու*, (Անթիլիաս, Ա.հ., 1965), *Պարմություն Պաղնիսարյան* (Պոսթըն, Հայրենիք, 1966) և այլ աշխատանքներ, նաև «Մուրճ», «Արմենիա», այլ թերթերի ու ամսագրերի կյութերը: Օտար աղբյուրներից սկզբունքային նշանակություն ունեն ֆրանսիական փոխխոյապատու Գուստավ Մելլիեի հաղորդագրությունները՝ «*Армянский вопрос по документам французской Желтой Книги*», в *Братская Помощь пострадавшим в Турици Армянамъ*, отделъ II (Москва, 1898), նաև կարևորվել են հետևյալ աշխատանքները՝ Rev. Edward Bliss, *Turkey and the Armenian Atrocities* (Fresno: Mesag Publishing, 1982); Rev. George Filian, *Armenia and Her People or the Story of Armenia by an Armenian* (Hartford, Conn., American publishing company, 1896); Rendel Harris and Helen Harris, *Letters from the Scenes of Recent Massacres in Armenia* (London: James Nisbet & Co., 1897), այլ հրատարակություններ:

80-ական թթ. Օսմանյան կայսրության տարածքում արված ավելի արմատական վարչական ձևափոխումներից հետո Դիարբեքիի նահանգն ընդգրկեց Չորրորդ Հայքի Մեծ Ծովքը, Բալսահովիտ, Պաղնատուն, Աղձնիքի՝ Նփրկերտ գավառները, նաև որոշ տարածքներ Հյուսիսային Միջագետքից: Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից մեկը հանդիսացող և վերջնականորեն ձևավորված Դիարբեքիի նահանգը բաժանվում էր երեք գավառների՝ Դիարբեքի, Արղանա Մաղեն և Մարդին: Նահանգի տարածքում Հայոց պատրիարքարանի 1882 թ. վիճակագրության համաձայն քրդերի, թուրքերի, ասորիների ու հույների հետ ապրում էր 150.000 հայ բնակիչ³:

Դիարբեքիի նահանգում, ինչպես հարակից մյուս բնակավայրերում, հայերի զանգվածային կոտորածներն իրագործվեցին 1895 թ. նոյեմբերին, թեև 1895 թ. սկզբներից արդեն իրավիճակը բավական սրվել էր: Խոսքը ոչ միայն մուսուլմանների և քրիստոնյաների միջև լարվածության մասին էր, այլ հենց իշխանությունների կողմից ընդգծված թշնամանքի, որոնք այս շրջանում արդեն հայերի նկատմամբ իրենց վերաբերմունքը պատճառաբանում էին բարենորոգումների ծրագրի ի հայտ գալով⁴: Այսպես, ամերիկացի միսիոներ, հրապարակախոս Էդվին Բլիսը, ով մանրամասն տեղեկություններ է ներկայացնում համիդյան կոտորածների վերաբերյալ, գրում է, որ դեռևս «[1895 թ.] օգոստոսին Բալուում⁵ կառավարիչն իր մոտ է կանչել քրիստոնյա հեղինակավոր անձանց և հայտարարել, որ հրաման է ստացել նրանց տեղեկացնելու, որ սուլթանը որոշել է անցկացնել ռեֆորմներ և, որ դա լինելու է սրով»⁶: Սակայն բարենորոգումների ծրագրի ի հայտ գալը միայն առիթ էր տիրող աստվության մթնոլորտում կյանքի կոչելու հայ բնակչության դեմ եղած ամբողջ անհանդուրժողականությունը: Պատմաբան Ջելլ Վերհեյը մատնացույց է անում այն փաստը, որ նույնիսկ քրիստոնյաների աճին շատ մուսուլմաններ հետևում էին մտահոգությամբ ու նախանձով. համաձայն իսլամի սկզբունքների՝ նրանք էին «տիրողները», իսկ ոչ մուսուլմանները «ենթականեր» էին, մինչդեռ իրականությունը կարծես շրջանցում էր այս «բնական» պատվերը: «Հայերն ինչ անում էին Դիարբեքիում, վիրավորական էր ընկալվում մուսուլմանների մոտ... Հայերը մեղադրվում էին արտաքին առևտուրը իրենց մենաշնորհը դարձնելու մեջ: Նրանք կառուցել էին զանգակատուն-աշտարակ, որն ավելի բարձր էր, քան մինարեթը: Երբ խոլերա բռնկվեց, խոսվում էր, որ ավելի շատ մուսուլմաններ մահացան, քան հայեր»⁷: Կոտորածի պատճառները վերլուծելիս հեղինակներից ոմանք կարծում

3 Վաղինակ Տեր-Յակովբեան, «Վիճակագրական ցուցադրումն Տաճկահայաստանի», *Արարատի ամսագիր* ԽԸ no. Թ (1914), 811:

4 Խոսքը «Մայիսյան բարենորոգումների» մասին է, որը 1878 թ. Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի համաձայն կազմվեց և թուրքական կառավարությանը ներկայացվեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների կողմից: Բարենորոգումների ծրագրով նախատեսվում էին չափավոր բարեփոխումներ վարչական, դատական համակարգում, հասարակական կյանքի որոշ ոլորտներում:

5 Քաղաք և գավառակ Դիարբեքիի նահանգում:

6 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 484.

7 Jelle Verheij, “Diarbekir and the Armenian crisis of 1895,” in *Social Relations in Ottoman Diyarbekir: 1870-1915*, ed. Joost Jongarden and Jelle Verheij (Leiden, Boston: Brill, 2012), 91.

են, որ «դա կրոնական վեճ էր, և մուսուլման թուրքերը հաստատական էին իրենց ուղի տակ պահելու քրիստոնյա, կարևոր չէ ինչ ազգության ենթականերին: Այն դեպքում, երբ փորձ կարվեր քրիստոնյաներին հավասար ներկայություն ապահովել կառավարությունում, թուրքերը կսպանեին նրանց մեկ-մեկ կամ՝ կոտորածի միջոցով, քանի դեռ մեծ տերությունները, որոնք միջամտում են քրիստոնյաներին օգնություն տրամադրելու նպատակով, չդիմեն զինուժի օգնությանը»⁸: Մինևույն ժամանակ փաստենք, որ կոնկրետ հայատյացությունը եղել է Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության մյուս հայարնակ բնակավայրերի մահմեդականների մոտ և տարբեր ժամանակաշրջաններում այն տարբեր դրսևորումներ է ունեցել՝ սկսած բռնի մահմեդականացումից մինչև զանգվածային կոտորածներ ու ցեղասպանություն: Պարզ էր, որ համիդյան կոտորածներին նախորդող լարված մթնոլորտը, որը պայթունավտանգ էր դարձել նաև Դիարբեքի քաղաքում, խորքում ուներ մի քանի կարևոր պատճառներ, որոնց համատեղումն էլ բարենտրոգումների խնդրի ի հայտ գալու հետ հանգեցրին զանգվածային կոտորածների:

1895 թ. կոտորածը Դիարբեքի քաղաքում

Դեպքերի շարադրանքը սկսենք նահանգի կենտրոնական քաղաքից՝ Դիարբեքից, քանի որ այստեղ սկսած կոտորածը կարծես ազդակ դարձավ նահանգի մյուս բնակավայրերում ևս հայերի կոտորած ու նրանց ունեցվածքի թալան իրականացնելու համար: Դիարբեքի կոտորածը սկսեց նոյեմբերի 1-ին և շարունակվեց երեք օր: Առաջին օրը սպանվեցին փողոցներում, շուկայում մնացած հայերը, իսկ հաջորդ երկու օրերին խուժանը հարձակվեց նաև տների ու եկեղեցիների վրա՝ սկսելով իսկական արյունահեղությունը: Կոտորածների վերաբերյալ «Արմենիա» թերթում տպված մի տիզրանակերտցու վկայության համաձայն՝ քաղաքի ոստիկանության, ժանդարմների, զորքերի մի մասը ևս աջակցում էր խուժանին: Երբ փողի ձայն են լսում, քրդերը փորձում են դադարեցնել ավարատությունը, և հետ քաշվել, սակայն նրանց հետ են կանչում զինվորները և կոչ անում կրակի տալ խանութները և անցնել դրանցում պահված ոսկեղենի, զարդերի թալանին: Ֆաթիհ փաշայի մզկիթից հարձակվողներն ավերեցին Ադմազար թաղի քրիստոնյաների տները, որտեղ մի տան մեջ հավաքված 80-ից ավել հայերից շատերին խոշտանգեցին և մորթեցին, իսկ մի քանի աղջիկների՝ գերեցին⁹: Կոտորածի ժամանակ ասորիների Սուրբ Աստվածամայր եկեղեցում է ապաստանում մոտ 1.000 հայ, եկեղեցին հարձակման չի ենթարկվում, քանի որ ասորիները դիտվում էին որպես տերությունը հավատարիմ ժողովուրդ, թեև դա միայն քաղաքում էր, իսկ գյուղերում քրդերը հարձակման ենթարկեցին բոլորին¹⁰: Սուրբ Հայրերի վանքում ապաստանել էր մինչև 3.000 մարդ, ֆրանսիական հյուպատոսարանում՝ շուրջ 1.500 մարդ¹¹:

8 Allen Tupper, *Around the World with Eyes Wide Open. The Wonders of the World Pictured by Pen and Pencil* (New York, 1898), 420.

9 «Տեղեկագիր Տիգրանակերտէն», *Արմենիա* (Մարտիլ), 8 փետրվարի 1896, 2:

10 Մկունդ, *Ամիրայի արձագանգներ*, 234:

11 “Армянский вопрос,” 110.

Նշենք, որ Դիարբեքիի կոտորածը թուրքական իշխանությունների կողմից մեկնաբանվեց որպես հայերի կողմից սադրանքին և անգամ՝ ապստամբությանն ի պատասխան արված գործողություն: Սակայն նշված իրադարձությունների վերաբերյալ կան հավաստի ու անաչառ բազմաթիվ աղբյուրներ, որոնք բացահայտում են իշխանությունների փաստարկների ստահող լինելը: Դիարբեքիի կոտորածի առավել օբյեկտիվ ու դեպքերը մանրամասն հաղորդող աղբյուրը նախևառաջ ֆրանսիական փոխհյուպատոսի տեղեկագրերն են: Դիարբեքիի կոտորածների ականատես ֆրանսիացի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեն գրում է, որ խիղճը ստիպում է վստահությամբ հավաստել, որ սպանությունները Դիարբեքիում իրագործվեցին մուսուլմանների կողմից, և հայերը որևէ առիթ չեն տվել դրանց սկսելու համար: Մեյրիեն նաև հավելում է, որ քրիստոնյաները գենքի են դիմել միայն ինքնապաշտպանության համար, իսկ ոստիկանությունը և զորքերը միջամտել են, որ հարվածն զոհերին (հայերին՝ Ա. Բ.)¹²: Գուստավ Մեյրիեն թվերով ներկայացնում է կոտորածի պատկերը Դիարբեքիի քաղաքում: Ըստ փոխհյուպատոսի ունեցած տվյալների առաքելադավան հայերից սպանվել էր 1.000, հայ կաթոլիկներից՝ 10, հայ բողոքականներից՝ 11 մարդ, սիրիացի հակոբիկյաններից թեև հայտարարվել էր 36 սպանված, սակայն իրականում զոհերի թիվը 150 էր, սիրիացի կաթոլիկներից սպանվել էր 3, քաղդեացիներից՝ 14, հույներից՝ 3 մարդ: Քաղաքում կային նաև բազմաթիվ վիրավորներ: Ընդհանուր առմամբ, քաղաքում անհետ կորած էր հայտարարվել 1.000 մարդ: Նաև նշվում էր, որ շրջակա գյուղերից քաղաքում արտագնա աշխատող բնակիչներից սպանվել և անհետացել էր մոտ 1.000 մարդ¹³: Բնականաբար, այս մարդկանցից եթե ոչ բոլորը, ապա մեծամասնությունը ևս հայեր էին: Հետագայում արդեն սկսեցին շրջանառվել տվյալներ, որ սպանվել է 2.000-5.000 մարդ: Մասնավորապես, «Արմենիա» թերթում տպված մի հաղորդագրության համաձայն, «մասնատր աղբիւրներէ կը հաղորդեն ևրոպական լրագիրներին թէ Քիւրտերը 5.000 հոգիի չափ ըսպաններ են Տիգրանակերտի մէջ: Ոստիկաններն ալ Քիւրտերին հետ միացած կրակ ըրեր են քրիստոնեաներին վրայ»¹⁴: Նույն Մեյրիեն տեղեկագրի մեկ այլ հատվածում նշում է, որ երեք օր տևած կոտորածներին զոհ է գնացել ավելի քան 3.000 քրիստոնյա¹⁵:

1895 թ. կոտորածները Դիարբեքիի նահանգի տարբեր բնակավայրերում

1895 թ. նոյեմբեր ամսի սկզբներին կոտորածների ալիքը տարածվեց նաև նահանգի այլ բնակավայրերում, նախևառաջ՝ Դիարբեքիի գավառակում, որտեղ ևս սպանություններն ու թալանը մեծ ծավալներ ունեցան: Մասնավորապես, Դիարբեքիի գավառակի Դըթըբըլ գյուղում կոտորածներից փրկվել էր 40 հոգի, Կարաբաշում՝ 50 հոգի, իսկ Սաթու

12 Նույն տեղում, 110-111.

13 “Армянский вопросъ,” 111.

14 «Տիգրանակերտի կոտորածը», 9 նոյեմբերի 1895, 3:

15 “Армянский вопросъ,” 112.

գյուղն այլևս «գոյություն չուներ»¹⁶ (հավանաբար ողջ մնացածները ապաստանել էին այլ բնակավայրերում): Դըթըրըլ գյուղի քրիստոնյաները փորձեցին դիմադրել հարձակմանը, սակայն 4.000-5.000 հոգի հարձակվողների դեմ անիմաստ էր որևէ դիմադրություն, ուստի նրանք ապաստանում են Սուրբ Թումա եկեղեցում: Քահանան պատարագ է անում և նախապատրաստում ժողովրդին մահվան: Դրսից հրդեհվում են եկեղեցու գերանները, որ խեղդամահ եղողները բացեն եկեղեցու դռները: Ժողովուրդը կոտորվում է անխնա, ազատվում է միայն մեկ հինգերորդ մասը՝ կանայք և վիրավորներ, նահատակվում է 400-ից ավել մարդ¹⁷: Կոտորածի օրերին Ալի Բունար գյուղի (Դիարբեքիի գավառակ) քրիստոնյաները հավաքվել էին գյուղի Ս. Աստվածածին հոյակերտ եկեղեցում: Թուրքերն ու քրդերը նախ սկսում են թալանել քրիստոնյաների տները, ապա հարձակվում եկեղեցու վրա, կոտորում դռները և ներխուժում ներս: Երեկոյան բոլոր տղամարդկանց կապկպած առանձնացնում են, դանակներով, սրերով կոտորում, ապա հրկիզում մարմինները¹⁸: Դիարբեքիի գյուղերի մասին խոսելիս, Գուստավ Մեյրիեն գրում է, որ այստեղ կոտորածներն ու ավերածությունները շարունակվեցին ևս 15 օր. արդյունքում ամեն ինչ ավերվեց¹⁹:

Դիարբեքիի գավառի Սևերեկ գավառակում չարդի հիմնական կազմակերպիչը քուրդ հայտնի Օսման աղան էր²⁰: Այստեղ, ինչպես Դիարբեքիի, Բալուի գավառակներում, ջարդերն աչքի ընկան առավել դաժանությամբ: Սևերեկում, Էդվին Բլիսի հավաստմամբ, քրիստոնյա 2.900 բնակչից գրեթե բոլոր տղամարդիկ՝ շուրջ 750 հոգի սպանվեցին, ինչը հնարավորություն տվեց իշխանություններին հեշտությամբ մահմեդականացնել կանանց ու երեխաներին²¹: Սևերեկում ավերվեցին թե՛ ավետարանական, թե՛ հայկական եկեղեցիները, և միայն 50-100 մարդ ողջ մնաց²²: Սպանվել էր նաև Սևերեկի քահանան²³: Ամփոփելով կոտորածի ընթացքն ու բնորոշ գծերը՝ թուրքական կառավարության կողմից Մարզվանից վտարված հոգևորական Ջորջ Ֆիլյանը գրում է, որ ինչպես Խարբերդում, Մալաթիայում, Արաբկիրում, այնպես էլ Սևերեկում ակնհայտ էր, որ սպանվածների մեծամասնությունը կոտորվել էր զինվորների կողմից²⁴:

Սիլվանի գավառակում տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ կյուրը սակավ է, սակայն «Արմենիա» թերթում տպված մի հաղորդագրության համաձայն այստեղի կոտորածներից փրկված մոտ 4.000 անձինք ապաստանել են Նփրկերտում, սակայն ամեն օր քաղցից ու հիվանդություններից նրանց շարքերից նորանոր մարդիկ էին մահանում²⁵:

16 Filian, *Armenia and Her People*, 300.

17 Նույն տեղում, 300:

18 «Տեղեկագիր Տիգրանակերտէն», 12 փետրուարի 1896, 2:

19 “Армянский вопросъ,” 110.

20 Verheij, “Diarbekir and the Armenian crisis,” 135.

21 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 487.

22 Filian, *Armenia and Her People*, 299.

23 Նույն տեղում, 317:

24 Նույն տեղում, 263:

25 «Նամակ Թիւրքիաէն», *Արմենիա*, 16 մայիսի 1896, 2:

Հայտնի է, որ նահանգի տարածքում իրագործված կոտորածներից իրենց դաժանությամբ առանձնանում էին նահանգի Արղանա Մադեն գավառի Բալու գավառակում արձանագրված դեպքերը: Ամերիկյան մի լրատվամիջոց արդեն կոտորածի հետևանքների մասին խոսելիս գրում է, որ «ամենամեծ խնդիրը Բալուի հետ է կապված՝ իր 43 գյուղերի հետ միասին, որոնցից շատերը մեծ գյուղեր են: Մրանք թուրքերի ու քրդերի կողմից ենթարկվել են ամենասարսափելի բռնությունների»²⁶: Լրատվության ճշմարտացիությունը հաստատվում է կոտորածների վերաբերյալ եղած բազմազան աղբյուրների համադրությամբ: Բալու քաղաքի կոտորածի վերաբերյալ արժեքավոր տվյալներ կան “The New York Times”-ի 1896 թ. համարներից մեկում, որտեղ մեջբերվում է դեկտեմբերի 14-ին Բալուից գրված մի նամակ: Համաձայն նամակի՝ չորեքշաբթի առավոտյան Բալուի շրջակա թուրք գյուղացիները շրջապատում են քաղաքը: Մի քանի օրերի ընթացքում սպանվում է մոտ 2.000 մարդ, այդ թվում՝ 2 քահանա: Այրվում ու ավերվում է 600 տուն ու խանութ, ոմանք բռնի ընդունում են իսլամ²⁷: Ֆիլյանը ևս մեջբերում է Բալուից գրված մի նամակ. «Նոյեմբերի 3-ին քաղաքի թուրքերը, զինվելով հարձակվեցին խանութների վրա, թալանեցին եղածը և սպանեցին նրանց, ովքեր փորձեցին պաշտպանվել: Մի քանի օր անց թուրքերը թողեցին քաղաքը և միացան 10.000 քրդերին ու սկսեցին ընդհանուր հարձակումը շրջակա գյուղերի վրա՝ թալանելով ու այրելով տները ու սպանելով բոլոր տղամարդկանց»²⁸: Ըստ Ֆիլյանի՝ Բալու քաղաքում սպանվել էր 1.732 տղամարդ, իսկ ողջ էր մնացել ընդամենը՝ 200 տղամարդ²⁹: Մեկ այլ ցուցակի համաձայն Բալուում հոկտեմբերի 25-ի կոտորածին զոհ էր գնացել 450 հոգի, որոնք սպանվել էին զինվորների, քրդերի ու թուրքերի կողմից³⁰: Թերևս, տվյալ դեպքում նշվում է կոտորածի առաջին օրվա սպանվածների թիվը, քանի որ մյուս աղբյուրները մատնանշում են սպանվածների այլ թվաքանակներ: Ֆիլյանի վկայակոչած ակնատեսները նաև նկարագրում են այն վիճակը, որում հայտնվել էին կոտորածներից փրկված մարդիկ, ընդ որում, ոչ միայն քաղաքում, այլ նաև Բալուի հայաբնակ գյուղերում. «Բալուի շրջակայքի բոլոր 41 հայկական գյուղերը մոխիրների մեջ են, դաշտն ամայացած է, բնակիչները՝ սպանված: Ոչինչ չի մնացել, բացի մահն ու ամայացումը»³¹: Ակնատեսները նաև հավելում են, որ Բալուում նավթ են լցրել պահեստավորված հացահատիկի վրա և այրել այն, ալյուրի հետ էլ կեղտ են խառնել, որ այն հնարավոր չլիսի օգտագործել³²:

Բալուի գյուղերի վրա հարձակումն ու կոտորածները սկսել էին գրեթե միա-

26 *The Armenian Genocide: Prelude and Aftermath. As Reported in the U.S. Press. The New York Times (1890-1914)*, vol. 1, compiled and edited by Rev. Vahan Ohanian and Ara Ketibian (Mekhitarist Publication, 2018), 452.

27 Նույն տեղում, 429:

28 Filian, *Armenia and Her People*, 266.

29 Նույն տեղում, 267:

30 Rev. James W. Pierce, *Story of Turkey and Armenia* (Baltimore: R. H. Woodward Company, 1896), 486.

31 Filian, *Armenia and Her People*, 267.

32 Նույն տեղում:

Ժամանակ: Այսպես, արդեն հոկտեմբերի 20-ից (հավանաբար ամսաթիվը նշված է հին տոմարով՝ Ա.Բ.) խառնակություններ էին սկսել Բալու գավառակի Մրջուման Մեզրե գյուղում. թուրքերը սանձարձակորեն սկսել էին կողոպուտը, նաև աղջիկներին առևանգելն ու անարգելը³³: 1895 թ. հոկտեմբերի 22-ին (հավանաբար ամսաթիվը նշված է հին տոմարով՝ Ա.Բ.) Բալու գավառակի Հավավ (Հաբաբ) գյուղը, որը գավառակի ամենահայաշատ գյուղն էր, շրջապատվում է հայտնի պարագլուխ աշիրեթապետների ու թուրքերի կողմից³⁴: Պատահական չէ, որ հավավցիները դիմում են օրհասական դիմադրության, քանի որ նրանք հայտնի էին իրենց արհասարտությամբ ու պատրաստակամությամբ՝ զենքը ձեռքին պաշտպանելու հայրենի բնակավայրն ու հայրենակիցներին: Շուտով ասպատակիչներին օգնության են գալիս կազմակերպված ուժեր Բալուից: Մինչև երեկո հայերը 30 զոհ են տալիս և ապաստանում Քաղցրահայաց վանքում: Ինքնապաշտպանության կազմակերպիչները գտնում էին, որ պետք է շարունակել պայքարը՝ ապաստանելով վանքի ներսում, քանի որ կային շուրջ 200 երիտասարդներ, որոնք ապահովված էին զենքով: Սակայն Խաչատուր Փափազյան անունով մեկը ժողովրդին կոչ է անում գնալ հարևան գյուղեր և աղերսել քրդերի ու թուրքերի գույթը՝ դրանով իսկ փրկվել: Հաջորդ օրը թուրքերը քանդում են վանքի պատն ու ներխուժում ներս, մեկ ժամվա ընթացքում մոտ 1.500 մարդ՝ մեծամասամբ կին ու երեխա թալանվում են, խոշտանգվում: Մարդկանց մի մասը փախչում է լեռներ³⁵: Ըստ Ֆիլյանի, «Հաբաբ գյուղում, որտեղ մարդիկ իրենց պաշտպանեցին մոտ 6 օր, կառավարական զորքեր բերվեցին՝ օգնելու քրդերին, և միավորված ուժերով գյուղը գրավվեց, հրկիզումից փրկվեց գյուղի 300 տնից միայն 15-ը»³⁶: Մի քանի օր անց կառավարության կողմից ուղարկված հեծյալ ոստիկանները ամբողջ գավառաբնակ հայությանը շարքերով քշեցին գորանոցի պատերի տակ, բաժանեցին կանանց ու տղամարդկանց: Մի խումբ հավավցիներ, փոքր խմբերով որոշ ժամանակ շարունակեցին պայքարը³⁷:

Բալուի Սրին հայաբնակ գյուղի վրա հարձակվեցին շրջակայքի քրդերը. գյուղն ավերվեց, բնակիչների մի մասը փախավ ու ապաստան գտավ շրջակա քրդական գյուղերում: Սրինը մոխրակույտի վերածելուց հետո գիշերով հարձակվեցին Պաղին գյուղի վրա, որը մինչև լույս պաշտպանվեց, սակայն առավոտյան տեսնելով շրջապատող մեծաքանակ ուժերը, հայերը հանձնվեցին: Պաղինը ևս թալանվեց ու հրկիզվեց, 150 տներից մնացին միայն 5-ը, մյուսները՝ հրկիզվեցին: Պղծվեց ու թալանվեց եկեղեցին³⁸: Կոտորածներից հետո, երբ պաղինցիները վերադարձան, գյուղն ավերակների մեջ էր³⁹:

33 Վահան Չախսուրեան, *Հասաի ըմբոստ արծիւր. Պ. Արամեանի Յուշարեւորից* (Նիւ Եորք, 1950), 10:

34 Նույն տեղում, 9:

35 Չախսուրեան, *Հասաի ըմբոստ արծիւր*, 12-16:

36 Filian, *Armenia and Her People*, 267.

37 Չախսուրեան, *Հասաի ըմբոստ արծիւր*, 12-16:

38 «Տեղեկագիր Տիգրանակերտէն», 8 փետրուարի 1896, 2:

39 *Պապումոթին Պաղնապան*, (Պոսթըն, Հայրենիք, 1966), 131-132:

Նշենք, որ Արղանա Մաղեն գավառի մեկ այլ բնակավայրում՝ Մաղենում, ըստ հեղինակ Գառնիկ Գևորգյանի, կոտորած չի եղել՝ շնորհիվ բարի մյութեսարիֆի. 120 տուն հայերը անվնաս են մնացել: Մաղենի մյութեսարիֆի շնորհիվ թեև կոտորածից խուսափեցին նաև Արղնիում, սակայն այստեղ հայերի մի մասն ապաստան գտավ թուրքերի մոտ, մի մասն էլ՝ իսլամացվեց, իսկ նրանց տները թալանվեցին⁴⁰: Մրանք Դիարբեքիի նահանգում եղած եզակի բնակավայրեր էին, որտեղ կոտորածների ալիքը այնքան սարսափելի չի եղել, որքան Դիարբեքիում, Բալուում, Ջերմուկում, այլ բնակավայրերում: Հավելենք սակայն, որ վերոնշյալ բնակավայրերում ավելի մեծ է եղել իսլամացվածների թվաքանակը:

Արղանա Մաղեն գավառի Ջերմուկ գավառակում ևս կոտորածները կազմակերպվեցին նոյեմբերի առաջին օրերին: Ջերմուկի թուրքերը վաղուց էին հարմար առիթի սպասում հայերի դեմ թշնամանքը առարկայական դարձնելու համար: Խնդիրն այն է, որ 1890 թ. այստեղ Մութավալլոնց Մահմուտ անունով մի թուրք առևանգում է Խանում անունով մի հայ կնոջ: Հայերը դատարան են դիմում. դատն ընթանում է Պագըր Մաղենում: Խանումին վերադարձնում են ընտանիք, սակայն արգելում վերադառնալ Ջերմուկ, իսկ Մահմուտին ու մեղսակիցներին՝ բանտարկում: Թուրքերը անհամբեր սպասում էին վրեժի, ինչն իրագործվեց զանգվածային կոտորածների ժամանակ: Ջերմուկում 600 տուն հայերից սպանվեց 550 անձ՝ գրեթե բոլորը տղամարդիկ⁴¹: Մեկ այլ աղբյուրում ևս հիշատակվում է տվյալ փաստը, որ Ջերմուկում կոտորվել են գրեթե բոլոր տղամարդիկ, հրդեհվել է 150-ից ավել տուն: Ամբողջությամբ քանդվել է Ավվու գյուղը, բնակիչներից քչերն են փրկվել⁴²: “The Boston Daily Globe”-ի 1896 թ. հունվարի 14-ի համարում հրապարակված է նամակ՝ գրված 1895 թ. դեկտեմբերի 8-ին մի ամերիկացու կողմից, որում նշվում է, որ լուրերի համաձայն Ջերմուկ գյուղն ամբողջությամբ այրվել է, բացառությամբ մատուռի հատվածի⁴³: Ցավոք, այստեղ կազմակերպված դիմադրություն չեղավ, իսկ տեղ-տեղ ցրված դիմադրություն ցույց տված մոտ տասնյակ ջերմուկցիներ հերոսաբար նահատակվեցին:

Նույն օրերին էր, որ հարձակումներ ու կոտորածներ տեղի ունեցան նաև Ջերմուկի գավառակի հայաշատ Չնքուշ բնակավայրում: Հայերի վրա հարձակումը սկսեց 1895 թ. նոյեմբերի 4-ին, կրկնվեց նոյեմբերի 8-ին և 14-ին: Չնքուշում հայերի դեմ հարձակվողները քրդերն էին: Առաջին օրը տեղացի թուրքերը առերես չմիջամտեցին հայերի ու քրդերի բախմանը, իսկ հաջորդ օրը, կարծես չեզոք դիրք բռնելով, հանդարտեցրին քրդերին՝ հայերին դրդելով կրոնափոխության⁴⁴: Երկու շաբաթ անց 50 զինվորների ուղեկցությամբ Չնքուշ եկավ Ջերմուկի կայմակամը և տեսնելով, որ հայերն այստեղ մարդկային կորուստ չեն ունեցել, հրամայեց հետ բերել քրդերին

40 Գեորգեան, *Չնքուշապարում*, 64:

41 Պարսամեան, *Յուշարձան Ջերմուկի*, 48-49:

42 Գեորգեան, *Չնքուշապարում*, 64:

43 *The Armenian Genocide: Prelude and Aftermath. As Reported in the U.S. Press. The Boston Daily Globe* (1890-1922), vol. 1, compiled and edited by Rev. Vahan Ohanian and Ara Ketibian (Mekhitarist Publication, 2019), 222.

44 Գեորգեան, *Չնքուշապարում*, 51:

և ջարդ կազմակերպել՝ իր զինվորներին և մասնակից դարձնելով դրան: Չնքուշի կոտորածին մասնակցեցին Ջերմուկի, Մադենի, Չնքուշի քրդերը: Մի վկայության համաձայն՝ այստեղ սպանվեց 200-ից ավել հայ, կոտորածը դադարեցվեց միայն Մադենից ժամանած հազարապետի կողմից, որը մի վաշտ զինվորներով եկել էր կարգուկանոն հաստատելու⁴⁵: Ըստ ամերիկացի միսիոներ Բլիսի՝ այստեղ սպանվել էր 880 հայ, մյուսները սրի տակ հարկադրվել էին կրոնափոխ լինել⁴⁶: Բողոքականների դպրոցն ու եկեղեցին, այլ շինություններ հրդեհվեցին թուրքերի կողմից: Ըստ Չնքուշի վերաբերյալ հուշամատյանի հեղինակ Գառնիկ Գևորգյանի՝ սպանվել էր 600 հոգի, թալանվել էին բոլոր տները: Ողջ մնացածները որպես մուսուլման գոյատևում են Չնքուշում մոտ վեց ամիս⁴⁷: Կոտորածի օրերին թալանվել է Չնքուշի Միրահայաց Ս. Աստվածածին վանքը, կողոպտվել է եկեղեցու սպասքը, արծաթապատ ավետարաններ, ոսկեթել ծածկոցներ, ոսկի, հանդերձանք և այլն⁴⁸: Վանքի վանահայր Մինաս վարդապետի հուշագրության համաձայն՝ 1895 թ. հոկտեմբերի 26-ին (օրը հավանաբար նշված է հին տոմարով՝ Ա.Բ.) երեք հարյուր տնից բաղկացած և նորակերտ հոյակապ եկեղեցի ունեցող Ատիշ գյուղը ևս թալանվել է և ամբողջությամբ հրդեհվել⁴⁹: “The New York Times”-ի 1896 թ. մարտի 6-ի համարում ևս տեղեկություններ կան Չնքուշում ու հարակից բնակավայրերում իրագործված կոտորածի մասին: Մասնավորապես նշված է, որ Չնքուշում քրիստոնյաների 1.000 տներից 100-ը այրվել են, մինչդեռ հարևան Ատիշ գյուղում ավերվել է տների մեծ մասը, բնակիչները հուսահատ վիճակում էին⁵⁰: Ամերիկյան մեկ այլ լրատվամիջոցում՝ “The Boston Daily Globe”-ի 1896 թ. հունվարի 14-ի համարում 1895 թ. դեկտեմբերի 8-ին մի ամերիկացու կողմից հրապարակված նամակում նշվում է, որ Չնքուշում 608 հոգի սպանվել և վիրավորվել է, այրվել է 105 տուն: Կոտորածներից փրկվածները կրոնափոխ են արվել⁵¹: Տվյալների համադրությունը բերում է այն եզրահանգման, որ Չնքուշում կոտորածի օրերին սպանվել է 600-900 հայ՝ հիմնականում տղամարդիկ, ողջ մնացածների մեջ շատ են եղել բռնի կրոնափոխ արվածները: Ցավոք, Չնքուշում ևս չկազմակերպվեց կոտ դիմադրություն, այլ եղան ինքնապաշտպանության մեկ-երկու դրվագներ:

Ինչ վերաբերում է քրիստոնյաների բազմազգ կազմ ունեցող Մարդին գավառին, ապա այստեղ ևս կոտորածների գոհ դարձան բազմաթիվ հայեր և այլ քրիստոնյաներ: 1895 թ. նոյեմբերի 25-ով թվագրված Մարդինից գրված մի նամակում՝ ներկայացվում են շրջակա բնակավայրերում հարձակումների ու թալանի մանրամասներ: Նշվում է, որ դեպքերը սկսել են նոյեմբերի 1-ին Դիարբեքիից, այնուհետ, երեկոյան քրդերը Սասունի մոտ գտնվող Թեհիկայից հարձակվել են Քուրթուրուլի վրա (խոսքը

45 Պարսամեան, *Յուշարձան Ջերմուկի*, 61-62:

46 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 483.

47 Գեորգեան, *Չնքուշապարում*, 51:

48 Նույն տեղում, 54-55:

49 Նույն տեղում, 56:

50 *The New York Times (1890-1914)*, 452.

51 *The Boston Daily Globe (1890-1922)*, 222.

հավանաբար Դիարբեքիի գավառակի բնակավայրի մասին է): Քրիստոնյաների 60 տուն թալանվել ու հրդեհվել է: Շաբաթ կեսօրին՝ նոյեմբերի 2-ին, առաջին հարձակումն է եղել Քարորաշ գյուղի ուղղությամբ: Երեկոյան հարձակումը կրկնվել է. սպանվել է 70 գյուղացի, 100 տուն հրկիզվել: Քարեքյոն 6 ժամ պաշտպանվել է, ինչից հետո թալանվել է 150 տուն: Այս երեք գյուղերում ապրում էին մեծամասամբ ասորիներ ու հայ բողոքականներ: Սպանվել է նաև բողոքական 3 հովիվ ու մեկ քարոզիչ⁵²: Նոյեմբերի 5-ին 90 ասորի և 60 հայ բողոքական ընտանիք ունեցող Քուլեթ գյուղը, որը գտնվում էր Մարդինի մոտ, ենթարկվել է հարձակման, բայց կայմակամը արաբ ցեղախմբի անդամների հետ պաշտպանել է գյուղը: Գոյլի գյուղը հարձակման է ենթարկվել նոյեմբերի 7-ին քրդերի կողմից: Ժողովուրդը հավաքվել է եկեղեցում, որը շրջափակվել է: Օգնության եկած զորքերի միջոցով ժողովուրդն ապաստանել է Մարդինում⁵³:

Մարդինից 5 ժամ հեռավորության վրա դեպի արևմուտք կաթոլիկ հայերի քաղաք Թել Արմենը ևս ենթարկվեց հարձակման, թալանվեց ու հրկիզվեց նոյեմբերի 6-7-ը: Կողոպտվել ու հրդեհվել են նաև Աբրահամոյա, Ջոելի, Բենտբել գյուղերը: Այս և այլ գյուղերից մոտ 3.000 փախստականներ ապաստանել էին Մարդինում⁵⁴:

Այսպես, Մարդինի շուրջը գտնվող գյուղերի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո, նպատակ կար գրավել Մարդինը, որի բնակչությունը պատրաստվում էր դիմադրության: Նոյեմբերի 9-ին և 10-ին քրդերը երեք հարձակում կազմակերպեցին Մարդինի վրա, սակայն անհաջող⁵⁵: Այդուհետ քրդերի կողմից շրջապատվեց Միդյաթ գյուղաքաղաքը, որն ուներ 1.000 տուն ասորի և հայ բողոքական բնակիչներ: Քրդերը, սակայն, չկարողացան մտնել գյուղ: Կողոպտվեցին Ռեդվին ու Թիլլ բնակավայրերը⁵⁶: Առաջին երկու օրերի կոտորածից ու ավարատությունից հետո քաղաքի թուրքերը դրսից եկող քրդերի համար դռները փակեցին, քանի որ վերջիններս սպասվածից ավել էին հավաքվել քաղաքում: Այդուհետ առանձին խմբապետների հանձնարարվեց հարձակվել շրջակա բնակավայրերի վրա: Նշենք նաև, որ Մարդինի բնակավայրերից շատերում հիմնական հարձակվողները քրդական ուժերն էին, իսկ տեղի թուրքերը շատ դեպքերում, գոնե սկզբնական հարձակումների ընթացքում, աջակցում էին քրիստոնյա բնակչությանը: Երբ քրդերը հասկացան, որ կատավարությունը և քաղաքը միավորված են այստեղ՝ պաշտպանության գործում, իրենց ուժերն ուղղեցին՝ գրավելու Նիզիբինը (Մծբին) և դրա ճանապարհին գտնվող շուրջ 20 քրիստոնյա գյուղեր: Դրանցից շատերը հրկիզվեցին: Միդիաթը Մարդինի նման դիմադրեց: Հետևանքն այն էր, որ այստեղ հավաքվեց մոտ 3.500 գաղթական⁵⁷: Բենարելի գյուղացիները ևս լեռներում

52 Frederik Greene, *Armenian Massacres or the Sword of Mohammed* (Philadelphia: International Publishing Co., 1896), 276.

53 Նույն տեղում:

54 *The New York Times* (1890-1914), 358-359.

55 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 475.

56 *The New York Times* (1890-1914), 358-359.

57 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 476.

երկու օր դիմադրեցին քրդերին մինչև զորքերը հասան և 500 հոգու տեղափոխեցին Մարդին⁵⁸: Իսլաթ էլ Մարաթ ասորական գյուղի բնակչությունը իրենց ունեցածով ապաստանեցին Դերե Չաֆրան վանքում, որը ասորի հակորիկյան պատրիարքի նստավայրն էր: Հաջորդ օրը քրդերը գրավեցին գյուղը, շրջապատեցին եկեղեցին, տարան գյուղացիների ունեցվածքը, նույնիսկ տների դռներն ու պատուհանները: Թուրքական կառավարությունը 100 զինվոր ուղարկեց՝ պաշտպանելու վանքը և գյուղացիներին⁵⁹: Ուշագրավ փաստ է, որ Մարդինի գավառը, որն առանձնանում էր ասորիների մեծ թվաքանակով, հարձակման ենթարկվեց հիմնականում քրդական ուժերի կողմից, ավելին՝ մի շարք բնակավայրերում թուրքական իշխանությունները սատար կանգնեցին ասորական բնակչությանը, նաև նրանց հարևանությամբ ապրող այլ քրիստոնյաների:

Համիդյան կոտորածների հետևանքները Դիարբեքիի նահանգում

Կոտորածների ընթացքում նահանգի տարածքում սպանվածների ընդհանուր թվաքանակը հաշվարկելը բարդ է, քանի որ մանրամասն տվյալները բացակայում են, ավելին, գյուղերում տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ գրեթե տվյալներ չկան: Դերին գրքում ներկայացված է 1896 թ. փետրվարով թվագրվող զոհերի և կորուստների ընդհանուր աղյուսակ⁶⁰, որի համաձայն՝ թալանված տների քանակը 5.400 էր, խանութների թիվը՝ 1.430: Սպանվել էր 5.720 քրիստոնյա, 500 մուսուլման, 7.500 մարդ բռնի իսլամ էր ընդունել, 41.500 անձ հայտնվել էր աղքատության մեջ⁶¹: Կարծում ենք, որ այս տվյալները ամբողջովին չեն արտացոլում իրավիճակը, քանի որ միայն Դիարբեքիի քաղաքում զոհերի թիվը հաշվվում էր մինչև 5.000, Բալուում՝ շուրջ 2.000, մեծ թվով հայեր էին սպանվել նաև Դիարբեքիի գյուղերում, Արդանա Մադենի գավառի բնակավայրերում, բազմաթիվ քրիստոնյաներ՝ Մարդինի գավառում: Ուստի նահանգի տարածքում արձանագրվող զոհերի թվաքանակը հաշվարկել ընդամենը 5.720 սխալ է. սպանվածների թվաքանակը նահանգի տարածքում անհամեմատ մեծ էր: Թերևս, սա կոտորածների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն էր, մինչդեռ իրականությունն ավելի սարսափելի էր: Ըստ Մեյրիեի՝ միայն Դիարբեքիի սանջակի 119 գյուղեր, որոնք ունեին 6.000 տուն բնակչություն՝ մեծամասամբ հայեր, թալանվել և հրկիզվել էին: Այս բնակավայրերում սպանված կամ անհետացած էր համարվում 30.000 քրիստոնյա: Անհաշվելի էր այն կանանց ու աղջիկների թվաքանակը, որոնք առևանգվել էին (միայն քաղաքում առևանգվել էր 50 կին ու աղջիկ)⁶²: Սպանվածների գրեթե նույն թվաքանակն է շրջանառվում այս անգամ նահանգի

58 Greene, *Armenian Massacres*, 276.

59 Նույն տեղում:

60 Աղյուսակում Դիարբեքիի նահանգի բնակչությունը հաշվվում էր 472.000, որից քրիստոնյա՝ 133.600-ը:

61 “Армянский вопрос,” 124.

62 Նույն տեղում, 112:

մասշտաբով հայկական մի աղբյուրում, որում մասնավորապես գրվում է, որ «անձի վնասը նահանգիս մեջ 25.000-է վար չէ կարելի հաւատալ. Բայց մինչ դարուն այս ընթացքով, նոյնչափ ալ գանազան ձևերով և ցատերով կը մեռնին»⁶³: Կարծում ենք, նույնիսկ այս թվերը չեն կարող ամբողջությամբ արտացոլել կոտորածների իրական հետևանքները, մասնավորապես որ դրանք չսահմանափակվեցին միայն կոտորածի ընթացքում սպանվածների թվաքանակով:

Կոտորածների հետևանքները, ցավոք, ավելի խորն էին և երկարատև ժամանակ էր պահանջվում դրանք հաղթահարելու ու կրկին բնականոն կյանքի անցնելու համար: Կոտորածներից հետո ամբողջ Արևմտյան Հայաստանը, այդ թվում և կոտորածներից մեծապես տուժած Դիարբեքիի նահանգը լի էր կարիքավորներով, վիրավոր, անօթևան, առանց գոյության որևէ միջոցի մնացած մարդկանցով: Շուրջբոլորը ավերված ու հրկիզված գյուղեր էին, որտեղ յուրաքանչյուր տուն թալանված էր և ուներ մարդկային կորուստ: Ավելին, այն թշնամանքի մթնոլորտը, որն ուղղված էր քրիստոնյա և, առաջին հերթին, հայ բնակչության դեմ, դեռևս երկար ժամանակ չէր փոխվելու: Կոտորածներից անմիջապես հետո իշխանությունները, ձգտելով բարդել տեղի ունեցածի մեղքը քրիստոնյաների վրա, սկսեցին բանտարկել քրիստոնյաներին, մեղադրել ապստամբելու մեջ, նրանց տանջամահ անել՝ ստիպելով մյուսների վրա գրպարտանք գրել: Իշխանությունները հասան նրան, որ երբ հայերի «եպիսկոպոսը»⁶⁴ հրաժարվեց ստորագրել թղթերը, որտեղ իբր հաստատվում էր յուրայինների «մեղավորությունը», հայ բնակչությանը գրկեցին այն փոքր օգնությունից, որը տրվում էր անօթևան և գոյատևելու որևէ միջոցից զրկված մարդկանց»⁶⁵:

Կոտորածներին վերաբերող ուշագրավ վիճակագրություն կա “The New York Times”-ի 1896 թ. փետրվարի 16-ի համարում, որը պատրաստված է մի մուսուլման պաշտոնյայի կողմից: Բնօրինակը եղել է թուրքերեն՝ կնքված պաշտոնյայի կողմից: Փաստաթղթի համաձայն՝ Բալուում և իր գյուղերում կար 11.625 կարիքավոր, մուսուլմանների հետ բռնի ամուսնացածների թիվը 427 էր, քանդված կամ հրկիզված եկեղեցիներ՝ 16, բռնությունների դեպքեր՝ 1.780, բռնությամբ իսլամացվածներ՝ 1.540 հոգի, հրկիզված շինություններ՝ 2.900, վիրավորներ՝ 990 հոգի, վախից մահացածներ՝ 112 հոգի, մահացածներ լեռներում ու ձորերում՝ 470 հոգի, սովից ու ցրտից մահացածներ՝ 795, սպանված ուսուցիչներ ու քահանաներ՝ 11, հրկիզվածներ՝ 245, սպանվածներ՝ 4.800, ընդհանուր սպանվածներ ու մահացածներ՝ 6.433⁶⁶: Ստացվում է, որ կոտորածի ընթացքում սպանվածների թվաքանակը տարբերվում է ընդհանուր մարդկային կորուստների թվաքանակից, քանի որ կոտորածներից հետո ևս բազմաթիվ մարդիկ էին մահանում ստացված վերքերից, սովից, հիվանդություններից, վախից, որոնք կոտորածների անմիջական հետևանքն էին: Բալուի գյուղերի հայ բնակչության անմիջապես վիճակի մասին է գրում Ավետիք Արասխանյանը. «Հայերը այդտեղ կենդանի են

63 «Տեղեկագիր Տիգրանակերտէն», 15 փետրուարի 1896, 2:

64 Խոսքը, թերևս, Առաջնորդական տեղապահ Տեր Եզեկիել վարդապետի մասին է:

65 “Армянский вопрос,” 112.

66 *The New York Times (1890-1914)*, 430-431.

մնացել միայն եվրոպական նպաստող ֆոնդերի շնորհիւ, մի գիւղում, որը բաղկացած էր 200 տնից, 170 հիւանդ կար, մի այլ գիւղում 280 տնից՝ 250 հիւանդ, կոտորածի ժամանակ մեռել են 400 հոգի, մարդիկ հիւանդ են, բայց մեռնում են գլխաւորապէս քաղցից»⁶⁷: Տվյալ դեպքում տեղին է Բլիսի միտքը, որ նման իրավիճակը խոսում է իշխանությունների իրական նպատակի մասին՝ բնակչությանը պահելու չքավոր վիճակում՝ հարկադրելով իսլամ ընդունել⁶⁸:

Նույն կերպ էր նաև մյուս բնակավայրերում, որտեղ կոտորածները մեծ ծավալներ էին ունեցել: Դիարբեքիրում վիճակը նույնքան տագնապալի էր, քանի որ այստեղ էին «կոտակվել շրջակա բնակավայրերից գաղթականներ, ինչի հետևանքը մարդկանց գերբնակվածությունն էր և մեծ աղետը»⁶⁹: Դիարբեքիրում կոտորածների փրկվածների անմխիթար վիճակի մասին է խոսվում նաև անգլիական դիվանագիտական փաստաթղթերում, մասնավորապէս, նշվում է 30.000 հայ կարոտյալների մասին, որոնց, եթե չօգնել, կմեռնեն քաղցից, նշվում է, որ Դիարբեքիրի շրջանի համար «հարկատու է 6.000 ֆունտ ստերլինգ (60.000 ռ.), Մարդինի համար 2.200 ֆունտ, Սդերդի համար (Բիթլիսի նահանգ) 3.000 ֆունտ, ընդամենը 11.200 ֆունտ (մօտ 110.000 ռ.)»⁷⁰: Ավելին, հյուպատոս Հոլուարդի թարգմանը տեղեկություններ է փոխանցել միսիոներներ Հարիսներին այն մասին, որ «Դիարբեքիրի ամբողջ բնակչությունը կարտագաղթի, եթե հնարավոր լինի, հակառակ դեպքում նրանք հաջորդ ձմեռ կմահանան սովից»⁷¹:

Նման մտահոգությունները տեղին էին, քանի որ փաստ է, որ կոտորածներից հետո տարածաշրջանի բնակիչների մեջ գաղթելու միտումներն ավելի ակտիվացան: Նախ, խոսքն ավելի խոշոր, ավելի ապահով թվացող բնակավայր տեղափոխվելու մասին էր: Բազմաթիվ էին դեպքերը, երբ դեռ կոտորածների ժամանակ գյուղերից փախած բնակչությունը ապաստան էր գտնում մոտակա քաղաքում՝ տվյալ դեպքում՝ Բալուում, Դիարբեքիրում, Մարդինում և այլն: Ընդ որում, կային մարդիկ, որոնք կոտորածներից ամիսներ անց վախենում էին վերադառնալ իրենց բնակավայրերը և, պատահական չէ, որ նրանց մի մասը այդուհետ հաստատվեց հենց տվյալ քաղաքում: Այս առումով, քաղաքների հայ բնակչության թվաքանակը կարծես չէր նվազում: Այլ էր վիճակը գյուղական բնակավայրերում. շատերը հեռանում էին իրենց բնակավայրերից՝ այլ վայրերում կյանքի ու գույքի ապահովություն փնտրելով: Հայերի մի մասն էլ գաղթում էր ավելի հեռավոր բնակավայրեր: Կոտորածներից հետո գաղթականությունը նոր ծավալներ սկսեց ստանալ, ընդ որում շատ էին նաև ընտանիքներով մեկնողները: Գաղթում էին Երուսաղեմ գնալու անցագրերով, Յաֆֆայում նստում ֆրանսիական շոգենավ՝ անցնելու ԱՄՆ: Ոմանք մնում էին Բեյրութում, Կիպրոսում, Եգիպտոսում⁷²:

67 Մորն (Թիֆլիս), փետրվար-մարտ 1897, 350:

68 Bliss, *Turkey and the Armenian Atrocities*, 484.

69 *Report: America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross* (Washington, 1896), 86.

70 Մորն, փետրվար-մարտ 1897, 354:

71 Harris and Harris, *Letters from the Scenes*, 102.

72 Մկունդ, *Ամիրայի արձագանգներու վկայականում*, 269-270:

Կոտորածներից և հատկապես 1899 թ. ձերբակալությունների⁷³ հետո Չնքուշից ևս ակտիվացան գաղթի տեմպերը: Բուն Չնքուշից մոտ 400 տուն հայ էր գաղթել, իսկ նախկինում բարգավաճ գոտ հայաբնակ Ատիշ գյուղը դարձել էր գրեթե անմարդաբնակ, հայերը հեռացել էին՝ իրենց արտերն ու այգիները, կալվածքները թողնելով թուրքերին: Ինչ վերաբերում է մնացողներին, ապա նրանք հարկադրաբար կիսում էին իրենց աշխատածը թուրքերի ու քրդերի հետ՝ ստանալու նրանց պաշտպանությունը⁷⁴:

Կոտորածների մեկ այլ կարևոր հետևանք էր որբացած երեխաների խնամքի խնդիրը, որը առաջնային լուծում էր պահանջում: Հիմնականում այս հարցը դարձավ միսիոներական կազմակերպությունների հոգածության առարկա, և տարբեր բնակավայրերում բազմահազար որբերը ապաստան գտան օտար որբանոցներում: Սակայն այստեղ ևս կային վտանգներ. Գառնիկ Գևորգյանը մի շեշտադրում է անում՝ կապված արդեն կոտորածի ընթացքում որբացած երեխաների ճակատագրի հետ: Հեղինակը գրում է, որ մասնավորապես գերմանական որբանոցում հայտնված որբերը դաստիարակվում էին որպես հայության համար օտար մարդիկ և ուժացվում էին: Որպես օրինակ, հեղինակը բերում է 1895 թ. սպանված Գարանանեսյան եղբայրների յոթ որբերի մասին, որոնք տեղափոխվում են գերմանական որբանոցի հետ Երուսաղեմ, և նրանցից մեկն է միայն հետագայում վերադարձել հայկական ինքնությանը⁷⁵: Սրանք խնդիրներ էին, որ ժամանակի հեռավորությունից ավելի են կարևորվում, սակայն տվյալ իրավիճակում առաջնայինը այդ երեխաների ու ընդհանրապես անօթևան ու կարիքավոր մարդկանց տարրական պայմանների մասին հոգալն էր:

Նահանգի առումով հսկայական էին նաև նյութական կորուստները: Ըստ Մեյրիեի, միայն Դիարբեքի քաղաքում թալանվել էր ընդհանուր առմամբ 1.701 տուն (փաստաթղթում վնասները ներկայացված են ըստ տարբեր հարանվանությունների՝ բողոքականներ, առաքելադավան հայեր, հայ կաթոլիկներ, հակոբիկյան ասորիներ և այլն), որից 1.500 տունը պատկանում էր առաքելադավան հայերին, 36 տունը՝ կաթոլիկ հայերին: Նաև թալանվել ու հրկիզվել էր ընդհանուր առմամբ 2.448 խանութ, որից 2.000-ը պատկանում էր առաքելադավան հայերին, 65-ը՝ կաթոլիկ հայերին⁷⁶: Բարդ խնդիր է հաշվարկել նաև նահանգի առումով հայության ունեցած նյութական կորուստները, քանի որ կոտորածների ընթացքում թալանվել էին բազմաթիվ տներ, խանութներ, եկեղեցիներ ու վանքեր, հրկիզվել դրանցից շատերը:

73 Խոսքը սարկավագ Մովսես Տեր Խաչիկյանի գրապարտությամբ շուրջ 300 անձանց ձերբակալության և նրանցից 45-ի՝ Տիգրանակերտում երեք տարվա բանտարկության դատապարտման փաստի մասին է՝ որպես «հեղափոխականների»:

74 Գէորգեան, *Չնքուշապարտում*, 76:

75 Նույն տեղում, 66:

76 “Армянский вопрос,” 111.

Բռնի կրոնափոխություն

Համիդյան կոտորածների բաղկացուցիչ տարրերից էր բռնի իսլամացման քաղաքականությունը, ինչը կիրառվում էր կոտորածներին զուգահեռ և մեծ չափերի հասավ նաև Դիարբեքիի նահանգում: Կոտորածների ընթացքում հայերին իսլամացման պարտադրանքի վերաբերյալ տվյալներ է ներկայացրել Մուշում անգլիական փոխհյուպատոսը: Նա 1895 թ. դեկտեմբերին գրում է, որ Դիարբեքիի մոտակայքի գյուղական բնակչության մեծամասնությունը մահվան սպառնալիքի տակ իսլամ է ընդունել⁷⁷: Ընդ որում, եթե Խարբեղում իսլամացման ընթացքը դադարեց կոտորածներին զուգահեռ և կոտորածների տագնապը վերանալուց հետո կրոնափոխ եղածները ամիսների ընթացքում վերադարձան քրիստոնեությանը, ապա Դիարբեքիում այս գործընթացը չդադարեց և բավական երկար ժամանակ, հատկապես գյուղական բնակավայրերում, կրոնափոխ եղածներին արգելվում էր վերադառնալ հայությանը: Կրոնափոխության մեխանիզմին այստեղ ավելի արմատապես էին վերաբերում՝ բացառելու համար ամերես կրոնափոխության հնարավորությունը: Դեռևս 1895 թ. նոյեմբերի 10-ին Դիարբեքիի նահանգապետ Էնիս փաշան գեկուցում է, որ «որոշ շրջաններում հայերի ամբողջ գյուղեր կրոնափոխ են եղել, ինչի պատճառով կազաների (գավառակ) ղեկավարները հրահանգների են սպասում: Քանի որ այս կրոնափոխությունները շատ համոզիչ չեն, ես խնդրում եմ կատարել հանձնարարականները»⁷⁸: Նշենք նաև, որ հետագայում ևս տեղական իշխանությունները ամեն կերպ փորձում էին խոչընդոտել հայերի վերադարձին քրիստոնեությանը: Հատկապես նման վարքագիծ դրսևորվեց առևանգված կանանց ու աղջիկներին վերադարձնելու փորձերի դեպքում: Այս խնդիրն ավելի տագնապալի էր, քանի որ իշխանությունները դիմում էին ամեն սանձարձակ ու վիրավորական քայլի՝ խուսափելով թույլ տալ հայ կանանց և աղջիկներին վերադառնալ հարազատների մոտ: Մասնավորապես, «Էնիս փաշան՝ Դիարբեքիի վալին, որակում է կոտորածների ժամանակ մուսուլմանների կողմից առևանգված և բռնությամբ իսլամ ընդունած հայ կանանց որպես «հայ կանայք, ովքեր անկարգությունների ժամանակ ցրվել են այստեղ ու այնտեղ»⁷⁹: Սրանով իսկ իշխանությունները փորձում էին սքողել հայ կանանց ու աղջիկների առևանգված լինելու փաստը: Առևանգված կանանց ու աղջիկներին վերադարձնելու ուղղությամբ մեծ ջանքեր է գործադրում ֆրանսիացի փոխհյուպատոսը: Մեյրիեն գեկուցում է, որ առևանգված զոհերի վիճակը շատ ցավալի է, որ նրանց սպառնում են ոչ միայն առևանգողները, այլ նաև այլ մուսուլմաններ: Փոխհյուպատոսը ուղարկում է մի մուսուլմանի ու երկու քրիստոնյայի Դիարբեքիի շրջակա բնակավայրեր՝ փրկելու զոհերին, բայց անհաջող: Հյուպատոսը տվել էր

77 Նույն տեղում, 119:

78 Selim Deringil, “The Armenian Question is Finally Closed”: Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895-1897,” *Comparative Studies in Society and History* 51, no. 2 (2009): 352.

79 Նույն տեղում, 350:

մոտ 100 հոգու անուն, սակայն ուղարկված մարդիկ վերադարձան միայն մեկ կնոջ և վերջինիս դստեր հետ: Պատվիրակները վատահ էին, որ քրդերը թաքցնում են գոհերին և երբեմն տեղափոխում գյուղից գյուղ⁸⁰: Առևանգված և բռնի կրոնափոխ արվածների թվաքանակը մեծ էր նաև Սլիվանի գավառակում: Դիարբեքիի բրիտանական փոխյուպատոս Սեսիլ Հոլուարդը 1896 թ. մարտի 17-ի գեկույցում նշում է, որ Սլիվանի տարածքում 7.000 հայեր բռնի իսլամացվել են և մինչև 500 կին ու աղջիկ առևանգվել են: Բալուում, ըստ փոխյուպատոսի, կրոնափոխ են արվել 3.000, Սևերեկում և շրջակա գյուղերում՝ 2.500 հոգի: Ամբողջ նահանգի համար Հոլուարդը հաշվում է, որ շուրջ 25.000-ը իսլամացվել են⁸¹: Կրոնափոխությունից խուսափելու համար շատ կանայք ինքնասպան են եղել: Բողոքական քարոզիչ Ֆիլյանը գրում է նաև տղամարդկանց իսլամացման փաստի մասին, մասնավորապես, Բալուում. «այն հայ պատանիները, ովքեր բռնությամբ իսլամ էին ընդունել, ստիպված էին ամուսնանալ թուրք կանանց հետ՝ ապացուցելու իրենց արարքի անկեղծ լինելը»⁸²: Ավելին, շատ վայրերում եկեղեցիները վերածվել էին մզկիթի, որտեղ հայ կանանց ու ծեղերին իսլամ էին ուսուցանում մուսուլման քարոզիչները⁸³: Գերմանացի հասարակական գործիչ, արևելագետ Յոհաննես Լեփսիուսը ևս գրում է, որ բռնի կրոնափոխ արվածների թիվը շատ մեծ է, գյուղերի թիվն անցնում է 100-ից. Բալուի շրջանում՝ 48 գյուղ, Սլիվանի և 3 այլ շրջաններում՝ 105, Դիարբեքիում՝ 106 գյուղեր են: Լեփսիուսի տեղեկությունների համաձայն՝ ամբողջ Դիարբեքիի նահանգում միայն մի եկեղեցի՝ Ս. Սարգիսն է, որ ծառայում է իր ուղղակի նշանակությամբ⁸⁴: Լեփսիուսը հավելում է, որ ամբողջ վիլայեթում առաքելադավան հայերի գյուղերի վերապորոզ բնակիչները, նաև մի հունական գյուղի բնակիչներ բռնի կրոնափոխ են արվել⁸⁵: Բիարկե, ասել, որ վերապորոզ բոլոր հայերը կրոնափոխ էին արվել, սխալ է, սակայն փաստերը, որ կրոնափոխ արվածների թվաքանակը Դիարբեքիի նահանգում մեծ էր, ակնհայտ է: Կրոնափոխության մեծ ծավալների վերաբերյալ եղած բողոքները, խոսակցությունները որոշակի անհանգստություն էին պատճառում իշխանություններին, հետևաբար որոշ կառավարական ծառայողներ են ուղարկվում Իսարբեդի ու Դիարբեքիի նահանգներ՝ այցելելու նոր կրոնափոխ եղած գյուղերը և ստիպելու կրոնափոխ եղածներին ոչ մի դեպքում չխոստովանել բռնի իսլամ ընդունելու փաստը⁸⁶: Կոտորածներից միայն մի քանի ամիս անց հնարավոր եղավ իսլամացված հայերի մեծ մասին վերադառնալ իրենց ինքնությանը, վերանորոգել եկեղեցիներն ու մատուռները, ծեսեր կազմակերպել:

80 Նույն տեղում, 362:

81 Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence, RI & Oxford: Berghahn Books, 1995), 156.

82 Filian, *Armenia and Her People*, 267.

83 Նույն տեղում, 268:

84 Johannes Lepsius, *Armenia and Europe* (London: Hodder & Stoughton, 1897), 37.

85 Նույն տեղում, 12:

86 Նույն տեղում, 65:

Համիդյան կոտորածների ընթացքում մեծ հարված հասցվեց հայկական եկեղեցիներին, վանքերին, բազմաթիվ հոգևորականներ տանջամահ արվեցին, նաև երկար ժամանակ որևէ եկեղեցական արարողություն չէր կատարվում: Թալանվել ու պղծվել էր Դիարբեքիրի Ս. Սարգիս եկեղեցին, քահանան՝ Տեր Հարությունը, սպանվել ու մաշկահան էր արվել: Սադի գյուղի Ս. Խաչ եկեղեցին և Ալիբունարի Ս. Աստվածածին եկեղեցիները թալանվել ու հրկիզվել էին, Ալիբունարի քահանան սպանվել էր: Արդանայի եկեղեցին կոտորածից հետո վերածվեց մզկիթի, քահանան սպանվեց: Թալանվել ու մզկիթի էին վերածվել Բալուի եկեղեցիները⁸⁷:

Եզրակացություններ

Դեպքերի նկարագրությունը վկայում է այն մասին, որ համիդյան կոտորածները համակարգված էին և ծրագրված: Մասնավորապես, Դիարբեքիրի նահանգում կազմակերպված կոտորածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, նախ, կոտորածները այս նահանգի տարբեր բնակավայրերում սկսեցին միաժամանակ, երկրորդ, իշխանությունները պլանավորել էին հայերին մեղադրել սադրանքի մեջ, ապա սկսել կոտորածը: Ծրագրված էր նաև սպանել նախ տղամարդկանց, իսկ կանանց՝ կրոնափոխ անել: Կոտորածների պետական ուղղորդում ունենալու մասին է փաստում նաև այն հանգամանքը, որ կոտորածների ալիքն ընդգրկեց ամբողջ Արևմտյան Հայաստանը: Նաև հատկանշական է, որ կոտորածների հիմնական թիրախում հայ բնակչությունն էր: Այս մասին է հավաստում նաև Ֆրեդերիկ Գրինը, ով ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ ոչ մի հունաբնակ գյուղ հարձակման չի ենթարկվել, թեև դրանք բազմաթիվ էին Տրապիզոնի, Կեսարիայի, Մարզանի շրջակայքում: Ավելին, Դիարբեքիրում կոտորածն ու կողոպուտը դադարեց հանկարծակի, ինչպես և սկսել էր, և Գրինը հարց է տալիս, թե արդյոք դա կապ ունի այն հանգամանքի հետ, որ ֆրանսիական դեսպանը Բարձր Դռանը դիմեց և սպառնաց, որ եթե տվյալ քաղաքում ֆրանսիական հյուպատոսարանը որևէ վնաս կրի, ապա ֆրանսիական նավատորմը կպահի⁸⁸ Ալեքսանդրետտան⁸⁸: Մյուս կողմից, բավական հետաքրքրական անցքեր եղան Դիարբեքիրի նահանգի հիմնականում ասորիներով, քաղղեացիներով, այլ քրիստոնյաներով բնակեցված բնակավայրերում: Գրինը եզրակացնում է, որ եթե թուրքական կառավարությունը կարողացավ պաշտպանել Մարդինն ու Մոսուլը և Դիարբեքիրի ֆրանսիական հյուպատոսարանը և հետ քշել քրդերին Սեբաստիայից, ապա մեծագույն անհեթեթություն է ասել, որ այն ոչինչ չկարողացավ անել Խարբերդում, Բիթլիսում և Էրզրումում⁸⁹:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ Դիարբեքիրի նահանգում, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում, հայերի 1895 թ. զանգվածային կոտորածները

87 Lepsius, *Armenia and Europe*, 275-276.

88 Greene, *Armenian Massacres*, 305.

89 Նույն տեղում:

կրում էին կազմակերպված բնույթ, ուղղորդված էին իշխանությունների կողմից և դրանց իրագործմանը մասնակցում էին ինչպես շարքային մուսուլման քաղաքացիները, այնպես էլ զորքը, ոստիկանները: Կոտորածներին այս նահանգում զոհ գնացին տասնյակ հազարավոր հայեր, նաև՝ այլ քրիստոնյաներ: Ուշագրավ է այն փաստը, որ որոշ բնակավայրերում, որտեղ ապրում էին ավելի մեծ թվով ասորիներ, կաթոլիկներ ու բողոքականներ, հարձակվողները հիմնականում քրդական ուժերն էին, իսկ ոստիկանությունն ու զորքերը որոշ դեպքերում մասնակցում էին քրդական հարձակումներից քրիստոնյաների պաշտպանությանը: Կարելի է փաստել նաև, որ կոտորածներն ուղղված էին նախևառաջ հայ բնակչության դեմ, իսկ այլ քրիստոնյաներ տուժեցին, քանի որ կոտորածների ընթացքում երբեմն դժվար էր հստակեցնել քրիստոնյաների էթնիկ պատկանելիությունը, նաև դյուրին չէր հանդարտեցնել ավերի ու թալանի ելած քրդական ուժերին: Ավելին, այդ ուժերին իշխանություններն ուղղորդեցին և օգտագործեցին կայսրության տարածքում քրիստոնյաների և նախևառաջ հայերի ոչնչացման գործում նաև 1915-1923 թթ. ընթացքում:

Կոտորածների հետևանքները հսկայական էին: Թավանվել, հրկիզվել էին հարյուրավոր բնակավայրեր, ամենուր սով էր ու հիվանդություններ: Նահանգի տարածքում մեծաթիվ էին նաև բռնությամբ կրոնափոխ արված հայերը, որոշ աղբյուրների տվյալներով նրանց թվաքանակը հասնում էր մի քանի տասնյակ հազարի: Կոտորածներից հետո արագացան արտագաղթի տեմպերը:

Arpine R. Bablumyan
PhD in history

THE ARMENIAN POPULATION OF THE DIARBEKIR PROVINCE OF WESTERN ARMENIA DURING HAMIDIAN MASSACRES

SUMMARY

Key words: Western Armenia, Diarbekir, Tigranakert, Amid, Balu, Severek, Arghana Maden, Islamization by force, massacres of Armenians.

In the province of Diarbekir, as in other provinces of Western Armenia, the massacres of Armenians in 1895 were organized by the authorities and carried out by ordinary Muslim citizens as well as by the army and police. In this province, as well as in others, tens of thousands of Armenians were killed, as were hundreds of other Christians. It can also be assumed that the massacres were aimed primarily at the Armenian population, while other Christians suffered, as it was sometimes difficult to verify their ethnicity. It was not easy to stop the Kurds during the massacres. It is noteworthy that in some localities where Assyrians, Catholics and Protestants lived in greater numbers, the attackers were mainly Kurds, and the police and troops took part in the defense of population.

The consequences of the massacres were not limited to the number of people who were killed: thousands of people died after they ended due to illness, stress, and starvation. According to some sources, several tens of thousands of Armenians, especially women, were forcibly Islamized in the province during the massacres.

It is impossible, unfortunately, to calculate the material losses of Armenians in the province, since a thousand houses, shops, churches and monasteries were all looted and many of them were set on fire.

After the massacres, the tendency for Armenians to migrate intensified.

Արփինէ Ք. Բաբլումյան
кандидат исторических наук

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ ПРОВИНЦИИ ДИАРБЕКИР ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ГОДЫ ГАМИДОВСКИХ ПОГРОМОВ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Западная Армения, Диарбекир, Тигранакерт, Амид, Балу, Северек, Аргана Маден, насильственная исламизация, истребления армян.

В провинции Диарбекир, как и в других провинциях Западной Армении, массовые истребления армян 1895 года были организованы властями и осуществлялись как рядовыми мусульманами, так и армией и полицией. В этой провинции, как и в других, были убиты десятки тысяч армян, также и сотни других христиан. Можно также предположить, что массовые убийства были направлены в первую очередь на армянское население, а другие христиане пострадали, поскольку во время массовых убийств иногда было трудно установить этническую принадлежность христиан, также было нелегко остановить курдов. Примечателен тот факт, что в некоторых населенных пунктах, где ассирийцы, католики и протестанты жили в большем количестве, нападавшие были в основном курды, а полиция и войска иногда принимали участие в их защите христиан.

Последствия истреблений не ограничивались количеством погибших во время истреблений: сотни, тысячи людей погибали и после истреблений из-за болезней, лишений, голода. Согласно некоторым источникам, во время резни в провинции было насильственно исламизировано несколько десятков тысяч армян, в особенности – женщины.

К сожалению, невозможно подсчитать материальные потери, понесенные армянами в провинции, так как тысячи домов, лавок, церквей и монастырей были разграблены, многие из них были преданы огню. После погромов у армян усилилась тенденция к миграции.

REFERENCES

- Dzakhsuryan, Vahan. *Հասաի ընթուսր արծիւր. Պ. Արամեանի Յուշարկերից* [The Rebel Eagle of Havav: From P. Aramyan's Notebook.]. New York, 1950;
- Gévorgean, Garnik. *Չնքուշապարում: Քննական պատմութիւն հայոց Չնքուշի* [The History of Ch'ngush. Critical History of the Armenian Ch'ngush]. Jerusalem, 1970;
- Krayean, Mesrop. *Բալու* [Balu]. Antilias, 1965;
- Mkund, Tigran. *Անիւրայի արձագանգներ* [The Echoes of Amid]. New Jersey: Dikran Spear, 1950;
- Parsamean, Sargis. *Յուշարձան Ջերմուկի* [Monument to Jermuk]. Boston: Hamazgayin publ., 1969;
- Ter-Yakovbean, Vaghinak. «Վիճակագրական ցուցադրումն Տաճկահայաստանի» [Statistics of Turkish Armenia]. *Ararat journal* 50 no. 9 (1914): 808-814;
- Մուրճ* ամսագիր. [Murch journal]. Tiflis, 1897;
- Պատմութիւն Պաղնատուն* [The History of Paghnatun]. Boston: Hayrenik, 1966.

Ռոբերտ Ա. Թաթոյան
պատմական գիտությունների թեկնածու

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՍՂԵՐԳԻ ԳԱՎԱՌԻ
ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽՕՐՅԱԿԻՆ՝**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հայկական հարց, Բիթլիսի նահանգ, Սղերդի գավառ, հայ բնակչության թվաքանակ, վիճակագրություն, ժողովրդագրություն:

Ներկա աշխատանքի նպատակն է հաշվարկել Արևմտյան Հայաստանի շրջաններից մեկի՝ Օսմանյան կայսրության Բիթլիսի (Բաղեշ) նահանգի (թուրքերեն՝ վիլայեթ) Սղերդի գավառի (սանջակ) հայ բնակչության թվաքանակը Հայոց ցեղասպանության նախօրյակին:

Վերոնշյալ նպատակից բխել են հետազոտական հետևյալ հիմնական խնդիրները.
– տալ Հայոց ցեղասպանությանը նախորդող շրջանի՝ 1878-1914 թթ. Սղերդի գավառի վարչատարածքային բաժանման պատկերը,

– առանձին ներկայացնել Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. օսմանյան, հայկական, ռուսական և արևմտյան հիմնական վիճակագրական սկզբնաղբյուրների տվյալները,

– ըստ Սղերդի գավառի մանր վարչատարածքային միավորների՝ գավառակների (թուրքերեն՝ կազա)՝ համադրել հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրությունները, հատկապես հայաբնակ բնակավայրերի ցուցակներ պարունակող վիճակագրական հիմնական սկզբնաղբյուրների տվյալները, այդ տվյալների համադրման, համեմատական վերլուծության միջոցով և հիման վրա տալ Մեծ եղեռնի նախաշեմին գավառի հայ բնակչության թվաքանակի սեփական հաշվարկը:

* * *

Որպես Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի հիմք՝ մենք ընդունել ենք 1913-1914 թվականների ընթացքում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով Օսմանյան կայսրության բոլոր նահանգներում և այդ թվում՝ Բիթլիսի նահանգի տարածքում հայկական եկեղեցական-թեմական իշխանությունների կողմից իրականացված արևմտահայության հաշվառման (մասնագիտական գրականության մեջ նաև հայտնի է որպես Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար²) տվյալները՝ համադրելով և լրացնելով

1 Հոդվածը ստացվել է 27.02.2020 և ընդունվել տպագրության՝ 13.04.2020:

2 Տվյալ ուսումնասիրության մեջ *հաշվառում, մարդահամար, վիճակացույց* բառերը մենք օգտագործում ենք որպես հոմանիշներ՝ ընդունելով, սակայն, որ ինչպես օսմանյան կառավարության, այնպես էլ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ վիճակագրության հավաքման ուղղված միջոցառումները չեն անցկացվել ժամանակակից մարդահամարներին ներկայացվող չափանիշներին համապատասխան: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամարի մասին մանրամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան,

դրանք մեր տրամադրության տակ առկա այլ արժանահավատ տվյալների հետ (Մեծ եղեռնը վերապրածների կողմից իրենց հայրենի բնակավայրերի մասին հաղորդվող տեղեկություններ և օժանդակ այլ սկզբնաղբյուրներ):

Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամարի շրջանակներում Սղերդի առաջնորդարանի կողմից 1913 թ. պատրաստված վիճակագրույցի տվյալները՝ հաշվարկի հիմքում դնելը մենք պայմանավորում ենք հետևյալ հիմնական նկատառումներով.

1. հաշվառումը կատարվել է մի մարմնի կողմից, որն ի պաշտոնե ներկայացնում էր Օսմանյան կայսրության հայ համայնքը, ուներ 1863 թ. ազգային սահմանադրությամբ սահմանված լիազորություններ և, ինչը գուցե ավելի էական է, լծակներ (թեմական կառույցների ցանց, տարածքին ծանոթ հոգևորականներ)՝ արևմտահայության առավել ամբողջական հաշվառում իրականացնելու համար,
2. Սղերդի առաջնորդարանի՝ 1913 թ. վիճակագրույցը գավառի հայ բնակչության՝ Մեծ եղեռնին ժամանակագրական առումով առավել մոտ իրականացված հաշվառումն է,
3. Սղերդի առաջնորդարանի՝ 1913 թ. վիճակագրույցի տվյալները մեզ հասած սկզբնաղբյուրներից առավել մանրամասն ու ամբողջականն են. առկա են գավառի բոլոր վարչատարածքային միավորների հայաբնակ բնակավայրերի ցանկերը:

Դրա հետ մեկտեղ, պետք է արձանագրել, որ 1913 թ. Սղերդի առաջնորդարանի կողմից պատրաստված վիճակագրության հիմքում դրված են իրականից ցածր օսմանյան հաշվառման տվյալները: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Սղերդի թեմը տարբեր առարկայական և ենթակայական պատճառներով (ժամանակի սղություն, ֆինանսական և կազմակերպչական ռեսուրսների պակաս և այլն) ի վիճակի չի եղել սեփական ուժերով բնակչության հաշվառում իրականացնել և դրա փոխարեն տվյալներ է վերցրել օսմանյան իշխանության տեղական մարմիններից, մասնավորապես՝ բնակչության հաշվառման վարչության (Nüfus-u Şumumi İdaresi) տեղական բաժանմունքից³: Նշված հանգամանքը նույնպես պայմանավորում է այդ տվյալները այլ արժանահավատ սկզբնաղբյուրների կողմից հաղորդված տեղեկությունների հետ համադրելու, համեմատելու, ճշտելու, փոխլրացնելու անհրաժեշտությունը:

Ցավոք, մեզ չի հաջողվել գտնել և հայկական սկզբնաղբյուրների կողմից հաղորդվող տվյալների հետ համեմատել 1878-1914 թթ. ընթացքում օսմանյան կառավարության կողմից անցկացված հաշվառումների կամ մարդահամարների և ոչ մի ցուցակ, որտեղ կներկայացվեր Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ բնակավայրերի: Եթե անգամ դրանք և պահպանվել են թուրքական

Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին (Երևան, ՀՅԹԻ, 2015), 92-115:

3 Օսմանյան կառավարության վիճակագրական համակարգի մասին մանրամասն տե՛ս Stanford J. Shaw, “The Ottoman Census System and Population, 1831-1914,” *International Journal of Middle East Studies* 9, no. 3 (1978), 325-338:

արխիվներում, ապա առ այսօր չեն դրվել գիտական շրջանառության մեջ և հայտնի չեն անգամ օսմանյան վիճակագրությամբ զբաղվող և օսմանյան արխիվներում նյութերի հետ աշխատած թուրք և արևմտյան ուսումնասիրողներին (Սթենֆորդ Շոու, Քեմալ Կարպատ, Ջասթին Մաք-Քարթի)⁴:

Մեծ եղեռնի նախօրյակին Սդերդի գավառի տվյալ գավառակի կազմում ընդգրկված հայաբնակ բնակավայրերի ցանկը կազմելու հարցում մենք առաջնորդվել ենք Սդերդի առաջնորդարանի՝ 1902 և 1913 թթ. վիճակագրույցների ցանկերով, ինչպես նաև հաշվի է առնվել Հայկական համառոտ հանրագիտարանի «Բիթլիսի նահանգ» բառահողովածում ներկայացվող ցանկը⁵: Բնակավայրերի անունների գրեկաձևերը տալիս ենք ըստ 1913 թ. Սդերդի առաջնորդարանի վիճակագրական ցուցակի՝ բնագրի դասական ուղղագրությամբ: Այն դեպքում, երբ տվյալ բնակավայրի անունը վիճակագրույցի ցուցակում բացակայում է, մենք առաջնորդվել ենք այլ կարևոր սկզբնաղբյուրի կողմից տրվող գրեկաձևով՝ դրա մասին համապատասխանաբար նշելով ծանոթագրության մեջ: Առանձին դեպքերում տվել ենք բնակավայրի անվան տարընթերցումները:

Ըստ բովանդակության՝ Սդերդի գավառի, Բիթլիսի նահանգի և Օսմանյան կայսրության այլ շրջանների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները կարելի է բաժանել երեք խմբի՝ զուտ տների (ծովա, ընտանիք) թիվը ներկայացնող տվյալներ, զուտ շնչերի (մարդ) թիվը ներկայացնող տվյալներ, և ծխերի, և շնչերի թիվը պարունակող տվյալներ:

Երբ աղբյուրը ներկայացնում է միայն տների թիվը, շնչերի թիվը ստանալու նպատակով անհրաժեշտություն է առաջանում հաշվարկել մեկ տանն ապրողների միջին թիվը և բազմապատկել տների ընդհանուր թվին: Արևմտահայության ժողովրդագրական հարցերով զբաղվող տարբեր ուսումնասիրողներ որպես նման միջին թիվ ընդունել են 6-ից 8, կամ ավելի: Կարծում ենք, որ Սդերդի գավառի պարագայում շնչերի միջին թիվը 9 է: Դա մենք կարող ենք հիմնավորել՝ ելնելով հետևյալ երկու հիմնական նկատառումներից.

1. Աղբյուրներում բազմաթիվ են վկայությունները Արևմտյան Հայաստանի, հատկապես Սասունի, Մուշի և Սդերդի շրջաններում բնակվող հայ ընտանիքների բազմանդամության վերաբերյալ⁶:
2. Այն դեպքում, երբ սկզբնաղբյուրը պարունակում է և տների, և շնչերի թիվը, մեկ տանը բաժին է ընկնում միջինը 9 կամ անգամ 10 շունչ:

4 Մասնավորապես, Օսմանյան կայսրության ժողովրդագրության հարցերով զբաղվող ամերիկացի ուսումնասիրող Ջասթին Մաք-Քարթին, որը հայտնի է նաև Հայոց ցեղասպանության ժխտողական իր հայացքներով, հաղորդում է, որ թուրքական արխիվներում տեսել է ըստ շնչերի և տների ոչ մահմեդական բնակչության հաշվառման տվյալները, սակայն ի վիճակի չի եղել դրանցից օգտվելու, քանի որ այդ նյութերն իբր «դասակարգված չէին» (տե՛ս Justin McCarthy, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire* (New York and London: N.Y. University Press, 1983), 84):

5 Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1 (Երևան, ՀԽՍՀ գլխ. խմբ., 1990), 532-535:

6 Դրա մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 33-34:

Նախքան բուն շարադրանքին անցնելը, անհրաժեշտ ենք գտնում նաև առանձնացնել ուսումնասիրության առարկա հարցին առնչվող հետևյալ կարևոր իրողությունը: Մղերդի գավառը պատկանում է Արևմտյան Հայաստանի՝ վիճակագրական առումով առավել քիչ ուսումնասիրված շրջանների թվին: Հարցով զբաղվող հեղինակները արձանագրում են գավառի հայ և այլազգի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական կանոնավոր ցանկերի պակասի փաստը: Այսպես, ռուս ուսումնասիրող Վ. Մանսկին նշում է, որ եթե Բիթլիսի նահանգի Բիթլիսի և Մուշի գավառների պարագայում իր տրամադրության տակ ունեցել է մի քանի աղբյուրներ, ինչպես նաև հենվել է սեփական դիտարկումների վրա, ապա Մղերդի և Գենջի գավառների բնակչության թվաքանակը և ազգային կազմը որոշելու համար ստիպված է եղել ապավինել միայն ֆրանսիացի վիճակագիր Վ. Քինեի (նրա մասին կլիսովի հաջորդիվ) և օսմանյան սալնամենների⁷ իրար հակասող տվյալներին⁸: Մղերդի գավառին վերաբերող վիճակագրական տվյալների բացակայության մասին է խոսում նաև հայ ուսումնասիրող Կարո Սասունին⁹:

Ուսումնասիրության առարկա ժամանակաշրջանում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի Մղերդի եկեղեցական-թեմական կառույցների համար հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման գործը դժվարանում էր նաև նրանով, որ հայերը գավառում բնակվում էին ոչ համախումբ՝ հայաբնակ բնակավայրերը գտնվում էին իրարից անջատ, ցրված էին ամբողջ գավառի տարածքով¹⁰: Չուտ հայաբնակ գյուղերը շատ չէին, հայերը հիմնականում բնակվում էին խառը՝ քրդերի հետ: Որոշ քրդաբնակ բնակավայրերի պարագայում հայերը չունեին կայուն ներկայություն, բնակվում էին մեկ-երկու ընտանիքով որպես մարաբաներ (հողի վարձակալներ) կամ արհեստավորներ՝ թողնելով տվյալ բնակավայրը հալածանքի վտանգի¹¹ կամ գործի պակասի պատճառով: Սրանից ելնելով՝ Մղերդի գավառի

7 «Սալնամե» էին կոչվում օսմանյան կենտրոնական և նահանգային իշխանությունների կողմից հրատարակվող պաշտոնական տարեգրքերը, որոնք տեղեկություններ էին պարունակում Օսմանյան կայսրության և/կամ նրա առանձին վարչական միավորների վարչատարածքային բաժանման, բնակչության, տնտեսության և ֆինանսների վերաբերյալ:

8 Владимир Маевский, *Военно-статистическое описание Ванскаго и Битлискаго вилаетовъ*. Статистический очеркъ, (Тифлисъ: Типографія Штаба Кавк. воен. окр., 1904), 222, նոյնը, Отдѣль приложеній, 140-141:

9 Կարո Սասունի, *Պատմություն Տարօնի աշխարհի* (Պլշրութ, Տարօն-Տուրուբյան հայրենակց. միութ. կեդր. վարչ., տպ. Սևան, 1956), 361:

10 Մղերդի առաջնորդական տեղապահ Գեորգ վարդապետ Նալբանդյանի՝ 1913 թ. դեկտեմբերի 14-ով թվագրված նամակը, որը նա ուղարկել է որպես ուղեկցող նամակ Մղերդի թեմի վիճակագրույցի ցուցակներին կից Կ.Պոլսի Հայոց պատրիարքարան (ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, f. 31): Հատկանշական է, որ 1913 թ. Մղերդի թեմից Պատրիարքարան ուղարկված վիճակագրույցի ցուցակում նշված է միայն հայ տների թիվը, շնչերի թիվը բացակայում է (տե՛ս ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 63-78):

11 Նշենք, որ Մղերդի գավառը Համիդյան կոտորածների ժամանակ Արևմտյան Հայաստանի առավել տուժած շրջաններից էր: Ըստ Մղերդի թեմից ստացված տեղեկագրերի՝ Մղերդ քաղաքում և գավառում կոտորածները տեղի են ունեցել 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Դրանց ընթացքում, մասնավորապես, ջարդվել և բռնի իսլամացվել է Էրոտ գավառակի 12 և Շիրվանի գավառակի 20 հայաբնակ բնակավայրերի հայ բնակչությունը (տե՛ս «Հայաստանեայց եկեղեցին

պարագայում քիչ թիվ չեն կազմում այն բնակավայրերը, որոնք չեն երկրորդվում մի քանի տարիների տարբերությամբ կազմված հայ բնակչության տարբեր վիճակագրական ցուցակներում, և ուսումնասիրողը շատ դեպքերում հնարավորություն չունի տվյալ ժամանակին վերաբերող գուգահեռ աղբյուրների միջոցով ստուգելու՝ արդյո՞ք ցուցակից տվյալ բնակավայրի բացթողումը հայ բնակչության շարժի օբյեկտիվ իրողության արտացոլման, թե՞ ցուցակի պակասավոր լինելու արդյունք է: Այսինքն, շատ դեպքերում պարզ չէ, թե արդյո՞ք որևէ բնակավայր, որը նախկին տարիների մարդահամարների և հաշվառումների վիճակագրական ցուցակներում վկայված է որպես հայաբնակ, սակայն Մեծ եղեռնին առավել մոտ՝ 1913 թ. Սղերդի առաջնորդարանի վիճակացույցի ցուցակում բաց է թողնված, Մեծ եղեռնի նախօրյակին հայաբնակ էր, թե՞ ոչ: Այս իրողությունը դարձնում է Հայոց ցեղասպանության նախօրյակի Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի փորձը որոշ չափով խոցելի և հետագայում հնարավոր նոր սկզբնաղբյուրների ներգրավման միջոցով ճշտման ենթակա:

I. Սղերդի գավառի վարչատարածքային բաժանումը XIX դարի վերջին – XX դարի սկզբին

Սղերդի գավառի տարածքները օսմանյան տիրապետության տակ են անցնում XVI դարի սկզբներին՝ ընդգրկվելով Դիարբեքիի նահանգի կազմում:

XIX դարի երկրորդ կեսին և, հատկապես, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո օսմանյան իշխանությունները շարունակական փոփոխությունների են ենթարկում Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանման համակարգը: Այդ գործընթացի համատեքստում՝ 1878-1879 թթ. ստեղծվում է Բիթլիսի վիլայեթը, որի մեջ ընդգրկվում են Վանի և Դիարբեքիի վիլայեթներից առանձնացված տարածքներ, այդ թվում՝ 1880 թվականին՝ Սղերդի սանջակը¹²:

Բիթլիսի նահանգի ստեղծումից հետո օսմանյան իշխանությունները 1880-90-ական թթ. արդեն ձեռնամուխ են լինում նրա առանձին վարչատարածքային միավորների, այդ թվում՝ Սղերդի գավառի վարչական սահմանների շարունակական վերաձևումների, որոնց հիմնական նպատակներից մեկն էր մահմեդական ազգաբնակչության համեմատ հնարավորինս փոքրաթիվ հայ բնակչությամբ վարչական միավորների ստեղծումը և դրանով հայերին Արևմտյան Հայաստանում որպես փոքրամասնություն ներկայացնելը¹³: Այսպես, եթե ըստ 1884-85 թթ. սալնամեի տվյալների՝ Սղերդի գավառը բաղկացած էր 6 գավառակներից՝ Սղերդ, Շիրվան, Էրուհ, Բարվար, Ռենդվան, Խար-

Տաճկաստանում», *Արարատ ամսագիր* ԻԹ տարի Բ (1896), 89-90): Հետագա տարիներին, Սղերդի բռնի իսլամացված հայերի հիմնական մասը վերադարձել է քրիստոնեությանը:

12 Բիթլիսի և Մուշի սանջակները առանձնացվել են Վանի նահանգի կազմից 1878 թ.: Մուշի սանջակը նախքան վերջնականապես Բիթլիսի նահանգի կազմում ընդգրկվելը, մի կարճ ժամանակով՝ 1881-1883 թթ., նորից հիշատակվում է Վանի նահանգի կազմում (տե՛ս Birken Andreas, *Die Provinzen des Osmanischen Reiches* (Wiesbaden: Dr. Lidwig Reichert verlag, 1976), 184):

13 Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների վարչատարածքային քաղաքականության մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 52-57:

զան¹⁴, ապա արդեն երկու տարի անց, ռուս ուսումնասիրող Ա. Գիպիուսը, որպես սկզբնաղբյուր վկայակոչելով Էրզրումի նահանգի 1888 թ. սալնամեն, հաղորդում է, որ Մղերդի գավառը բաղկացած է 7 գավառակներից՝ Սղերդ, Շիրվան, Աղաքիս (գավառակի կազմի մեջ էին մտնում Կեցանը, Ներքին Կարկառը և Սպարկերտը), Էրուի, Բարվար, Ռեդվան և Խարզան¹⁵:

1880-ական թթ. վերջերին Բիթլիսի նահանգը ենթարկվում է վարչական նոր փոփոխությունների: Սղերդի գավառի Աղաքիսի գավառակը լուծարվում է, նրա կազմի մեջ մտնող Կեցանը, Կարկառը և Սպարկերտը ընդգրկվում են Բիթլիսի գավառի Խիզանի գավառակի կազմում: Նշված փոփոխությունների հետևանքով՝ Սղերդի գավառը 1890-ական թթ. սկզբներին արդեն բաղկացած էր 7 գավառակներից՝ Սղերդ, Ռեդվան, Շիրվան, Էրուի, Խարզան, Բարվար և Հազո (Խարջոզ)¹⁶:

1890-ական թթ. երկրորդ կեսին Սղերդի գավառի սահմանները նորից են ենթարկվում փոփոխությունների՝ Ռեդվանը միավորվում է Խարզանի գավառակի հետ, իսկ Հազոն միացվում է Մուշի գավառի Սասունի գավառակին (1899 թ.): Այս փոփոխություններից հետո՝ 1900-ական թթ. սկզբներին, գավառի վարչական բաժանումը ստանում է այն տեսքը, որը պահպանվում է մինչև 1915 թվականը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության նախօրյակին Սղերդի գավառը զբաղեցնում էր Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի հարավային հատվածը՝ 7.090 քառ. կմ ընդհանուր տարածությամբ (Բիթլիսի նահանգի կազմում Սղերդի գավառի քարտեզը տե՛ս Հավելված 1): Նրա սահմաններն էին հյուսիս-արևելքից՝ Բիթլիսի գավառի Մոտկանի, Բիթլիսի և Խիզանի գավառակները, հյուսիս-արևմուտքից՝ Մուշի գավառի Սասունի գավառակը, արևելքից՝ Վանի նահանգը, իսկ հարավից և արևմուտքից՝ Դիարբեքիի նահանգը: Գավառի տարածքը բաժանվում էր հինգ գավառակների, որոնք էին՝ Սղերդը (կենտրոնական գավառակ (թուրքերեն՝ մերկեզ կազա), 797 քառ. կմ տարածությամբ), Էրուիը (1.992 քառ. կմ), Բարվարը (1.536 քառ. կմ), Խարզանը (1.570 քառ. կմ) և Շիրվանը (1.195 քառ. կմ)¹⁷:

XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին՝ նախքան Մեծ եղեռնը, Սղերդի գավառի տարածքն ամբողջությամբ ընգրկված էր Հայ Առաքելական Եկեղեցու Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի իրավասության տակ գործող Սղերդի եպիսկոպոսական թեմի կազմում¹⁸:

14 Justine MacCarthy, *The Arab World, Turkey and the Balkans, 1878-1914. A Handbook of Historical Statistics* (Boston: G.K. Hall, 1982), 16:

15 Алексѣй Гиппиусъ, *Статистическія таблицы вилайетовъ Турецкой имперіи, ближайшихъ къ Закавказью* (Тифлисъ: Типъ. канцъ. Главноначальствъ. гражд. частью на Кавказѣ, 1889), 12-13:

16 Vital Cuinet V., *La Turquie d'Asie*, v. 2 (Paris: Ernest Leroux editeur, 1891), 524:

17 McCarthy, *The Arab World, Turkey*, 21; նաև՝ Karpaz Kemal, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin: University of Wisconsin Press, 1985), 174: Գավառակների տարածություններն ըստ Маевский, Военно-Статистическое описание, 12-13: Բիթլիսի նահանգի վարչական բաժանումն ըստ գաւառների և գաւառակների տե՛ս նաև 1904 *Հրապարակ Օրացոյց Ս. Փրկչյան Հիւանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, տպագրութիւն Յ. Մատթոյան, 1904), 228:

18 Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը (Կ.Պոլիս,

II. Օսմանյան կառավարության վիճակագրական տվյալները Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ (1878-1914 թթ.)

Բիթլիսի նահանգի և նրա կազմում ընդգրկված Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության վիճակագրական տվյալները բազմաբնույթ են. դա օսմանյան մարդահամարների և հաշվառումների տեղեկություններն են (1881/82-93, 1895, 1896, 1897, 1906, 1914 թթ.), օսմանյան նահանգային սալնամների տվյալները (որպես կանոն այնտեղ տրված է ընդհանուր քրիստոնյաների թիվ՝ առանց ըստ կրոնական համայնքների (միլեթ) առանձին պատկանելության նշումով), մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչներին տրամադրված վիճակագրություններ (1878-80, 1895-1897 թթ.): Ներկայացնենք օսմանյան տվյալներից մի քանիսը՝ պահպանելով ժամանակագրական կարգը.

1. 1881/82-1893 թթ. օսմանյան մարդահամարի տվյալներով գավառում հաշվառվել էր 11.971 շունչ առաքելադավան, 2.446 շունչ կաթոլիկ և 435 շունչ բողոքական¹⁹, ընդամենը՝ 14.852 շունչ հայ բնակչություն²⁰:
2. Համաձայն 1897 թ. օսմանյան տվյալների՝ գավառի հայ բնակչության թվաքանակը 12.857 էր, որից 3.049-ը կաթոլիկ, 449-ը բողոքական²¹:
3. 1906 թ. մարդահամարի տվյալներով՝ գավառի հայ բնակչության թիվն էր 9.630 շունչ, այդ թվում առաքելադավան հայեր՝ 6.666, կաթոլիկ հայեր՝ 2.596 և բողոքականներ՝ 368 շունչ²²:
4. 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալներով (դրանք օսմանյան իշխանությունների կողմից շրջանառության մեջ են դրվել Առաջին աշխարհամարտից հետո՝ ի հիմնավորումն, որ հայերը Արևմտյան Հայաստանի տարածքում փոքրամասնություն են կազմում) գավառի հայ բնակչության թիվն էր 11.240 շունչ, որից առաքելադավան հայեր՝ 10.828 շունչ, բողոքականներ՝ 412 (կաթոլիկների թիվը չի հաղորդվում)²³:

Այսպիսով, ըստ օսմանյան կառավարության տվյալների՝ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառում բնակվում էր առավելագույնը 11.240 հայ: Հետաքրքիր է տեսնել, որ 1880-ական թթ. հետո Սղերդի գավառի հայ բնակչության թիվը նվազման միտում է դրսևորել մինչև 1906 թ. (սա, անշուշտ, պայմանավորված էր առաջին հերթին

Վ. և Հ. Տեր-Ներսիսյան, 1911), 261-262: Տե՛ս նաև 1904 *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան* Հիանդանցի Հայոց, 374-375: Սղերդի թեմի կազմավորման և ընթացքի մասին տե՛ս Արշակ Ալպոյաճյան, «Առաջնորդական վիճակներ», 1908 *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան հիանդանցի Հայոց* (Կ.Պոլիս, 1908), 313-315, 346:

19 Հաշվի առնելով, որ Բիթլիսի նահանգի կաթոլիկներն ու բողոքականները բնակչությունը չնչին բացառությամբ ազգությամբ հայեր էին, օսմանյան աղբյուրներում առանց ազգային պատկանելության նշման հաղորդվող կաթոլիկների և բողոքականների թիվը գումարել ենք հայ բնակչության թվին:

20 Karpat, *Ottoman population 1830-1914*, 130:

21 Նույն տեղում, 196:

22 Նույն տեղում, 162:

23 Նույն տեղում, 174:

համիդյան կոտորածներով և դրա ժողովրդագրական հետևանքներով, ինչպես նաև, նվազ չափով, գավառի տարածքի վարչատարածքային փոփոխություններով):

Ինչպես արդեն նշել ենք, օսմանյան վիճակագրական տվյալների հիմքերը՝ օսմանյան իշխանությունների անցկացված մարդահամարների և հաշվառումների ցանկերը, առ այսօր չեն հրատարակված և հայտնի չեն հարցով զբաղվող հետազոտողներին, ինչը հնարավորություն չի ընձեռում համադրել դրանք հայկական վիճակագրական ցանկերի տվյալների հետ: Մինչդեռ, ինչպես ցույց կտանք հաջորդիվ, գավառակ առ գավառակ հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տարբեր վիճակագրական ցանկերի տվյալների քննությունը ցույց է տալիս, որ օսմանյան տվյալները, որպես կանոն, չեն հաստատվում և ոչ մի հիմնական ու օժանդակ աղբյուրի կողմից, որոնք իրարից անկախ հաղորդում են ավելի բարձր թվեր:

III. Հայկական աղբյուրները Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ (1878-1914 թթ.)

III.1. Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներ

Հայկական հարցի շուրջ ընթացող զարգացումների շրջանակներում՝ 1878 թ. գարնանը Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ Բաղեշի, Սշո և Սղերդի առաջնորդարանները կազմել և Պատրիարքարան են ուղարկել իրենց թեմերի հայ բնակչության վիճակագրությունները: Համաձայն Սղերդից ստացված տվյալների՝ թեմը (Սասունի առանձին շրջաններ ներառյալ) ուներ 3.292 տուն, 36.212 շունչ հայ բնակչություն (այլ մանրամասներ չի հաղորդվում)²⁴:

1878 թ. ամռանը Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ Բիթլիսի նահանգի հայ բնակչության հաշվառում է իրականացրել Արիստակես վարդապետ Տևկանցը²⁵: Ըստ նրա տվյալների՝ Սղերդի գավառի հայ բնակչությունը 29.038 շունչ էր (ըստ գավառակների՝ որոշ վիճակագրական ցանկեր զետեղել ենք աշխատանքի համապատասխան բաժիններում)²⁶:

Ժամանակագրական առումով գավառի հայ բնակչության՝ մեզ հայտնի հաջորդ ամբողջական հաշվառումը կատարվել է Մ. Օրմանյանի պատրիարքության օրոք՝ 1902 թ. (տեղեկագրի տիտղոսաթերթը և ամփոփումը տե՛ս Հավելված 2): Ըստ 1902 թ. հաշվառման՝ Սղերդի թեմի ցուցակի, գավառում կար 109 հայաբնակ բնակավայր՝ 1.884 տուն հայ բնակչությամբ (այդ թվում՝ 40 տուն՝ բողոքական, 2՝ կաթոլիկ), որն ըստ գավառակների բաշխվում էր հետևյալ կերպ՝ Սղերդ՝ 12 հայաբնակ բնակավայր, 390 տուն, Էրուհ՝ 11 հայաբնակ բնակավայր, 439 տուն, Բարվար՝ 11 հայաբնակ բնակավայր, 263 տուն, Շիրվան՝ 17 հայաբնակ բնակավայր, 184 տուն և Խարզան՝ 58 հայաբնակ բնակավայր, 593 տուն (ըստ գավառակների վիճակագրական

24 ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 3, գործ 55, թ. 7:

25 Արիստակես Տէր-Սարգսենց (Տևկանց) (1844, Վան - 1896, Վարազ), արևմտահայ եկեղեցական գործիչ, բանահավաք:

26 Արիստակես Տևկանց, *Այցելություն ի Հայաստան 1878 թ.* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985), 90-91, 106-108, 126-127:

ցանկերը կներկայացվեն աշխատանքի՝ առանձին գավառակներին վերաբերող համապատասխան բաժիններում)²⁷:

Ըստ Մ. Օրմանյանի պատրիարքության օրոք պատրաստված մեկ այլ վիճակագրության՝ գավառն ուներ 50 հայաբնակ բնակավայր՝ 25.500 հայ բնակչությամբ, որից 25.000-ը՝ առաքելադավան, 500-ը՝ կաթոլիկ²⁸:

1912 թ. Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծված մարմնի՝ Ապահովության հանձնաժողովի կողմից պատրաստվեց երկու վիճակագրական աղյուսակ, որոնք արտացոլում էին Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի վեց նահանգների (այդ թվում՝ Բիթլիսի նահանգի) հայ բնակչության թվաքանակը 1882 և 1912 թվականների դրությամբ: 1882 թ. համար հայ բնակչության բաշխումն ըստ Բիթլիսի նահանգի գավառների բացակայում է²⁹, 1912 թ. տվյալներով Սղերդի գավառում հաշվվում էր 18.000 շունչ հայ բնակչություն (այլ մանրամասնություններ բացակայում են)³⁰:

Հայկական հարցի վերաբացման համատեքստում՝ 1913 թ. փետրվարին Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը արևմտահայության նոր հաշվառում (մարդահամար) կատարելու շրջաբերական է ուղարկում Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի թեմեր (քանի որ ի կատարումն այս հրահանգի որոշ թեմերից վիճակագրական տվյալները պատրիարքարան են հասնում որոշ ուշացումով՝ մինչև 1914 թ. ամառ, պատմագիտական գրականության մեջ այս ձեռնարկը բնորոշվել է նաև որպես Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամար):

Մուշի և Բիթլիսի գավառներում մարդահամարը կատարվել էր 1913 թ. ամռանը, Սղերդի գավառում տվյալների հավաքման աշխատանքները տևել են ավելի երկար՝ մինչև աշնան վերջ, իսկ տվյալները Հայոց պատրիարքարան են ուղարկվել ավելի ուշ՝ 1913 թ. դեկտեմբերին (վիճակագրության լրացված թերթերից երկու նմուշ տես Հավելված 3-ում)³¹:

27 1902 թ. հաշվառման Սղերդի թեմի տեղեկագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ 412, ց. 1, գ. 1856:

28 Այս տվյալը առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել Մաղաքիա Օրմանյանի՝ 1911 թ. հրատարակված «Հայոց եկեղեցին» ուսումնասիրությանը կից (տե՛ս Օրմանյան, *Հայոց եկեղեցին*, 262), սակայն վիճակագրությունն ըստ երևույթին կազմվել է ավելի վաղ՝ 1906 թվականից ոչ ուշ, քանի որ 1906 թ. հրատարակված բեղգիացի դիվանագետ վան դեն Սթինի «Ոչ մահմեդական օսմանահպատակների իրավական դրությունը» երկում զետեղված ըստ Օսմանյան կայսրության նահանգների առաքելադավան հայ բնակչության վիճակագրությունը, որը նրան տրամադրել էր Մաղաքիա Օրմանյանը, նույնական է «Հայոց եկեղեցին» աշխատության մեջ առկա տվյալներին: Տե՛ս Count F. van den Steen de Jehay, *De La Situation Légale des Sujets Ottomans Non-Musulmans* (Bruxelles: Oscar Schepens & Co, 1906), 51:

29 Leart Marcel, *La question Arménienne à la lumière des documents* (Paris: Challamel, 1913), 59: Տե՛ս նաև *Population Arménienne de la Turquie avant la Guerre. Statistiques établies par le Patriarcat Arménien de Constantinople* (Paris: Turabian, 1920), 9:

30 Թեղոյիկ, *Ամենուն ցարեցոյցը* (Կ.Պոլիս, տպագրութիւն Մ. Յովակիմյան, 1922), 261-262: Ապահովության հանձնաժողովի տվյալների մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 92-95:

31 Տե՛ս 1913 թ. դեկտեմբերի 14-ով թվագրված Սղերդի առաջնորդական տեղապահ Գեորգ վարդապետ Նալբանդյանի ուղեկցող նամակը, ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, f. 31:

Հասկանալի պատճառներով պատրիարքարանը չէր հասցրել հանրագումարի բերել և հրապարակել այս հաշվառման արդյունքները: Նշված մարդահամարի տվյալներն ըստ բնակավայրերի առաջին անգամ ամփոփել և գիտական շրջանառության մեջ են դրել ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռայմոն Հարություն Գևորգյանը և Պոլ Փարոջյանը, որոնք նաև առանձին դեպքերում լրացրել են պակասող տվյալները այլ աղբյուրների կողմից հաղորդվող տեղեկությունների միջոցով: Համաձայն մարդահամարի տվյալների հիման վրա Ռ. Գևորգյանի և Փ. Փարոջյանի կատարած հաշվարկի՝ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառում բնակվում էր 21.564 շունչ հայ բնակչություն (բաշխումն ըստ գավառակների կներկայացվի հաջորդիվ՝ աշխատանքի համապատասխան բաժիններում)³²:

Այսպիսով, Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից շրջանառության մեջ դրված տվյալներով՝ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառում բնակվում էր շուրջ 20.000-25.000 հայ՝ թիվ, որը մոտ 2 անգամ բարձր է օսմանյան կառավարության կողմից հաղորդվող տվյալից: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից հաղորդվող տվյալների պարագայում ևս կարելի է տեսնել օսմանյան վիճակագրության կողմից արձանագրված՝ 1878-1914 թթ. ընթացքում Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի նվազման միտումը:

III.2. Հայկական այլ աղբյուրներ

1878-1914 թթ. արևմտահայության թվաքանակի հարցին անդրադարձած հայ ուսումնասիրողներից Բիթլիսի նահանգի և այդ թվում՝ Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են հաղորդում Վահան Պարտիզակցին, Ա.Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Կարո Սասունին և Սարգիս Կարայանը:

Նահանգի Մուշի և Սղերդի գավառների վիճակագրությունն է հաղորդում Վահան Պարտիզակցին³³: Ըստ հեղինակի տվյալների՝ 1879 թ. Սղերդն ուներ

32 Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du génocide* (Paris: Editions d'Art et d'Histoire ARHIS, 1992), 60, 502-507: Ասիրաժեշտ է նաև նշել, որ մարդահամարի որոշ տվյալներ և այլ վիճակագրություններ որպես աղբյուր 1920-21 թթ. օգտագործել է և արևմտահայ մտավորական Թեոդիկը՝ իր «Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին 1915 աղետալի տարին» ուսումնասիրության վրա աշխատելու ընթացքում (Սղերդի գավառի համար տվյալները տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին 1915 աղետալի տարին* (Նիւ Եորք, 1985), 90-94): Թեոդիկի տվյալները մենք նույնպես ներկայացնում ենք հողվածի համապատասխան բաժիններում:

33 Վահան վարդապետ Տեր-Մինասյան (Վահան Պարտիզակցի), արևմտահայ մտաորական, եկեղեցական գործիչ: Որպես Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի ներկայացուցիչ՝ 1870-80 թթ. ընթացքում մի քանի անգամ այցելել է Արևմտյան Հայաստանի գավառներ՝ հայ բնակչության թվաքանակի և սոցիալ-տնտեսական կացության վերաբերյալ տվյալներ հավաքելու նպատակով: Պարտիզակցին մեկն էր այն երեք վարդապետներից (մյուս երկուսը՝ Արիստակես Տեկանց և Գարեգին Սրվանձույանց), որոնք 1878 թ. ամռանը պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից ուղարկվել էին Արևմտյան Հայաստան՝ մարդահամար անցկացնելու հրահանգով (տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 78-79, տե՛ս նաև Էմմա Կոստանդյան, «Վան-Վասպուրականի հասարակական-մշակութային գործիչները 19-րդ դարի II կեսին», *Քրիստոնյա*

40.000 շունչ հայ բնակչություն (ներառյալ Սասունի որոշ շրջաններ)³⁴: Կ.Պոլսի «Մասիս» պարբերականի 1880 թ. նոյեմբերի 15-ի համարում տպագրված Վահան Պարտիզակցու մեկ այլ տվյալով՝ Սղերդի թեմում կար 114 հայաբնակ բնակավայր՝ 6.000 տուն հայ բնակչությամբ³⁵: Հեղինակը նշում է, որ վիճակագրությունը քաղել է «կէս պաշարօնական կամ անձնական կերպով գտած աղբյուրներէ»³⁶: Ըստ Վահան Պարտիզակցու՝ հայ բնակչության հստակ թվաքանակ տալ անկարելի է, «վասնզի Թուրքիոյ մեջ անձ համերը անհնար է, ո՛չ Օսմանյան պետությունը և ո՛չ ազգային որևէ իշխանություն կարող է առ այդ»: Հեղինակի դիտարկմամբ մեկ տասն շնչերի միջին թիվը գյուղերում պետք է ընդունել 8, իսկ քաղաքներում՝ 5-6 շունչ, ընդհանուր միջինը՝ 7 շունչ³⁷:

Մկրտիչ Ավետիսյանը³⁸, 1890 թ. հրատարակած վիճակագրության մեջ, գավառում հաշվում է 75.000 շունչ հայ բնակչություն (այլ մանրամասնություններ բացակայում են): Հեղինակը նշում է, որ վիճակագրական աղյուսակը կազմելիս օգտվել է թուրքական, հայկական և արևմտյան մի շարք աղբյուրներից, այդ թվում «Թուրքաց 1878ի Սալնամեն և 1889ին երկրին մեկ մասին պաշարօնապէս շինված ազգահամարը, Ազգային պարբերաբարանի պաշարօնյաների տեղեկագիրները, եւրոպական մի քանի կարևոր աշխարհագիրների վիճակագրությունները և ադոնց վրա ավելցունելով սրացված նորագոյն ծանօթություններ»³⁹:

Գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ է հաղորդել նաև անվանի հայ պատմաբան և վիճակագիր Ա.-Դ-ոն: Ուսումնասիրողի տվյալներով, որոնք նա հավաքել է 1909 թ. Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդության ժամանակ, Սղերդի գավառում կար 2.796 տուն, 19.072 շունչ հայ բնակչություն (առանց Խարզանի և Էրուի գավառակների)⁴⁰:

Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրօնական, լրատվական երկշաբաթաթերթ (Էջմիածին), դեկտեմբեր Ա 2010, թիւ 23 (331), 5, 7:

34 Վահան Վարդապետ Պարտիզակցի, *Խօսք զՀայրենեաց*, Բ. Տպագրութիւն (Կ.Պոլիս, տպ. Յ.Գ. Փալագաշյան, 1911), 47-48:

35 *Մասիս* (Կ.Պոլիս), 15/27 նոյեմբերի 1880, 1:

36 Նոյն տեղում:

37 *Մասիս*, 5/17 փետրվարի 1881, 1: 1878-81 թթ. հայկական բարեփոխումների անցկացման շուրջ ակտիվ քննարկումների փուլում Վահան Պարտիզակցին արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տվյալներ է տրամադրել նաև Օսմանյան Թուրքիայում հավատարմագրված եվրոպական տերությունների դիվանագետներին: Մասնավորապես, Վահան Պարտիզակցու կողմից Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Գաետանո Սոլանելլին հաղորդած տվյալները (1881 թ.) երկրորդում են «Մասիսում» հրատարակված ցուցակը (տե՛ս Կ. Սոլանելլի, «Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի», *Բազմավէպ (Վեներիկ)*, 1882, հատոր Խ, 291): Ինչպես նշում է Սոլանելլին, վիճակագրական տեղեկությունները նրան տրամադրվել է «յապուկ առաքելութեամբ մը շրջող անձ մը գրեթէ հայերէն բնակված Տանկասարանի աննն գաւառներուն մէջ, ուստի և բնականապէս մեծագոյն ճշդության երևոյթ ունի» (նույն տեղում, 290):

38 Մկրտիչ Ավետիսյան (Թերլեմեզյան, 1864 - 1896), XIX դարի հայոց ազատագրական շարժման գործիչ, լրագրող, Արմենական կուսակցության հիմնադիրներից մեկը:

39 Մ. Ա., *Թուրքիայի հայերն և իրենց դրացիներ* (Մարսէլլ, տպ. Մ. Փորթուգալյանի, 1890), 44:

40 Ա.-Դ-օ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 157 (ուսումնասիրողի՝ ըստ գավառակների

Մեծ եղեռնի նախօրյակին Բիթլիսի նահանգի հայ բնակչության թվաքանակի մասին տեղեկություններ է պարունակում «Ամբաստանագիր-տեղեկագիր Բաղէշի կուսակալության» գրությունը, որը կազմվել է 1919 թ. փետրվարին Հալեայում՝ Բիթլիսի նահանգի վերապրած հայության ներկայացուցիչների կողմից⁴¹: Համաձայն տեղեկագրի տվյալների՝ գավառում Մեծ եղեռնի կար շուրջ 30.000 հայ բնակչություն:

Վերոնշյալ տվյալներից որոշակի աղբյուրագիտական արժեք են ներկայացնում և կարող են օգտագործվել Մեծ եղեռնի նախօրյակին հայ բնակչության թվաքանակը ճշտելու հարցում Ա-Դոյի և «Ամբաստանագիր-տեղեկագրի» տվյալները: Ա-Դոյի տվյալները արժեքավոր են նրանով, որ դրանց միջոցով մեզ են հասել XX դարի սկզբներում Վանի, Էզրումի և Բիթլիսի առաջնորդարաններում պահվող տեղեկագրերի տվյալները, որոնց բնագրերը այսօր կորած են⁴²:

IV. Ռուս և արևմտյան ուսումնասիրողների վիճակագրական տվյալները Բիթլիսի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ

1878-1914 թթ. Բիթլիսի նահանգի և այդ թվում՝ Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ սկզբնաղբյուրային նշանակություն ունեն ֆրանսիացի վիճակագիր Վիտալ Քինեի, Վանում ռուսական փոխհյուպատոս Վլադիմիր Մանսկու, բրիտանացի դիվանագետ Վիլյամ Էվերեթի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության հաղորդած տվյալները:

Օսմանյան ծառայության մեջ գտնվող⁴³ ֆրանսիացի վիճակագիր Վ. Քինեն, հիմնվելով օսմանյան պաշտոնական տվյալների վրա, 1892 թ. Սղերդի գավառի համար հաղորդում է 30.152 շունչ հայ բնակչություն, այդ թվում՝ 1.000 կաթոլիկ և 1.033 բողոքական (ըստ գավառակների հայ բնակչության բաշխումը կներկայացվի աշխատանքի համապատասխան բաժնում)⁴⁴:

հաղորդած տվյալները տես աշխատանքի համապատասխան բաժիններում):

41 Տեղեկագիրը հրատարակվել է սփյուռքահայ ուսումնասիրող Լևոն Վարդանի կողմից: Տե՛ս «Ամբաստանագիր-Տեղեկագիր Բաղէշի կուսակալութեան», *Հայկազեան Հայագիտական Հանդես* ԺԵ (1995), 530-545, բնակչության վիճակագրությունը տե՛ս նույն տեղում, 542: «Ամբաստանագիր-տեղեկագրի» կազման մասին տե՛ս նաև Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.)», *Տեղասպանագիտական հանդես* 4, no. 1 (2016), 57-58:

42 Ա-Դոյի՝ Սղերդի գավառի առանձին գավառակներին վերաբերող տվյալները կներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժիններում: Ա-Դոյի վիճակագրական տվյալներին՝1912-14 թթ. հայկական մամուլում անդրադարձների մասին տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մի քանի թվեր». Ա-Դոյի «Վանի, Բիթլիսի և Էզրումի վիլայեթները» ուսումնասիրությունը (1912 թ.) և Հայկական հարցի վերարձարժման ժամանակաշրջանում արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ հայկական մամուլում ծավալված բանավեճը», *Տեղասպանագիտական հանդես* 5, no. 1 (2017), 32-64:

43 Նա զբաղեցնում էր Օսմանյան պարտքի վարչության քարտուղարի պաշտոնը:

44 Cuinet, *La Turquie d'Asie*, 527: Քինեի տվյալներին անդրադարձել և վերլուծության են ենթարկել, մասնավորապես, հայ ուսումնասիրողներ Հայկազուն Գալստյանը և Սարգիս Կարայանը (տե՛ս Հայկազուն Գալստյան, «Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը՝ ըստ Վիթալ Քինեի վիճակագրության», *Մերձասոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ* XII, Թուրքիա (1985), 59-79; Sarkis Y. Karayan, "Vital Cuinet's La Turquie d'Asie: A Critical Evaluation of Cuinet's Information

1895-1899 թթ. Վանում ռուսական փոխհյուպատոս Վլադիմիր Մանսկին⁴⁵, հիմնվելով Վ. Քինեի տվյալների վրա, Սղերդի գավառում հաշվում է 1.783 տուն և 27.667 շունչ հայ բնակչություն (առանձին գավառակներին վերաբերող հեղինակի տվյալները կներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժիններում)⁴⁶:

Օսմանյան կայսրության և մասնավորապես Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1880-90-ական թթ. բրիտանական դիվանագետների կողմից կատարված հաշվարկները հանրագումարի են բերված «Քուրդիստանում» նախկին բրիտանական հյուպատոս գնդապետ Վիլյամ Էվերեթի կողմից 1895 թ. պատրաստած զեկուցագրում⁴⁷: Էվերեթը հաղորդում է, որ Բիթլիսի, Մուշի և Սղերդի վերաբերյալ ամբողջական վիճակագրությունը հավաքվել է Վանում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս, կապիտան⁴⁸ Է. Քլայթոնի կողմից 1881 թ., իսկ 1895 թ. դրությամբ սահմանների համար՝ իր կողմից⁴⁹: Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի համար Էվերեթի տվյալն է՝ 35.408 շունչ (բնակչության բաշխումն ըստ գավառակների բացակայում է)⁵⁰:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝ 1919 թ. դեկտեմբերին, Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության Աշխարհագրական բաժնի կողմից պատրաստված վիճակագրական աղյուսակի տվյալների համաձայն՝ 1914 թ. դրությամբ Սղերդի գավառում կար 26.000 հայ (հայերի բաշխումն ըստ գավառակների բացակայում է)⁵¹: Աղյուսակի համար որպես տվյալների աղբյուր ծառայել է 1914 թ. օսմանյան պաշտոնական վիճակագրությունը, հունական և հայկական եկեղեցական աղբյուրների տրամադրած տվյալները և հատկապես ամերիկյան փորձագիտական խմբի Արևմտյան Ասիայի բաժնի փորձագետ պրոֆեսոր Դևիդ Մաժիի պատրաստած «Ասիական Թուրքիայի բնակչությունը պատերազմի նախօրյակին» տեղեկագիրը⁵²:

Այսպիսով, ինչպես կարելի է տեսնել, Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող արևմտյան վիճակագրական տվյալները Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակը

about Armenians,” *Journal of the Society for Armenian Studies* 11 (2000), 53-63): Տե՛ս նաև Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կեսերին Հայկական հարցի սրման ժամանակաշրջանում», *Ցեղասպանագիտական հանդես* 4 no. 2 (2016), 31:

45 Վլադիմիր Մանսկու մասին կենսագրական կարճ ակնարկը տե՛ս <http://www.grwar.ru/persons/persons.html?id=6191>, դիտվել է 31.03.2017:

46 Маевский, *Военно-статистическое описание*, 220-223:

47 Մեծ Բրիտանիայի ազգային արխիվ, CAB 37/38/26 (Report on the population of Asia Minor and the Turkish Provinces to the eastward, compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, Intelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895).

48 Զեկուցագիրը գրելու ժամանակ՝ արդեն գնդապետ:

49 Նույն տեղում, 230:

50 Նույն տեղում, 251:

51 Zamir Meir, “Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919,” *Middle Eastern Studies* 17, no. 1 (1981): 104:

52 Նույն տեղում, 87:

հաշվում են 26.000-35.000 շնչի սահմաններում: Նշենք, որ վերջին թիվն արտացոլում է 1880-ական թթ. իրողությունները՝ այսինքն նախքան համիդյան կոտորածները և Սղերդի գավառից հայաշատ Սասունի առանձին երկրամասների առանձնացման ժամանակաշրջանը: Հատկանշական է, որ նշված գրեթե բոլոր արևմտյան հեղինակները, թեև իրենց հաշվարկները կառուցել են օսմանյան կառավարության պաշտոնական տվյալների հիման վրա, չեն ընդունել դրանք որպես հավաստի, այլ վերանայել են դրանք՝ որպես իրականությանը մոտ ընդունելով հայ բնակչության թվաքանակի ավելի բարձր թվեր:

V. Հայոց ցեղասպանության նախօրյակին Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկ ըստ գավառակների

V.1. Սղերդի գավառակ

Համաձայն Ա. Տեկանցի (1878-80 թթ. Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի մարդահամար) տվյալների Սղերդի գավառակի հայ բնակչության թիվը 2.489 էր, որից 2.400-ն ապրում էր քաղաքում, մնացած 89-ը՝ գավառակի չորս հայաբնակ գյուղերում (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 1)⁵³:

Վիտալ Քինեն (1891 թ.) Սղերդի գավառակում հաշվում է 1.204 տուն, 6.020 շունչ հայ բնակչություն, այդ թվում Սղերդ քաղաքում՝ 664 տուն, 3.320 շունչ⁵⁴:

Վ. Մանսկին, իր հաշվարկի հիմքում դնելով Վ. Քինեի տվյալները և ավելացնելով դրանք 10%-ով, 1899 թ. համար գավառակում հաշվում է 6.622 հայ, որից 3.652-ը՝ Սղերդ քաղաքում, 2.970-ը՝ գավառակի հայաբնակ գյուղական բնակավայրերում:⁵⁵

Ըստ 1902 թ. մարտ-նոյեմբեր ամիսներին կազմված Սղերդի առաջնորդարանի տեղեկագրի՝ Սղերդ քաղաքն ուներ 527 տուն հայ՝ շուրջ 5.000 շունչ բնակչությամբ, գավառակի թվով 11 հայաբնակ բնակավայրերում կար 63 տուն հայ (բաշխումը տե՛ս Աղյուսակ 1):⁵⁶

1913 թ. Սղերդի առաջնորդարանի կողմից պատրաստած վիճակագրույցի տվյալներով (1913-1914 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամար)՝ գավառակում որպես հայաբնակ նշվում է 10 բնակավայր՝ 533 տուն հայ բնակչությամբ (շնչերի թիվը չի նշվում), այդ թվում՝ 489 տունը՝ Սղերդ քաղաքում, 44 տուն՝ գավառակի 9 հայաբնակ գյուղերում (ըստ բնակավայրերի բաշխումը տե՛ս Աղյուսակ 1)⁵⁷: Ըստ նույն տվյալների հիման վրա Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկի՝ գավառակն

53 Տեկանց, *Այցելություն ի Հայաստան*, 114:

54 Cuinet, *La Turquie d'Asie*, 600: Վ. Քինեի այս տվյալն օգտագործել է Ա.-Դոն և Ա.-Դոյին հետևելով, Կարո Սասունին (տե՛ս Ա.-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 153, տե՛ս նաև Սասունի, *Պարմութին Տարօնի աշխարհի*, 362):

55 Маевский, *Военно-статистическое описание*, 140:

56 «Վիճակագրություն Սղերդի և իր թեմերում», ՀԱԱ, ֆ 412, ց. 1, գ. 1856, թ. 2-4: Տեղեկագրում նշվում է, որ ըստ օսմանյան վիճակագրության՝ քաղաքի հայ տների թիվը 300 էր (նույն տեղում, թ. 2):

57 ՀԲԸՄ Նորարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 63-65:

ունեցել է 4.437 շունչ հայ բնակչություն, որից 4.032-ը՝ Սղերդ քաղաքում⁵⁸:

Հայկական այլ աղբյուրները հիմնականում հաստատում են պատրիարքարանի տվյալները: Այսպես, 1913 թ. Սղերդի առաջնորդարանի հաղորդած թիվը կլորացնելով օգտագործել է Թեոդիկը՝ Սղերդ քաղաքի համար հաշվելով 500 տուն հայ, որից 50-ը՝ բողոքական⁵⁹:

Ըստ մեկ այլ արևմտահայ ուսումնասիրող Ս. Ծոցիկյանի, որը օգտագործել է վերապրածների հաղորդած տեղեկությունները, 1915 թ. դրությամբ Սղերդ քաղաքում ապրում էր շուրջ 6.000 հայ⁶⁰:

Հիմք ընդունելով վերոնշյալ տվյալները՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառակում կար շուրջ 550 տուն, 4.950 շունչ հայ բնակչություն, որից շուրջ 500 տուն, 4.500 շունչ՝ Սղերդ քաղաքում, 50 տուն, 450 շունչ՝ գավառակի՝ 1915 թ. դրությամբ որպես հայաբնակ վկայված 9 գյուղերում (մեկ տան վրա ընկնող շնչերի միջին թիվ՝ 9)⁶¹:

Աղյուսակ 1. Սղերդի գավառակի հայ բակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր	1878 թ. Ա. Տնկանց	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1913 թ. Սղերդի առաջնորդարան	
		շունչ	տուն	տուն	շունչ ⁶²
1	Սղերդ	2.400	527	489 ⁶³	4032
2	Այսմիլք	24	5	-	-
3	Այստար	-	10	3	-
4	Ավթե	-	6	-	-
5	Բելեք	-	4	-	-
6	Բրհուր	17	-	-	-

58 Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 502-503:

59 Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 90: Թեոդիկի այս տվյալն իր հաշվարկների հիմքում է դնում Ս. Կարայանը մեկ տան վրա հաշվելով 7 շունչ և, ըստ դրա, գավառակի համար ստանալով 3.500 շունչ հայ բնակչություն (Sarkis Y. Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914: A Geographic and Demographic Gazetteer* (London: Gomidas Institute, 2018), 208): Հետևելով Թեոդիկին՝ Սղերդ քաղաքում 500 տուն հայ բնակչություն է հաշվում նաև Գեղամ Բաղայանը (տե՛ս Գեղամ Բաղայան, «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ: Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան գավառները», *Վէմ համահայկական հանդես* 4 no. 56 (2016), XIX):

60 Սարգիս Ծոցիկյան, *Արևմտահայ աշխարհ* (Նիւ Եորք, տպ. Ա. Յ. Լեյլեյան, 1947), 672:

61 1914-ի օսմանյան տվյալներով գավառակն ուներ 2.630 շունչ հայ բնակչություն (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 174):

62 Շնչերի թիվն ըստ Ռայմոնդ Գևորգյանի և Փոլ Փարուջյանի:

63 Այդ թվում՝ 39 տուն հայ բողոքական:

7	Գազար	16	-	-	-
8	Գօթիպ	-	5	5	49
9	Դիհոզ (Տըհօք)	-	5	2	29
10	Թիլե	-	5	3	28
11	Խուշէնան (Խօշէնա)	32	12	13	121
12	Հիսէնիք	-	5	2	20
13	Ճէֆֆէն	-	3	-	
14	Պէքէստ	-	3	10	96
15	Տէկէլա	-	-	4	45
16	Տերշիմշ	-	-	2	17
17	Քոշք	-	-	-	-
	Ընդամենը	2.489	590	533	4.437

V.2. Շիրվանի գավառակ

1878-1914 թթ. Շիրվանի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հիմնական վիճակագրական սկզբնաղբյուրների տվյալներն են.

1. Ա. Տևկանց (1878 թ.) 14 հայաբնակ բնակավայր՝ 1.569 շունչ հայ բնակչությամբ (ըստ բնակավայրերի բաշխումը տես Աղյուսակ 2)⁶⁴;
2. Վ. Քինե (1891 թ.)՝ 4.113 շունչ հայ⁶⁵;
3. Վ. Մասևի (որպես հիմք օգտագործելով Վ. Քինեի տվյալները, 1899 թ.)՝ 4.524 շունչ հայ⁶⁶;
4. 1902 թ. Սդերդի առաջնորդարանի տեղեկագիր՝ 17 հայաբնակ բնակավայր, 184 տուն հայ (ըստ բնակավայրերի բաշխումը տես Աղյուսակ 2)⁶⁷;
5. 1909 թ. Ա-Դ-ո (որպես տեղեկությունների աղբյուր նշում է Աղթամարի կաթողիկոսարանի տեղեկագիրը)՝ 14 բնակավայր, 340 տուն, 2.380 շունչ հայ⁶⁸:

64 Տևկանց, *Այցելություն ի Հայաստան*, 115 (բաշխումն ըստ բնակավայրերի), 126 (հանրագումարային տվյալ): Տե՛ս նաև «Նամակ Սդերտից», *Արձագանք գրականական և քաղաքական շարափաթեղի* (Թիֆլիս), 18 ապրիլ 1882, № 9, 136:

65 Cuinet, *La Turquie d'Asie*, 609:

66 Маевский, *Военно-статистическое описание*, 222:

67 ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1856, թ. 12:

68 Հեղինակը հաղորդում է, որ տվյալները վերցրել է Աղթամարի կաթողիկոսարանի տեղեկագրից: Հաշվի առնելով XX դարի սկզբներին վերաբերող այլ ցուցակների համեմատ Ա-Դ-ոյի ցուցակում առկա հայ բնակչության ավելի բարձր թիվը՝ չենք բացառում, որ ցուցակը, գուցե, ավելի վաղ ծագում ունի՝ կազմվել է 1880-ական թթ. և արտացոլում է նախքան համիդյան կոտորածներ գավառակի հայ բնակչության թվաքանակի պատկերը (տե՛ս Ա-Դ-օ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 154): Շիրվանի գավառակի համար Ա-Դ-ոյի տվյալը օգտագործվել է Կարո Սասունու (տե՛ս Սասունի, *Պարմութին Տարօնի աշխարհի*, 362) և Սարգիս Կարայանի (տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 214-215) կողմից: Վերջինս, հիմք ընդունելով Ա-Դ-ոյի հաղորդած տվյալները և լրացնելով

6. 1913թ. Սղերդի առաջնորդարանի վիճակագույց (Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար)՝ 14 հայաբնակ բնակավայր, 173 տուն, 1.683 շունչ հայ (մեկ տանն ընկնող շնչերի միջին թիվը՝ 9,7)⁶⁹:

7. Թեոդիկ (1914 թ.)՝ 15 հայաբնակ բնակավայր, 202 տուն հայ⁷⁰:

Մեծ եղեռնի նախօրյակին Շիրվանի գավառակի հայ բնակչության մոտավոր թիվը որոշելու նպատակով համադրել ենք 1913 թ. Սղերդի առաջնորդարանի (1913-1914 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամար) և 1914 թ. Թեոդիկի ցուցակների տվյալները (տե՛ս Աղյուսակ 2): Ըստ վերոնշյալ երկու ցուցակների՝ որոշել ենք տների միջին թիվը բնակավայր առ բնակավայր և մեկ տան վրա հաշվել 9 շունչ: Ըստ վերոնշյալի՝ Մեծ եղեռնի նախօրյակին Շիրվանի գավառակի որպես հայաբնակ վկայված 17 բնակավայրերում կար 201 տուն, 1.809 շունչ հայ բնակչություն (կլորացված թիվ՝ 200 տուն, 1.800 շունչ)⁷¹:

Աղյուսակ 2. Շիրվանի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր ⁷²	1878 թ. Ա. Տևկանց	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1909 թ. Ա-Գ-ն	1913 թ. Սղերդի առաջնորդարան		1914 թ. Թեոդիկ	Մեր հաշվարկը	
		Շունչ	Տուն	Տուն	Տուն	Շունչ	Տուն	Տուն	Շունչ
1	Ավավ	-	10	-	-	-	-	-	-
2	Ալին (Դեբրավել)	162	15	30	22	198	22	22	198
3	Գոնդեղիզան	-	-	10	-	-	-	-	-
4	Խեխտեք	80	3	20	10	91	13	12	108

այն Թեոդիկի հաղորդած տվյալներով, գավառակի համար հաշվում է 388 տուն, 3.104 շունչ հայ բնակչություն (նույն տեղում, 215):

69 Ըստ Ռայմոնդ Գևորգյանի և Փոլ Փաբուջյանի կողմից ներկայացվող վիճակագրական ցուցակի (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 506): Դրա հետ մեկտեղ, ֆրանսահայ ուսումնասիրողները որպես գավառակի համար հայ բնակչության թվաքանակի հանրագումարային տվյալ հաղորդում են 19 հայաբնակ բնակավայր, 317 տուն, 2.853 շունչ հայ բնակչություն (նույն տեղում, 60):

70 Հաշվարկը մեր կողմից՝ ըստ Թեոդիկի գիղացուցակի տվյալների (տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 93, 539):

71 Ըստ օսմանյան վիճակագրական տվյալների՝ 1914 թ. գավառակն ուներ 1.169 հայ բնակչություն (տե՛ս Karpap, *Ottoman population 1830-1914*, 174):

Հայ ուսումնասիրող Գեղամ Բադալյանը հաղորդում է Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ գավառակում մոտ 7.000 հայ բնակչության առկայության մասին՝ չնշելով, սակայն, իր այս տվյալի և ոչ մի հիմք (տե՛ս Բադալյան, «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրին: Մաս յոթերորդ», XXV):

72 Տեղանունների գրության ձևն ըստ 1902 թ. Սղերդի առաջնորդարանի տեղեկագրի և Ա-Գ-ոյի ցանկերի:

5	Կելին	24	12	10	8	72	9	9	81
6	Կորինան (Կիրիէնա)	320	25	50	30	270	38	34	306
7	Ճում	49	12	-	10	89	10	10	90
8	Մադան	140	-	30	-	-	-	-	-
9	Մագօրան	162	-	-	-	-	-	-	-
10	Սգրէ	56	-	-	-	-	-	-	-
11	Մնար	-	3	-	-	-	-	-	-
12	Նըպին	160	12	50	-	135	15	15	135
13	Շըմէլան	-	⁷³	-	-	-	-	-	-
14	Պէյթ-Հարուն	-	⁷⁴	-	4	35	3	4	36
15	Պըրք	-	8	13	5	46	5	5	45
16	Պուխ	-	-	-	5	45	5	5	45
17	Սահրուս	120	-	-	-	-	-	-	-
18	Սէգէրս	11	20	20	20	181	25	22	198
19	Սէրիան	-	8	-	6	55	5	6	54
20	Սէրմէտ	-	8	-	-	-	-	-	-
21	Սըմլտր	-	5	7	5	44	-	5	45
22	Տարզըն	160	⁷⁵	-	-	-	3	3	27
23	Տէրըկ	-	8	15	6	53	7	7	63
24	Քեօսախ	-	-	5	-	-	-	-	-
25	Քիբան	80	30	60	41	369	41	41	369 ⁷⁶
26	Քֆրա (Քիւֆրէ)	18	5	20	1	-	1	1	9
Ընդամենը		1.542	184	340	173	1.683	202	201	1.809

V.3. Խարզանի գավառակ

1878-1914 թթ. Խարզանի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հիմնական աղբյուրները հաղորդում են հետևյալ տվյալները.

1. 1878 թ. Ա. Տեկանց՝ 44 հայաբնակ բնակավայր, 8.280 շունչ հայ⁷⁷,

73 Նշվում է որպես հայաթափված:

74 Նշվում է որպես հայաթափված:

75 Նշվում է որպես հայաթափված:

76 Համաձայն Մեծ եղեռնի վերապրած, ծնունդով Կիլան գյուղից Յակոբ Գրիգորյանի վկայության՝ Առաջին աշխարհամարտի սկզբին բնակավայրում կար 60 տուն զուտ հայ, 520 բնակչով (տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, Հայտոր II, Բիթլիսի նահանգ, գլխավոր խմբ. Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 118):

77 Բնակավայրերի ցանկում ներառված են նաև Սասունի Հազոյի շրջանից բնակավայրեր (տե՛ս Տեկանց, Այցելություն ի Հայաստան, 116-117 (բնակավայրերի ցանկ), 126 (հանրագումարային տվյալ)): Տե՛ս նաև Արձագանք, 136:

2. Վ. Քինե (1891 թ.)՝ 3.600 շունչ հայ⁷⁸:
3. 1899 թ. Վ. Մանսկի՝ 6.717 շունչ հայ⁷⁹,
4. 1902 թ. Սդերդի առաջնորդարան՝ 58 հայաբնակ բնակավայր, 608 տուն հայ (տվյալներն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 3)⁸⁰,
5. 1913 թ. Սդերդի առաջնորդարան (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամար)՝ 76 հայաբնակ բնակավայր, 942 տուն հայ (ըստ բնակավայրերի բաշխումը տե՛ս Աղյուսակ 3)⁸¹:
6. 1914 թ. Թեոդիկ՝ 64 բնակավայր, 922 տուն հայ (տվյալներն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 3):⁸²

Վերոնշյալ տվյալներից խիստ տարբերվում է հայ ուսումնասիրող Վարդան Պետոյանի կողմից կազմված վիճակագրական ցուցակը, որը Խարզանի գավառակում ներկայացնում է 19 հայաբնակ բնակավայրի անուն՝ 1.883 տուն հայ բնակչությամբ⁸³, ինչպես նաև վերջերս գիտական շրջանառության մեջ դրված Վարազդատ Տերոյանի տվյալները՝ 33 բնակավայր 1.191 տուն հայ (տե՛ս Աղյուսակ 3)⁸⁴:

Գավառակի համար Աղյուսակ 3-ում ներկայացված տարբեր վիճակագրական ցուցակների հաղորդվող տվյալները առանձին դեպքերում հակասական են, նշվում են բազմաթիվ հայաբնակ բնակավայրերի անուններ, որոնք չեն երկրորդվում: Տվյալների համաձայնեցման դեպքում հնարավոր շփոթից խուսափելու նպատակով՝ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության թվաքանակի մեր հաշվարկի հիմքում դնում ենք 1913 թ. Սդերդի առաջնորդարանի վիճակագրույցի (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամար) տվյալը՝ որպես նախատեղեռնյան վիճակն առավել ամբողջական և ընդգրկուն արտացոլող սկզբնաղբյուր՝ 76 հայաբնակ բնակավայր, 942 տուն (կլորացված թիվ՝ 940 տուն): Մեկ տան վրա հաշվելով միջինը 9 շունչ՝ ստանում ենք 8.460 շունչ հայ բնակչություն (կլորացված թիվ՝ 8.450 շունչ)⁸⁵:

78 Cuinet, *La Turquie d'Asie*, 613:

79 Маевский, *Военно-статистическое описание*, 222:

80 ՀԱԱ, ֆ 412, ց. 1, գ. 1856, թ. 12:

81 ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 65-68:

82 Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 91-93, 539: Հաշվարկը մեր կողմից՝ ըստ Թեոդիկի գյուղացուցակի:

83 Վարդան Պետոյան, *Սասունի քարքառը* (Երևան, Հայկական ՍՍՌ գիտ. ակադ. հրատ., 1954), 187-190: Նույն ցուցակը տե՛ս նաև Սասունի, *Պարմություն Տարունի աշխարհի*, 384:

84 Գեղամ Բաղայան, «Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերը Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ», *Բանբեր Հայաստանի արխիվների* 1 (2005), 219-220:

85 Նշված տվյալների հիման վրա Գևորգյանի և Փաբուջյանի կողմից կատարված հաշվարկով՝ 76 հայաբնակ բնակավայր, 927 տուն, 8.343 շունչ հայ բնակչություն (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 504-505): 1914 թ. դրությամբ գավառակի համար օսմանյան վիճակագրությունը հաղորդում է 4.332 հայ բնակչություն (Karpát, *Ottoman population 1830-1914*, 174):

Աղյուսակ 3. Խարզանի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1913 թ. Սղերդի առաջնորդարան	1914 թ. Թեոդիկ	Վ. Պետոյան	1914 թ. Վ. Տերոյան
		Տոն	տոն	տոն	տոն	տոն
1	Ամինօ	-	10	-	-	-
2	Այնգասր	10	8	3	-	-
3	Աշգատարան	-	6	6	-	-
4	Արանծ	3	4	4	-	-
5	Ափրքան	-	3	-	-	-
6	Բգեգիկ (Բեսիկ)	-	-	-	60	-
7	Գալիօզ	8	12	10	-	55
8	Գերդաշէն	5	-	-	-	-
9	Գօխան	2	4	8	-	20
10	Գոյսաթուն	-	3	-	-	-
11	Գուլիք	25	33	36	-	70
12	Գուպին	25	39	32	-	50
13	Գուրտըք	-	3	3	-	-
14	Դըրպէսան	-	4	-	-	-
15	Դիւէ	-	1	-	-	-
16	Դուսատաք (Տէսէտէք)	25	28	22	60	52
17	Զէվիկ	3	-	-	-	-
18	Զըման	-	8	5	-	-
19	Զըվընկ	8	11	7	-	-
20	Զօզ	25	30	200	200	150
21	Թախարի	8	8	1	-	22
22	Թափի	-	11	-	-	15
23	Լիճք	-	2	-	-	-
24	Իսաթմա	7	-	-	-	-
25	Իսանըզ	3	-	-	-	-
26	Իսըրպան	6	-	-	40	⁸⁶
27	Իսիլըքան	-	2	-	-	-
28	Իստուրք	15	6	11	-	-
29	Իտողար	5	-	-	-	-

86 Նշվում է որպես աստրաբնակ:

30	Կեօգէլտեր	8	22	22	40	23
31	Կրէ Հասան	6	9	-	-	-
32	Կրէ Չալօ	8	-	-	-	-
33	Կօմիքա	-	2	-	-	-
34	Հագնամիր	12	28	25	60	35
35	Հատհատք	30	46	44	-	45
36	Հարֆաս	-	13	9	-	-
37	Հաֆիք	-	5	-	-	-
38	Հըլէվի	-	2	-	-	-
39	Հըճրէ	3	-	-	-	-
40	Հըսհըս	5	9	9	-	87
41	Հըրօրք	-	15	15	60	-
42	Հիսէյնի	-	5	3	-	-
43	Ղըրտուտ	-	8	3	-	-
44	Ճէզնէ	3	-	16	100	25
45	Ճէլտէքան	3	11	8	-	50
46	Ճէֆֆան	5	-	-	-	-
47	Ճիման	-	3	3	-	-
48	Ճմսարիկ	3	8	8	-	-
49	Ճոմանիկ	20	25	21	-	50
50	Ճուայզ	12	10	19	-	12
51	Մալաֆան	25	28	28	400	-
52	Մամլա	15	10	10	25	12
53	Մաշիկը	-	1	-	-	-
54	Մարիպ	3	-	-	-	-
55	Մարմարունա	5	6	6	-	88
56	Մէլքիշան	30	40	36	-	60
57	Մըզէ	-	2	2	-	-
58	Միլիքան	15	15	16	-	-
59	Միրիման	-	12	27	-	40
60	Յոփ	20	20	20	50	55
61	Նագտար	7	3	1	-	32
62	Նորշէն	5	5	5	3	-
63	Շէխիմս	-	5	5	-	-
64	Շքէվթա	5	-	-	-	-
65	Պալըքան	-	2	-	-	-
66	Պաճիֆտ	-	16	7	-	-

87 Նշվում է որպէս ասորաբնակ:

88 Նշվում է որպէս ասորաբնակ:

67	Պարինճ	12	40	27	60	40
68	Պարզան Ներքին	-	8	8	15	
69	Պարզան Վերին	4	10	10	40	15
70	Պեյաօ	3	-	-	-	. ⁸⁹
71	Պինարին	-	4	-	-	-
72	Պեվաս	5	4	4	-	-
73	Պերահ	5	35	35	-	20
74	Պիմեդ	25	39	22	50	35
75	Պիրըզ	3	-	8	-	-
76	Պոլինտ	-	5	3	-	-
77	Ռնտուան	50	64	64	400	150
78	Սալաս	-	1	-	-	-
79	Սալիպա	-	4	4	-	20
80	Սըրնտ	-	25	23	200	40
81	Սըճան	2	2	2	-	-
82	Սըպիք	15	15	12	-	32
83	Սոյոիզ	-	2	-	-	-
84	Վաստ	2	6	-	-	-
85	Տարօն	-	3	-	-	-
86	Տերա	5	-	-	-	-
87	Տեմեթք	5	8	-	-	-
88	Տերշուան	5	2	2	-	-
89	Փալոնի	8	8	8	-	26
90	Քանի Գոլ	-	20	9	-	-
91	Քանիշիրք	3	8	6	-	-
92	Քանիք	5	7	3	-	-
93	Քելամերան	5	-	-	-	-
94	Քուչալան	-	-	-	20	-
	Ընդամենը	593	942	966	1.883	1.251

V.4. Էրուհի գավառակ

Ըստ Վ. Քինեի (1891 թ.)՝ գավառակն ուներ 5.113 հայ բնակչություն⁹⁰:

Վ. Մանսկին (1899 թ.), որպես հիմք ընդունելով Վ. Քինեի տվյալները, գավառակի համար հաղորդում է 5.624 շունչ հայ բնակչություն⁹¹:

Սղերդի առաջնորդարանի 1902 թ. մարտի 12-ի տեղեկագրում թվարկվում են

89 Նշվում է որպես ասորաբնակ:

90 Cuinet, *La Turquie d'Asie*, 611:

91 Маевский, *Военно-статистическое описание*, 222:

Էրուհի 11 հայաբնակ բնակավայրեր՝ 439 տուն հայ բնակչությամբ (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 4): Ծանոթագրության կարգով տեղեկագրում նշվում է, որ գավառակի հիմնականում տաճկաբնակ կամ քաղղեաբնակ (ասորի) այլ 50-ի մոտ գյուղերի մեջ էլ կան 1-2-ական տուն հայեր, որոնք չեն հաշվառվել և չեն ընդգրկվել ցուցակում⁹²:

Ըստ Սղերդի առաջնորդարանի 1913 թ. վիճակացույցի (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար) տվյալների՝ Էրուհի գավառակի հաշվառված 26 հայաբնակ գյուղերում կար 508 տուն հայ⁹³:

Թեոդիկը գավառակի համար հաղորդում է 670 տուն հայ, որից 600-ը գավառակի կենտրոն՝ Դէի բնակավայրում (տե՛ս Աղյուսակ 4): Չի կարելի բացառել, որ վերջին թիվը գուցե արտացոլում է նաև գավառակի բազմաթիվ՝ հիմնականում քրդաբնակ, գյուղերի հայկական փոքրաթիվ բնակչության հավաքական թվաքանակը⁹⁴:

Հիմք ընդունելով վերոնշյալ տվյալները՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ Էրուհի գավառակի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի հիմքում կարելի է դնել Սղերդի առաջնորդարանի 1913 թ. հաշվառման (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար) տվյալը՝ 26 հայաբնակ բնակավայր, 508 տուն հայ (կլորացված թիվ՝ 510 տուն), որից մոտավորապես կեսը՝ գավառակի կենտրոն՝ Դէի բնակավայրում⁹⁵: Ինչպես և Սղերդի գավառի այլ վարչական միավորների պարագայում, մեկ տան վրա հաշվելով 9 շունչ՝ գտնում ենք, որ գավառակում Մեծ եղեռնի նախօրյակին կար շուրջ 4.600 շունչ հայ բնակչություն⁹⁶:

92 «Վիճակագրութիւն Սղերդի և իր թեմերուն», ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1856, թ. 5:

93 Հաշվարկը կատարվել է մեր կողմից ըստ մարդահամարի ցուցակի (տե՛ս ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 71-74): Գևորգյանը և Փաբուջյանը նույնպես ներկայացնում են մարդահամարի ցուցակը, սակայն անհասկանալի պատճառներով, որպես գավառակի հայ բնակչության հանրագումարային տվյալ նշում են 20 հայաբնակ բնակավայր, 377 տուն, 3.393 շունչ, ինչը չի բխում ուսումնասիրողների կողմից բերված ըստ բնակավայրերի տվյալներից (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 60, 506):

94 Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան*, 93-94, 539:

95 Ըստ Մեծ եղեռնը վերապրած-փախստական Մարտիրոս Հովսեփի Կերոյանցի վկայության՝ Դէիը 1915 թ. ուներ 300 տուն, 2.500 հայ բնակչություն (տե՛ս *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ*, 107):

96 Օսմանյան վիճակագրության տվյալներով՝ 1914 թ. Էրուհի գավառակն ուներ 1.890 շունչ հայ բնակչություն (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 174):

Աղյուսակ 4. Էրուիի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր ⁹⁷	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1913-1914 թթ. Հայոց Պատրիարքարան	1914 թ. Թեոդիկ
		Տոն	Տոն	Տոն
1	Այն	-	2	-
2	Գէօղ	-	2	-
3	Դեհ ըխլին	8	25	-
4	Զախօ	8	-	-
5	Զվակատեշաւ (Զըրնկ)	4	-	1
6	Թանչէ	-	3	-
7	Լողէ	12	5	-
8	Կօվէշէր	-	5	-
9	Կետար	-	3	-
10	Կիրտարէ	-	2	-
11	Մահրէ	-	8	-
12	Մայտանէ օլիան	3	5	3
13	Շավիա	-	5	-
14	Շերքքան	5	5	-
15	Շէրնախ	30	40	32
16	Շէխ Շահալի	-	3	-
17	Շքաքա	-	3	-
18	Պէնաստ	-	5	2
19	Պէրէվանա	-	5	-
20	Սավատի	-	10	3
21	Սիբրան	-	4	1
22	Տեշթա-լէլա	5	10	2
23	Տէհ	260	268	600
24	Տէհմէզին	-	14	-
25	Տերա-թէյթէնի	-	5	-
26	Տէրա-ֆոյզանի	-	6	-
27	Բամորան	4	40	-
28	Ֆինտիք	100	25	26
	Ընդամենը	439	508	670

97 Էրուիի բնակավայրերի ցանկը տե՛ս նաև Բաղայան, «Արևմտյան Հայաստանի պատմա-ժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրին: Մաս յոթերորդ», XXVIII-XXIX:

V.5. Բարվարի գավառակ

Վ. Քինեի տվյալներով (1891 թ.)՝ Բարվարի գավառակն ուներ 3.800 շունչ հայ բնակչություն⁹⁸:

Վ. Մանսկի (1899 թ., Վ. Քինեի տվյալի հիման վրա)՝ 4.180 շունչ հայ⁹⁹:

Հայկական սկզբնաղբյուրները Մեծ եղեռնի նախօրյակին Բարվարի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հաղորդում են հետևյալ տվյալները.

1. 1902 թ. Սղերդի առաջնորդարան՝ 11 հայաբնակ բնակավայր, 263 տուն (բաշխումն ըստ բնակավայրերի տն Աղյուսակ 5)¹⁰⁰:
2. Ա-Դո (1909 թ.)՝ 18 հայաբնակ բնակավայր, 539 տուն, 3.773 շունչ (տն Աղյուսակ 5)¹⁰¹:
3. Սղերդի առաջնորդարանի 1913 թ. վիճակացույց (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամար)՝ 14 հայաբնակ բնակավայր, 282 տուն հայ (տն Աղյուսակ 5)¹⁰²:

Սղերդի առաջնորդարանի՝ 1913 թ. վիճակացույցի տվյալների համեմատությունը ցեղասպանությունը վերապրածների վկայություններում առկա տվյալների հետ ցոյց է տալիս, որ դրանք իրարից էականորեն չեն տարբերվում¹⁰³: Հաշվի առնելով վերոնշյալը՝ որպես Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի 14 հայաբնակ բնակավայրի համար հայ բնակչության թիվ ընդունում ենք 282 տուն, 2.538 շունչ¹⁰⁴ (կլորացված թիվ՝ 280 տուն, 2.550 շունչ)¹⁰⁵:

98 Cuinet, *La Turquie d'Asie*, 615:

99 Маевский, *Военно-статистическое описание*, 222:

100 ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1856, թ. 5-6 (բնակավայրերի ցանկ), թ. 12 (հանրագումարային աղյուսակ):

101 Ա-Դո, *Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները*, 155: Հեղինակը հաղորդում է, որ տեղեկությունները քաղել է Աղթամարի կաթողիկոսարանի տեղեկագրից: Ա-Դոյի վիճակագրական ցանկից հանել ենք Էրուիի գավառակի Դեհ գյուղի տվյալը (200 տուն): Հաշվի առնելով XX դարի սկզբներին վերաբերող այլ ցուցակների համեմատ Ա-Դոյի ցուցակում առկա հայ բնակչության ավելի մեծ թիվը՝ չենք բացառում, որ նրա տվյալները վերաբերում են 1880-ական թթ. սկզբներին՝ արտացոլելով նախքան համիդյան կոտորածների իրողությունները:

Բարվարի գավառակի համար Ա-Դոյի տվյալները Բիթլիսի նահանգի հայ բնակչության թվաքանակի իրենց հաշվարկներում օգտագործել են Կ. Սատունին (տե՛ս Սատունի, *Պատմություն Տարսնի աշխարհի*, 362) և Ս. Կարայանը (տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 213-214): Վերջինիս հաշվարկով՝ գավառակը ցեղասպանության նախօրյակին ուներ 373 տուն, 2.611 շունչ հայ բնակչություն (նույն տեղում, 214):

102 ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 69-71:

103 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ*, 108-116:

104 Գևորգյանն ու Փաբոջյանը, հաշվելով մեկ տան վրա 9 շունչ, գավառակի համար նույնպես ստացել են 2.538 շունչ հայ բնակչություն (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 505):

105 Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալների՝ գավառակում բնակվում էր 1.326 հայ (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 174):

Աղյուսակ 5. Բարվարի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1909 թ. Ա-Դ-օ	1913 թ. Սղերդի առաջնորդարան		1914 թ. Թ-եռդիկ
		Տոն	Տոն	Տոն	Շունչ ¹⁰⁶	Տոն
1	Ագուկ	20	20	20	182	10
2	Աստան Վերին	-	15	-	-	-
3	Աստան Ներքին	-	10	-	-	-
4	Ատել	-	50	-	-	-
5	Բօրմ	-	80	-	-	-
6	Դէմթաղ	-	20	-	-	-
7	Էլքէֆ	5	15	8	72	1
8	Իսախէր	25	30	20	180	25
9	Կեփ	-	12	-	-	-
10	Հալաստ	-	-	-	-	5
11	Հէշշէդ	8	15	8	72	-
12	Մալիք	30	25	25	225	19
13	Շէքամէր	-	-	8	75	-
14	Պալիճան	20	15	18	162	15
15	Պերօզ	-	20	-	-	-
16	Ռապանօթան	15	20	5	45	8
17	Սանօ	5	5	3	27	4
18	Սիմ	-	-	6	51	-
19	Սերիէլ	-	-	3	27	-
20	Վէլաս	25	30	30	270	12
21	Տէշտիք	10	7	8	70	11
22	Օզիմ	200	150	120	1,080	101
	Ընդամենը	363	539	282	2.538	211

VI. Հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

Այսպիսով, Սղերդի առաջնորդարանի 1913 թ. վիճակագրույցի (Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար) և նույն ժամանակաշրջանին վերաբերող այլ վիճա-կագրական աղբյուրների տվյալների համադրման և վերլուծության միջոցով մեր կողմից կատարված հաշվարկը ցույց է տալիս, որ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառն ունեցել է 143 հայաբնակ բնակավայր՝ շուրջ 2.480 տուն, 22.350 շունչ հայ բնակչությամբ (ըստ գավառակների հայաբնակ բնակավայրերի, հայ տների և շնչերի բաշումը տես Աղյուսակ 6)¹⁰⁷:

106 Շնչերի թիվն ըստ Գևորգյանի և Փարոջյանի:

107 Հաշվարկի սահմանային սխալի գործակիցը մեր կարծիքով չի կարող գերազանցել +/-5%-ը:

Աղյուսակ 6. Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին ըստ գավառակների

№	Վարչական միավոր	Հայաբնակ բնակավայրեր	Տուն	Շունչ
1	Սղերդի գավառակ	10	550	4.950
2	Շիրվանի գավառակ	17	200	1.800
3	Խարզանի գավառակ	76	940	8.450
4	Էրուիի գավառակ	26	510	4.600
5	Բարվարի գավառակ	14	280	2.550
	Ընդամենը Սղերդի գավառ	143	2.480	22.350

Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի համար մեր կողմից հաշվարկված թիվը (22.350 շունչ) շուրջ երկու անգամ բարձր է 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալից (11.240 շունչ), շուրջ 25%-ով՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության¹⁰⁸ տվյալից (18.000 շունչ) և մոտավորապես համապատասխանում է 1913 թ. Սղերդի առաջնորդարանի տվյալների հիման վրա ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանի և Փ. Փարուջյանի կատարած հաշվարկի արդյունքին (տես Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին ըստ տարրեր տվյալների

№	Վարչական միավոր	1911 թ. Մաղաքիա արք. Օրմանյան	1912 թ. Հայոց պատրիարքարան	1914 թ. օսմանյան	1913 թ. Սղերդի առաջնորդարան (1913-1914 թթ. Հայոց պատրիարքարանի մարդահամար)/Ռ. Գևորգյան, Փ. Փարուջյան	Մեր հաշվարկը
-	-	Շունչ	Շունչ	Շունչ	Շունչ	Շունչ
1	Սղերդի գավառակ	-	-	2.630	4.437	4.950
2	Շիրվանի գավառակ	-	-	1.169	2.853	1.800
3	Խարզանի գավառակ	-	-	4.225	8.343	8.450
4	Էրուիի գավառակ	-	-	1.890	3.393	4.600
5	Բարվարի գավառակ	-	-	1.326	2.538	2.550
	Ընդամենը	25.500	18.000	11.240	21.564	22.350

Բացի հայերից, Սղերդի գավառում բնակվում էր մոտ 8.000 ասորի (նեստորական

108 Ժամանակագրական առումով Մեծ եղեռնի թվականին առավել մոտ կանգնած տվյալն է, որը շրջանառության մեջ է դրվել Հայոց պատրիարքարանի կողմից:

և քաղդեացի կաթոլիկ եկեղեցիների հետևորդներ), 66.000 մուսուլման (ճշշող մեծամասնությունը՝ քրդեր), ինչպես նաև 1.000 եզդի¹⁰⁹, ընդամենը՝ մոտ 100.000 մարդ: Այսպիսով, հայերը կազում էին Սղերդի գավառի ընդհանուր բնակչության մոտ 20-22%-ը, իսկ քրիստոնեադավան ասորիների հետ՝ մոտ 30%-ը:

Հայոց ցեղասպանության ընթացքում Սղերդի գավառի հայ և ասորի բնակչությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց, եղեռնը վերապրեցին միայն տեղի հայության խլյակներ¹¹⁰:

Հավելված 1. Բիթլիսի նահանգի քարտեզ (Աղբյուր՝ «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ.2, Երևան, 1976, էջ 437)



109 Ըստ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության Աշխարհագրական բաժնի կողմից 1919 թ. դեկտեմբերին պատրաստված վիճակագրության (տե՛ս Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919," 104):

110 Հայոց ցեղասպանության ընթացքում Սղերդի գավառի հայ բնակչության կոտորածի մասին տե՛ս Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London-New York: I.B. Tauris, 2011), 339-340, ասորիների կոտորածի մասին՝ Joseph Yacoub, *Year of the Sword: The Assyrian Christian Genocide, A History* (Oxford: Oxford University Press, 2016), 116-117:

Robert A. Tatoyan,
PhD in History

**ARMENIAN POPULATION NUMBERS IN THE SANDJAK OF SGHERT IN THE
BITLIS VILAYET OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE
ARMENIAN GENOCIDE**

SUMMARY

Key words: Armenian Genocide, Armenian Question, Bitlis Vilayet, Sanjak of Sghert, Armenian population, statistics, demography.

The article attempts to enumerate of the Armenian population of the Sanjak of Sghert in the Bitlis vilayet of Western Armenia on the eve of the Armenian Genocide.

For this purpose 1) a general overview of the history of the administrative-territorial division of the sanjak is presented for the period preceding the Armenian Genocide (1878-1914), 2) the main Ottoman, Armenian, Russian and Western primary statistical sources on the size of the Armenian population of the sanjak are collated and presented for the period 1878-1914 and a general description of these data is given, 3) statistical data on the Armenian population have been collated and compared according to the small administrative-territorial units – the kazas of the Sghert sanjak, paying particular attention to primary statistical sources containing data on the distribution of the Armenian population by settlements. Our own calculations of the size of the Armenian population of the sanjak were made on the basis of, and through, comparison and comparative analysis of these data.

According to our calculations, based on the methodology mentioned above, on the eve of the Armenian Genocide there were 143 Armenian settlements in the Sghert sanjak, with about 2,480 Armenian households or 22,350 persons, including: the kaza of Sghert - 10 Armenian settlements, 550 households or 4,950 persons, the kaza of Shirvan - 17 Armenian settlements, 200 households or 1,800 persons, the kaza of Kharzan - 76 Armenian settlements, 940 households or 8,450 persons, the kaza of Erouh - 26 Armenian settlements, 510 households or 4,600 persons and the kaza of Bervari - 14 Armenian settlements, 280 households or 2,550 persons.

**ЧИСЛЕННОСТЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ САНДЖАКА СХЕРТ
БИТЛИССКОГО ВИЛАЙЕТА ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ПРЕДДВЕРИИ
ГЕНОЦИДА АРМЯН**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Армянский вопрос, Битлисский вилайет, санджак Схерт, численность армянского населения, статистика, демография.

В статье осуществлена попытка подсчета численности армянского населения санджака Схерт Битлисского вилайета Западной Армении накануне Геноцида армян.

С этой целью 1) был представлен общий обзор истории административно-территориального деления санджака за период, предшествующий Геноциду армян (1878-1914 гг.), 2) сгруппированы и представлены данные основных османских, армянских, российских и западных статистических первоисточников по численности армянского населения санджака за период 1878-1914 гг., дана общая характеристика этих данных, 3) были сгруппированы и сопоставлены статистические данные по армянскому населению по мелким административно-территориальным единицам – казам санджака, обращая особое внимание на статистические первоисточники, содержащие данные по распределению армянского населения по населенным пунктам, на основе и посредством сопоставления и сравнительного анализа этих данных осуществлен собственный подсчет численности армянского населения санджака.

Согласно нашему посчету на основе вышеуказанной методики, накануне Геноцида армян в санджаке Схерт было 143 армянонаселенных пункта, где было около 2.480 домов, 22.350 душ армян, в том числе: каза Схерт – 10 армянонаселенных пунктов, 550 домов и 4.950 душ, каза Ширван – 17 армянонаселенных пунктов, 200 домов, 1.800 душ, каза Харзан – 76 армянонаселенных пунктов, 940 домов, 8.450 душ, каза Эрух – 26 армянонаселенных пунктов, 510 домов, 4.600 душ и каза Бервари – 14 армянонаселенных пунктов, 280 домов, 2.550 душ.

REFERENCES

Alp'oyachean, Arshak. «Առաջնորդական վիճակներ», 1908 *Ընդարձակ Օրացոյց Ա. Փրկչայն հիւանդանոցի Հայոց* [“The Dioceses” in 1908 *Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital*]. Constantinople, 1908: 265-354;

Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1. [Armenian Concise Encyclopedia, Vol.1]. Yerevan: НКНН publication, 1990;

Badalyan, Gegham. «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ: Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան գավառները» [The Historical and Demographic Description of Western Armenia on the Eve of the Armenian Genocide]. *Vem Pan-Armenian Journal* 4 no. 56 (2016): I-XXXI;

Badalyan, Gegham. «Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերը Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ» [The Statistical Materials of Varazdat Teroyan on the Settlements of Western Armenia]. *Bulletin of the Armenian Archives* 1 no. 105 (2005): 212-220;

Galstyan, Haykazun. «Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը՝ ըստ Վիթթալ Քինեի վիճակագրության» [The National Composition of the Population of the Western Armenia according to the Statistics of Vital Cuinet]. *The Countries And Peoples of the Near and Middle East, XII, Turkey* (Yerevan), 1985: 59-79;

Gippius, A. I. *Статистическія таблицы вилайетовъ Турецкой имперіи, ближайшихъ къ Закавказью* [Statistical Tables of Vilayets of Turkish Empire Adjacent to Transcaucasia]. Tiflis: Glavnonachal'stw, 1889;

Kostandyan, Emma. «Վան-Վասպուրականի հասարակական-մշակութային գործիչները 19-րդ դարի II կեսին» [The Public and Cultural Figures of Van-Vaspourakan of the Second Half of the 19th Century]. *Qristonya Hayastan* (Etchmiadzin), December, 2010;

M. A. *Թխրքիահի հայերն եւ իրենց դրացիներ* [Armenians of Turkey and Their Neighbours]. Marcelle: M. P'ort'ugalian publ., 1890;

Mayevsky, Vitalii. *Военно-статистическое описание Ванскаго и Битлискаго вилаетовъ*. Статистический очеркъ [Military and Statistical Description of Van and Bitlis Vilayets]. Tiflis: Tipografia shtaba Kavkazskogo voennogo okruga, 1904;

Ormanean, Maghakia. *Հայոց եկեղեցին և իր պարմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը* [The Armenian Church: Her History, Doctrine, Rule, Discipline, Liturgy, Literature and Present Condition]. Constantinople: V ev H. Tér-Nersésian, 1911;

Partizaks'i, Vahan Vardapet. *Խօսք զՀայրենենաց* [Word on Homeland], 2nd edition. Constantinople, 1911;

Petoyan, Vardan. *Սասունի բարբառը* [The Dialect of Sasoun]. Yerevan, Armenian SSR, Academy of Sciences, 1954;

Sasuni, Karo. *Պարմություն Տարօնի աշխարհի* [History of Taron]. Beirut: Taron Turubyan Union, 1956;

Solanelli, K. «Տեսություն ի վերայ գաւառաց Հայաստանի» [Survey of the Armenian Regions]. *Bazmavep* (Venice), vol. 40, 1882: 289-298;

T'at'oyan, Robert. *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին* [The Question of Western Armenian Population number in 1878-1914]. Yerevan: AGMI, 2015;

T'at'oyan, Robert. «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-

1920 թթ.)» [The Questions of Number of Western Armenians and Ethnic Composition of Population of Western Armenia at the Paris Peace Conference in 1919-1920]. *Journal of Genocide Studies* 4 no. 1, (2016): 44-82;

T'at'oyan, Robert. «Մի քանի թվեր». Ա-Դօյի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» ուսումնասիրությունը (1912 թ.) և Հայկական հարցի վերարծարծման ժամանակաշրջանում արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ հայկական մամուլում ծավալված քանազանը» [“A couple of figures.” The Study of A-Do “Van, Bitlis and Erzeroum vilayets” (1912) and Western Armenian Population Figure Debate in the Armenian Press during the Period of Armenian Reform Package Negotiations in 1912-1914]. *Journal of Genocide Studies* 5 no. 1 (2017): 32-64;

T'at'oyan, Robert. «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի քնակչության էթնիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կեսերին Հայկական հարցի սրման ժամանակաշրջանում» [The Questions of Number of Western Armenians and the Ethnic Composition of the Population of Western Armenia During the Period of the Aggravation of the Armenian Question in the mid-90s of the XIX century]. *Journal of Genocide Studies* 4 no. 2 (2016): 7-42;

T'eodik. *Ամենուն տարեցոյցը* [Calendar for Everyone]. Constantinople, 1922;

T'eodik, *Գողգոթա հայ հոգևորականությունը և իր հօտին 1915 աղետալի տարին* [Golgotha of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. New York, 1985;

T'evkants', Aristakes. Այցելություն ի Հայաստան 1878 թ. [Journey to Armenia in 1878]. Yerevan: ArmSSR, Academy of Sciences, 1985;

T'sots'ikian, Sargis. *Արևմտահայ աշխարհ* [The World of Western Armenia]. New York: A. I. Léilekian publ., 1947;

1904 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան Հիանդանցի Հայոց [1904 Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital]. Constantinople, 1904;

«Անքատանազիր-Տեղեկագիր Բաղէշի կուսակալութեան» [Accusatory Report of Bitlis Vilayet]. *Haigazian Armenological Review* 15 (1995): 530-545;

«Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում» [The Armenian Church in Turkey]. Ararat (Etchmiadzin), February, 1896: 87-92;

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, Հայտոր II, Բիթլիսի նահանգ, գլխավոր խմբ. Ամատունի Վիրաբյան [The Armenian Genocide in the Ottoman Turkey. The Testimonies of Survivors. Collection of documents, vol. II. Vilayet of Bitlis, ed. Amatuni Virabyan]. Yerevan: Armenian National Archive, 2012;

«Մասիս» [Masis], (Constantinople), November 15/27, 1880;

«Մասիս» [Masis], (Constantinople), February 5/17, 1881;

«Նամակ Սղերտից» [Letter From Sghert]. *Arzagang Literary and Political Weekly* (Tiflis), April 18, 1882, № 9: 135-137.

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՔՐԵԱԿԱՆԱՅՈՒՄ¹

*Բանալի բառեր*² երեխաների բռնի տեղափոխում, Յեղասպանության կոնվենցիա, Ռ-աֆայել Լեմկին, Հայոց ցեղասպանություն, մշակութային ցեղասպանություն, կենսաբանական ցեղասպանություն:

Երեխաների բռնի տեղափոխումը «Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ցեղասպանական հինգ գործողություններից մեկն է: Այն արգելում է «երեխաների բռնի տեղափոխումը մարդկային մի խմբից մյուսը»՝ ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: Գտնվելով մշակութային և կենսաբանական ցեղասպանությունների սահմանագծին՝ երեխաների բռնի տեղափոխումը բավական յուրահատուկ կիրառություն ունի ցեղասպանական մյուս գործողությունների համեմատ, քանի որ այն ձևավորում է թիրախավորված խմբի նոր ինքնություն՝ ոչնչացնելով նախորդը:

Յեղասպանության կոնվենցիայի նպատակը ոչ միայն ազգային, էթնիկական, ցեղային և կրոնական խմբերի դեմ բռնության ծայրահեղ դրսևորումների պատիժն է, այլև խմբի պաշտպանությունը: Եվ ինչպես հստակորեն նշված է Միջազգային իրավունքի հանձնաժողովի բացատրության մեջ, «երեխաների բռնի տեղափոխումը բավական լուրջ հետևանքներ կարող է ունենալ խմբի կենսունակության վրա»:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել երեխաների բռնի տեղափոխման հասկացության ձևավորման հիմքերը, Ռ-աֆայել Լեմկինի կողմից երեխաների բռնի տեղափոխման հասկացության ընկալումն ու առաջ քաշումը, ցեղասպանության կոնվենցիայի մեջ ընդգրկման որոշ հանգամանքները և Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո երեխաների բռնի տեղափոխման հոդվածի կիրառումը միջազգային և ազգային դատարանների կողմից:

Ներածություն

«Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի (այսուհետև՝ Յեղասպանության կոնվենցիա) ընդունումից հետո «երեխաների բռնի տեղափոխման» հոդվածը երկար ժամանակ մնաց թղթի վրա, և հետագայում որոշ հետազոտողների կողմից որակվեց որպես իրավական անախրոնիզմ² կամ էնիգմատիկ, քանի որ այն Յեղասպանության կոնվենցիային

1 Հոդվածը ստացվել է 17.02.2020 և ընդունվել տպագրության՝ 23.04.2020:

2 Երևույթի, անձի կամ առարկայի ներկայացում պատմության համատեքստում, որը կարող էր տեղի ունեցած ջլիններ, տե՛ս Kurt Mundorff, “Other Peoples’ Children: A Textual and Contextual Interpretation of the Genocide Convention, Article 2(e),” *Harvard International Law Journal* 50, no. 1 (2009): 89-90.

ավելացվել էր «վերջին պահին», առանց էական քննարկումների³, կամ համարվեց կոնվենցիայի ընդհանուր գաղափարից դուրս, քանի որ ցեղասպանությունների ժամանակ ոճրագործները ոչնչացվող խմբի երեխաներին չէին կարող դիտարկել որպես «ապրելու ենթակա»⁴: Սակայն, հաշվի առնելով պատմության ընթացքում, իսկ ամենակարևորը՝ 20-րդ դարում Հայոց ցեղասպանության և Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նացիստների կողմից երեխաների բռնի տեղափոխման դեպքերը, այս պնդումներն առնվազն անհասկանալի են թվում⁵: Չնայած հոդված 2(ե) բավական քիչ քննարկվեց Ցեղասպանության կոնվենցիայի ընդունման ժամանակ, սակայն այն ձևակերպվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անմիջապես, երբ շատ թարմ էին գերմանացիների կողմից երեխաների առևանգման դեպքերի մասին հիշողությունները և, բացի այդ, դատավարություններ էին ընթանում այդ դեպքերի մասով ինչպես Նյուրնբերգում, այնպես էլ Լեհաստանի և Մեծ Բրիտանիայի ազգային դատարաններում: Ինչևէ, 1997 թ. Ավստրալիայի Մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների հանձնաժողովի կողմից «Վերադարձնելով նրանց տուն. Տեղաբնիկ և Թորես կղզու բնակիչների երեխաներին իրենց ընտանիքներից բաժանելու ազգային զեկույցի» հրապարակումից հետո, ցեղասպանական այս գործողության հանդեպ հետաքրքրություն առաջացավ⁶:

Վերադառնալով Ցեղասպանության կոնվենցիային պետք է նշել, որ երեխաները բավական կարևոր դերակատարություն ունեն կոնվենցիայում: Ցեղասպանության կոնվենցիայում նշված ցեղասպանական գործողություններից երկուսն ակնհայտ վերաբերում են երեխաներին՝ հոդված 2(դ) «այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը» և 2(ե) «երեխաների բռնի տեղափոխումը մարդկային մի խմբից մյուսը»։ մյուս երեք գործողությունների դեպքում կապն ավելի միջնորդավորված է: Ուսումնասիրելով Ցեղասպանության կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքները (*travaux préparatoires*) և կոնվենցիայի հեղինակների մտադրությունները՝ հանգում ենք նրան, որ Ցեղասպանության կոնվենցիան նպատակ ուներ պաշտպանելու ազգային փոքրամասնություններին⁷, որոնք ավելի «կայուն» և մշտական ձևավորված խմբեր էին և որոնց անդամակցությունը ժառանգական էր՝ հիմնականում որոշվում էր մարդու ծնունդով, այլ ոչ թե

3 William Schabas, *Genocide in International Law* (Cambridge: Cambridge University Press, 2009), 201:

4 Lawrence LeBlanc, *The United States and the Genocide Convention* (Durham and London: Duke University Press, 1991), 115.

5 Ruth Amir, *Twentieth Century Forcible Child Transfers. Probing the Boundaries of the Genocide Convention* (London: Lexington Books, 2019); Mundorff, “Other Peoples’ Children,” 63-65.

6 Մանրամասն տե՛ս, https://www.humanrights.gov.au/sites/default/files/content/pdf/social_justice/bringing_them_home_report.pdf, դիտվել է 07.02.2020:

7 Հիմնականում Առաջին համաշխարհային պատերազմից հետո կնքված փոքրամասնությունների վերաբերյալ պայմանագրերը դարձան այն նախատիպը, որոնց հիման վրա հետագայում պայքար ծավալվեց ցեղասպանության հանցագործության քրեականացման համար: Տե՛ս Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress* (Washington: Carnegie Endowment for International Peace, 1944), 90-93.

ընտրությամբ⁸, և նրանց մասնակցությունը այդ խմբերին շարունակական էր և իրենց կամքից անկախ⁹, ի տարբերություն «փոփոխվող» խմբերի, որոնց անդամագրումը տեղի է ունենում անհատի ընտրությամբ (օրինակ քաղաքական կամ տնտեսական խմբերը¹⁰): Միջազգային իրավունքի հանձնաժողովն¹¹ իր Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ հանցագործությունների օրենսգրքի նախագծի մեկնաբանություններում (commentary to the Draft Code of Crimes Against the Peace and Security of Mankind) նշում է, որ խումբն որպես այդպիսին նշանակում է «առանձին և հստակ սուբյեկտ...»¹²:

Հետևաբար, երեխաները մեծ դեր են կատարում խմբի շարունակականության ապահովման գործում, և խմբում մասնկածնության կանխումը և երեխաների բռնի տեղափոխումը կարող են հանգեցնել խմբի ոչնչացմանը:

Այսպիսով՝ երեխաների բռնի տեղափոխումը մարդկային մի խմբից մյուսը ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ ցեղասպանական հինգ գործողություններից մեկն է¹³: Հոդվածի ներառումը Յեղասպանության կոնվենցիայի մեջ երկու հիմնական փաստարկ ուներ. հաշվի էր առնվում երեխաների խոցելիությունը, նրանց «կախվածությունը, ապագայությունը (որպես խմբի շարունակություն) և հարմարվողականությունը (նոր պայմաններին)» և, երկրորդ, երեխաների տեղափոխման քայքայիչ ազդեցությունը խմբի կենսունակության ապահովման վրա¹⁴:

Յեղասպանության կոնվենցիայի 2(ե) կետը ենթադրում է տվյալ խմբի երե-

8 Պետք է նշել, որ վերջերս միջազգային և ազգային տրիբունալները մեծապես փոխել են Յեղասպանության կոնվենցիայով պաշտպանվող խմբերի ներկայիս ընկալումները: Առկա են հետևյալ մոտեցումները. օբյեկտիվ (*Prosecutor v. J.-P. Akayesu*) և սուբյեկտիվ (*Nchamihigo, Bagilishema, Kayishema and Ruzindana*): Առաջին մոտեցման համաձայն խմբերը կայուն են, և անհատների պատկանելիությունը խմբին ի ծնե է, մշտական և անփոփոխ: Երկրորդ մոտեցման համաձայն՝ խումբը գոյություն ունի այնքան, որքան անդամներն իրենց համարում են տվյալ խմբի անդամ (ինքնանույնականացում) կամ ցեղասպան ոճրագործի կողմից ընկալվում են որպես խումբ (նույնականացում ուրիշի կողմից): Դատարանները կիրառել են սաև այսպես կոչված խառը մոտեցումը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվը միաժամանակ, ինչպես օրինակ Միջազգային քրեական դատարանը: Խմբերի մասին մանրամասն տե՛ս Schabas, *Genocide in International Law*, 117-171:

9 Mundorff, “Other Peoples’ Children,” 88-90.

10 *Prosecutor v. J.-P. Akayesu*, Trial Chamber 1998, paras 511; Agnieszka Szpak, National, Ethnic, Racial, and Religious Groups Protected against Genocide in the Jurisprudence of the ad hoc International Criminal Tribunals, *European Journal of International Law* 23, no. 1 (2012):155-173; Mundorff, “Other Peoples’ Children,” 89-90.

11 Միջազգային իրավունքի հանձնաժողովը ստեղծվել է ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի կողմից 1947, որի մանդատը բխում էր կազմակերպության Կանոնադրության 13 (1) (ս) հոդվածից և որի նպատակն էր իրականացնել ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ միջազգային իրավունքի զարգացման և կողիֆիկացման նպատակով:

12 *The International Law Commission*, U.N. Doc. A/51/10. Report of the International Law Commission on the work of its forty-eighth session (6 May-26 July 1996), 45.

13 Յեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիա http://nww.Un.Am/Res/Un%20treaties/flii_1.Pdf:

14 Amir, *Twentieth Century Forcible Child Transfers*, 39.

խաների բաժանում իրենց խմբի մյուս անդամներից և այլ խմբի հսկողության տակ դնելը: Միաժամանակ, հողվածը որևէ պայման չի դնում, որով տեղափոխված երեխաները պետք է ամբողջովին ինտեգրվեն մյուս խմբին, և միայն վերջինիս վերահսկողության տակ գտնվելը համարվում է բավարար հողված 2 (ե)-ի խախտում արձանագրելու համար¹⁵: Հողվածն, ինչպես նաև Ցեղասպանության կոնվենցիայի նախապատրաստական նյութերը չեն նշում նաև որևէ հստակ ժամանակահատված, որի ընթացքում երեխաները պետք է մնան խմբի վերահսկողության տակ, և այս դեպքում կրկին շեշտը դրվում է ոճրագործի մտադրության վրա, այսինքն՝ երեխաները խմբի վերահսկողության տակ են այնքան ժամանակ, որքան այդ գործողությունը նպատակ է հետապնդում այդ բաժանումով ոչնչացնել տվյալ խումբը¹⁶: Այսինքն՝ մինչև տեղափոխված երեխաները դադարեն իրենց նույնականացնել նախկին խմբի հետ:

Երեխաների բռնի տեղափոխումը ցեղասպանական գործողություններից միակն է, որի ժամանակ ոճրագործները պաշտպանվում են՝ պնդելով, որ գործել են բարեսիրական և երեխաներին փրկելու նպատակներով: Սակայն կարևոր է շեշտել, որ երեխաների բռնի տեղափոխման ժամանակ տվյալ գործողության հետևանքներն ավելի կարևոր են, քան տեղափոխված երեխաներին «օգնելու» «փրկելու», կամ տեղափոխելուց հետո նրանց «լավ վերաբերվելու» դրդապատճառները¹⁷: Հետևաբար, եթե տեղափոխման նպատակը խմբի ոչնչացումն է և երեխաների անջատումը իրենց խմբից և նոր խմբում նրանց ինտեգրումը այս համատեքստում է, ապա «փրկության», «պաշտպանության», «լավ վերաբերելու» և նմանատիպ այլ իրողություններ կարևոր չեն:

Հատկանշական է, որ Նյուրնբերգյան դատավարություններից մեկի ժամանակ, երբ քննվում էին նացիստների կողմից երեխաների առևանգման դեպքերը, հատուկ անդրադարձ կատարվեց ոճրագործների կողմից այդ երևույթը որպես փրկություն ցույց տալուն և այն հանգամանքին, թե այդ երեխաներին որքան լավ են վերաբերվել ի տարբերություն մյուս երեխաների, որոնք չէին ընտրվել գերմանականացվելու նպատակով: Սակայն դատախազի պնդմամբ «լավ վերաբերվելու թեզը չի կարող պաշտպանություն լինել երեխա առևանգողի համար. ավելին, մենք պետք է ինքներս մեզ հարցնենք, թե ինչու՞ են լավ վերաբերվել: Պատասխանը պարզ է. այս անմեղ երեխաները առևանգվել են միայն նացիստական գաղափարախոսությամբ ներարկվելու նպատակով և դառնալու «լավ» գերմանացիներ: Սա ոչ միայն չի մեղմացնում, այլ ավելի է խորացնում հանցագործությունը»¹⁸:

Հայոց ցեղասպանության ժամանակ հայ երեխաների բռնի տեղափոխումը թուրք գործիչների կողմից ևս ներկայացվում էր որպես փրկություն¹⁹:

15 Gerhard Werle, *Principles of International Criminal Law* (The Hague: TMC Asser Press, 2005), 203.

16 Mundorff, "Other Peoples' Children," 91.

17 *Trials of War Criminals before the Nuremberg Military Tribunals under Control; Council Law no. 10, Nuremberg, October 1946 -April 1949*, Vol. 4 (Washington DC: United States Government Printing Office, 1949), 675-676.

18 Նույն տեղում, 1074:

19 St' u opինակ Halide Edib, *The Turkish Ordeal: Being the Further Memoirs of Halide Edib* (London: The Century Co., 1928), louisville.edu/a-s/history/turks/Turkish%20Ordeal.pdf, դիտվել է՝ 11.10. 2019:

Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև «բռնի» բառի նշանակության վրա, որը չի ենթադրում պարտադիր ֆիզիկական ուժի կիրառում, և ցանկացած սպառնալիք, այդ թվում նաև ուժի, հարկադրանք կամ պարտադրանք՝ կապված բռնության կիրառման, պատանդ լինելու, հոգեբանական ճնշումների կիրառման, կամ հասցված տրավմայի հետ, ինչպես նաև ուժի կամ իշխանության չարաշահում, ստեղծված բռնության միջավայրից օգտվում, որոնք հանգեցնում են երեխաների տեղափոխմանը համարվում են «բռնի» և ընկնում են հողվածի կիրառության տակ²⁰:

Յեղասպանության հանցագործությունը նույնությամբ ընդգրկվել է նաև Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ, որտեղ առանձնացված են երեխաների բռնի տեղափոխման հանցագործության հետևյալ կետերը. (ա) ոճրագործը բռնի տեղափոխում է մեկ կամ մի քանի անձի, (բ) տվյալ անձը կամ անձինք պատկանում են որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի, (գ) ոճրագործը նպատակ ունի լրիվ կամ մասնակի ոչնչացնել ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, (դ) տեղափոխումը կատարվում է տվյալ խմբից մեկ այլ խումբ, (ե) անձը կամ անձինք 18 տարեկանից փոքր են, (զ) ոճրագործը գիտեր, կամ պետք է իմանար, որ անձը կամ անձինք 18 տարեկանից փոքր են, (է) գործողությունը տեղի է ունեցել նմանատիպ գործողությունների ակնհայտ օրինաչափության համատեքստում կամ գործողությունը ինքնին կարող է հանգեցնել (Յեղասպանության կոնվենցիայով սահմանված) ոչնչացման²¹: Ըստ Միջազգային իրավունքի հանձնաժողովի՝ «երեխաների բռնի տեղափոխումը հատկապես լուրջ հետևանքներ կարող է ունենալ այդ խմբի, որպես այդպիսին, ապագա կենսունակության համար»²²: Երեխաների բռնի տեղափոխումը ցեղասպանական գործողություն է, քանի որ երեխաները հնարավորություն չեն ունենում մեծանալ որպես իրենց խմբի անդամ և որոշ դեպքերում անգամ դառնում են իրենց խմբի թշնամին, ինչը խախտում է խմբի շարունակականությունը և պատճառ դառնում խմբի վերացման համար:

Թեև Յեղասպանության կոնվենցիայում երեխաների բռնի տեղափոխումն ընդգրկվեց որպես *մշակութային ցեղասպանության* մաս, սակայն ինչպես Ռ-աֆայել Լեմկինի, այնպես էլ Յեղասպանության կոնվենցիայի նախապատրաստական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ երևույթը դիտարկվել է նաև որպես *կենսաբանական ցեղասպանություն*, ինչին հակված ենք նաև մենք: Հետազոտող Ռ-ութ Ամիրը նշում է, որ երեխաների բռնի տեղափոխումը Կոնվենցիայի հեղինակների կողմից դիտվում էր որպես ցեղասպանության կենսաբանական մեթոդ, ինչպիսիք են օրինակ մանկածնությունը կանխելու համար հարկադիր արորտները, ստերոիդները, կամ կանանց և տղամարդկանց հարկադիր տա-

20 *The Prosecutor vs. Georges Anderson Nderubumwe Rutaganda* Case No. ICTR-96-3-T, para. 55; *Prosecutor v. Akayesu*, Case ICTR-96-4-T, September 2, 1998, para. 509.

21 *Elements of Crimes*, Published by the International Criminal Court, 2011, at <https://www.icc-cpi.int/resource/library/official-journal/elements-of-crimes.aspx#top>, դիտվել է 13.10.2019:

22 *The International Law Commission*, 46.

րանջատումը²³: Միջազգային իրավունքի հանձնաժողովը նույնպես «երեխաների բռնի տեղափոխումը» համարում է կենսաբանական ցեղասպանություն²⁴: Հարցի շուրջ Լենկինի գնահատականներին կանդիդատնասք ստորև:

Պետք է նշել, որ պատմության ընթացքում եղել են երեխաների բռնի տեղափոխման բազմաթիվ դեպքեր: Հայոց ցեղասպանությունը երեխաների բռնի փոխանցման դասական օրինակ էր. գործընթացը նախապես կազմակերպված էր երիտթուրքական կառավարության կողմից, հետևողականորեն իրականացվում և վերահսկվում էր հայերին ոչնչացնելու հստակ մտադրությամբ՝ հանդիսանալով Հայոց ցեղասպանության կառուցվածքային բաղադրիչը:

Հայ երեխաների բռնի տեղափոխումը և նրանց ձուլումը մուսուլմանական համայնքին երիտթուրքերի կողմից պլանավորվել էր դեռ մինչև տեղահանությունները և իրականացվել տեղահանությունների հենց սկզբից²⁵: Դեռ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում օսմանյան կառավարությունը սկսել էր բացել որբանոցներ, որոնց հեռահար նպատակը առևանգված հայ երեխաներին տեղավորելն էր²⁶: Միաժամանակ, ձևավորվեց մի ամբողջ իրավական համակարգ, որը պետք է կարգավորեր երեխաների բռնի տեղափոխման գործընթացը: Դեռևս 1915 թ-ի հունիսի 26-ին հրաման եղավ հավաքել և որբանոցներում տեղավորել մինչև 10 տարեկան հայ երեխաներին²⁷: Մեկ ամիս անց եղավ նմանատիպ մեկ այլ հրաման, որը ակնհայտ հայտարարվում էր, որ «այն երեխաները, որոնք հայերի տեղափոխման ժամանակ կորբանան, պետք է տեղավորվեն կառավարական որբանոցներում»²⁸: Շուտով այս քաղաքականությունը տարածվեց մինչև 12 տարեկան տղա և մինչև 15 տարեկան աղջիկ երեխաների վրա²⁹:

«Լքված և որբացած» հայ երեխաները բաժանվում էին նաև հայտնի ընտանիքներին որպես աղախիններ, ծառաներ, երիտասարդ աղջիկները բռնի ամուսնացվում էին մուսուլմանների հետ, ենթարկվում սեռական շահագործման: Հայ երեխաներին ուղարկում էին այնպիսի վայրեր, որտեղ հայեր կամ այլ օտարազգիներ չկային, որպեսզի երեխաներին հնարավոր լինել «կրթել և ձուլել տեղի սովորույթներին համապատասխան»³⁰:

Երեխաների տեղափոխման այլ խոշոր ծրագրերը կապված էին 19-րդ դարի կեսերին

23 Amir, *Twentieth Century Forcible Child Transfers*, 67.

24 “Report of the Commission to the General Assembly on the Work of Its Forty-First Session,” *Yearbook of the International Law Commission* Vol. II (United Nations, 1991), 102, at https://legal.un.org/ilc/documentation/english/reports/a_46_10.pdf.

25 Taner Akçam, *The Young Turk's Crime against Humanity* (Princeton: Princeton University Press, 2012), 316.

26 Uğur Ümit Üngör, “Orphans, Converts and Prostitutes: Social Consequences of War and Persecution in the Ottoman Empire, 1914-1923,” *War in History* 19, no. 2 (2012): 176.

27 Նույն տեղում, 176, նաև՝ Akçam, *The Young Turk's Crime Against Humanity*, 316-317:

28 Üngör, “Orphans, Converts and Prostitutes,” 176.

29 Նույն տեղում, նաև՝ Akçam, *The Young Turk's Crime against Humanity*, 325.

30 Ümit Kurt, “Cultural Erasure: The Absorption and Forced Conversion of Armenian Women and Children, 1915-1916,” *Études arméniennes contemporaines* 7 (2016): 79.

Ավստրալիայի, Կանադայի, ԱՄՆ-ի տեղաբնիկ երեխաների «արևմտականացման» կամ «նրանց կրթելու» հետ: 1920-1970-ական թթ. Շվեյցարիան նման ծրագիր էր իրականացնում գնչու երեխաների նկատմամբ: Սկսած 1920-ականներից Սովետական Միությունում իրականացվում էր Սիբիրի տեղաբնիկ երեխաների ռուսականացումը Խորհրդային Միության հեռավոր դպրոցներում³¹:

Մյուս խոշոր ծրագիրը կապված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում «ռասայապես արժեքավոր» երեխաների, հիմնականում լեհ, բոնի տեղափոխմանը բռնազավթված արևելյան տարածաշրջաններից Գերմանիա՝ նրանց գերմանացնելու նպատակով³²: Կրկին լավ մշակված ծրագրի համաձայն՝ այս երեխաներին առևանգում էին և կրթության տալիս հատուկ այդ նպատակով բացված հաստատություններում կամ գերմանական ընտանիքներում: Ծրագիրը տարածվում էր 8-10 տարեկան երեխաների վրա, քանի որ նացիստական առաջնորդները հավատում էին, որ իրական էթնիկ վերափոխումը՝ գերմանացումը, հնարավոր է մինչև այդ տարիքը: Երեխաները ստանում էին գերմանական անուններ և ծննդյան նոր վկայականներ³³: Այս ծրագրի շրջանակներում շուրջ երկու հարյուր հազար լեհ երեխաներ տեղափոխվեցին գերմանական հաստատություններ և ընտանիքներ:

Հատկանշական է, որ Նյուրնբերգի ռազմական տրիբունալի լսումների ժամանակ «երեխաների բոնի տեղափոխումը» դատախազի կողմից որակվեց որպես հանցագործություն, որը գերազանցում էր անգամ «հրեաների զանգվածային սպանությանը, համակենտրոնացման ճամբարներում իրականացված վայրագություններին, բժշկական փորձերին և մոլի նացիստների կողմից տանջանքներին և ոչնչացման գործողություններին»³⁴:

Ռ-աֆայել Լեմկինը և երեխաների բոնի տեղափոխման հողվածը

Յեղասպանություն եզրույթի հեղինակ Ռ-աֆայել Լեմկինը, ով նաև ակտիվորեն մասնակցեց Յեղասպանության կոնվենցիայի մշակմանը, ցեղասպանությունը համարում էր «հին պրակտիկա իր ժամանակակից զարգացումներով»³⁵: Ըստ նրա՝ ցեղասպանությունները թիրախավորում են խմբին որպես ամբողջական օրգանիզմ և անհատին՝ որպես տվյալ խմբի անդամ, այլ ոչ որպես անհատ³⁶: Մյուս կարևոր հանգամանքը, որը պետք է շեշտել, Լեմկինի կողմից խմբի ոչնչացման ընկալումն էր, որը չէր սահմանափակվում միայն խմբի անդամների սպանությամբ կամ անմիջական

31 Nikolai Vakhtin, *Native Peoples of the Russian Far North* (Minority Rights Group, 1992), 36.

32 *Մանրամասն տե՛ս՝ u International Military Tribunal, Trials of War Criminals, selected and prepared by the United Nations War Crimes Commission, Volume XIII* (London: His Majesty's Stationery Office, 1949); *Trials of War Criminals*, 674-687.

33 Նույն տեղում, 674:

34 Նույն տեղում:

35 Lemkin, *Axis Rule in Occupied Europe*, 67.

36 Նույն տեղում, 71, 79.

ոչնչացմամբ, այլ հաշվի էր առնում նաև կյանքին անմիջական չսպառնացող մի շարք գործողությունները, որոնք աստիճանաբար են հանգեցնում խմբի ոչնչացմանը՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական մեխանիզմներով³⁷:

Ըստ Լեմկինի, ազգը, ռասայական կամ կրոնական խումբը գոյության երկու հիմնական փուլ ունեն՝ ներկա գոյություն և շարունակականություն: Անհատի և նշված խմբերի տարբերությունը ոչ միայն քանակի մեջ է, այլ վերջինիս հավաքական ինքնության, որն արտահայտվում է դարերի ընթացքում նշված խմբի շարունակականությամբ և որպես ազգ, ռասայական կամ կրոնական խումբ գոյություն ունենալու ցանկությամբ: Հետևաբար, ցեղասպանությունը կարող է իրականացվել ինչպես ներկա պահին խմբի ոչնչացմամբ, այնպես էլ կանխելով երեխաներ ունենալու կամ իրենց սեփական զավակներին՝ ժառանգներին, մեծացնելու հնարավորությունը³⁸:

Լեմկինը երեխաների առևանգումը համարում էր ցեղասպանության՝ որպես բարդ հանցագործության մաս, որը ոչ միայն սպանում է խմբի անդամներին, այլև թուլացնում է խմբին ժողովրդագրական տարբեր միջոցներով, ինչպիսիք են օրինակ արորաները կամ հակաբեղմնավորիչների հարկադիր կիրառմամբ ծնելիության սահմանափակումը, ստերջացումը, անդամախեղումը և վաղ տարիքում երեխաների առևանգումը³⁹:

Լեմկինը նաև համոզված էր, որ ցեղասպանություն հանցագործության նպատակը ոչ միայն մարմնի պահպանումն է, այլև հոգու, ինչն արտահայտվում էր համաշխարհային քաղաքակրթության մեջ այդ խմբերի ունեցած նպաստով⁴⁰: Այս գաղափարն ավելի ուշ օգտագործվեց դատավոր Ռիչարդի կողմից արաբական աշխարհում Ցեղասպանության կոնվենցիայի առաջխաղացման համար: Մա պնդում էր, որ միայն ֆիզիկական ոչնչացման վրա կենտրոնանալը սահմանափակում է Ցեղասպանության կոնվենցիայի իսկական էությունը, քանի որ խմբի ոչնչացումը կարող է տեղի ունենալ նույնիսկ այն դեպքում, երբ խմբի բոլոր անդամները կենդանի են, և սա այն դեպքն է, երբ «մշակութային ինքնությունը փոխվում է մեկ այլ ինքնությամբ... երբ երեխաները բռնի ուժով տեղափոխվում են մշակութային այլ խումբ»⁴¹:

Լեմկինի արխիվային նյութերի ուսումնասիրությունը փաստում է, որ հեղինակը երեխաների բռնի տեղափոխումը դիտարկել է ցեղասպանության ինչպես մշակութային,

37 Նույն տեղում:

38 Ամերիկյան հրեական պատմական ընկերակցություն (American Jewish Historical Society), այսուհետև՝ ԱՀՊՄ, Ռաֆայել Լեմկինի ժողովածու, տուի 7 փաստաթուղթ 3, Մամակագրություն Էդիթ Բեստերի հետ, էջ 5:

39 Douglas Irvin Erickson, *Raphael Lemkin and the Concept of Genocide* (Philadelphia: University of Pennsylvania Press, 2017), 154; John Cooper, *Raphael Lemkin and the Struggle for the Genocide Convention* (New York: Palgrave Macmillan, 2008), 69-70.

40 Raphael Lemkin, "Les Notions Unies Doivent Voter le Projet sur le Génocide," *Le Monde*, 02 October 1948.

41 *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, ed. Donna Lee Freize (New Heaven and London: Yale University Press, 2013), 131.

այնպես էլ կենսաբանական մեխանիզմների համատեքստում: Այսպես, քանի որ Լեմկինը պայքարում էր նաև Յեղասպանության կոնվենցիայի մեջ մշակութային մեխանիզմների ներմուծման համար, պնդում էր, որ «մշակութային ցեղասպանությունը շատ ավելին է, քան գուտ ասիմիլացիան, որն իրականացվում է ոչ շատ ուժեղ ճնշմամբ»⁴²: այն կարող է իրականացվել նաև երեխաների բռնի տեղափոխման, խմբի մտավորականության ոչնչացման, ազգային լեզուն արգելելու, գրքերի, պատմական և կրոնական հուշարձանների ավերման կամ այլ նպատակներով դրանց օգտագործման միջոցով⁴³:

Իր արխիվային և այլ գրություններում, երեխաների բռնի տեղափոխումը Լեմկինը համարում է հարձակում խմբի կենսաբանական շարունակականության վրա⁴³: Մարդկային խումբն, ըստ Լեմկինի, կենդանի օրգանիզմ էր, և որպես այդպիսին այն կարող էր ոչնչացվել բռնության գործողությունների միջոցով, որը հանգեցնում է անդամների անմիջական մահվանը, կամ խմբի շարունակականությունը խախտող միջոցներով, որոնք աստիճանաբար են բերում խմբի ոչնչացմանը: Առաջին խմբի մեջ են մտնում սպանությունները, խեղումները, համակենտրոնացման ճամբարներում բանտարկումները՝ կյանքին անմիջականորեն սպառնացող պայմաններում: Սա Լեմկինը նշում էր որպես ֆիզիկական ցեղասպանություն: Երկրորդ խմբի մեջ Լեմկինը մտցնում էր հարկադիր ստերջացումը, արքորսները, երեխաների առևանգումը⁴⁴:

Իր ուսումնասիրություններում Լեմկինն անդրադառնում է երեխաների բռնի տեղափոխման օրինակներին, որոնք տեղի էին ունեցել պատմության ողջ ընթացքում: Վաղ քրիստոնեության ժամանակ երեխաները տարվում էին հեթանոսների կողմից՝ հակաքրիստոնեական կրթություն տալու նպատակով: Լեմկինը նշում է նաև հուգենոսների և արիզոնցիների տեղափոխման մասին: Որպես երեխաների բռնի տեղափոխման ցեղասպանական գործողության օրինակ, Լեմկինը նշում է «ենիչերիների համակարգը, երբ թուրքական իշխանությունները վերցնում էին քրիստոնյա երեխաներին և փորձում էին նրանց կրթել ռազմական կառույցներում. հետագայում նույն երեխաներն արդեն որպես թուրքական զինվորներ ուղարկվում էին իրենց ծննդավայրեր՝ համալրելով վերահսկող ռազմական գումարտակները: Նրանց դաժանությունը իրենց սեփական ծնողների և համաքաղաքացիների նկատմամբ ավելի ուժեղ էր, քան հենց թուրքերինը»⁴⁵: Լեմկինը նաև մանրամասն անդրադառնում է, թե ինչպես էին բալկանյան քրիստոնյաները փորձում թաքցնել իրենց երեխաներին թուրքական ոստիկանությունից: Որոշներն ամուսնացնում էին իրենց պատանի տղաներին, քանի որ ամուսնացածներին թուրքերը չէին վերցնում⁴⁶: Խոսելով Օսմանյան կայսրության հույն բնակչության վրա դեվժիրմեի ազդեցության մասին՝ Լեմկինը նշում է, որ ըստ իր «հույն ընկերների» հաշվարկի՝ չորս հարյուր տարվա

42 Lemkin, *Axis Rule in Occupied Europe*, 84-85, նաև՝ Cooper, *Raphael Lemkin*, 91.

43 ԱՀԳԸ, Լեմկինի հավաքածու, *On the Need for a Genocide Convention*, անթվակիր, էջ 10:

44 Նույն տեղում, Paper on Genocide 2, անթվակիր, էջ 2:

45 Նույն տեղում:

46 *Totally unofficial*, 169.

ընթացքում հույն ազգաբնակչությունը կրճատվել էր վեց-յոթ միլիոնով⁴⁷: Մեկ այլ տեղ նշված է, որ չորս հարյուր տարվա ընթացքում ավելի քան մեկ միլիոն հույն երեխա դարձել է ենիչերի կամ սուլթանի պահազորի անդամ:⁴⁸

Որպես մեկ այլ օրինակ Լեմկինը նշում է Չինգիզ խանի՝ դեպի Եվրոպա արշավանքների ժամանակ եվրոպացի երեխաների առևանգումը և տեղափոխումը Կենտրոնական Ասիա: Մոնղոլները երեխաների ընտրության հատուկ պրակտիկա էին մշակել: Նրանք վստահ էին, որ երեխաներին հնարավոր է փոխել միայն մինչև որոշակի տարիքը, ուստի ընտրում էին ավելի փոքր տարիքի երեխաների՝ դատելով նրանց ֆիզիկական տեսքից: Այն երեխաներն, ովքեր ավելի բարձրահասակ էին, քան սայլի անիվների առանցքը սպանվում էին, մյուսներին ուղարկում էին Կենտրոնական Ասիա՝ մուսուլմանացման կամ թաթարացման⁴⁹:

Երեխաների հարկադիր տեղափոխման մյուս օրինակը, որի մասին խոսում է Լեմկինը, տեղի էր ունեցել Ցարական Ռուսաստանում. հրեա երեխաները առևանգվում էին իրենց համայնքներից և ուղարկվում Սիբիր և այլ վայրեր, որտեղ կրթվում էին ուղղափառ հավատքով և կրկին օգտագործվում ռազմական միավորումներում առավագն քսանհինգ տարի, երբեմն նույնիսկ ավելի երկար: Նրանց նաև ամուսնացնում էին ռուսներին հետ⁵⁰:

Լեմկինն անդրադառնում է նաև 1947 թ. Քաղաքացիական պատերազմի ժամանակ մոտ 28.000-30.000 հույն երեխաների առևանգմանը և տեղափոխմանը սոցիալիստական բլոկի երկրներ⁵¹: Երեխաներն առևանգվում էին կոմունիստական պարտիզանական ուժերի կողմից և տեղափոխվում Բուլղարիա, Ռումինիա և Հարավ-սլավիա՝ հատուկ մանկապարտեզներում որպես կոմունիստներ կրթվելու նպատակով⁵²: Ցեղասպանության այս տեսակը Լեմկինը համարում էր ամենադաժաններից մեկը, որը միտված է նաև «ընդհատել խմբի մշակութային շարունակականությունը»՝ մատնանշելով նաև այն ցավը և տանջանքները, որ այս բաժանումը պատճառում էր ծնողներին⁵³:

Լեմկինը թեև հաճախ է անդրադառնում Հայոց ցեղասպանությանը որպես ցեղասպանության դասական օրինակի⁵⁴, առանձին խոսում է երեխաների բռնի տե-

47 Akis Gavriilidis, “Lemkin’s Greek Friends: Abusing History, Constructing Genocide—and Vice Versa,” *Holocaust and Genocide Studies* 30 no. 3 (2016): 490-491.

48 ԱՀՊԸ, Լեմկինի հավաքածու, տուի 7 փաստաթուղթ 3, Նամակագրություն Էդիթ Բեսսերի հետ, էջ 8: Նշենք, որ համակարգը կիրառվել է նաև Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության հանդեպ:

49 ԱՀՊԸ, Լեմկինի հավաքածու, տուի 7, փաստաթուղթ 2, Nature of genocide, անթվակիր, էջ 11,12,13:

50 *Totally unofficial*, 168.

51 ԱՀՊԸ, Լեմկինի հավաքածու, Նամակ Արթուն Լալոսին, հունվար 8, 1950 թ.:

52 Նույն տեղում, նամակ Դավիթ Դուբինսկուն, տուի 2, փաստաթուղթ 2, նոյեմբեր 16, 1949 թ. , նաև՝ Հուլիանի նախագիծ, էջ 2:

53 *Totally Unofficial*, 168:

54 Այս մասին տե՛ս օրինակ Նարեկ Պողոսյան, Հայոց ցեղասպանության թեման Ռաֆայել Լեմկինի գործունեության սկզբնական շրջանում, *Ցեղասպանագիտական հանդես* 2 no. 2 (2014):156-163;

ղափոխման, հայ երեխաների՝ անգամ հղի կանանց արգանդում սպանությունների մասին, սակայն իր նյութերում և գրագրություններում մեզ միայն մեկ տեղում հաջողվեց գտնել խիստ որոշակի նյութ Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի տեղափոխման մասին: Մասնավորապես, իր համառոտ ձեռագրում Լեմկինը գրում է. «Տասնյակ հազարավոր կանայք և աղջիկներ, ովքեր տարվել էին թուրքական հարեմներ, և երեխաների խմբեր, որոնք հավաքվել էին կառավարության կողմից և բաժանվել թուրքերի ու քրդերի միջև, հեռացվեցին քրիստոնեական եկեղեցիներից, և ստիպված էին իսլամ ընդունել»⁵⁵: Հատկանշական է, որ Լեմկինը Հայոց ցեղասպանության դեպքում հատուկ շեշտադրում չի կատարել երեխաների բռնի տեղափոխման հարցի վրա: Մեկ այլ հնարավոր հղում Հայոց ցեղասպանության ժամանակ երեխաների բռնի տեղափոխմանը Լեմկինի ինքնակենսագրության մեջ հետևյալ կիսավարտ նախադասություններն էին, որոնք անմիջապես հաջորդում են այն մտքին, որ երեխաների բռնի տեղափոխումը ներառվեց Յեղասպանության կոնվենցիա. «Շփումներ Հենրի Գրեյդիի հետ, ԱՄՆ դեսպանը Հունաստանում: Իմ աշխատանքը հունական ուղղափառ երիտասարդական խմբերի հետ: Փոքր Ասիայում թուրքական ցեղասպանության վերաբերյալ հիշեցումները: Իմ աշխատանքը Հայկական խմբի հետ»⁵⁶: Սակայն, քանի որ Լեմկինի բոլոր փաստաթղթերը ուսումնասիրված չեն, բացառված չէ, որ հայ երեխաների բռնի տեղափոխման մասին այլ փաստեր ևս կան Լեմկինի արխիվներում:

Երեխաների բռնի տեղափոխման՝ Յեղասպանության կոնվենցիայում հայտնվելու գործում հատկապես էական դեր խաղացին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ երեխաների տեղափոխման դեպքերը: 1946 թ., երբ Լեմկինը Գերմանիայում էր և ծառայում էր ՄԱԿ-ի Նպաստի և Վերականգնման վարչությունում (United Nations Relief and Rehabilitation Administration) ամերիկյան կողմից օկուպացված տարածքում, նա ծանոթանում է հուշագրի, որը վերաբերում էր օկուպացված երկրներից երեխաների առևանգմանը: Այն ներկայացնում էր «գերմանական իշխանությունների կողմից երեխաների առևանգման լուրջ հանցագործությունը»⁵⁷:

Լեմկինը նշում է, որ Ստալինինգրադում պարտությունից հետո իրենց մարդկային և ռազմական ներուժը վերականգնելու նպատակով գերմանացիները հարյուր հազարավոր սլավոն երեխաներ Ռուսաստանից, Լեհաստանից, Չեխոսլովակիայից և Հարավսլավիայից հավաքեցին և տեղափոխեցին Գերմանիա, որտեղ նրանց մեծացան և կրթվեցին որպես գերմանացիներ «Լեբենսբորն» կոչվող հատուկ հաստատություններում և մասնավոր տներում, որտեղ երեխաներին ծեծում էին իրենց մայրենի լեզուներով խոսելու համար:

Նարեկ Պողոսյան, Ռաֆայել Լեմկինի կողմից «Յեղասպանություն» եզրույթի ստեղծումը և Հայոց ցեղասպանությունը, *Օրինակայություն* 96 (2016): 31-39:

55 ԱՀՊՄ, Լեմկինի հավաքածու, տուփ 7, փաստաթուղթ 2, Turkish Massacre of Armenians - Short Manuscript, անթվակիր, էջ 1:

56 *Totally unofficial*, 219-220.

57 *United Nations War Crimes Commission. Displaced Children in the United States Zone*. Memorandum, 18 June 1946, <https://www.legal-tools.org/doc/608024/>, դիտվել է 25.01.2020:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Լեմկինը հրավիրվում է Պատերազմական վարչություն՝ պատերազմական հանցագործությունների դատավարությունների պլանը մշակելու համար⁵⁸: Լեմկինը կազմած պլանում առաջարկվում էր գերմանացիներին դատել նաև երեխաներին առևանգելու համար: Հատկանշական է, որ Լեմկինը մասնակցել էր նաև «առևանգված երեխաների բացահայտմանը»: Այս նպատակով կիրառվող գործիքներից մեկի մասին Լեմկինը նշում է հետևյալը. «Ուսումնասիրվող երեխաներին գերմաներեն լեզվով ներկայացվում էր մի հրաշալի պատմություն: Պատմության ընթացքում մենք անցնում էինք լեհերենի, չեխերենի կամ այլ լեզվի: Եթե երեխան շարունակում էր ուշադիր լսել, մենք հասկանում էինք, որ գերմանացի չէ: Երեխաների հետ կապված իմ այս անձնական փորձառությունը դրդեց ինձ ընդգրկել երեխաների առևանգումը որպես ցեղասպանության հասկացության մաս»⁵⁹:

Լեմկինը նաև պնդում էր, որ երեխաների առևանգումը հետևյալ գործողությունների հետ միասին՝ «հարկադիր ստերջացում», «հարկադիր վիժեցում», «բռնաբարությամբ կանանց ստիպելը երեխա ունենալ սեփական ազգի համար», մտցվելին որպես ցեղասպանության գործողություններ Նյուրնբերգյան դատավարությունների ժամանակ⁶⁰:

Երեխաների բռնի տեղափոխումը և Ցեղասպանության կոնվենցիան

Ցեղասպանության կոնվենցիայի տարբեր նախագծեր մինչև վերջնական ընդունումը մի քանի քննարկումներ անցան ՄԱԿ-ի տարբեր մարմիններում: Երեխաների բռնի տեղափոխման հոդվածը առկա էր Ցեղասպանության կոնվենցիայի առաջին նախագծի մեջ, որը պատրաստվել էր ՄԱԿ-ի Քարտուղարության կողմից և որի կազմում որպես փորձագետ ընդգրկված էր նաև Ռաֆայել Լեմկինը: Քարտուղարության նախագիծը (E/447) առանձնացնում էր ցեղասպանության երեք ձև՝ ֆիզիկական (խմբի անդամներին սպանելը, կամ նրանց առողջությանը և ֆիզիկական ամբողջությանը վնասելը), կենսաբանական (ծնունդների կանխումը) և մշակութային (խմբի առանձնահատկությունների ոչնչացումը): Երեխաների բռնի տեղափոխումը տվյալ խմբի մշակույթը ներկայացնող անձանց բռնի և համակարգված աքսորի, անձնական շփումների ժամանակ ազգային լեզվի կիրառման արգելքի, ազգային լեզվով տպագրված գրքերի կամ կրոնական աշխատությունների և նոր հրատարակությունների համակարգված ոչնչացման, պատմական և կրոնական հուշարձանների ոչնչացման կամ այլ նպատակներով օգտագործման, փաստաթղթերի և պատմական, գեղարվեստական կամ կրոնական արժեք ունեցող կամ կրոնական

58 Lynn H. Nicholas, *Cruel World. The Children of Europe in the Nazi Web* (New York: Vintage Books, 2006), 506.

59 ԱՀՊՄ, Լեմկինի հավաքածու, նամակ Լեն Պետերսոնին, տուփ 2, փաստաթուղթ 2, 9 օգոստոս 1949, էջ 2:

60 Erickson, *Raphael Lemkin*, 154.

ծեսերի մեջ կիրառվող առարկաների ոչնչացման կամ այլ նպատակով կիրառման հետ ընդգրկվեց մշակութային ցեղասպանության մեջ⁶¹: Հատկանշական է, որ Յեղասպանության կոնվենցիայի քննարկումների ժամանակ ևս հստակ մոտեցում չկար երեխաների բռնի տեղափոխման հոդվածի՝ ցեղասպանության մշակութային կամ կենսաբանական մեխանիզմ լինելու վերաբերյալ:

Ի սկզբանե մշակութային ցեղասպանության ներառումը Կոնվենցիա մյուս փորձագետները համարում էին ցեղասպանության կոնցեպտի անհարկի ընդլայնում: Սակայն Լեմկինը վստահ էր, որ խմբի կենսունակությունը պահպանելու համար անհրաժեշտ է նաև «ոգու և բարոյականության միասնականություն»՝ շեշտելով նաև այդ խմբերի ներդրումը քաղաքակրթության մեջ⁶²: Ըստ Լեմկինի, մշակութային ցեղասպանությունն ավելին էր քան բռնի ուժացումը և նպատակ ուներ արագ և ամբողջովին ոչնչացնել խմբի մշակութային, բարոյական և կրոնական կյանքը⁶³: Այս նախագիծն, ըստ էության, ամենամոտն էր ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի պատկերացումներին:

Քարտուղարության այս նախագծի մեկնաբանություններում երեխաների բռնի տեղափոխումը մարդկային այլ խումբ բացատրվում էր հետևյալ կերպ. «Երեխաների բաժանումը իրենց ծնողներից հանգեցնում է նրան, որ երեխաներին նրանց ընկալունակ տարիքում հարկադրվում է մշակույթ և մտածելակերպ, որը տարբեր է իր ծնողների մշակույթից և մտածելակերպից: Այս գործընթացը հանգեցնում է խմբի՝ որպես մշակութային միավորի վերացմանը համեմատաբար կարճ ժամկետում»⁶⁴:

Չնայած մշակութային ցեղասպանությունը հանվեց Յեղասպանության կոնվենցիայի հետագա նախագծերից, սակայն հունական պատվիրակության առաջարկով երեխաների բռնի տեղափոխման հոդվածը մտցվեց կոնվենցիայի վերջնական տեքստում: Հունական պատվիրակության փաստարկը կապված էր նրա հետ, որ երեխաների բռնի տեղափոխումը ոչ միայն պատմական երևույթ է՝ կապված Օսմանյան կայսրությունում քրիստոնյա երեխաների առևանգման հետ, այլ նաև ժամանակակից: Երևույթը գնահատվում էր որպես այնքան կործանարար, որքան «մանկածնությունը կանխող կամ կյանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք կարող են հանգեցնել մահվան»:

ԱՄՆ կողմից ներկայացված նախագծում (E/623) երեխաների բռնի տեղափոխման հոդվածը ներառված էր ֆիզիկական կամ կենսաբանական ցեղասպանությունների գործողությունների մեջ⁶⁵: Իր հռետորական հարցադրման մեջ ԱՄՆ պատվիրակը կասկած էր հայտնում «խմբի ոչնչացման տեսանկյունից կես ժամ առաջ մանկածնու-

61 Hiram Abtahi and Philippa Webb, *The Genocide Convention, The Travaux Préparatoires* (Leiden, Boston: Martinus Nijhoff Publishers, 2008), 215.

62 Հարցի մասին առավել մարնամասն տես Մեդա Պարսամյան, «Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. տեսական հիմնադրույթներ», *Յեղասպանագիտական հանդես* 2 no. 2 (2014), 164-175:

63 Abtahi and Webb, *The Genocide Convention*, 234-235:

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում, 1492-1493:

թյան կանխման և կես ժամ ծնունդից հետո երեխայի առևանգման միջև» տարբերության հարցում: Այս նույն փաստարկը կարելի է հանդիպել նաև հույն պատվիրակության մոտ, որոնք հավասարության նշան էին դնում «ստերջացման, վիժման և առևանգման միջև»: Ըստ հույն պատվիրակների, երեխաների բռնի տեղափոխումը միայն շատ քիչ դեպքերում կարող է համարվել մշակութային ցեղասպանություն, իսկ մնացած հիմնական դեպքերում այն իրականացվում է խմբին ոչնչացնելու կամ նրա անդամներին լուրջ մարմնական վնասներ հասցնելու մտադրությամբ⁶⁶:

Թեև Ֆրանսիայի ներկայացուցիչը դեմ էր Ցեղասպանության կոնվենցիայի մեջ մշակութային ցեղասպանության ներառմանը, սակայն ընդունում էր, որ երեխաների բռնի տեղափոխումը շատ ավելի բարբարոսական գործողություն է, քան լեզվի կիրառության արգելքը, գրքերի, պատմական և կրոնական հուշարձանների ոչնչացումը: «Երեխաների բռնի տեղափոխումը ոչ միայն մշակութային, այլ ֆիզիկական և կենսաբանական ազդեցություն ունի, քանի որ երիտասարդ անձանց վրա դնում է պայմաններ, որոնք կարող են էական վնաս հասցնել նրանց և անգամ հանգեցնել մահվան»⁶⁷:

Բավական ուշագրավ էր Ուրուգվայի պատվիրակի մոտեցումը երեխաների բռնի տեղափոխման հողվածին, ըստ որի գործողությունը նպատակաուղղված էր նոր սերնդի կործանմանը երեխաներին առևանգելու միջոցով՝ ստիպելով նրանց փոխել իրենց կրոնը և կրթելով նրանց որպես սեփական ազգի թշնամիների»⁶⁸:

Գլխավոր գաղափարն, այնուամենայնիվ, այն էր, որ ցեղասպանությունը չի վերաբերում միայն պաշտպանվող խմբերի ֆիզիկական բնաջնջմանը, այլ «մի ամբողջ խմբի գոյության մերժումն է»: Իսկ խումբը կարող էր ոչնչացվել ոչ միայն իր անդամների ֆիզիկական բնաջնջմամբ, այլև խմբի յուրահատկությունների ոչնչացմամբ»⁶⁹:

Երեխաների բռնի տեղափոխման դեպքերը միջազգային և ազգային դատարաններում

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո պարզ դարձավ, որ գերմանացիները Արևելյան Եվրոպայի երկրներից առևանգել էին հարյուր հազարավոր երեխաներ⁷⁰: Այդ փաստն արձանագրվեց նաև պատերազմից հետո տեղի ունեցած միջազգային և ազգային դատավարությունների ժամանակ: Ավելին, ցեղասպանության անդրադարձով առաջին դատավճիռը, որը կայացվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներն ընդդեմ Ուլրիխ Գրեյֆելթի և այլոց գործով, վերաբերում էր նաև

66 Նույն տեղում, 1493:

67 Նույն տեղում, 1492:

68 Նույն տեղում, 1494:

69 Նույն տեղում, 1504:

70 Մանրամասն տե՛ս u. Nicholas, *Cruel World*; Isabel Heinemann “‘Until the Last Drop of Good Blood’: The Kidnapping of ‘Racially Valuable’ Children and Nazi Racial Policy in Occupied Eastern Europe” in *Genocide and Settler Society. Frontier Violence and Stolen Indigenous Children in Australian History*, ed. Dirk Moses (New York, Oxford: Berghahn books, 2004), 244-267.

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ երեխաների բռնի տեղափոխման գործողություններին: Մեղադրյալներից մի քանիսը դատվեցին ցեղասպանության համար՝ որպես մարդկության դեմ հանցագործությունների ենթատեսակ, այդ թվում նաև՝ երեխաների առևանգման համար⁷¹:

Այսպես-կոչված հետագա Նյուրնբերգյան դատավարությունների ժամանակ⁷² տեղի ունեցած տասներկու դատավարություններից մեկը՝ Ռուշայի գործը (SS-Rasse- und Siedlungshauptamt (կրճատ՝ RuSHA), թարգմանաբար՝ ԷսԷս-ի Ռ-ասայականության և բնակեցման հարցերով գլխավոր վարչություն, պաշտոնապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներն ընդդեմ Ուլրիխ Գրեյֆելթի և այլոց, *United States of America vs. Ulrich Greifelt, et al*), վերաբերում էր նացիստների ռասայական գաղափարախոսությանը և քաղաքականությանը: Ուլրիխ Գրեյֆելթը և մյուս 14 մեղադրյալները ԷսԷս տարբեր կազմակերպությունների ղեկավարներն էին, որոնք պատասխանատու էին նացիստական «մաքուր ռասայի» ծրագրի համար և փաստորեն ներգրավված էին ռասայական այդ քաղաքականության իրագործման մեջ Գերմանիայի կողմից գրավյալ տարածքներում, հիմնականում արևելքում և հարավ-արևելյան Եվրոպայի երկրներում: Դրանք էին՝ Ռուշա կազմակերպությունը, Գերմանական ազգի համախմբման Ռայխի հանձնակատարի գրասենյակը (Reichskommissar für die Festigung des deutschen Volkstums, RKFDV, որի ղեկավարը Հայնրի Հիմլերն էր), Էթնիկ գերմանացիների հայրենադարձման գրասենյակը (Volksdeutsche Mittelstelle, “VOMI”) և Կյանքի աղբյուր միությունը (Lebensborn):

Վերջիններիս դեմ պաշտոնական երեք մեղադրանք էր ներկայացված. առաջին երկու մեղադրանքները վերաբերում էին խաղաղության, մարդկության դեմ կատարված հանցագործություններին և պատերազմական հանցագործություններին, ինչպես սահմանված էր Վերահսկիչ խորհրդի թիվ 10 օրենքով⁷³, իսկ երրորդ մեղադրանքը վերաբերում էր քրեական կազմակերպություններին վերջիններիս մասնակցությանը:

71 Նշենք, որ այս դատավարությունը տեղի է ունեցել 1947 թ. հոկտեմբերի 10-ից 1948 թ-ի մարտի 10-ը, այսինքն՝ մինչև Ցեղասպանության կոնվենցիայի ընդունումը: *Trial of Ulrich Greifelt and Others*, 2-3, at http://www.worldcourts.com/imt/eng/decisions/1948.03.10_United_States_v_Greifelt2.pdf, դիտվել է 02.08.2019:

72 Հետագա Նյուրնբերգյան դատավարությունները, պաշտոնապես՝ Պատերազմական հանցագործների դատավարությունները Նյուրնբերգի ռազմական դատարանների առաջ, պատերազմական հանցագործությունների դեմ տասներկու ռազմական դատավարությունից բաղկացած դատապրոցես էր Նացիստական Գերմանիայի գերագույն ղեկավարության դեմ (1946 թ. դեկտեմբերից մինչև 1949 թ. ապրիլ): Ի տարբերություն նախորդ դատավարությունների սրանք իրականացվեցին ԱՄՆ ռազմական դատարանների առջև, ինչը կապված էր դաշնակից տերությունների միջև անհամաձայնություններով: Այս դատավարությունները ևս տեղի ունեցան Նյուրնբերգում, Արդարադատության պալատի շենքում: Վերահսկիչ խորհրդի թիվ 10 օրենքով (Control Council Law No. 10), որը Դաշնակիցների Վերահսկիչ խորհուրդն ընդունել էր 1945 թ. դեկտեմբերի 20-ին, իրավունք էր տվել օկուպացիոն բոլոր իշխանություններին դատել պատերազմական հանցագործներին իրենց կողմից օկուպացված տարածքներում: Հենց այս օրենքի հիման վրա ԱՄՆ ձեռնարկեց գլխավոր պատերազմական հանցագործների հետագա տասներկու դատավարությունները:

73 Control Council Law No. 10 Punishment of Persons Guilty of War Crimes, Crimes against Peace and Against Humanity, <https://www.legal-tools.org/doc/ffda62/pdf/> դիտվել է 15.11.2019.

Մեղադրանքների էությունն այն էր, որ այս անձանց կողմից կատարված հանցագործությունները նացիստական ռասայական գաղափարախոսության և քաղաքականության մաս էին և միտված էին այդ քաղաքականության տարածմանը Գերմանիայում և Գերմանիայի կողմից գրավված այլ երկրներում: Նրանք մեղադրվում էին սպանությունների, ստրկացումների, տեղահանությունների, բանտարկությունների, տանջանքների, հալածանքների և անմարդկային այլ արարքների մեջ, որոնք իրագործվել էին որպես ցեղասպանության ծրագրի մաս՝ նպատակ ունենալով ոչնչացնել օտար ազգերին և էթնիկ խմբերին՝ սպանությունների և ազգային հատկանիշների վերացման միջոցով: Այս ծրագրի նպատակն էր ուժեղացնել գերմանական ազգը և այսպես-կոչված «արիական ռասան» այլ ազգերի և խմբերի հաշվին՝ նրանցից ընտրված անձանց մեջ նացիստական կամ գերմանական հատկանիշներ «ներդնելով» և «անցանկալի» ռասայական տարրերին ոչնչացնելու միջոցով: Այս ծրագիրն իրականացվում էր տարբեր եղանակներով (թշնամի ազգերի բռնի գերմանականացում, բռնի էվակուացիա և վերաբնակեցում, հարկադիր աբորտներ, արևելյան շրջաններից բերված աշխատակիցներից նորածինների խլում, թշնամի ազգությունների վերարտադրողականության կասեցում, գերմանացիների հետ հարաբերությունների համար պատիժ և այլն), այդ թվում՝ այլազգի երեխաներին առևանգելու և նրանց միջից ռասայապես արժեքավոր երեխաներին գերմանացնելու միջոցով:

Ըստ մեղադրանքի՝ մարդկության դեմ այս հանցագործությունները իրականացվել էին որպես նախապես ծրագրված ցեղասպանության մաս և նպատակ էին հետապնդում ոչնչացնել ազգային խմբերին Գերմանիայի կողմից գրավված երկրներում: Այս հանցագործությունները նպատակ ունեին թուլացնելու և վերջապես ոչնչացնելու թիրախավորված ազգությունները, իսկ մյուս կողմից՝ նրանց հաշվին ուժեղացնելու Գերմանիան՝ տարածքային առումով և կենսաբանորեն⁷⁴: «Ռասայապես արժեքավոր» երեխաների առևանգումը գրավյալ տարածքներում ազգային խմբերի ոչնչացման առավել լայն ծրագրի մաս էր: Միննույն ժամանակ այդ երեխաները կենսաբանական առումով ուժեղացնելու էին նացիստական ռասան: Այս մեթոդը կիրառվում էր նաև անցականկալի անձանց վախեցնելու նպատակով⁷⁵:

Ըստ ծրագրի, պետք է ընտրվեին մինչև 10-12 տարեկան, սլավոնական արտաքինով երեխաները (հիմնականում լեհ, նաև՝ չեխ, հարավսլավացի, նորվեգացի, ուկրաինացի, ռուս և այլն), քանի որ իրական էթնիկ փոփոխությունները, ըստ նացիստների, հնարավոր էր իրականացնել մինչև այդ տարիքը: Նախ ուսումնասիրվում էր երեխաների առողջական վիճակը, որից հետո երեխաները ենթարկվում էին ռասայական (կենսաբանական) և հոգեբանական քննության, ինչի արդյունքում ընտրվում էին

74 Law Reports of Trials of War Criminals Selected and prepared by The United Nations War Crimes Commission, Volume XIII (London: Published for the United Nations War Crimes Commission by his Majesty's Stationery Office, 1949), 622.

75 Նույն տեղում, 674:

այն երեխաները, որոնք հարմար էին գերմանացման համար⁷⁶: Այս ձևով ընտրված 6-12 տարեկան երեխաները ուղարկվում էին գերմանական տնային դպրոցներ, իսկ 2-6 տարեկան երեխաները նախ տարվում էին Լեբենսբորնի հատուկ տներ, ապա որդեգրվում կազմակերպության կողմից ընտրված ընտանիքների կողմից⁷⁷: Տնային դպրոցները դրական արդյունքով ավարտած երեխաները հետագայում տեղավորվում էին գյուղատնտեսական ավաններում: Լեբենսբորն տներում երեխաները սովորում էին գերմաներեն և նացիստական գաղափարախոսություն: Խզվում էին բոլոր կապերը բարեկամների հետ, այդ երեխաներին տրվում էին գերմանական անուններ և ծննդյան նոր վկայականներ: Այն երեխաները, ում ծնողները մահացել էին պատերազմի ժամանակ կամ դրանից հետո, տարվում էին գերմանական որբանոցներ, ինչպես նաև արգելվում էր այս երեխաների որդեգրումը լեհերի և մյուս ազգությունների (ումից երեխաները վերցվել էին) կողմից:

Փաստորեն, Ռուշայի դատավարությունը կարևորվեց մի քանի հանգամանքով: Դատավարության ընթացքում բազմաթիվ հղումներ էին արվում Լեմկինի կողմից ցեղասպանության հանցագործության բացատրությանը, ինչը թույլ է տալիս հասկանալ դատարանի կողմից ցեղասպանության հանցագործության ընկալումն ու կիրառումը: Ըստ Լեմկինի, «Յեղասպանությունը չի նշանակում ազգի անմիջական ոչնչացում... Այն ավելի շուտ նպատակաուղղված է ընդգծելու տարբեր գործողություններից բաղկացած համակարգված ծրագիր, որի նպատակը ազգային խմբերի կյանքի էական հիմքերի ոչնչացումն էր՝ տվյալ խմբերին ոչնչացնելու նպատակադրությամբ»⁷⁸: Դատարանը հենց այս մոտեցումը ցուցաբերեց հարցին: Նախ, ընդունվեց, որ խումբը բացի զանգվածային սպանությունից, կարող է ոչնչացվել այլ եղանակներով, ինչպիսիք են օրինակ՝ զանգվածային տեղահանությունները, գույքի հափշտակման միջոցով մարդկանց կենսապայմաններից զրկումը, հարկադիր կամ բռնի գերմանացումը, երեխաների առևանգումը, ծնելիության նվազեցումը, մահացությունների խթանումը, մշակութային և կրթական հաստատությունների ոչնչացումը⁷⁹: Սրանով փաստորեն օրինականացվեց Լեմկինի կողմից առաջ քաշված ցեղասպանության իրագործման տարբեր եղանակների/մեխանիզմների հնարավորությունը՝ կարևորելով ոչ միայն խմբի ներկա գոյությունը, այլև շարունակականության ապահովման անհրաժեշտությունը:

Երկրորդ, երեխաների բռնի տեղափոխումը համարվեց ցեղասպանական հանցագործություն: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաների առևանգման գործողությունը նաև դատարանի կողմից դիտարկվում էր որպես նացիստական ռասայական քաղաքականության մաս, դատարանը այն դիտում էր որպես ցեղասպանության կենսաբանական մեխանիզմ: Անդրադառնալով ցեղասպանության հասկացությանը՝ դատարանը մեջբերում է Լեմկինի կողմից վերաշարադրված հետևյալ սահմանումը. «Մարդկային խմբի գոյության երեք հիմնական փուլ կա՝

76 *Trials of War Criminals*, 993-994:

77 Նույն տեղում, 995-997:

78 *Trial of Ulrich Greifelt and Others*, 37.

79 Նույն տեղում, 627:

Ֆիզիկական, կենսաբանական շարունակականություն (վերարտադրողականությունը) և հոգևոր կամ մշակութային արտահայտչականությունը: Հետևաբար, մարդկային խմբի այս երեք հիմնական փուլերի վրա հարձակումը կարելի է որակել որպես ֆիզիկական, կենսաբանական և մշակութային ցեղասպանություն: Քրեական հանցանք է մարդկային այս խմբի անմիջական կամ միջնորդավորված սպանությունը, հարկադիր ստերջացումը, երեխաների առևանգումը կամ ընտանիքների բաժանումը: Մշակութային ցեղասպանությունը հիմնականում կարելի է իրականացնել հոգևոր և մշակութային ոլորտներում՝ ոչնչացնելով այն օբյեկտներն ու հաստատությունները, որոնց միջոցով արտահայտվում է խմբի հոգևոր կյանքը, ինչպիսիք են պաշտամունքի վայրերը, կրոնական պաշտամունքի առարկաները, դպրոցները, հոգևոր արժեքները և մշակույթը: Ոչնչացնելով հոգևոր մտավորականությանը և հաստատությունները՝ վերացվում է խմբի հոգևոր միասնականությունը/համախմբումը, և խումբը սկսում է կազմաքանդվել: Սա հատկապես կարևոր է կրոնական խմբերի գոյության համար: Կրոնը կարող է ոչնչացվել խմբի մեջ անգամ եթե խմբի անդամները շարունակում են ֆիզիկապես գոյություն ունենալ»⁸⁰: Դատարանը առաջնորդվում էր ցեղասպանության մեթոդների այս ընկալմամբ և երեխաների բռնի տեղափոխումը դիտում որպես կենսաբանական ցեղասպանություն, ինչը համահունչ էր նաև նացիստների ռասայական տեսության հետ:

Լեհ երեխաների առևանգման և գերմանականացման վերաբերյալ դատավարություններ են եղել նաև Լեհաստանում: Լեհաստանի Բարձրագույն ազգային տրիբունալը⁸¹ Արթուր Գրեյսերի (ԷսԷս բարձրաստիճան անդամ, նացիստական քաղաքական գործիչ) դատավարության ժամանակ վերջինիս մեղադրում էր ցեղասպանության՝ այդ թվում լեհ երեխաների գերմանացման համար, մասնավորապես, ընդդեմ ծնողների կամ խնամակալների ցանկության, լեհ երեխաներին և երիտասարդներին տեղահանելու, նրանց գերմանական ընտանիքներում կամ Ռ-այլսի կրթական հաստատություններում տեղավորելու՝ նրանց լիովին գերմանացնելու նպատակով, կտրելով նրանց կապերն ընտանիքներից և լեհական ամեն ինչից և տալով նրանց գերմանական քրիստոնեական անուններ⁸²:

Լեհական բարձրագույն ազգային տրիբունալի կողմից երեխաների առևանգման և գերմանացման հարցը ևս դիտվում էր որպես կենսաբանական ցեղասպանություն, ինչը կրկին կապված էր գերմանական ռասիստական քաղաքականության հետ:

80 Raphael Lemkin, "Genocide as a Crime under International Law," *United Nations Bulletin* 4, no. 2 (1948): 71, cited in *Trial of Ulrich Greifelt and Others*, 40.

81 Բարձրագույն ազգային տրիբունալը ստեղծվել է 1946 թ.՝ դատելու նացիստական գլխավոր հանցագործներին, որոնք ակտիվ գործունեություն են ծավալել Լեհաստանում օկուպացիայի ժամանակ համաձայն միջազգային և լեհական քրեական իրավունքի: Տրիբունալի իրավասության մեջ էին մտնում պատերազմական հանցագործությունները, սակայն համոզվելով, որ սրանք չեն ծածկում նացիստական հանցագործությունները, տրիբունալը ընդունեց ցեղասպանության Լեմկինի սահմանումը (և ցեղասպանության բառի լեհերեն թարգմանությունը) և եզրույթը մեկնաբանվեց ընդարձակ՝ ներառելով Լեհական որոշման մեջ ներառված բոլոր հանցագործությունները և ավելացնելով «մշակութային ոչնչացման» կոնցեպտը:

82 *Law Reports*, 72.

Այսպիսով՝ ակնհայտ է, որ ցեղասպանության գաղափարը սահմանափակված չէ միայն թիրախավորված խմբի ֆիզիկական ոչնչացմամբ: Ինչպես Ռ-աֆայել Լեմկինը, այնպես էլ ցեղասպանության կոնվենցիայի մյուս հեղինակները ցեղասպանության կոնցեպտի առավել լայն ընկալում էին վերցրել, որն ուղղված էր ոչ միայն մատնանշելու բռնության տարբեր ձևերը, այլև պաշտպանելու խմբի կենսունակությունը: Հաշվի առնելով պատմության ընթացքում երեխաների բռնի տեղափոխման բազմաթիվ օրինակները՝ Լեմկինը կարողացավ Յեղասպանության կոնվենցիայի մեջ մտցնել նաև երեխաների բռնի տեղափոխման հոդվածը, որը փաստում էր, որ խումբը կարող է ոչնչացվել չնայած այն հանգամանքի, որ խմբի որոշ անհատներ շարունակում են ապրել:

Չնայած ընդունված է համարել, որ երեխաների բռնի տեղափոխումը ցեղասպանության մշակութային մեխանիզմ է կամ մշակութային ցեղասպանություն, սակայն Լեմկինի և կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերը ցույց են տալիս, որ երեխաների բռնի տեղափոխման հարցը դիտվել է նաև որպես ցեղասպանության կենսաբանական մեխանիզմ կամ կենսաբանական ցեղասպանություն: Այս հանգամանքն արտացոլվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երեխաների բռնի տեղափոխման վերաբերյալ միջազգային և ազգային տրիբունալների քննարկումներում և մեկնաբանություններում:

Edita G. Gzoyan
PhD in history

FORCIBLE CHILD TRANSFER AS A GENOCIDAL ACT: FROM CONCEPTUALIZATION TO CRIMINALIZATION

SUMMARY

Key words: forcible child transfer, Genocide Convention, Raphael Lemkin; Armenian Genocide, cultural genocide, biological genocide.

Forcible child transfer is one of the five genocidal acts listed in the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. It forbids forcibly transferring children from one group to another with intent to destroy in whole or in part a national, ethnic, racial or religious group. Operating in the nexus of cultural and biological genocides, forcible child transfer has a unique application in comparison with the other genocidal acts as it forms a new identity for a targeted group through the destruction of its former one.

The aim of the Genocide Convention is not only to punish the worst forms of violence against national, ethnic, racial, or religious groups, but also to protect the groups quoted. As rightly mentioned in the explanation set out by the International Law Commission, “forcible child transfer could have particularly serious consequences for the future viability of the group.”

The article studies the conceptual basis of the forcible child transfer clause; the perception of the concept by Raphael Lemkin and why he has proposed it be included in the crime; some conditions of inclusion of the clause in the Genocide Convention and the use of the clause just after the end of World War II by international and national tribunals.

Էդիտա Գ. Գզոյան
кандидат исторических наук

НАСИЛЬСТВЕННАЯ ПЕРЕДАЧА ДЕТЕЙ КАК АКТ ГЕНОЦИДА: ОТ ФОРМИРОВАНИЯ ДО КРИМИНАЛИЗАЦИИ

РЕЗЮМЕ

Ключевые слова: насильственная передача детей, Конвенция о геноциде, Рафаэль Лемкин, Геноцид армян, культурный геноцид, биологический геноцид.

Насильственная передача детей является одним из пяти актов геноцида в “Конвенции о предупреждении преступления геноцида и наказании за него.” Она запрещает “насильственную передачу детей из одной человеческой группы в другую” с целью полного или частичного уничтожения какой-либо национальной, этнической, расовой или религиозной группы. Находясь на грани культурного и биологического геноцидов, насильственная передача детей имеет довольно особенное употребление в сравнении с другими актами геноцида, так как она формирует новую идентичность у целевой группы, искореняя предыдущую.

Целью Конвенции о геноциде является не только наказание крайних форм насилия против национальных, этнических, расовых или религиозных групп, но и защита группы. И как прямо отмечено в пояснении Комиссии международного права ООН, “насильственная передача детей может иметь достаточно серьезные последствия для жизнеспособности группы.”

Данная статья исследует основы формирования понятия насильственной передачи детей, восприятие и выдвижение концепции Рафаэлем Лемкиным, некоторые обстоятельства включения в Конвенцию о геноциде, применение статьи о насильственной передаче детей международными и национальными судами сразу после окончания Второй мировой войны.

Նարեկ Մ. Պողոսյան
պատմական գիտությունների թեկնածու

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՎՏԱՆԳԸ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ¹**

*Բանալի բառեր*¹՝ արհեստական բանականություն, մահացու ինքնավար գեներ, որոտներ, ցեղասպանություն, խմբերի թիրախավորում, սոցիալական մեդիա, կեղծ տեսանյութեր, արհեստական բանականության էթիկա:

Տեխնոլոգիաների արագ զարգացումը, մասնավորապես՝ արհեստական բանականության կիրառումը, վերջին տարիներին փորձագետների մոտ լուրջ անհանգստություն է առաջ բերել. մեքենաների ինքնուրույն մտածելու և որոշումներ կայացնելու կարողությունն իր դրական կողմերով հանդերձ՝ մարդկության համար բազմաթիվ վտանգներ է ստեղծում: Արհեստական բանականության զարգացումը և ինքնավար գեները կարող են օգտագործվել ազգային, կրոնական, ռասայական որոշակի խմբերի թիրախավորման նպատակով, ինչի արդյունքում էլ մեծանում է ցեղասպանության և զանգվածային սպանությունների իրագործման վտանգը:

Ներկայում, երբ արդեն արհեստական բանականությամբ օժտված սպառազինությունների գլոբալ մրցավազքն իրողություն է, տեխնոլոգիական ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչների ուշադրությանն է արժանանում առաջին հերթին մահացու ինքնավար գեների արգելման հարցը: Բացի այդ՝ արհեստական բանականության զարգացման բացասական հնարավոր հետևանքները կանխելու համար ոլորտի մասնագետների կողմից առաջ է քաշվել արհեստական բանականության էթիկայի մշակման անհրաժեշտությունը:

Մարդկության համար արդեն իսկ հրատապ է դարձել որոտատեխնիկայի և արհեստական բանականության տեխնոլոգիայի զարգացման արդյունքում առաջ եկած հնարավոր վտանգը կանխելու, մարդու իրավունքների պաշտպանության և էթիկայի նորմերին համապատասխան օրենսդրական մեխանիզմների ստեղծումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արհեստական բանականությունն օգտագործվում է նաև ամենատարբեր հանցագործությունների հայտնաբերման և կանխարգելման համար, հետևաբար նպատակահարմար է այն ծառայեցնել նաև ցեղասպանության և զանգվածային սպանությունների կանխարգելմանը:

Ներկայում տեխնոլոգիական առաջընթացը և նորարարությունը մեծ փոփոխություններ են առաջացրել կյանքի գրեթե բոլոր բնագավառներում. ժամանակակից աշխարհն առանց տեխնիկական միջոցների կիրառման անհնար է պատկերացնել: Արհեստական բանականության կիրառությունը հեղաշրջիչ նշանակություն կարող է ունենալ մարդկանց և պետությունների համար՝ մի կողմից հեշտացնելով և ավել-

1 Հոդվածը ստացվել է 18.09.2019 և ընդունվել տպագրության՝ 12.01.2020:

լի հարմարավետ դարձնելով կյանքը, մյուս կողմից՝ հանգեցնելով բազմաթիվ վտանգների: Ավելին՝ արհեստական բանականությունն ու ռոբոտատեխնիկան կարող են ինչպես միլիոնավոր աշխատատեղերի կրճատման, այնպես էլ՝ մահացու ինքնավար զենքերի կիրառման պատճառ դառնալ:

Մեր օրերում աշխարհի տարբեր երկրներում նկատվում է էթնիկ, կրոնական, ռասայական գործոններով պայմանավորված թշնամանքի աճ. մեծ է վտանգը, որ արհեստական բանականության զարգացումը և ինքնավար զենքերը կարող են օգտագործվել ազգային, կրոնական, ռասայական որոշակի խմբերի թիրախավորման նպատակով, քանի որ արհեստական բանականությամբ օժտված ինքնավար զենքերը հնարավորություն կտան շատ արագ նույնականացնել այդ խմբերին պատկանող մարդկանց և անհրաժեշտության դեպքում ոչնչացնել:

Փաստորեն, ցեղասպանության իրագործման վտանգի ուժգնացմանը զուգընթաց կատարելագործվում է նաև տեխնիկան: Եթե 20-րդ դարի սկզբում Հայոց ցեղասպանության տարիներին ռճրագործներն անձամբ էին սպանում զոհերին, իսկ Հոլոքոստի ժամանակ նացիստները օգտագործում էին գազախցիկները, ապա 21-րդ դարում արհեստական բանականության կիրառությունը կարող է այնպիսի պայմաններ ստեղծել, որ մարդն ընդհանրապես մասնակցություն չունենա ցեղասպանության իրագործման բուն գործընթացին: Առանձին անհատներ, իշխանության ներկայացուցիչներ կամ ահաբեկչական խմբեր, տիրապետելով այդպիսի տեխնոլոգիաների, կարող են հեռակառավարման կամ համապատասխան ծրագրի ներմուծման միջոցով և առանց մարդկային ռեսուրսի կիրառման թիրախավորել տարբեր խմբերի և կարճ ժամանակամիջոցում ոչնչացնել նրանց: Բացառված չէ նաև այն տարբերակը, երբ ինքնավար զենքերը և ռոբոտները ինչ-որ սխալի կամ ինքնագործունեության պարագայում թիրախավորեն մարդկանց: Ուստի ինքնավար զենքերի կամ ռոբոտների կողմից ցեղասպանության կամ զանգվածային սպանությունների իրագործման դեպքում հարկ կլինի հասկանալ, թե ովքեր են պատասխանատու դրանց գործունեության համար: Հետևաբար, ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղ կանխարգելման համատեքստում հրամայական է դառնում արհեստական բանականության կիրառման մեխանիզմների ստեղծումը, որի միջոցով հնարավոր կլինի սահմանափակել մարդկանց թիրախավորելու նպատակով արհեստական բանականությամբ օժտված տեխնոլոգիաների կիրառումը և սահմանել հստակ չափորոշիչներ, որը թույլ կտա կանխել դրանց կիրառման հնարավոր վտանգները:

Արհեստական բանականության զարգացումը և դրա վտանգները մարդկության համար

Արհեստական բանականության գաղափարը հայտնի է դեռևս անտիկ ժամանակաշրջանից, երբ փիլիսոփաները խորհում էին արհեստական էակների հնարավորության մասին: Նրանք մտածում էին, որ մարդկային բանականությունը մի համա-

կարգ է, որը կարող է ինքնավերացվել և կիրառվել արհեստական էակների կողմից: Արհեստական բանականության գաղափարը տեղ է գտել նաև հին հունական, չինական, հռոմեական, հնդկական և հրեական առասպելներում²:

Արհեստական բանականության հիմնադիրներից գաղտնավերլուծող և ինֆորմատիկայի մասնագետ Ալան Թյուրինգն իր «Հաշվողական տեխնիկա և բանականություն» (1950 թ.) հոդվածում ներկայացնում է մեքենայի՝ մտածելու կարողության վերաբերյալ մշակված մի թեստ: Թյուրինգի նպատակն էր թեստի միջոցով համեմատական վերլուծության ենթարկել մարդու վարքն ու արհեստական բանականությունը: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ եթե մեքենաները կարողանան «հիմարեցնել» մարդկանց՝ ներկայանալով, թե իբր իրենք մարդ են, այդպիսով կարող են ցույց տալ իրենց մտածելու ունակությունը³:

Արհեստական բանականության առաջին համակարգիչը «Մանչեսթեր Ֆերանտի»-ն է⁴, որն ինքնուրույն և անշտապ շաշկի ու շախմատ է խաղում՝ ուսումնասիրելով հազարավոր քայլեր և գտնելով ամենատարբեր լուծումներ⁵:

1956 թ. Դարտմուտի կոնֆերանսի ժամանակ ինֆորմատիկայի մասնագետ, ամերիկացի Ջոն Մրքքարթին հնչեցնում է «արհեստական բանականություն» արտահայտությունը: Կոնֆերանսից հետո 1957-1974 թթ. մեծ առաջընթաց է գրանցվում արհեստական բանականության ոլորտում. համակարգիչները սովորում են անգլերեն խոսել, հանրահաշվական խնդիրներ լուծել, ապացուցել երկրաչափության թեորեմները և այլն⁶:

1967 թ. Ճապոնիայում Վասեդայի համալսարանն սկսում է «WABOT» նախագիծը և 1972 թ. ավարտում «WABOT-1» անունը կրող ռոբոտի ստեղծման աշխատանքները: Այն աշխարհում առաջին բանական ռոբոտն էր, որը քայլում էր, առարկաներ տեղափոխում, մարդկանց հետ ճապոներեն խոսում⁷:

1970-ական թթ. արհեստական բանականության ոլորտում հետազոտությունները քննադատության են արժանանում: Պատճառն այն էր, որ արհեստական բանականության ոլորտի հետազոտողների ակնկալիքները չափազանց մեծ էին, սակայն նրանք չկարողացան խոստացված արդյունքները իրականություն դարձնել՝ հետազոտությունների համար տրամադրվող ոչ բավարար ֆինանսական միջոցների

2 Adrienne Mayor, *Gods and Robots: Myths, Machines, and Ancient Dreams of Technology* (Princeton: Princeton University Press, 2018), 304; Donald J. Norris, *Beginning Artificial Intelligence with the Raspberry Pi* (Barrington: Apress, 2017), 1-2.

3 Alan Turing, "Computing Machinery and Intelligence," *Mind* LIX, no. 236 (1950): 433-460.

4 «Ferranti Mark 1» մեքենան ստեղծել է Ferranti համակարգչային ընկերությունը 1951 թ.:

5 Tim Jones, *Artificial Intelligence: A Systems Approach: A Systems Approach* (Boston, Toronto, London, Singapore: Jones & Bartlett Learning, 2015), 4-5.

6 Mark Skilton, Felix Hovsepian, *The 4th Industrial Revolution: Responding to the Impact of Artificial Intelligence on Business* (Cham: Springer, 2017), 76.

7 Christopher McFadden, "15 Engineers and Their Inventions That Defined Robotics," *Interesting Engineering*, July 06, 2018, <https://interestingengineering.com/15-engineers-and-their-inventions-that-defined-robotics>, դիտվել է 07.08.2019:

պատճառով: Այս ժամանակաշրջանը հայտնի է «արհեստական բանականության ձմեռ անունով» (1974-1980 թթ.)⁸:

1980-ական թթ. այս ոլորտում հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ ֆինանսական միջոցների տրամադրման ակտիվություն է նկատվում: Այս գործընթացին 1981 թ. զգալի աջակցություն է ցուցաբերում Ճապոնիայի կառավարությունը: Կարճ ժամանակ անց այլ երկրներ ևս ֆինանսական աջակցությամբ միանում են գործընթացին. սպասումները, սակայն, չեն արդարանում և սկսվում է «արհեստական բանականության երկրորդ ձմեռը» (1987-1993 թթ.): 1993-2011 թթ. հաջողություն է գրանցվում՝ պայմանավորված ֆինանսական ներդրումներով:

2012 թ. մինչև այսօրվա տվյալների մատչելիությունը, կապի և հաշվարկային հզորությունների ավելացումը բեկումնային նշանակություն ունեցան մեքենայական ուսուցման (Machine learning), նեյրոնային ցանցերի և խորքային ուսուցման (Deep learning) բնագավառներում⁹: Ըստ կանխատեսումների՝ 2030 թ. արհեստական բանականությունը 15.7 տրիլիոն դոլարի եկամուտ կապահովի համաշխարհային տնտեսությանը¹⁰:

Ելնելով իր գործառնությունից՝ արհեստական բանականությունը բաժանվում է երեք խմբի՝ թույլ կամ նեղ, ընդհանուր կամ ուժեղ և արհեստական գերբանականություն:

Արհեստական թույլ բանականությունը ծրագրավորված է որոշակի առաջադրանքներ իրականացնելու համար: Այն կիրառվում է հատուկ խնդրի լուծման համար և չի գործում դրա սահմաններից դուրս: Ներկայում տիրապետող է արհեստական թույլ բանականությունը (անձնական օգնականները՝ Apple ընկերության Siri-ն, IBM ընկերության Watson-ը, Google ընկերության Google Assistant-ը, Amazon ընկերության Alexa-ն and Microsoft ընկերության Cortona-ն, երթևեկության լույսերի կառավարման համակարգերը մի շարք չինական քաղաքներում, չաթոտերը և այլն):

Արհեստական ուժեղ բանականությունը կարող է կատարել առաջադրանքներ, ինչպես բանական էակը: Ի տարբերություն արհեստական թույլ բանականության՝ այն չի սահմանափակվում հատուկ առաջադրանքով և կարող է կատարել ցանկացած առաջադրանք, ինչպես և մարդը (օրինակ՝ Սոֆյա ռոբոտը):

Արհեստական գերբանականությունն արհեստական բանականության հիպոթետիկ ենթատեսակ է, որն ամենախելացի մարդուց անգամ խելացի է:

Բրիտանացի մաթեմատիկոս Իրվինգ Ջոն Գուդը նշում է, որ գերբանական ցանկացած մեքենա (ultraintelligent machine) կարող է գերազանցել մարդկային մտավոր գործողությունները: Գերբանական մեքենաները կարող են նախագծել ավելի հզոր մեքենաներ, որի դեպքում տեղի է ունենալու «բանականության պայթյուն», և մարդկային բանականությունը շատ հեռ է մնալու: Այդպիսով՝ գերբանական

8 Tony Boobier, *Advanced Analytics and AI: Impact, Implementation, and the Future of Work* (Chichester: John Wiley & Sons, 2018), 41.

9 *WIPO Technology Trends 2019 – Artificial Intelligence* (Geneva: WIPO, 2019), 19.

10 Anand S. Rao, Gerard Verweij, *Sizing the prize What's the real value of AI for your business and how can you capitalise?* <https://www.pwc.com/gx/en/issues/analytics/assets/pwc-ai-analysis-sizing-the-prize-report.pdf>, դիտվել է 17.09.2019:

մեքենան վերջին գյուտն է, որը մարդը երբևէ պետք է կատարի¹¹: Իսկ ամերիկացի մաթեմատիկոս և գիտաֆանտաստ գրող Վեռնոր Վինջը ժողովրդականացրեց «տեխնոլոգիական սինգուլյարություն» (technological singularity) հասկացությունը իր՝ 1993 թ. «Գալիլեո տեխնոլոգիական սինգուլյարություն» ակնարկում, որում գրում է, թե տեխնոլոգիական սինգուլյարությունը նշանակելու է մարդկային դարաշրջանի ավարտը, քանի որ նոր սուպերբանականությունը կշարունակի արդիականացնել ինքն իրեն և առաջ կընթանա տեխնոլոգիապես անհասկանալի տեմպերով¹²: Տեխնոլոգիական սինգուլյարությունը ապագայի հիպոթետիկ ժամանակաշրջան է, երբ տեխնոլոգիական աճը կդառնա անվերահսկելի և անշրջելի, ինչը կհանգեցնի մարդկային քաղաքակրթության անհասկանալի փոփոխությունների: Ամերիկացի նշանավոր գյուտարար և ապագայաբան Ռեյնոլդ Կուրցվեյլը կանխատեսում է, որ մեր մոլորակը տեխնոլոգիական սինգուլյարության է հասնելու 2035 - 2045 թթ. ընկած ժամանակաշրջանում¹³: Ըստ Կուրցվեյլի՝ սինգուլյարությունը մարդկանց թույլ կտա հաղթահարել կենսաբանական մարմինների և ուղեղի սահմանափակումները, կընդլայնվի մարդկային մտածողությունը, սակայն այն իր հետ կբերի նաև վտանգներ՝ մասնավորապես կրաճրացնի մարդկանց՝ կործանարար հակումներին համապատասխան գործելու ունակությունը¹⁴:

Տեխնոլոգիական սինգուլյարության ի հայտ գալը ենթադրում է արհեստական բանականությամբ օժտված գերիզուր ուղեղի ստեղծում, և մասնագետների մեջ մտավախություն կա, որ արհեստական բանականությունը այնքան կգարգանա ու կհեռանա մարդկային ուղեղի գործառույթներից, որ մարդկության նկատմամբ ցեղասպանություն կիրադործի¹⁵:

Ֆիզիկոս Սթիվեն Հոփինգը, Microsoft ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսն ու Tesla և SpaceX ընկերությունների հիմնադիր Իլոն Մասկը բազմիցս իրենց մտահոգություն են հայտնել արհեստական բանականության առաջ բերած ռիսկերի վերաբերյալ: Նրանց մտահոգությունները նույնիսկ հասնում են այնտեղ, թե արհեստական բանականության զարգացումը կարող է վտանգ ստեղծել անգամ մարդկության գոյության համար: Բիլ Գեյթսը գտնում է, որ արհեստական բանականության սպառնալիքը պետք է անհանգստացնի մարդկանց¹⁶: Նա արհեստական բանականությունը համեմատում

11 Irving John Good, *Speculations Concerning the First Ultra intelligent Machine* (Trinity College, Oxford and Atlas Computer Laboratory, Chilton, Berkshire: Elsevier, 1965), 33.

12 Vinge Vernor, "The Coming Technological Singularity: How to Survive in the Post-Human Era," in *Vision-21: Interdisciplinary Science and Engineering in the Era of Cyberspace*, ed. Geoffrey Landis (NASA Publication CP-10129, 1993), 11-22, <https://mindstalk.net/vinge/vinge-sing.html>, դիտվել է 04.05.2019:

13 Charles Jennings, *Artificial Intelligence: Rise of the Lightspeed Learners* (Lanham, London: Rowman & Littlefield, 2019), 32.

14 Ray Kurzweil, *The Singularity Is Near: When Humans Transcend Biology* (London: Penguin Books, 2005), 25, 34.

15 "Is Technological Evolution Infinite or Finite?" October 15, 2013, <https://futurism.com/is-technological-evolution-infinite-or-finite>, դիտվել է 10.05.2019:

16 Kevin Rawlinson, "Microsoft's Bill Gates insists AI is a threat," *BBC*, January 29, 2015, <https://www.bbc.com/news/31047780>, դիտվել է 10.05.2019:

է միջուկային զենքի հետ և կարծում է, թե այն միևնույն ժամանակ հեռանկարային է և վտանգավոր¹⁷: Իսկ Սթիվեն Հոփինգն ասում էր. «Արհեստական բանականության լիակատար զարգացումը կարող է հանգեցնել մարդկային ցեղի վերացմանը: Հենց մարդիկ զարգացնեն արհեստական բանականությունը, այն կսկսի ինքնուրույն թռիչքածն զարգանալ: Մարդիկ, որոնք սահմանափակված են կենսաբանական դանդաղ էվոլյուցիայով, չեն կարող մրցակցել և դուրս կմղվեն»¹⁸: Շվեդ փիլիսոփա, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Նիք Բոստրոմն իր՝ «Սուպերբանականություն. ճանապարհները, վտանգները, ռազմավարությունները»¹⁹ գրքում պնդում է, որ եթե մեքենայական ուղեղները հիմնական բանականության հարցում գերազանցեն մարդկանց, ապա այս սուպերբանականությունը կարող է փոխարինել մարդկանց՝ որպես երկրի վրա գերիշխող կյանքի ձև: Բանական մեքենաները կարող են ավելի արագ բարելավվել իրենց ընդունակությունները, քան մարդիկ, և դրա արդյունքը կարող է լինել մարդկության համար էքսզիստենցիալ աղետը:

Ամերիկացի հայտնի պետական գործիչ, դիվանագետ Հենրի Քիսինջերը ևս կիսում է արհեստական բանականության զարգացման հետ կապված մտահոգությունները: «Արհեստական բանականությունը որոշակի ընդունակությունների տիրապետում է ավելի արագ և ավելի հստակ, քան մարդիկ, և ժամանակի ընթացքում կարող է կրճատել մարդկային կարողությունը և մարդկային պայմանները՝ այն դարձնելով տվյալներ», - նշում է Քիսինջերը: Ըստ նրա՝ մարդկային հասարակությունը պատրաստ չէ արհեստական բանականության աճին²⁰: Հետաքրքրական է հատկապես Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի մեկնաբանությունը. «Արհեստական բանականությունը ոչ միայն Ռուսաստանի, այլևս ողջ մարդկության ապագան է: Այն գալիս է ոչ միայն իր հսկայական հնարավորություններով, այլև սպառնալիքներով, որոնք դժվար է կանխատեսել: Ով կլինի այս ոլորտում առաջատարը, կդառնա աշխարհի ղեկավարը»²¹:

17 Jon Christian, “Bill Gates Compares Artificial Intelligence to Nuclear Weapons,” March 19, 2019, <https://futurism.com/bill-gates-artificial-intelligence-nuclear-weapons>, դիտվել է 10.05.2019:

18 Cellan-Jones Rory, “Stephen Hawking warns artificial intelligence could end mankind,” *BBC*, December 2, 2014, <https://www.bbc.com/news/technology-30290540>, դիտվել է 10.05.2019:

19 Nick Bostrom, *Superintelligence: Paths, Dangers, Strategies* (Oxford: Oxford University Press, 2014), 352.

20 Henry Kissinger, “How the Enlightenment Ends: Philosophically, intellectually - in every way - human society is unprepared for the rise of artificial intelligence,” *The Atlantic*, June 2018, <https://www.theatlantic.com/magazine/archive/2018/06/henry-kissinger-ai-could-mean-the-end-of-human-history/559124/>, դիտվել է 10.05.2019:

21 Alexei Druzhinin, “‘Whoever leads in AI will rule the world’: Putin to Russian children on Knowledge Day,” *Russia Today*, September 1, 2017, <https://www.rt.com/news/401731-ai-rule-world-putin/>, դիտվել է 12.05.2019:

Ինքնավար զենքերի վտանգը զանգվածային սպանությունների և ցեղասպանություն իրագործելու հարցում

Եթե գերբնական մեքենաներից եկող վտանգը ապագային վերաբերող հարց է, ապա ներկայումս ամենից մեծ վտանգը ներկայացնում են ինքնավար զենքերը, որոնք կարող են ձեռք բերել սեփական գիտակցություն: Ավելի մտահոգիչ է այն հանգամանքը, որ այն կարող է հայտնվել այնպիսի անհատի և կառավարության ձեռքում, որը մարդու կյանքը չի գնահատում²²: Եվ ամենավտանգավորն այն է, որ արհեստական բանականությունը կարող է կիրառվել ցեղասպանության պլանավորման համար²³:

2015 թ. ամռանը Արգենտինայում տեղի ունեցած արհեստական բանականության վերաբերյալ միջազգային համատեղ համաժողովին, որին մասնակցում էին Apple ընկերության համահիմնադիր Սթիվ Վոզնյակը, Tesla ընկերության հիմնադիր Իլոն Մասկը, գիտնական Ստիվեն Հոփինգը և ավելի քան 1.000 մասնագետներ, տեսնում էին պատին փակցված ցուցանակ, որի գրա գրված էր հետևյալը. «Եթե արհեստական բանականության տեխնոլոգիաները շարունակում են անսպասելիորեն զարգանալ՝ վերածվելով, ասենք, ինքնավար զենքերի համակարգերի, որոնք գործում են առանց մարդու մասնակցության, ի վերջո կիրականացնեն ցեղասպանություն և էթնիկ գտումներ»²⁴:

Կոնֆերանսի բացմանը՝ հուլիսի 28-ին, հրապարակվեց արհեստական բանականության և ռոբոտատեխնիկայի ոլորտում հետազոտություններ կատարող մասնագետների բաց նամակը: Նամակում նշվում էր, որ ինքնավար զենքերը դառնալու են վաղվա կալաշնիկովը: Ի տարբերություն միջուկային զենքի՝ ինքնավար զենքերը չեն պահանջում թանկ և դժվարամատչելի հումք, ու բոլոր կարևոր ռազմական ուժերի կողմից կդառնան էժան և համատարած արտադրության առարկա: Ոլորտի մասնագետները զգուշացնում էին, թե միայն ժամանակի հարց է, որ ինքնավար զենքերը հայտնվեն սև շուկայում, ահաբեկիչների ու այն բռնապետների ձեռքում, որոնք ցանկանում են ավելի խիստ վերահսկել իրենց ենթակա բնակչությանը, ինչպես նաև այն բարձրաստիճան գիևտնականների մոտ, որոնք ցանկանում են էթնիկական գտումներ իրականացնել: Քանի որ ինքնավար զենքերը լայն հնարավորություններ են ստեղծում սպանությունների, բնակչությանը ենթարկեցնելու և որոշակի էթնիկ խմբերին ընտրողաբար ոչնչացնելու համար, մասնագետները կարևորում էին դրանց արգելումը²⁵:

22 Bernard Marr, “Is Artificial Intelligence Dangerous? 6 AI Risks Everyone Should Know About,” *Forbes*, November 19, 2018, <https://www.forbes.com/sites/bernardmarr/2018/11/19/is-artificial-intelligence-dangerous-6-ai-risks-everyone-should-know-about/#1bedd0212404>, դիտվել է 14.05.2019:

23 Andrew Majot and Roman Yampolskiy, “Diminishing Returns and Recursive Self Improving Artificial Intelligence,” in *The Technological Singularity: Managing the Journey (The Frontiers Collection)*, ed. Victor Callaghan, James Miller, Roman Yampolskiy, Stuart Armstrong (Berlin: Springer: 2017), 142.

24 Jonathan Benson, “AI technology to eventually streamline the type of genocide and ethnic cleansing carried out by Planned Parenthood, experts warn,” September 01, 2015, https://www.naturalnews.com/051010_artificial_intelligence_abortion_robots.html#, դիտվել է 12.05.2019:

25 Արհեստական բանականության և ռոբոտատեխնիկայի ոլորտում հետազոտություններ կատարող մասնագետների բաց նամակը տե՛ս “Autonomous Weapons: an Open Letter from AI & Robotics

Այս համատեքստում հատկանշական կարող ենք համարել նաև այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում մեծանում է ինքնավար զենքերի համակարգերի՝ թիրախները խոցելու հնարավորությունը՝ արագությունը, ճշգրտությունը և դրանք գործում են ավելի համակարգված²⁶: Ինքնավար զենքերը կարող են գործել առանց մարդկային անմիջական մասնակցության՝ դրանով բացառելով մարդկային հույզերի առաջացումը թիրախները խոցելու ժամանակ: Սակայն հույզերի բացակայության հանգամանքը դժվար է գնահատել, քանի որ հույզերի ազդեցության ներքո մարդիկ կարող են և՛ վայրագություններ կատարել, և՛ մարդասիրական գործողություններ²⁷:

Ուշագրավ է, որ ներկայում ռազմական ոլորտում նկատվում է արհեստական բանականությամբ սպառազինությունների համաշխարհային մրցավազք, որի մասնակիցներն են ԱՄՆ-ը, Չինաստանը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իսրայելը և Հարավային Կորեան²⁸: Սակայն, գլխավորապես այն տեղի է ունենում ԱՄՆ-ի, Չինաստանի և Ռուսաստանի միջև²⁹:

2017 թ. օգոստոսին «Թեյլա» (Tesla) ընկերության հիմնադիր Իլոն Մասկի և արհեստական բանականությամբ զբաղվող բրիտանական DeepMind ընկերության հիմնադիր Մուստաֆա Սուլեյմանի գլխավորությամբ 26 երկրներից արհեստական բանականության և ռոբոտաշինական ընկերությունների հիմնադիր 116 մասնագետ բաց նամակ հղեց ՄԱԿ-ին՝ կոչ անելով կանխելու սպառազինությունների մրցավազքը մահացու ինքնավար զենքերի արտադրության ոլորտում: Իրենց նամակում ընկերությունների հիմնադիրներն ընդգծում էին «Որոշակի սովորական սպառազինությունների մասին» կոնվենցիայի³⁰ վերանայման անհրաժեշտությունը: Նրանք նշում էին, որ մահացու ինքնավար զենքերը կարող են դառնալ որպես «պատերազմի երրորդ հեղափոխություն»՝ վառողի հայտնագործումից և միջուկային զենքից հետո, ապա մատնանշում, որ դանդաղ գործելու ժամանակ չկա³¹:

Ըստ «Մայքրոսոֆթ» ընկերության նախագահ Սմիթի՝ մահացու ինքնավար զենքերի

Researchers,” <https://futureoflife.org/open-letter-autonomous-weapons/?cn-reloaded=1>, դիտվել է 13.05.2019:

26 Jayshree Pandya, “The Weaponization Of Artificial Intelligence,” *Forbes*, January 14, 2019, <https://www.forbes.com/sites/cognitiveworld/2019/01/14/the-weaponization-of-artificial-intelligence/#484da7953686>, դիտվել է 12.02.2020:

27 Paul Scharre, *Army of None: Autonomous Weapons and the Future of War* (New York, London: W. W. Norton & Company, 2018), 232.

28 Ավելի մանրամասն տե՛ս Kirsten Gronlund, “State of AI: Artificial Intelligence, the Military and Increasingly Autonomous Weapons,” *Future of Life Institute*, May 9, 2019, <https://futureoflife.org/2019/05/09/state-of-ai/>, դիտվել է 17.05.2019:

29 Ավելի մանրամասն տե՛ս Karla Lant, “China, Russia and the US Are in An Artificial Intelligence Arms Race,” September 12, 2017, <https://futurism.com/china-russia-and-the-us-are-in-an-artificial-intelligence-arms-race>, դիտվել է 17.05.2019:

30 “Convention on Prohibitions or Restrictions on the Use of Certain Conventional Weapons Which May Be Deemed to Be Excessively Injurious or to Have Indiscriminate Effects,” [https://www.unog.ch/80256EDD006B8954/\(httpAssets\)/51609D467F95DD5EC12571DE00602AED/\\$file/CONVENTION.pdf](https://www.unog.ch/80256EDD006B8954/(httpAssets)/51609D467F95DD5EC12571DE00602AED/$file/CONVENTION.pdf), դիտվել է 16.05.2019:

31 “An Open Letter to the United Nations Convention on Certain Conventional Weapons,” <https://www.cse.unsw.edu.au/~tw/ciair/open.pdf>, դիտվել է 18.05.2019:

օգտագործումը նոր խնդիրներ է առաջ բերում, որոնք կառավարությունների կողմից պետք է հրատապ դիտարկվեն³²:

Նշենք, որ պետությունների դիրքորոշումն այս հարցի շուրջ միանշանակ չէ: Օրինակ՝ 2015 թ. Մեծ Բրիտանիայի կառավարությունը դեմ է հանդես եկել ինքնավար զենքերի արգելքին՝ նշելով, թե միջազգային մարդասիրական իրավունքն արդեն իսկ ապահովում է բավարար կարգավորում այդ ոլորտի համար: Միացյալ Թագավորությունն ընդգծել է, որ չի զարգացնում մահացու ինքնավար զենքերի համակարգեր, իսկ Մեծ Բրիտանիայի զինված ուժերի կողմից կիրառվող բոլոր զենքերը մշտապես գտնվում են մարդկային վերահսկողության ներքո³³:

2016 թ. Չինաստանը հրապարակում է ծրագրային մի փաստաթուղթ, որում նշվում է ինքնավար զենքերի խնդրի անհամապատասխանությունը միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին՝ մատնանշելով այս հարցի ուղղությամբ միջազգային իրավունքում փոփոխությունների անհրաժեշտությունը, սակայն՝ ոչ կիրառման արգելումը³⁴: Այս մոտեցումն է ցուցաբերում նաև Ռուսաստանը՝ չընդունելով ինքնավար մահացու զենքերի օգտագործման արգելքը³⁵: 2019 թ. մարտի 29-ին ՄԱԿ-ի՝ ինքնավար մահացու զենքերի արգելման խնդրին նվիրված ժնկյան նիստին Ավստրալիան, Իսրայելը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը դեմ քվեարկեցին արգելքին³⁶:

2019 թ. աշնանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանում առնվազն 41 երկիր բարձրացրել է մարդասպան ռորոտների արգելքի հարցը, իսկ Ավստրիան, Չինաստանը, Կուբան, Էկվադորը և Գվատեմալան նորից հանդես են եկել մահացու ռորոտների կիրառումն արգելող միջազգային նոր պայմանագրի տեքստի կազմման անհրաժեշտության իրենց կոչերով³⁷:

2017 թ. Հարվարդի համալսարանի Բելֆեր կենտրոնն իր զեկույցում նշում

32 Wesley Hudson, “Killer robots ‘unstoppable’ rise will put public safety ‘at risk’ claims Microsoft chief,” *Daily Express and Sunday Express*, September 22, 2019, https://www.express.co.uk/news/uk/1181082/killer-robots-latest-technology-news-microsoft-ai-lethal-autonomous-weapons?fbclid=IwAR2nprEYH1jIqvbYK_bstXU08Dk1YpPMRYnuZDD-nBH46Trls-J5-9qXo8, դիտվել է 05.02.2020:

33 Owen Bowcott, “UK opposes international ban on developing ‘killer robots,” *The Guardian*, April 13, 2015, <https://www.theguardian.com/politics/2015/apr/13/uk-opposes-international-ban-on-developing-killer-robots>, դիտվել է 05.02.2020:

34 “The position paper submitted by the Chinese delegation to CCW 5th Review Conference,” [https://www.unog.ch/80256EDD006B8954/\(httpAssets\)/DD1551E60648CEBBC125808A005954FA/%24file/China's+Position+Paper.pdf](https://www.unog.ch/80256EDD006B8954/(httpAssets)/DD1551E60648CEBBC125808A005954FA/%24file/China's+Position+Paper.pdf), դիտվել է 19.05.2019:

35 E&T editorial staff, “Russia rejects potential UN ‘killer robots’ ban, official statement says,” *E&T magazine*, December 1, 2017, <https://eandt.theiet.org/content/articles/2017/12/russia-rejects-potential-un-killer-robots-ban-official-statement-says/>, նաև՝ “Group of Governmental Experts of the High Contracting Parties to the Convention on Prohibitions or Restrictions on the Use of Certain Conventional Weapons Which May Be Deemed to Be Excessively Injurious or to Have Indiscriminate Effects,” November 10, 2017, <https://admin.govexec.com/media/russia.pdf>, դիտվել է 19.05.2019:

36 Gayle Damien, “UK, US and Russia among those opposing killer robot ban,” *The Guardian*, March 29, 2019, <https://www.theguardian.com/science/2019/mar/29/uk-us-russia-opposing-killer-robot-ban-un-ai>, դիտվել է 08.11.2019:

37 “High-level concerns on killer robots at UN,” October 30 2019, <https://www.stopkillerrobots.org/2019/10/unga74/>, դիտվել է 08.11.2019:

է, որ գրեթէ անհնար է կանխել արհեստական բանականության ռազմական նպատակներով կիրառման ընդլայնումը³⁸: Եթե անգամ ՄԱԿ-ը կանխարգելիչ արգելք սահմանի ինքնավար զենքերի տեխնոլոգիաների կիրառման վրա, իսկ այդ արգելքը պատշաճորեն պահպանվի պետությունների կողմից, այդուհանդերձ, հարցը չենք կարող փակված համարել:

Որոշակի խմբի անդամների թիրախավորելու նպատակով դրոնների կիրառման հարցը

Ինքնավար զենքի համակարգի միջոցով հնարավոր է թիրախավորել ռասայական խմբի անդամներին՝ նրանց ոչնչացնելու համար: Օրինակ՝ դրոնը, օգտագործելով նկարներ ճանաչող ծրագրեր, կարող է տարբերակել անհատի էթնիկ պատկանելիությունը (գույնով, ֆիզիկական առանձնահատկություններով):

Հատկանշական է, որ այսպիսի դրոններ ստեղծելու փորձերը կարող են արվել մասնավոր հաստատություններում՝ սահմանափակ բյուջեով և կարճ ժամանակահատվածում³⁹: Ազգությամբ ճապոնացի ամերիկացի գիտնական, տեսական ֆիզիկայի ոլորտի փորձագետ Միցիո Կակուն գգուշացնում է ռազմականացված դրոնների համակարգերի բացարձակ վտանգավորության մասին. ըստ նրա՝ մոտ ապագայում դրոնը կճանաչի մարդու կառուցվածքը, որը հնարավորություն կընձեռնի սպանելու թիրախավորվածին⁴⁰:

Այսօր արդեն լայնորեն գործածվում են դեմքերի նույնականացման համակարգերը: Ավելին՝ Չինաստանն արդեն փորձարկում է վերահսկողական այնպիսի համակարգեր, որոնք թույլ են տալիս հայտնաբերել նույնիսկ մարդկանց հույզերը⁴¹: Ռուսական «Էն Թ-եյլաբ» (NtechLab) ընկերությունն օգտագործում է դեմքը ճանաչելու համակարգը՝ մարդկանց էթնիկ պատկանելությունը որոշելու նպատակով⁴²:

«Future of Life Institute»-ը⁴³ 2017 թ. թողարկեց «Slaughterbots» անվանումով

38 Greg Allen, Taniel Chan, *Artificial Intelligence and National Security*, Belfer Center for Science and International Affairs (Cambridge: Belfer Center for Science and International Affairs Harvard Kennedy School, 2017), 3, <https://www.belfercenter.org/sites/default/files/files/publication/AI%20NatSec%20-%20final.pdf>, դիտվել է 22.05.2019:

39 Amir Husain, *The Sentient Machine: The Coming Age of Artificial Intelligence* (New York, London, Toronto, Sydney and New Delhi: Simon and Schuster, 2018), 106-107.

40 Jolene Creighton, “Physicist Michio Kaku Has Some Powerful Predictions for the Future,” March 26, 2018, <https://futurism.com/michio-kaku-prominent-futurist-predictions>, դիտվել է 19.05.2019:

41 Adrian Potoroaca, “China is testing ‘emotion recognition’ systems in Xinjiang,” *TechSpot*, November 4, 2019, <https://www.techspot.com/news/82611-china-testing-emotion-recognition-systems-xinjiang.html?fbclid=IwAR23iKberEyXCPTMHGGSD6Ss-dhNHun2yjCkm5KPBU5ilvIhuF4jvZ3ykkE>, դիտվել է 19.01.2020:

42 Ryan Daws, “Russian startup is building a controversial ‘ethnicity-detecting’ AI,” *AI News*, May 25, 2018, <https://artificialintelligence-news.com/2018/05/25/russian-ethnicity-detecting-ai/>, դիտվել է 19.05.2019:

43 Future of Life Institute-ը (թարգմ.՝ Կյանքի ինստիտուտի ապագան) Բոստոնի տարածքում գործող կամավոր հետազոտական և կրթական կազմակերպություն է, որն աշխատում է մեղմել մարդկության առջև ծառայած էկզիստենցիալ վտանգները՝ մասնավորապես առաջադեմ արհեստական բանականության էկզիստենցիալ ռիսկը:

ավելի քան 7 րոպե տևողություն ունեցող մի տեսանյութ, որում գիտաֆանտաստիկ ձևով ցույց է տրվում, թե ինչպես է տեխնոլոգիական ընկերությունը ներկայացնում ամենաառաջադեմ ինքնավար դրոնները, որոնք փոքր խաղալիքի չափ ունեն և զինված են պայթուցիկով: Դրոնները նույնականացնում են թիրախներին և սպանում՝ նախապես ծրագրավորված չափանիշների և համակարգված տվյալների հիման վրա⁴⁴: «Future of Life Institute»-ի նպատակն էր ցույց տալ ինքնավար զենքերի կիրառումից եկող վտանգները: Եվ ամենակարևորն այն է, որ խոսքը գնում է ոչ միայն վաղվա հիպոթետիկ վտանգների մասին, այլև հենց ներկայի:

Ուշագրավ է, որ Չինաստանն արդեն սկսել է Մերձավոր Արևելքում վաճառել ինքնավար մահացու ռոբոտներ: Օրինակ՝ չինական «Զիյան» (Ziyang) ընկերությունը միջազգային գնորդներին ակտիվորեն գովազդում է «Բլոուֆիշ Ա3» (Blowfish A3) ուղղաթիռը, որն ինքնաձիգով զինված ինքնավար դրոն է:

ԱՄՆ պաշտպանության նախարար Մարկ Էսպերն այս առնչությամբ նշել է, թե չինական զենք արտադրողները վաճառում են անօդաչու այնպիսի սարքեր, որոնք լիարժեք ինքնավարություն ունեն, ներառյալ՝ նպատակային մահացու հարվածներ հասցնելու հնարավորություն⁴⁵:

Յեղասպանական քարոզչության համար սոցիալական մեդիայի և կեղծ տեսանյութերի կիրառման խնդիրը

Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ արհեստական բանականության միջոցով ցեղասպանություն իրագործելու քարոզչության առումով լուրջ գործիք կարող է ծառայել նաև սոցիալական մեդիան: Սոցիալական ցանցերում քարոզչություն իրականացնելով ալգորիթմների և անձնական տվյալների օգտագործման արդյունքում նույնականացված անհատներին արհեստական բանականությունը կարող է թիրախավորել և տարածել ցանկալի տեղեկատվություն⁴⁶: Արհեստական բանականությունը կարող է ապակայունացնել համացանցային նորությունների ողջ էկոհամակարգը, իսկ սոցցանցերը կարող են դառնալ առաջին գոհերը⁴⁷:

Այս համատեքստում հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ արդեն գրանցվել են դեպքեր, երբ սոցիալական ցանցերը օգտագործվել են ցեղասպանական նպատակներով, ինչպես 2016-2017 թթ. Մյանմարում զինծառայողների կողմից ֆեյս-

44 Future of Life Institute, “Slaughterbots,” November 13, 2017, https://www.youtube.com/watch?v=HipTO_7mUOw, դիտվել է 15.09.2019:

45 Patrick Tucker, “SecDef: China Is Exporting Killer Robots to the Mideast,” *Defense One*, November 5, 2019, <https://www.defenseone.com/technology/2019/11/secdef-china-exporting-killer-robots-mideast/161100/?oref=DefenseOneFB&fbclid=IwAR30HzhnTAAzJH-LUggx4leuTuR71PdLEcunjzhinNnwnxDVplJJ7OH EA7s>, դիտվել է 29.09.2019:

46 Bernard Marr, “Is Artificial Intelligence Dangerous? 6 AI Risks Everyone Should Know About,” *Forbes*, November 19, 2018, <https://www.forbes.com/sites/bernardmarr/2018/11/19/is-artificial-intelligence-dangerous-6-ai-risks-everyone-should-know-about/#1bedd0212404>, դիտվել է 19.01.2020:

47 Victor Tangerman, Elon Musk, “‘Advanced AI’ Will Manipulate Social Media,” 26 September 2019, <https://futurism.com/the-byte/elon-musk-ai-manipulate-social-media>, դիտվել է 05.11.2019:

բուքյան հարթակը կիրառվեց որպես էթնիկ գոտումների գործիք, և կեղծ էջերի միջոցով մահմեդական ռոհինջանների նկատմամբ հակաքարոզչություն իրականացվեց⁴⁸:

«Մայքրոսոֆթ»-ը 2016 թ. ներկայացրեց արհեստական բանականությամբ օժտված Թայ անունով չաթբոտը⁴⁹, որը պետք է մեկնաբանություններ աներ սոցիալական մեդիայում և սովորեր, թե ինչպես կարող է շփվել ուրիշների հետ: Սակայն երկար ժամանակ պահանջվեց, որ «Մայքրոսոֆթ»-ը Թայի ազգայնամոլ քարոզչական գրառումները ջնջի. չաթբոտը վերջնականապես արգելափակվեց, երբ սկսեց ցեղասպանությունը քարոզող գրառումներ անել⁵⁰:

Արհեստական բանականության գործիքները կարող են լայնորեն օգտագործվել նաև «դիպֆեյք» (deepfake) անունը ստացած կեղծ տեսանյութերի տարածման համար: Օրինակ՝ տեսագործիքների կիրառմամբ անհատի դեմքը կարող է տեղադրվել մեկ այլ մարդու մարմնի վրա⁵¹, արհեստական բանականության միջոցով հնարավոր է ընդօրինակել նաև մարդու ձայնը⁵²:

Այսպիսի տեսանյութերը դժվարությամբ հայտնաբերվող առողիկ կամ վիդեո թվային մանիպուլյացիաներ են, որոնցում կարող են պատկերվել մարդիկ, և ներկայացվել, թե նրանք կատարում են այսպիսի արարքներ կամ այսպիսի խոսքեր են արտաբերում, երբ նրանք նման նման խոսքեր չեն ասել կամ արարքներ չեն կատարել: Այսպիսի բովանդակությամբ կեղծ տեսանյութերը կարող են օգտագործվել որպես գործիք ահաբեկչական խմբավորումների կողմից սադրիչ գործողությունների իրականացման և թիրախային լսարանների հույզերի վրա ազդելու նպատակով՝ անգամ ցույց տալով, թե իբր իրենց հակառակորդները ցեղասպանական գործողություններ են իրականացնում: Օրինակ՝ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից արհեստական բանականության միջոցով կարող է ստեղծվել կեղծ տեսանյութ, որում պատկերված կլինեն ԱՄՆ զինծառայողներ, ովքեր կրակում են խաղաղ բնակիչների ուղղությամբ կամ քննարկում են մզկիթը ոմբակոծելու պլանը, որի միջոցով ահաբեկչական խմբավորումը պայմաններ կստեղծի, որ մարդիկ թշնամաբար

48 Paul Mozur, “A Genocide Incited on Facebook, With Posts From Myanmar’s Military,” *New York Times*, October 15, 2018, <https://www.nytimes.com/2018/10/15/technology/myanmar-facebook-genocide.html>, դիտվել է 08.03.2020:

49 Չաթբոտը համակարգչային ծրագիր է, որն իրականացնում է հաղորդակցություն տեքստային կամ ձայնագրված նամակների միջոցով: Չաթբոտերը սովորաբար օգտագործվում են տարբեր գործնական երկխոսություններում, ինչպես, օրինակ՝ հաճախորդների սպասարկումը կամ տեղեկատվություն ստանալը:

50 James MacDonald, “Microsoft is deleting its AI chatbot’s incredibly racist tweets,” *Business Insider*, April 15, 2016, <https://daily.jstor.org/when-the-ai-promotes-genocide/>, դիտվել է 23.05.2019: Տե՛ս նաև Rob Price, “Microsoft is deleting its AI chatbot’s incredibly racist tweets,” *Business Insider*, March 24, 2016, <https://www.businessinsider.com/microsoft-deletes-racist-genocidal-tweets-from-ai-chatbot-tay-2016-3?r=UK&IR=T>, դիտվել է 28.05.2019:

51 Kevin Roose, “Here Come the Fake Videos, Too,” *New York Times*, March 4, 2018, <https://www.nytimes.com/2018/03/04/technology/fake-videos-deepfakes.html>, դիտվել է 28.05.2019:

52 Bahar Gholipour, “New AI Tech Can Mimic Any Voice,” *Scientific American*, May 2, 2017, <https://www.scientificamerican.com/article/new-ai-tech-can-mimic-any-voice/>, դիտվել է 29.05.2019:

տրամադրվեն ԱՄՆ-ի նկատմամբ, ինչպես նաև համալրեն իրենց շարքերը⁵³:

Մեծ վտանգ կա, որ արհեստական բանականության գործիքների միջոցով կեղծ տեսանյութերի տարածումը կկիրառվի հենց ատելություն քարոզելու նպատակով: Եվ պատահական չէ, որ որոշ մասնագետներ մտավախություն ունեն, որ կեղծ տեսանյութերը կարող են օգտագործվել ինչպես ապատեղեկատվություն տարածելու, այնպես էլ բռնություն, պատերազմ կամ ցեղասպանություն հրահրելու նպատակով⁵⁴: Եվ մասնավորապես կրոնական կամ էթնիկ փոքրամասնությունների առաջնորդների մասնակցությամբ կեղծ տեսանյութերը հնարավորություն կտան այդ փոքրամասնության նկատմամբ ատելության մթնոլորտ ստեղծել և ցեղասպանություն հրահրել⁵⁵:

Վերոնշյալները դեռևս չեն ներկայացնում բոլոր այն վտանգները, որոնք կարող են առաջանալ արհեստական բանականության կիրառության արդյունքում. արհեստական բանականության առաջընթացն աներևակայելի արագ է⁵⁶ և կարծում ենք՝ դրա հետագա զարգացումն իր հետ կարող է նոր վտանգներ բերել:

Արհեստական բանականության էթիկայի մշակման անհրաժեշտությունը

Կանխատեսելով արհեստական բանականության առաջ բերած հնարավոր վտանգները՝ դեռևս 1950 թ. գրող Այզեկ Ազիմովն առաջ է քաշել ռոբոտատեխնիկայի երեք օրենք. ռոբոտը չպետք է վնասի մարդուն, ռոբոտը պետք է կատարի մարդկանց հրահանգած հանձնարարությունները՝ բացառությամբ առաջին օրենքի և ռոբոտը պետք է պաշտպանի իր գոյությունն այնքանով, որքանով այն չի հակասի առաջին և երկրորդ օրենքներին⁵⁷:

Գեղարվեստական ստեղծագործություններում, որտեղ ռոբոտները պատասխանատվություն են ստանձնել ամբողջ մոլորակի և մարդկային քաղաքակրթությունների կառավարման համար, Ազիմովը ավելացրել է նաև չորրորդ կամ զրոյական (zereth) օրենքը՝ ռոբոտին արգելվում է վնասել մարդկությանը: Ռոբոտն իրավունք ունի վնասել անհատին միայն այն դեպքում, երբ դրանով կկանխի ողջ մարդկության գոյատևմանը

53 Robert Chesney and Danielle Citron, “Deepfakes and the New Disinformation War: The Coming Age of Post-Truth Geopolitics,” *Foreign Affairs*, January/February 2019, <https://www.foreignaffairs.com/articles/world/2018-12-11/deepfakes-and-new-disinformation-war>, դիտվել է 28.01.2020:

54 Council on Foreign Relations, “The Threat of Deep Fakes,” May 31, 2019, <https://www.youtube.com/watch?v=zhf2X1RyIWE>, դիտվել է 20.09.2019:

55 John Loeffler, “AI Deepfakes Are Now Easier to Make Than Ever, Pointing to Ominous Future,” *Interesting Engineering*, June 11, 2019, <https://interestingengineering.com/ai-deepfakes-are-now-easier-to-make-than-ever-pointing-to-ominous-future>, դիտվել է 28.01.2020:

56 Stephen Yuen, “Elon Musk on Artificial Intelligence: ‘The pace of progress in artificial intelligence is incredibly fast,’” November 18, 2014, <https://www.thesavvytechs.com/2014/11/18/elon-musk-artificial-intelligence-pace-progress-artificial-intelligence-incredibly-fast/>, դիտվել է 28.05.2019:

57 Isaac Asimov, “*Runaround.*” *I, Robot* (New York City: Doubleday, 1950), 40.

սպաննացող վտանգը⁵⁸: Այդուհանդերձ, ժամանակակից ռոբոտատեխնիկայի մասնագետներն Ազիմովի վերոնշյալ օրենքների կիրառումն իրատեսական չեն համարում հիմնական խնդրի երկխոսատության պատճառով⁵⁹:

Հնարավոր բացասական հետևանքները կանխելու նպատակով ոլորտի մասնագետներն անհրաժեշտ են համարում արհեստական բանականության էթիկայի մշակումը: Այն ներառում է մեքենայական էթիկան և ռոբոտէթիկան, որը վերաբերում է մարդկանց «բարոյական վարքին»՝ արհեստական բանականությամբ օժտված էակների նախագծում, կառուցում, օգտագործում:

2016 թ. Ստանդարտների բրիտանական ինստիտուտը ռոբոտներ ստեղծողների համար հրապարակեց ռոբոտների էթիկական վարքագծի ապահովման վերաբերյալ «BS8611. ռոբոտներ և ռոբոտական սարքեր» անվանումով փաստաթուղթ, որում նշվում էր, որ «ռոբոտները չպետք է նախագծված լինեն մարդուն սպանելու կամ վնասելու համար, և այդ հարցում ոչ թե ռոբոտները, այլ մարդիկ են պատասխանատու. պետք է հնարավոր լինի պարզել, թե ով է պատասխանատու ցանկացած ռոբոտի և դրա պահվածքի համար»⁶⁰:

Այսպիսով՝ մարդկության համար հրատապ է դարձել վերոնշյալ հնարավոր վտանգները կանխելու նպատակով օրենսդրական համապատասխան մեխանիզմների ստեղծումը՝ հիմնված մարդու իրավունքների պաշտպանության և էթիկայի չափորոշիչների վրա: Սա նաև հնարավորություն կտա կանխարգելել ցեղասպանության և զանգվածային սպանությունների իրագործման հնարավոր վտանգները:

Թեև ցեղասպանագետները հետազոտություններ են իրականացրել տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների դերի ուղղությամբ⁶¹, նույնիսկ առաջարկ կա ցեղասպանության կանխարգելման համատեքստում օգտագործել արբանյակների հնարավորությունները՝ մարդու իրավունքների խախտումների շուրջ հեռակա մշտադիտարկում անելու և վաղ նախագգուշացման համակարգ գործարկելու նպատակով⁶², սակայն արհեստական բանականության թեմային դեռևս համապատասխան անդրադարձ չի կատարվել: Հետևաբար, հարկ է մտածել արհեստական բանականության համապատասխան ալգորիթմների մշակման ուղղությամբ, որոնք թույլ կտան հայտնաբերել և կանխարգելել ցեղասպանական միջավայրի ձևավորումը վաղ փուլում:

58 Keith Abney, “Robotics, Ethical Theory, and Metaethics: A Guide for the Preplexed,” in *Robot Ethics: The Ethical and Social Implications of Robotics*, ed. Patrick Lin, Keith Abney, George A. Beke (Cambridge, Massachusetts, London: MIT Press, 2012), 43.

59 McCauley Lee, “AI Armageddon and the Three Laws of Robotics,” *Ethics and Information Technology* 9, no.2 (2007): 153–164.

60 Amit Ray, *Compassionate Artificial Intelligence: Frameworks and Algorithms*, *Compassionate AI Lab* (An Imprint of Inner Light Publishers, 2018), 46–47.

61 Չանգվածային սպանությունների կատարման գործում տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների դերակատարության մասին տե՛ս “Information and Communications Technologies in Mass Atrocities Research and Response,” *Genocide Studies and Prevention* 11, no. 1, (2017): 128.

62 Andrew Marx, “Using Satellites to Detect Mass Human Rights Violations: A Call for International Community to Implement an Early Warning Detection System,” in *Last Lectures on the Prevention and Intervention of Genocide*, ed. Samuel Totten (London and New York: Routledge, 2018), 171–179.

Narek M. Poghosyan
PhD in History

THE DEVELOPMENT OF ARTIFICIAL INTELLIGENCE AND RISKS FOR THE IMPLEMENTATION OF GENOCIDE AND MASS KILLINGS

SUMMARY

Key words: Artificial intelligence, lethal autonomous weapons, arms race, robots, genocide, social media, fake videos, artificial intelligence ethics.

This article illustrates the fact that the accelerating pace of technological development in recent years, in particular the use of artificial intelligence (AI) has raised serious concerns among experts that it, along with its advantages, can pose many dangers to mankind when machines think and make decisions for them. Particularly risky is that the development of AI and autonomous weapons can be used to target certain national, religious and racial groups, thereby increasing the risk of genocide and mass killings.

In the present day, when the global arms race using AI is a reality, many technologists are turning their attention to banning lethal autonomous weapons. In addition, in order to prevent the potential negative consequences of AI development, industry professionals have suggested the need to develop an AI code of ethics.

The creation of appropriate legislative mechanisms based on ethics and the protection of human rights has already become an urgent matter for mankind to prevent the possible risks posed by the development of robotics and artificial intelligence technology.

Since artificial intelligence is used to detect and prevent various types of crime, it is therefore necessary to use the opportunities provided by it to prevent genocide and mass murder.

Нарек М. Погосян
кандидат исторических наук

РАЗВИТИЕ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА И РИСКИ ДЛЯ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА И МАССОВЫХ УБИЙСТВ

РЕЗЮМЕ

Ключевые слова: искусственный интеллект, смертоносное автономное оружие, гонка вооружений, роботы, геноцид, дроны, социальные сети, фальшивые видео, этика искусственного интеллекта.

В статье показано, что ускоряющиеся темпы развития технологий в последние годы, в частности использование искусственного интеллекта, вызывают серьезные

опасения у экспертов, что он, наряду с его преимуществами, может создать много опасностей для человечества, когда машины думают и принимают решения для себя. Особенно рискованным является тот факт, что разработка искусственного интеллекта и автономного оружия может использоваться для нацеливания на определенные национальные, религиозные, расовые группы, что повышает риск геноцида и массовых убийств.

В настоящее время, когда глобальная гонка вооружений с использованием искусственного интеллекта становится реальностью, многие технологи обращают свое внимание на запрет смертоносного автономного оружия. Кроме того, чтобы предотвратить возможные негативные последствия развития искусственного интеллекта, профессионалы отрасли предложили разработать этику искусственного интеллекта.

Создание соответствующих законодательных механизмов, основанных на защите прав человека и этики, уже стало насущной задачей для человечества, чтобы предотвратить возможные риски, связанные с развитием робототехники и технологий искусственного интеллекта.

Поскольку искусственный интеллект используется для обнаружения и предотвращения различных видов преступлений, поэтому необходимо использовать возможности, предоставляемые искусственным интеллектом для предотвращения геноцида и массовых убийств.

Միհրան Ա. Մինասեան

ՄԻՎՐԱՆ ՀԵՐԱՐԴԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՀԱԼԷՊԻ ՄԻՍԻՈՆԱՐՈՒՀԻՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ¹

Բանալի քառեր՝ Հալեպ, Միհրան Հերարդեան, միսիոնարներ, Միս Էտիթի Բօպերթս, Միս Հետվիկ Պիլ, Միս Պօտիլ Պիեօրն, Միս Քարէն Եփփէ:

Այս նիւթին մեջ հրատարակութեան կու տանք հալեպահայութեան շրջանակներուն մէջ գործած օտար միսիոնարուհիներուն մասին Միհրան Հերարդեանի ընդարձակ տեղեկագիրը, որ պատրաստած է Հալեպի Ազգային առաջնորդարանի խնդրանքով: Հեղինակը լաւատեղեակ էր ներկայացուցած նիւթին, որովհետև ան անմիջական գործակիցն էր Քարէն Եփփէին ու մօտէն ծանօթ էր անոր գործունէութեան. միաժամանակ տնօրէնը, հաշուապահն ու քարտուղարն էր անոր ղեկավարած Ազգերու Դաշնակցութեան կանանց և մանուկներու պաշտպան հաստատութեան: Հերարդեան մօտէն ծանօթ էր նաև միսիոնարուհիներու ամօրեային ու գործելաճին, ուրեմն պատահական չէ որ Ազգ. Քաղաքական ժողովը, որպէս լաւատեղեակ անձ, իրմէ՛ խնդրած ըլլար այսպիսի տեղեկագիրի մը պատրաստութիւնը: Այս բոլորէն ետք ուրեմն պիտի ենթադրել, որ Հերարդեանի փոխանցած տեղեկութիւնները ստույգ են ու հաւաստի:

Տեղեկագիրը ընդհանուր գաղափար մը կու տայ արքայական հայերու մեծագոյն կայանատեղին հանդիսացող Հալեպի մէջ գործող միսիոնարներու մասին, նշելով անոնց գործունէութեան դրական և ժխտական երեսները: Հոն կան հետաքրքրական բազմաթիւ բացայայտումներ միսիոնարները շրջապատողներու նիւթական մախումներուն և զեղծարարութիւններուն մասին, նաև կենդանի փաստեր, թէ ինչպէս շատերու համար բարեգործութիւնը ծառայած է որպէս միջոց թշուառութեան մէջ յայտնուած արքայականները սիրաշահելու, համայնքային նոր պատկանելիութիւն թելադրելու և այլնի մասին:

Զգալի է կարգ մը միսիոնարուհիներու հանդէպ Հերարդեանի ոչ դրական կեցուածքն ու հեզնական ոճը, բացի Օր. Քարէն Եփփէէն, որուն մասին խօսած է մեծ սիրով ու յարգանքով: Հերարդեան առիթով մը գրած է «Քառէն Եփփէ հայր» իմաստալից խորագիրով յօդուածը², ուր ևս զգալի է անոր հանդէպ ունեցած յարգանքը:

Հրատարակուող տեղեկագիրին բնօրինակը կը պահուի Հալեպի Ազգային առաջնորդարանի արխիւատան մէջ: Մեքենագրուած է ու կը բաղկանայ 8 էջէ:

Տեղեկագիրը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ: Կատարած ենք միայն կէտադրական աննշան հպումներ: Մեր կողմէ՛ անելցուցած ենք միայն անհրաժեշտ ծանօթագրութիւններ:

* * *

1830-ական թուականներէն սկսեալ, Արևմուտքի գրեթէ բոլոր անկիւններէն՝ Միացեալ Նահանգներէն, Քանադայէն, Մեծն Բրիտանիայէն, Գերմանիայէն, Սքանտինաւեան

1 Հոդվածը ստացվել է 09.11.2019 և ընդունվել տպագրության՝ 20.03.2020:

2 Հետեւեալ հատորին մէջ՝ *Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները*, խմբ. և կազմ. Արամ Սահակեան (Պէյրոյթ, Ատլաս, 1955), 518-530:

երկիրներէն ու այլ շրջաններէ, հայաշխարհ ներթափանցեցին հարիւրաւոր միսիոնարներ աշխարհի առաջին քրիստոնէայ ժողովուրդին Աւետարան քարոզելու՝ կրթական, կրօնական քարոզչութեան, բժշկական առաքելութեան և այլ դիմակներու տակ: Անոնք հիմնեցին բազմաթիւ միջնակարգ և բարձրագոյն վարժարաններ, հիւանդանոցներ, որբանոցներ, տպարաններ, բարեսիրական հաստատութիւններ և այլն:

Միսիոնարներուն աշխատանքային թափը շարունակուեցաւ մինչև 1915 թ., ապա զինադադարի տարիներուն, Կիլիկիոյ և Արևմտեան Հայաստանի կարգ մը անկիւններուն մէջ գործունէութեան կարճ շրջանէ մը ետք, այդ տարածքներու հայաթափումով անոնք կամ վերադարձան իրենց երկիրները և կամ ալ իրենց «հօտին» հետ տեղափոխուեցան արտօրական հայերու նոր բնակավայրերը՝ Հալէպ, Պէյրութ, Լիբանանեան այլապլ շրջաններ, Յունաստան և այլն:

Դժուար է անշուշտ միանշանակ գնահատական տալ բոլոր միսիոնարներուն մասին. եղած են միսիոնարներ որոնց միտք բանին և գործունէութեան կիզակէտը եղած է միսիոնարական-դաւանական քարոզչութիւնն ու դաւանափոխութիւնը, մինչ գտնուած են ուրիշներ, որոնք քրիստոնէական արժէքներու իսկական հասկացողութեամբ ծառայած են հայ ժողովուրդին, իրաւ առաքելի մը նման, ինչպէս օրինակ՝ Միս Բարէն Եփփէն, Մարիա Ճէյքպարըն և անոնց նման առաքելատիպ ուրիշներ:

Ծանօթութիւններ Միհրան Հերարդեանի մասին

Ծնած է Ուրֆա (Եդեսիա), 1881-ին: 1911-ին տեղափոխուած է Կ.Պոլիս և ուսանած Զինուորական վարժարանին մէջ, զոր ասարտելէ ետք որպէս թնդանօթածիզ գօրակոչուած է բանակ: Անցնելով Ուրֆա, որոշ դերակատարութիւն ունեցած է տեղոյն ինքնապաշտպանութեան գործին մէջ: Զինադադարին ծննդավայրին ու շրջակայքին մէջ զբաղած է որբահաւաքութեամբ ու եղած է տեղոյն 1920 թ.ի 2-րդ ինքնապաշտպանական մարտերու գլխաւոր ղեկավարներէն և Զինուորական մարմնի անդամներէն մէկը: Ուրֆայի հայաթափումին հետ ապաստանած է Հալէպ, ուր գործակցած է Քարէն Եփփէին, իսկ անելի ետք տեղափոխուած է Պէյրութ: Որպէս դաշնակցական գործիչ գտնուած է նաև Եգիպտոս և Պարսկաստան³:

Երկար տարիներ մաս կազմած է Հալէպի «Արևելք» օրաթերթի խմբագրութեան, որուն էջերուն ստորագրած է բազմաթիւ յօդուածներ: Առանձին հատորներով հրատարակած է հետևեալ երկերը. «Էջմիածնի և Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռներու փոխարաբերութիւնը» (Հալէպ, տպարան «Արևելք», 1955, 61 էջ) և «Ազգային Սահմանադրութիւն» (Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1959, 72 էջ):

3 Միսակ Յակոբ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի մէջ*, Ե. հատոր (Պէյրութ, Համազգայինի Վահէ Մէթեան տպարան, 1983), 214-215:

Տեղեկագիր

Քաղաքական ժողովի մէկ նիստին մէջ, պարտականութիւն ստանձնած էի ամփոփ տեղեկագիր մը պատրաստելու քաղաքիս մէջ գործող օտար բարեգործական ընկերութեանց ներկայացուցիչներու գործունէութեան մասին մեր ժողովուրդին մէջ: Հարցը սահմանափակելով միմիայն անոնց շուրջ, որոնք առանձնապէս հայերու մէջ կը գործեն, կը գտնենք, որ անոնց թիւը 5 է, հետևեալ կերպով.

1 – Միս Էտիթի Բօպերթս, որուն համար կ'ըստի թէ անգլիական ընկերութեանց ներկայացուցիչն է, կապեր ունի Ազգ. Դաշնակցութեան աշխատանքի պիւրօյին հետ, և տարածայնութեան համեմատ, անձնական միջոցներ ալ կը տրամադրէ իր հետապնդած նպատակներուն:

2 – Միս Հետվիկ Պիլ⁴, որ Աքսիօն Քրէթիէն⁵ անուն քրիստոնէական ընկերութեան ներկայացուցիչն է:

3 – Միս Պօտիլ Պիէօրն⁶, որ նորվեկեական ընկերութեան մը ներկայացուցիչն է:

4 – Միս Քարէն Եփիէ⁷, որ տանիմարքացի «Հայերու բարեկամ» ընկերութեան ներկայացուցիչն է, և կապեր ունի նաև Տօթթ. Լէփսիուսի միասիօսին հետ:

4 Միս Հետվիկ Պիլ (1887, Հապապալու (Էստոնիա) – 1981, Վալդվիմմերսբախ (Գերմանիա)): Նախակրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, շարունակած է զայն Սան Բեթերսպուրկի մէջ եւ վկայուած որպէս մանկավարժ: Մեկնելով Արեւելք, 1911-ին ծառայած է Մարաշի գերմանական որբանոցին մէջ, ապա Հարունիէի, իսկ անելի վերջ, երկար տարիներ՝ Հալէպի: Հայերէնով հրատարակած է «Նուրիճա Վարժուի Լեռնեան» խորագիրով գիրքը (հրատարակութիւն Քրիստոսի եկեղեցիին, Հալէպ, 1957): Թարգմանած է նաև այլ հատոր մը: 1951-ին Հալէպէն վերադարձած է Երոպա (իր մասին անելի մանրամասն տես՝ Վարդան Գրիգորյան, *Հայութեանը նվիրված կյանք. Էստոնիի Հեղվիզ Բյուլի հայանապատ գործունէությունը Կիլիկիայում և Սիրիայում (1911-1951 թթ.)* (Երեւան, Ամարաս, 1996):

5 «Աքսիօն քրէթիէն ան օրիան» - «Քրիստոնէական առաքելութիւն Արեւելքի մէջ»: Միսիոնարական-բարեսիրական կազմակերպութիւն որ հիմնուած է Ֆրանսայի Սթրազպուրկ քաղաքին մէջ, 6 Դեկտ. 1922-ին, դոկտ. Պ. Բերրոնի կողմէ: Նպատակը եղած է բարեսիրական եւ միսիոնարական գործունէութիւն ծառայել Մերձատր Արեւելքի քրիստոնէաներուն մէջ եւ մահմետականները կրօնափոխ ընել: Իր այս նպատակներուն իրագործման համար կազմակերպութիւնը հիմնած է հովանաւորած է բազմաթիւ դպրոցներ եւ հիւանդանոցներ:

6 Միս Պօտիլ Քաղարինա Պիէօրն (27 Յունուար 1871, Կրաքերօ (Նորվեկիա) – 22 Յուլիս 1960): Որպէս միսիոնարութիւն 1905-ին մեկնած է Մուշ, ուր ծառայած է մինչեւ 1917, ապա վերադարձած է հայրենիք, իսկ զինադադարէն ետք, կրկին վերադարձած է Արեւելք ու զբաղած որբայնամ աշխատանքով, նախ՝ Ալեքսանդրապոլի, ապա՝ Լիբանանի, Սուրիոյ եւ Կ.Պոլսոյ մէջ: Հալէպի մէջ ծառայած է 1927-1934, իսկ հայութեան մէջ ընդհանրապէս 1905-1934 թուականներուն, երբ վերադարձած է Նորվեկիա (իր մասին անելի մանրամասն տես՝ Inger Marie Okkenhaug, *En norsk filantrop: Bodil Biorn og armenerne 1905-1934* (Kristiansand: Portal forlag AS, 2016):

7 Միս Քարէն Եփիէ (1 Յուլիս 1876, Կուլինկ (Դանիա) – 7 Յուլիս 1935, Հալէպ): Դանիոյ մէջ շրջան մը ուսուցչութիւն ընելէ ետք, 1903-ին մեկնած է Ուրֆա եւ ծառայած է տեղւոյն հայութեան մինչեւ 1917, երբ ժամանակաւորապէս վերադարձած է հայրենիք: 1923-ին կրկին մեկնած է Արեւելք, հաստատուած՝ Հալէպ եւ գործած որպէս Ազգերու դաշնակցութեան եւ Հայերու բարեկամ դանիական ընկերութեան լիազօր ներկայացուցիչ: Չբաղած է որբահաւարչութեամբ եւ սուրիական անապատներէն հաւաքած մեծաթիւ հայուհիներ ու որբեր, որոնց համար հիմնած է Ազատագրուած կիներու եւ մանուկներու ապաստանարանը: Հաստատուած է նաև ասեղնագործութեան աշխատանոց մը, որ գործած է մինչեւ 1947 (իր մասին անելի մանրամասն տես՝ Յակոբ Չոլաքեան, *Քարէն Եփիէ հայ Գողգոթային եւ վերածնունդին հեղի* (Հալէպ, Արեւելք, 2001):

5 – Բազմաթիւ պայպլմէն և վումըններ, որոնք ամերիկեան Պօրտի կողմէ կը վճարուին և պաշտօն ունին ատետարանական քարոզութիւններ ընել մեր ժողովուրդին մէջ, ասոնք Տօքթ. Մերիլին⁸ ենթակայ էին, հիմա անշուշտ անոր փոխանորդին հսկողութեան տակ կը գտնուին:

Ասոնցմէ իրաքանչիւրին գործունէութիւնը, որքան որ կրցած եմ ստուգել, կը պարզեմ հետևեալ կերպով, վերցնելով ամէն մէկը առանձին:

Միս Բօպէրթս – Այս օրիորդին այս քաղաքին մէջ առաջին շօշափելի գործը սկսաւ մանուսայի⁹ գործի մը օժանդակելով, իբր թէ անոր գործատրներուն զբաղում և ապրուստ ապահովելու մտահոգութեամբ: Այնթապցի Մանուէլ Համմալեան անուն մարդ մը, որ արդէն մանուսայի գործ ուներ, կրցաւ համակրութիւնը շահիլ անոր և կարևոր գումար մը կորզել, իր սեփական գործը կարենալ ընդարձակելու և այդ կերպով կարելի եղածին չափ շատ մարդոց գործ տալու պատրուակով: Աւելի քան երկու տարի այս կերպով օգտագործելէ յետոյ օրիորդի համակրութիւնը, Համմալեան նոր ծրագիր յղացաւ և քէմբի պարագներու¹⁰ փլցուելու հաւանականութիւնը առաջ քշելով, կրցաւ Միս Բօպէրթսը համոզել, որպէսզի յատուկ շէնք մը շինելու օժանդակութիւն ընէ իրեն, մէկ մասը իր բնակութեան, միւս մասը մանուսայի կազմածներուն յատկացուելու պայմանաւ. և որովհետև Համմալեան այս կերպով շատ մը ընտանիքներու ապրուստը պիտի ապահովէր, Միս Բօպէրթս գետնի և շինուելիք շէնքին համար նախատեսուող մօտ 300 օսմ. հնչուն ոսկին, որպէս փոխարինութիւն Համմալեանի ծառայութեան որպէս նուէր պիտի տար անոր: Սակայն երևի խանգարողներ եղան այս ճարպիկ խաղը, որ Միս Բօպէրթս երկար ատեն չգործադրեց այս մտադրութիւնը, մինչև որ անցած տարի Մէլտանի¹¹ մէջ ձեռնարկեց շինելու «Մանսէնեան տուն»ը: Պատուելի Շիրաճեան¹² երկու կտոր հող առած էր իր տրամադրութեան տակ վճարելով անոնց

8 Տօքթ. Ճոն Ըրնետթ Մերիլ (1872, Միացեալ Նահանգներ – 1960, Միացեալ Նահանգներ): Ամերիկացի միսիոնար: Ստացած է աստուծաբանական եւ փիլիսոփայական բարձրագոյն ուսում եւ դոկտորական կոչումի արժանացած՝ Մենիսթապի համալսարանէն: Այնթապ հասած է 1898-ին եւ դասախօսած տեղւոյն Կեդրոնական Թուրքիոյ գոլէճին մէջ: 1905-ին ստանձնած է անոր տնօրինութիւնը: Կիլիկիոյ հայաթափումով, 1924-ին հաստատուած է Հալէպ, ուր հիմնած է Ալէքքօ գոլէճը, որպէս շարունակութիւն Այնթապի գոլէճին: Տօքթ. Մերիլ Հալէպէն Միացեալ Նահանգներ վերադարձած է 1936-ին եւ մահացած է անդ:

9 Մանուսա՝ կտաւ, որ կը գործածուի ներքնազգեստ եւ հագուստ պատրաստելու:

10 Քէմբի պարագներ՝ հիւղաւանի խրճիթներ:

11 Մէլտան՝ Հալէպի հայաբնակ գլխաւոր թաղամասը, ուր կը գտնուին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Ազգ. Քարէն Եփփէ ճեմարանը, Ազգ. Սահակեան եւ Զաւարեան վարժարանները, Ս.Օ.Խաչի կեդրոնատեղին, տպարան «Արեւելք»ը եւ այլ կառոյցներ: Հայկական անուանումով՝ Նոր գիւղ:

12 Վեր. Ահարոն Շիրաճեան (1867, Մարաշ – 5 Դեկտ. 1939, Հալէպ): Կրթութիւնը ստացած է Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ գոլէճին մէջ, ապա հետեւած է Մարաշի Աստուծաբանական վարժարանի դասընթացներուն, որմէ ետք ձեռնադրուած է ատետարանական հովիւ: Համիտեան կոտորածներու օրերուն բանտարկուած է վեց ամիսով: 1912-1914 ուսանած է Էտիսպուրկի մէջ: Վերադառնալով ծննդավայր, 1915-ին արքայութեան է Հալէպ, ուր հիմնած է «Հայկական որբանոց»ը, որ նախախնամական դեր խաղցած է մանուսանոց պատերազմի տարիներուն: Աւելի ետք հիմնած է նաեւ «Աղջկանց տուն»ը: Մասնակցած է արքայական հայերու կարիքներուն ծառայող ազգային

արժեքը. սակայն յետոյ այս երկու կտոր գետինը պէտք չէկաւ անոր և շատ մը փորձերէ վերջ չյաջողելով մէկուն վիզը դնել զանոնք, յարմար նկատեց փոխանցել զանոնք Միս Բօպէրթսին, կանխիկ գանձելով անոնց արժեքը, և Միս Բօպէրթս կարճ ժամանակի մէջ շինեց «Նանսենեան տուն»ը, միշտ դիտաւորութիւն ունենալով Մանուէլ Համմալեանին սեփականացնելու զայն, բայց որովհետև Միս Բօպէրթս փլանը լայն բռնած էր և յաւելեալ սենեակներ ալ շինած էր զանազան նպատակներու գործածելու համար, Համմալեան չյօժարեցաւ բնակիլ անոր մէջ և մնաց քէմբը, ուր իր կազմածներուն վրայ կը շարունակէ գործել Միս Բօպէրթսի կտորները, որոնք ծախու դրուած են Նանսենեան տան մէջ բացուած խանութին մէջ:

Եւ որպէսզի աշխատանք հայթայթելու գործը կատարեալ ըլլայ, Միս Բօպէրթս աղքատ և անգործ կիներուն բամպակ մանեղ կու տայ և այս մասնածով գործել կու տայ իր կտորները, յետոյ այս կտորներէն մաս մը կը կարուի զանազան հագուստներու ձևով և կարուած վիճակի մէջ կը դրուին վաճառման: Այս կարելու մասն ալ գործ կը հայթայթէ որոշ թով գործատրուիներու:

Մանելու գործը սահմանափակուած չէ միայն բամպակով: Երկու տարի առաջ, երբ Միս Բօպէրթս Թէլ Պրագ¹³ գացած էր Պատուելի Շիրաճեանին հետ, հոն 200 օսմ. ոսկի արժեքով բուրդ գնած էր, գիղացի կիներուն մանեղ տալով անոնց գործ և աշխատանք ապահովելու մտօք, սակայն իր հոն մնալը կարելի չըլլալով, հոս գալէն ամիսներ վերջ Հալէպ փոխադրել տուաւ բուրդը և սկսաւ մանեղ տալ հոս: Մասնած բրդաթելէն մաս մը ծախուեցաւ, իսկ մնացածն ալ գործուելով կերպաս պատրաստուեցաւ, սակայն վերջին արդիւնքը այն եղաւ, որ 200 ոսկիի բուրդին կէսն իսկ չէկաւ Հալէպ, և վերջնական հաշուով գրեթէ ոչինչ մնաց այս 200 ոսկիի բուրդէն, որուն վրայ աւելի քան 100 ոսկի ալ ծախք եղած էր մանելու և գործուելու համար:

Հոս անհրաժեշտ է յիշատակել, որ բուրդ և բամպակ մանելու, ինչպէս նաև գործուած կտորները կարելու աշխատանքներուն հսկողութիւնը յանձնուած է այնպիսի կիներու, որոնք այս քաղաքին մէջ շատ մը ուրիշ գործերու մէջ փորձուած և անհաւատարիմ դուրս եկած են, սակայն որովհետև իրենց արհեստն է այսպիսի միամիտ օտարականները համոզել և գրաւել, ունակութիւն դարձած կեղծ քրիստոնէութեամբ և փարիսեցիութեամբ, յաջողած են «բարի» մարդու տպաւորութիւն ձգել և ստանձնել գործեր, որոնց մէջ մէկ կողմէ իրենց իրաւասութիւնը կը գործածեն նոր ոչխարներ ապահովելու համար «փրկուածներու» փարախին, իսկ միւս կողմէ իրենց սեփական մասնածը ներկելու զանազան և անիմանալի կերպերով գողնալով ինչ որ կրնան: Ինչ կասկած որ այնքան խեղճուկրակ ձևով կառավարող գործի մը մէջ, ուր քրիստոնէական լրճուած ներողամտութիւնն է ամենագլխատր նշանաբանը, անհամեմատ դիւրութիւններ կը վայելեն արհեստով գողերն ու աւագակները:

զանազան մարմիններու աշխատանքներուն՝ Հայ Ազգային կարմիր խաչին, Հայ ծերանոց-անկէլանոցի խնամակալութեան եւ այլն:

13 Հայաբնակ գիղ Սուրիոյ Հասիչէ նահանգի Վերին Ճէզիրէի շրջանին մէջ: Կառուցուած է համանուն հնավայրին մօտակայքը: Գիղին գլխատր հիմնադիրը կը համարուի Վեր. Ահարոն Շիրաճեան: Թէլ Պրագը ունեցած է հայկական փոքրիկ վարժարան: 1947-1948 թթ. գիղի բնակչութեան մեծամասնութիւնը հայրենադարձուած է:

Մանելու և կարելու աշխատանքները կը տրուին միայն ընտրովի գործատրուիչներու: Այս ընտրութեան չափանիշը քրիստոնէական «խրգմէթ»ներն¹⁴ են, այսինքն որպէսզի գործատրուիչ մը քանի մը տիրիւմ¹⁵ բուրդ կամ բամպակ կարենայ առնել մանելու և կամ կտոր մը ստանալ կարելու, երկու շաբաթուան ընթացքին 50 դրուշ սիրիական շահելու համար, պայման է որ անիկա իր բարեյուսութիւնը ապացուցանէ «փրկութեան» ուղղութեամբ, յաջա փարիսեցի վերակացուներուն, այլապէս արդէն անմիջապէս կը դադրի գործ ստանալէ: Այսպէս ուրեմն, խեղճ կիները պատառ մը հացի դրամին համար ստիպուած կ'ըլլան դերասանութիւն ընելու և կը փորձեն հաճելի ըլլալ՝ փորձելով փարիսեցիութիւն, որ երբեմններու մէջ ժամանակի ընթացքին կը դառնայ սովորութիւն և կը մեռցնէ անհատը բարոյապէս:

Հիւանդներու հանդէպ հետաքրքրութիւնը պատահականութեան թողուած խնդիր մըն է, և ոչ ոք գիտէ թէ հիւանդ մը ինչ պայմաններ պէտք է ներկայացնէ, սիրական և ընտանեկան, որպէսզի արժանանայ հոգածութեան և օժանդակութեան: Չորս կողմէն եղած բարեխօսութիւնները մեծ դեր կը խաղան և բնական է, որ այս բարեխօսութիւնները տեղի կ'ունենան Միս Բօպէրթսի անմիջական շրջապատէն, որոնք իրենց հաճելի մարդոց համար կը վերապահեն զայն:

«Նանսէնեան Տուն»ը նոր շինուած ատեն, Միս Բօպէրթս կը հետաքրքրուէր խենթերու վիճակով: Եւ քաղաքէն քանի մը խենթեր հաւաքեց յիշեալ տան մէջ և քիչ մը պակաս խենթերու հսկողութեան տակ սկսաւ խնամել, միևնոյն ատեն ստանձնելով անոնց ընտանիքներու հոգածութիւնը, սակայն որովհետև անոնցմէ մէկ քանին շղթայի զարնելու հարկադրանքը ստեղծուած է, և այս հարկադրանքը գործադրուած ալ, խելացի խորհրդատուներ արթնցուցած են զինքը, իր ուշադրութիւնը հրախրելով կառավարութեան հանդէպ պատասխանատուութեան վրայ: Այս բանէն վախցած վերջ տուաւ այս յիմարներու գործին և իւրաքանչիւրը յանձնեց իր տիրոջ:

Ներկայ տարուան Յարութեան զատկէն առաջ, քէմբին մէջ ստեղծեց «Նանսէնեան խանութ» մը, ուրկէ ալիւր և ձիթախիղ բաժնեց որպէս թէ ապացուցեալ աղքատներու: Այս նպատակին համար ծախսեց շաբաթական աւելի քան 50 օսմ. հնչուն ոսկի և գործը տևեց աւելի քան երկու ամիս: Ենթականներու աղքատութեան հաստատումը կը կատարէին զինք շրջապատող «փրկուած»ներ և բնական է, որ որպէս աղքատ վկայութիւն ստացան միմիայն անոնք, որոնք վերը բացատրուած ձևով իրենց բարեյուսութիւնը ապացուցած էին և կամ լաւագոյն պարագային կը յօժարէին ապացուցանել: Ալիւրի և ձիթախիղի այս նպաստը ստացողներէն ոչ մէկը անձամբ չքննուեցաւ Միս Բօպէրթսի կողմէ: Տրուած նպաստը յատուկ տոմսակներով կը ստացուէր «Նանսէնեան խանութ»էն, և այս տոմսակները 20ով 30ով կը յանձնուէին շուրջի վստահելիներուն, իրենց հայեցողութեամբ բաժնելու և նպաստատրելու համար «փրկութեան» թեկնածուները:

Պէտք եղած էր քանի մը ուրֆացի հայրենակիցներ ներկայացնել իրեն՝ զատկուայ առթիւ անոնց պզտիկ օգնութիւն մ'ապահովելու համար: Երեք շաբաթներ անընդհատ

14 Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ ծառայութիւն:

15 Կշիռքի չափ՝ 3,207 կրամ:

խնդրել և թախանձել պէտք եղաւ, մինչև որ կարելի եղաւ շաբաթական 10 տոմսակ ստանալ, և այս միայն երկու շաբթուան համար, մինչդեռ անդին բազմաթիւ շաբաթներ Մանուէլ Համմալեան, Համբարձում Քէլլէճեան, Ուլասնա Մագսուտեան, Տիկին Թագուհի և այլք տասնեակներով տոմսակներ կը ստանային և կը բաժնէին անպատասխանատու և անթօնթօյ:

